

Գիրքը յուսադատճեհահանվել է
A-PDF DjVu TO PDF DEMO: Purchase from www.A-PDF.com to remove the watermark

"Նամահայկական էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"



Գիրքը կարող է

օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ՄԱՅՑՈՒՄ ԿԱՐՆԱԿԱՆ ԵՄ ԶԵՐ ԼՈՐՄԻՆՈՒՄ ԼՐԱԾԱՆԸ ԼՅՅԱՅԱՌ
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՐԱԼՈՐՄ
ԼՈՒՄԻՆՈՍԿԵԼԱՆՆԱԵԼ ԳՐԵՐ:

ՔՐՈՑՆԻ ԳՐԵՐԻ ՄՏԵՐՈՄԱՆ ՄԱՆԸՄԱՆՆԱԵՐԸ ԿԱՐՆԱԿԱՆ
ԻՄՈՒՆԱԿԱՆ "ՏԱՐԱԾՅԱԿԱՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԻԿԵՆ ԳՐԱԿՈՐՄԱՆ" ԿՈՑՔԻՆ

www.freebooks.am

ԵՆԴՐՈՒՄ ԵՎ ՈՐԳԱՆԻՄ ԵՄ ՄՏԵՐ ԿՈՑՔԻՆ
ՑԱՆԿՈՒՄ ԵՎ ԶՈՒԹԻ ԸՆԹԵՐՍՈՒՆԹՅԱՆ:



ԳՐԵՐ ՄԻՆ՝ freebooks@rambler.ru

Հայրենի

ՏԱՆՈՒՍ

www.freebooks.do.am

www.freebooks.am



GOETHE

FAUST

Der Tragödie
zweiter Teil

Erziehung
Wort

BUCH

II 000

Gelehrte und gelehrte
Menschen sind die
Hauptstützen der
Kultur

Königliche Universitätsbibliothek
München 1967

Н (գրք)
Գ 66

Aus dem Deutschen in
Armenische übersetzt
von Paruir Mikaelian

ГЕТЕ

ФАУСТ

II

(На армянском языке)

Издательство «Анастан»

Ереван — 1967

7-4-4

ԱՐԱՐՎԱԾ՝ ԱՌԱՋԻՆ

ԳԵՂԱՏԵՍԻՒՄԻ ՀԱՐԹԱՎԱՅՐ

Փառաստը ծաղկազարդ մարգագետնում հոգնաստանը
անհանգիստ պատկած՝ ուզում է քնել

Մթնշաղ

Ճախում է փոքրիկ, սքանչելի ոգիների խումբը

Ա Ր Ի Ե Լ

(Երգում է էոլյան սավիլի նվագակցությամբ)

Երբ իջնում է երկիրն ի վար
Գարնան անձրև ծաղկաբեր,
Երբ օրհնանքն է կանաչավառ
Գրկում և՛ հող, և՛ սրտեր,
Սավառնում է շուրջն աշխարհի
Փոքր էլֆերի մեծ ոգին,
Որ դժբախտին՝ շար թե բարի,
Սմե՛ն մարդու ամոքի

Ո վ ազնիվ էլֆեր, դուք, որ այս պահին
 Ճախրում եք խմբով ձեր եթերային,
 Մեղմեցեք սրտի խոռվքը անսանձ,
 Վանեցե՛ք խղճի նետերը այրող,
 Մաքրեցե՛ք հոգին սարսափից ապրած:
 Գիշերը շորս պահ ունի անփոփոխ,
 Չորան էլ քաղցրացրե՛ք բարությամբ ասանդ
 Գլուխը ծաղկանց դուր բարձի՛ն գոեք,
 Շա՛ղ տվեք դեմքին ցողը կեթայի,
 Որ կայտառանա մարդը հոգնաբեկ
 Ու բացվող օրվան նո՛ր ուժով նայի:
 Արդ, կատարեցեք ձեր մեծ պարտքն էլֆյան
 Ե՛տ բերեք նրան ի լույս սրբազան:

Խ Ո Ւ Մ Ք

(Սիււյնակ, երկուսով և շատերը միասին՝ իսկ հաջորդելով
 ու միանալով)

Դաշարազեղ հարթավայրում
 Մեղմ շնչում է հովն անուշ,
 Մթնաշաղն է շուրջը սփռում
 Քաղցր բուրմունք ու մշուշ:
 Մրմնջացեք իաղազություն,
 Սիրտն օրորե՛ք, մանկացրե՛ք
 Սչքի առաջ խոնջ ու նիրհուն
 Օրվա դուռը փակեցեք:

Գիշերն իջավ: Աստղը աստղին
Ի նշ սրբորեն է գգվում:
Հույսի հույլե ը, բույլե՛ր կրկին
Ե վ մոտերքում, և՛ հեռվում:
Լո՛ւլս է լճում, լո՛ւլս երկնում ..
Երջանկությունն այդ անգորր
Հուսինն է լուռ վավերացնում
Իրպես կնիք փառավոր:

Հանգան ժամերն, ու միասին
Անհետ անցան վիշտ ու բախտ
Հավատա նո՛ր օրվա լույսին,
Կապաքինվես դու հաստատ:
Բողբոջում են հովիտ ու լեռ,
Հովանի է ամեն թուփ,
Արտն արծաթվո՛ւմ է ծանրաբեռ,
Հասկավորվում քնքշածուփ:

Նալի ը փալլին արեգական,
Որ հասնես քո բաղձանքին:
Քնի շղթան թուլլ է այնքան,
Թոթափի՛ր, և՛ լ դու կրկին:
Եվ խիզախի ը գիշեր ու տիվ,
Երբ ամբոխն է խարխափում,
Ի՞նչ շի անի մարդը ազնիվ,
Երբ խոհեմ է ջանք թափում:

(Զորավոր դրոշյունն սպեաում է, որ մտով նաւ է աւել ը)

Ա Ր Ի Ն Կ

Հորանե՛րն են, ի՛նչ ժխոր է
Շոինդո՛վ է ծնվում օրը
Ոգիների համար անմահ:
Ժայռ-դարպասն է բացվում ահա
Թերի կառքն է առաջ սուրում
Ի նշ դրոշյուն բացվող լույսի
Շեփորում են, թմբկահարում,
Սակայն երբեք այս աշխարհում,
Մահկանացուն դա չի լսի
Թաքնվեցեք դուք ապահով
Ծաղիկների թերթերում զով,
Ժայռերի մեջ, թփերի տակ,
Որ շառաշից շխանար:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Կյանքի հղոր զարկերակն է բաբախում տաք
Ու ողջունում դորովանքով այգը բացվող
Այս դիշեր էլ հաստատ էիր ոտքերիս տակ
Հիմա էլ ես նոր թարմությամբ շնչում դու հող:
Կյանքի ես դու կոչում հույզեր ու երաղներ
Մղում ես ինձ դեպի վճիռ մի սնկեր
Գիշեր ու զօր ձգտել վսե՛մ մի դոյութեան:
Աշխարհն է բա՛ց փուլել լույսի տակ վաղորդյան,
Անտառներում հազարաձայն կյանքն է թնդում,
Սեզն է ծփում հովիտն ի վեր, հովիտն ի վար,

Բայց լույսի շողն է թափանցում վիճն էլ խավար,
Թուփ ու տերեւ արթնանում են խոր անդնդում
Նվ մշուշի միջից հասնում բուրումնավառ:
Հողից զատված՝ գույներն իրար են հաջորդում,
Ամեն ծաղկից մարգարիտ է գլորվում ցած...
Շուրջս աշխարհն է դրախտի փոխվում հանկարծ:

Նայիր վերև բարձունքները տիտանական
Ավետում են ամենավեհ պահն անձկալի:
Հավերժի լույսն են վայելում կանո՞ւխ այնքան,
Լույսն այն, որ միշտ հասնում է մեզ ուշ ավելի:
Կանաչի մեջ թաղված ալպյան դաշտի վրա,
Որպես շնորհ, փոփում է նոր պայծառություն
Երձունքն ի վար իջնում է վառ փայլը օրվա,
Գուրս է լողում արևն ահա լույսով հորդուն:
Բայց խնձ, ավա՞ղ, կուրացնում է ուժը լույսի:
Նույնն է, երբ մենք փայփայելով շողը հույսի,
Հանկարծ հասնում բարձունքներին մեր երազած,
Լրագործման դուռն ենք տեսնում մեր առջև բաց.
Հավերժական սովորույթի ընդերքից խոր
Բո՞ղ է ժայթքում: Կանգ ենք առնում խեղճ ու մոլոր:
Ուզում էինք վառել կենաց մի ջահ միայն,
Բայց մեզ հրո ամբողջ մի ծով է պարուրում:
Լ՞նչ է դա՞ սե՞ր, թե՞ լոկ պոռթկում ատելության .
Անբաժան են ցավն ու բերկրանքն այս աշխարհում:
Սատեղ նորից նայում ենք մենք հողին շիտակ,
Որ թաքցնի մեզ կուսական իր քողի տակ:

Արև, մնա իմ թիկունքում: Վշբիս աւջև
 Թող փշրվի՛ ջրվեժը սուր ժայռի վրա
 Որ վայելեմ զմայլանքով թա՛փը նրա:
 Զուրն է եռում ու դալարվում հազարաձև,
 Շառաշում է, մեկից դառնում հազար վտակ,
 Վեր է նետում փրփրած շիթերն իր սպիտակ:
 Ծիածանը շուք է տալիս այս փոթորկին
 Եվ պատրանքը դարձնում անվե՛րջ մի տևսարան,
 Մերթ մշուշվում, մերթ վառվում է շողում կրկին,
 Շուրջը լցնում սարսուռներով զով ու բուրջան
 Հայելին է սա մարդկային մեր ոգորսան,
 Նայի թ, խորհի թ, և քեզ համար պարզ կլինի
 Որ մարդկային կյանքն էլ ցուք է ծիածանի:

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Գահասարահ.

Պետական խորհուրդն սպասում է արքային
 Շեփոխահարություն

Ներս են մտնում շքեղ հագնված զանազան պալա-
 տականներ Կայսրը քազմում է գահին Աջ կողմում
 աստղագետն է

Կ Ա Յ Ս Ր

Ողջո՛ւյն, սիրեցյալ իմ հպատակներ՝
 Եկած մոտերքից և հեռուներից:
 Իմաստունն այստեղ, կողքիս է նորից,
 Որտե՞ղ է, սակայն, խեղկատակը մեր:

Յ ՈՒՆ Կ Ե Ր

Եւ ծայրս էր բունել քո պատմութեանի,
Փովեց սանդուղքին ու մնաց ընկած:
Խեղճ ճարպագնդին դուրս տարան գրկած:
Մեռա՞ծ էր, հարբա՞ծ ո՞ւմ է դա հայտնի:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Յ ՈՒՆ Կ Ե Ր

Բայց զարմանալի մի արագութեամբ
Ուրիշ ծաղրածու հայտնվեց շեմքին
Թեև հանդերձանք ունի հոյակապ,
Բայց կզարհուրես, թե նայես դեմքին:
Պահապանները կանգնեցրին իզուր,
Խաչաձևելով տապարները սուր:
Բայց ահա և նա ճարպիկն է կարգին:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Գահի առաջ ծուր իջնելով)

Ի՞նչն է ցանկալի և միշտ անիծյալ,
Ի՞նչն են հալածում և կանչում դարձյալ,
Ի՞նչն են միշտ առնում պաշտպանութեան տակ,
Ի՞նչն են պարսավում խոսքով այլանդակ:
Ո՞ւմ սիրտ չեք անի կանչել ու բերել,
Ո՞ւմ անունն է ձեզ միշտ հրապուրել,
Ի՞նչն է գահիդ մոտ կանգնել ինձ նման,
Ի՞նչն է, որ ինքն է պատճառն իր անկման:

Կ Ս Յ Ս Բ

Զուր մի շոայլիբ խոսքեր այս անգամ
 Հանելուկների տեղ չէ, բարեկամ
 Այս պարունների դործն է դա կարծես
 Բայց լավ, վերծանիր, կլսեմ ես քեզ:
 Գուցե ետ շգա ծաղրածուս նախկին
 Եկ, հիմա էլ դու կանգնիր իմ կողքին:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Վեր է կենում և կանգնում գանի ձախ կողմը)

Շ Շ Ո Ւ Կ Բ Ա Զ Մ Ո Ւ Ք Յ Ա Ն Մ Ե Չ

- Մի նոր ծաղրածու — նոր գլխացավանք:
- Որտեղի՞ց, ինչպե՞ս հայտնվեց այստեղ:
- Հինը ցամաքել, դարձել էր տականք:
- Այն մեկը՝ տակառ, ալս մեկը՝ տաշեղ:

Կ Ա Յ Ս Բ

Արդ, բարի լինի թող գալուտը ձեր,
 Իմ հպատակներ մոտ ու սրտակից:
 Ավետում են մեզ աստղերն երկնքից
 Նոր երջանկություն, հաջողությունների
 Բայց այս օրերին, երբ մարդկանց համար
 Հաճո է մեղմել հոգսերն անհամար,
 Վայելել մի նոր դիմակահանդես

Ու դիւարճանալ ցնծութեամբ սրտի
Ինչո՞ւ մեզ տանջենք նիստով խորհրդի:
Բայց լի՞նք ձեր կամքն այդ է իսկապէս,
Եւ՛ վ, խորհուրդ անենք շէմ առարկի ձեզ:

Ա Ա Ն Յ Ի Ն Ր

Հուսապսակի նման սրբազան
Փայլն է գերագույն առաքինութեան
Վեհորեն պճնում ճակատը կայսեր,
Լսկ նա է ազնիվ և ճշմարտասեր:
Սրգարութեանը (ինչ մարդիկ սիրում,
Տենչում են, ինչից զուրկ են աշխարհում)
Նա է շնորհում իր ժողովրդին:
Բայց վա՛յ մարդկային բարեգութ սրտին
Ոգուն ու մտքին, ձեռքերին զորեղ,
Երբ թուխս է նստում շարիքն ամեն տեղ,
Տենդով բռնված մոլեգնում շորս դին:
Այս բարձր գահից ով էլ նայի ցած,
Մղձավանջ պիտի տեսնի ծանրացած,
Այլանդակութուն այլանդակութեանց:
Ապօրինութեանն օրենք է դարձել,
Մոլորութեանն է ծաղկում անարգել:
Եթե մեկն ուղի, կին կառուանգի,
Կխլի նախիր, սուրբ խաչը վանքի,
Անուն կհանի մարդն այդ պատուհաս,
Կապրի անպատիժ, ողջ ու անվնաս:
Հայցվորն է փութով դիմում դատարան

Լ վ դատավորն Լ բազմում բարձունքին,
 Բայց ամենուրեք հեղեղի նման
 Խոտվությունն է մոլեգնում կրկին:
 Կարող են ոմանք սլարժենալ սճրով
 Եթէ պաշտպաններ ունեն դավակից,
 Չեղած հանցանքն Լ հաստատվում վճռով,
 Երբ անմեղ մարդիկ շունեն դավակից:
 Կործանվում է ողջ աշխարհը կարծես
 Ամենայն ինչ Է արվում ոտնատակ
 Զգացմունքն արդեն շունի ասպարեզ՝
 Հիմքն արդարության միակ և շիտակ:
 Լավն է ի վերջո գլուխ խոնարհում
 Վատթարի առաջ, կաշառակի ըի
 Երբ դատավորը շի սանձահարում,
 Ընկերն է դառնում ոճրադորժներու:
 Սև են գույները, բայց լավ չէ՞, արքա
 Երբ մութ սլատիկերի վրա քող չկա:

(Ղաղաւ)

Պետք է անհապաղ կայացնել վճիռ
 Երբ ծով են դարձել տանջանք ու ոճիր,
 Չեր գլխին էլ, տե ը, մի փորձանք կգա:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Լ նլ թոհուրոհ Է երկրում բովանդակ
 Մեկն սպանվում է, մյուսն էլ՝ սպանում,
 Չի փրկում ոչ մի խիստ հրովարտակ:

Պավ են որոճում իրենց դարանում,
 Հարմար առիթի սպասում անվերջ
 Քաղքենին՝ փակված իր պատերի մեջ,
 Ասպետը՝ քաշված բերդն իր ժայռակոփ:
 Զինվորն անհամբեր ու սրտատրոփ
 Վարձ է պահանջում կրկին ու կրկին
 Վաղուց կլքեր մեղ, անտարակույս,
 Եթե շունենար պարտքն առնելու հույս:
 Ով էլ դեմ գնա ամենքի կամքին,
 Նա պիժակների բույնը կխառնի
 Հույն այն, որ զորքը պիտի պաշտպանի,
 Նույն զորքն է արդեն կողոպտում այսօր:
 Խժղժությունն այս ոչ ոք չի սանձում,
 Կեսն է աշխարհի կործանվում անզոր:
 Ի այց կան արքաներ, որ շեն էլ կարծում
 Թե աղետ է դա, և աչք են գոցում:

Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Վաշնակիցներին ո՞վ կապավինի,
 Օգնության խոստումն այլ բան չի լինի,
 Բան չոր ջրմուղից սպասվելիք ջուր:
 Տիր իմ, քո երկրում՝ անծայր տարածված,
 Ո՞ւմ ձեռքն են անցել թե կայք, թե կալված
 Լնչ-որ նոր մարդիկ իշխում ամենուր,
 Տեղում են ապրել անկախ, անիշխան:
 Եվ հայեցողի դերումն ենք դեռ մենք
 Իրավունքներ ենք շաղ տվել այնքան,

Որ այլ իրավունք մեր ձեռքին չունենք
Կուսակցություններն, ինչպես էլ կոչվեն,
Երբեք չեն լինի նեցուկ հաստատուն
Պիտի անտարբեր նախատեն, գովեն,
Նրանց խորթ են սեր և ատելություն:
Բոլորն ևն շքվել՝ գիրեւին թե գվելՔ
Որ խաղաղ, հանգիստ ապրեն մինչ ի մահ:
Իր հարեանին ո՞վ կօգնի հիմա
Կուլի սեփական յուղով տապակվել
Ամուր են փակված դռները ոսկու,
Գանձ են կուտակում մարդիկ զօր գիշեր
Մինչդեռ դատարկ է գանձարանը մեր

Ս Ի Ք Ա Ի Ն Ի Ք Ի Վ Ե Ր Ս Կ Ա Յ Ո Ւ

Սի ուրիշ աղետ՝ նույնպես ահարկու
Լնայողության ձգտում անդադար
Բայց ավելին ենք օրեցօր վատնում
Եվ բազմապատկում հոգսերն անհատնում
Ղեռ չի գանգատվել ոչ մի խոհարար
Լէրն բնավարձ, շահույթն ամեն օր
Գալիս է առատ ու կանոնավոր՝
Վարազ, եղջերու, այծյամ, նապաստակ,
Հնդկահավ ու հավ, անթիվ բազ ու սազ
Սյդ ամենը կա, բայց գինին է սուղ
Սուաջ լեցուն էր ամեն մի նկուղ
Մեր ամենալավ այգեստանների,
Սմենահաջող մեր տարիների

Ամենարնտիր, թունդ գինիներով:
 Եակայն պարոնայք ազնիվ, սլատվելի
 Համաքեցրել ևս տակառները լի
 Անվերջանալի գինարբուքներով:
 Թող վարչությունն էլ մեր քաղաքային
 Իր պահեստները դարձնի գինեատուն.
 Հարբելն է դառնում անզուսպ մոլություն,
 Խմում են, փովում արդեն հատակին:
 Ինչպե՞ս բոլորին վարձ տամ, վճարեմ
 Հրեա վաշխառուն ինձ չի խնամի,
 Սնանկացումն այս հենց որ կռահի,
 Իր պարտքը կուզի Փող ինչպե՞ս ճարեմ
 Էլ չլն գիրառում խոզերը, իրավ
 Սնկողիններն իսկ գրված են գրավ
 Պարտքով ենք ուտում ավուր հացը, տե բ:

Կ Ս Յ Ս Ի

((Փոփր-ինչ խոհեղակցելուց հետո, ՄԼՖիստոֆելին))

Մաղրածու է, քեզ էլ հայտնի չլ՞ն հոգսեր

Ա Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Ի

Ընա վ: Չորս կողմդ շուք ու փայլ այսքան,
 Եվ հանկարծ կասկած. ի՞նչ կասկած այնտեղ
 Ուր ձեռքն է լիշխում քո կալսերական՝
 Պատրաստ ջնջելու ոսոխին ահեղ
 Ուր դորավոր է միշտ կամքը բարի՝

Բանականությամբ ու ջանքով բեղուն:
Աղետ ու շարիք դաշինք շեն կռի
Այնտեղ, ուր այսքան աստղեր կան շողուն:

Շ Շ Ո Ւ Կ Ն Ն Ր

- Շատ է խորամանկ, թաց տեղ չի քնի
- Ինչպե՛ս է կեղծում, քծնում շան նման:
- Գլխի եմ ընկնում՝ վերջում ինչ կսմնի:
- Սա մի ծրագիր ունի ասպայման

Մ Ի Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ն Լ

Աշխարհում որտե՞ղ նեղություն չկա
Ոմանք այս շունեն, ոմանք՝ այն, մենք՝ փող:
Գետնին ընկած չէ, բայց դետնից, արբա,
Իմաստությունը հանել չի՞ կարող:
Կեռան ընդերքում, խորքում ժայռերի
Առատ անսողառ շեղջեր կան ոսկու.
Հարցնում եք, թե ո՞վ կհայտնաբերի
Խելոք մարդն՝ ուժով բնության, ոգու:

Կ Ա Ն Ց Ի Ն Ր

Բնություն, ոգի — բառե՛ր շարաղետ:
Քրիստոսյաների համար շեն ասված
Խարույկ են հանում մարդուն անաստված:
Բնությունը՝ մեղք, ոգին դե է, խե նթ:
Կասկածն են նրանք ծնում, գուրգուրում՝
Այդ հերմաֆրոդիտ զավակին դարձվոր

Կարգն ա յլ Է մեզ մոտ կայսեր հին Երկրում
 Կա միայն Էրկու խավ օրինավոր՝
 Սսպետական դաս, հայրեր սրբազան:
 Երանք են գահի նեցուկն անսասան
 Ի դեմ ամենայն փոթորիկն Երի,
 Վարձը պետությունն ու եկեղեցի:
 Ոմանք ա իբոխի միտքն են միշտ շեղում,
 Խոտվություններ սերմանում առաս:
 Զուր են պղտորում քաղաքում, գյուղում
 Հերետիկոսներ կախարդներ անհայտ:
 Գու սեպնեկ ես ուզում, անկասկած,
 Լաիրշ կատակով ոլորտն այս վեբին,
 Գու սգով, անշուշտ մոտ ես պիղծ մարդկանց՝
 Սզգակիցներին անբան խեղի:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Իսկայն զդացվեց, որ մարտ Է ք գիտուն
 Ինչ չեք շոշափել, թվում է անհաս,
 Ինչ չեք հասկացել, շունի գոյություն,
 Ինչ չեք ստուգել, պատրանք է, երազ,
 Եվ կշիռ շունի, ինչ դուք չեք կշռել,
 Գրամը փող չէ, եբբ դուք չեք կտրել:

Կ Ա Յ Ս Ր

Այդպես դուրս չես գա նեղ կացությունից,
 Պասուց քարոզով ինչի՞ կհասնես:
 «Ինչպես» ն ու «եթե»-ն հոգնեցրել են ինձ,
 Փող շունենք ճարիր, Կթե ճար ունես:

Մ Ե Յ Ի ՈՏ Ո Յ Ի Ի

Արքա, ավելի ն հանեմ ձեզ համար,
Կա հեշտ է, սակայն հեշտն էլ է դժվար
Մեծ արվեստ է պետք, որ այդ դործն անենք,
Գանձերը գտնենք և ի լույս հանենք:
Հիշեք արհամիջք, ցեղեր արնախում
Փարրարուսների հեղեղն էր անսանձ
Որքան ղնցող էր սարսափը մարգկանց,
Այնքան խորն էին գանձերը թաղում:
Սյդպես էր դարում Հոռմի հզոր,
Սյդպես էր երեկ այդպես է այսօր:
Հողի տակ պահված գանձեր կան այնքան
Իսկ հողի միակ տերն ինքն է արքան:

Վ Ս Ն Ձ Ա Պ Ե Տ

Երբև ծաղրածու նա շատ է խելոք,
Իրոք, դա կայսեր իրավունքն է լոկ:

Կ Ա Ն Յ Ի Ե Ր

Մատանան ոսկե թակարդ է լարում
Սյդպես չի արվում լավ գործն աշխարհում:

Ա Ր Ք ՈՒ Ն Ի Ք Ի Վ Ե Ր ՈՒ Կ Ս Ց ՈՒ

Եթե նա գանձեր բերի արքունիք,
Քող իմ վիզն ընկնի այդ մեղքը փոքրիկ:

Զ Ո Ր Ա Վ Ա Ր

Հավ է խոստանում, խելոքն է կարգին
Չինվորներին ի՞նչ՝ սրտեղից սակիս:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Յ Ի Լ

Ես ձեզ թվացի խաբերա հետին,
Մակայն դիմեցեք ձեր աստղադետին
Նա գիտե բոլոր ոլորտները մութ:
Ի՞նչ կա երկնքում ասա այր հմուտ:

Շ Շ Ո Ի Կ Ն Ե Ր

Իբար գտել են երկու անամոթ՝
Խենթն ու խաբերան Այն էլ գահի մատ,
— Հին երգ է ջուրն իր ճամփով է դնում:
— Իմարն ասում է, խելոքը կրկնում:

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ի Շ Ա Կ

(Խոսում է Մեֆիստոֆելի թելադրանքով)

Սրեգակը սակի է ձուլլ, սակի մաքուր,
Մերկուրն է միշտ սլատգամաբեր ծով գթության
Իսկ Վեներան՝ տիկինը այդ լուսագանգուր,
Գերում է ձեզ պահերին ուշ թե վաղորդյան:
Սոաքինի լուսինն ունի քմայք անհուն,
Իր զորությամբ Մարսն է անվերջ սալառնում ձեզ,
Ճուպիտերը լուսատու է չքնաղագույն,
Մեծ Սատուրնը հեռու է շատ փոքր է կարծես:

Եբրե մետաղ, ի՛նչ խոսք, արժեք շունի այնքան,
Գինը շնչին, բայց քաշը ծանր է բավական:
Երբ միանան արծաթ լուսին, ոսկի արև,
Ողջ աշխարհին կիջնի բարին, սերն արդարև,
Մնացածն էլ հնարավոր կդառնա, տե՛ր
Պալատ, այգի, կնոջ գգվանք ու վարդ այտերի
Այս ամենին հասու է լոկ այրը գիտուն,
Մեկարեւին նա կդարձնի իրողություն:

Կ Ա Յ Ս Ր

Ես լավ եմ լսում, թե ինչ է խոսում,
Բայց նրա ասածն ինձ չի համոզում:

Շ Շ Ո Ւ Կ Ն Ե Ր

- Ի՛նչ օգուտ: Սա շար
Խաղ է անպատճառ
Փշո՛ւմ են վաղուց
Քիմիա, օրացույց:
- Մենք շատ ենք խարվել:
Ու հիասթափվել:
- Է՛հ, ո՞վ պիտի գա
Մի նոր սրիկա:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Զարմանում, գլուտին շեն էլ հավատում,
Խոսքը մեկ արած՝ մարդիկ միասին
Բմբախոտից են լոկ շաղակրատում,

Արմատը հողից հանող շան մասին:
 Ենչո՞ւ է մեկը խելքին զոռ տալիս,
 Մեկն էլ հրաշքի միայն վերագրում,
 Էրբ ներբաններն են հանկարծ քոր գալիս,
 Կամ դող է զգում հանկարծ ոտքերում
 Բոլորդ էլ ուժն եք զգում բնության՝
 Ե վ մշտահոլով, և՛ խորհրդավոր,
 Որ ընդերքից է հառնում հավիտյան,
 Ձուլվում է կենաց հորձանքին հզոր,
 Եւրև կենսահորդ սարսուռ անսովոր:
 Երբ զգաք ինչ-որ անհանգստություն,
 Երբ ձեր մարմնի մեջ տազնապ հայտնվի,
 Բահ քլունդ առած՝ փորեք հողն իսկույն
 Ուրեմն՝ գանձ կա թաղված հիրավի:

Շ Շ Ո Ւ Կ Ն Ե Ր

- Կապար է լցվել ոտքիս մեջ կարծես:
- Թեև մղկտաց. ի՞նչ է, հողացա՞վ:
- Ոտքիս բութ մատն է քոր գալիս անպես:
- Ցավից իմ ամբողջ մեջքը թուլացավ:
- Բոլոր նշաններն արդեն կան, եղբայր,
 Որ այստեղ թաղված գանձ կա անսպառ:

Կ Ա Յ Ս Ր

Ի գո րծ: Իմ ձեռքից էլ չես ճողոպրի:
 Տույց տուր, որ ճառդ չի ասված իզուր,
 Գաղտնարա՞նը տար ազնիվ գանձերի:

Ես վայր կդնեմ գայլատն և սուր
Որ գործն այս բարի կատարված լինի
Իմ յակ սեփական ձևաքով արքենի:
Խաբեցիր՝ ըստին կանեմ գեհենի:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Ես ինքս էլ գիտեմ դժոխքի ճամփան,
Բայց թե շեմ կառող պատմել ամեն բան.
Չորս կողմ կան թաղված գանձեր անհատնում:
Արտը վարելիս հանկարծ ինչ-որ տեղ
Գեղջուկն էլ ոսկու կճուճ է գտնում:
Կարծում է, թե դա բորակ է բյուրեղ
Ս չնինչ ոսկի է: Ահով, հրճվագին
Աղքատը հողից հանում է ոսկին:
Ի՞նչ շարշարանքներ մարդ պիտի կրի,
Ի՞նչ, դեանուդիներ ու վիհեր կտրի,
Ժալոակամարներ պիտի փուլ բերի,
Մինչ աշխարհն իջնի ստորերկրյա:
Հեռու, ապահով գաղտնարաններում
Գանձն է շար ի շար դիզված հուրհրում՝
Թասեր, ափսեներ, ամաններ ոսկյա:
Ս չնտեղ սուտակե գավաթներ էլ կան
Մտնողը հանգիստ կարող է վերցնել,
Մոտերքում դրված հին գինով լցնել:
Ս սում են, հին է այդ հեղուկն այնքան,
Որ փայտն է փտել, և, դարձած տափառ՝
Պահում է գինին մի շերտ գինեքար:

Գրկում գիշերվա ու գարհուրանքի
Չեն հանգչում միայն արծաթ ու ոսկի,
Միայն գինիներ թունդ ու անարատ
Սնխոնջ իմաստունն անվերջ կփնտրի
Հրաշք շի տեսնի, ով ցերեկն ընտրի,
Մինչդեռ խավարում գաղտնիքներ կան շատ:

Կ Ա Յ Ս Ր

Խավարից օգո՞ւտ: Այդ էլ արա դո՛ւ
Պարզ լույսով է լավ կյանքում ամեն լան
Ազնիվ կթվա մթնում խաբեբան,
Եվ սև կթվա ամեն մի կատու
Արդ, բո գութանով վարիր հողը մայր
Նսկու կճուճներ հանիր լույս աշխարհ

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Քահ, քլունգ վերցրու, հողն ինքդ փորիր
Քեզ կվեհացնի գործն այդ գեղջկական,
Փորիր, և հողից իսկույն դուրս կգա
Ոսկե հորթերի մի ամբողջ նախիր:
Կարող եք արդեն ոսկու մեջ լողալ
Դու, քո թագուհին, զուգվել ու շողալ
Միշտ շուք են տվել քարերը անգին
Գեղեցկությանը և կայսեր թագին:

Կ Ս Յ Ս Ր

Ի՞նչ ենք ուշացնում: Շոտա ի գործ փորենք:

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ւ Շ Ա Կ

(Ինչպես վերևում)

Տե՛ր իմ անզուսպ ցանկությունն այդ շափավորենք:
Նախ թող այստեղ լինի ուրախ պարահանդես
Մի այլ գործի կանցնես, երբ այս մեկն ավարտես,
Երբ հանդարտվենք: Պետք է գանձին ստորգետնյա
Սենք արժանի լինենք գործով վերերկրյա:
Թող բարիքի ձգտողն ինքն էլ լինի բարի,
Վաչելք սիրողն իր կիրքը թող սանձահարի,
Գինեմուր հասուն խաղող տանի հնձան,
Հավատացյալն էլ հրաշքի հույսով ցնձա:

Կ Ա Յ Ս Ր

Լավ, բարով թող գա օրը երանյալ՝
Մեծ շորեքշաբթին ապաշխարանքի,
Թող լայն սրահում շուտով աղմկի
Փոթորկանման ուրախ կառնավալ:

(Շեփորներ Բոլորը դուս են գնում)

Մ Ե Ֆ Ր Ս Տ Ո Ֆ Ե Լ

Չեն էլ հասկանում մարդիկ ապիկար
Սոանց քրտնքի լի՛ք երջանկություն:
Թե ունենան էլ իմաստնության բար,
Գուր է, շէն դառնա սրանք իմաստուն:

ԼՆԴԱՐՁԱԿ ՍՐԱՀ

(Դիմակահանդեսի համար զարդարված
կից սննջակներով)

Հ Ե Ր Ո Ղ Դ

Ձի պարելու այստեղ ոճով գերմանական
Ոչ սատանա, ո՛չ ծաղրածու, ոչ ուրվական
Լինելու է գվարճալի տոնահանդես:
Երբ Հոռմի երկար ճամփան բռնեց արքան,
՝ եր բարձրացավ, անցավ լեռներն Սլախական՝
Լ փառս յուր և ի հաճույս թե ձեզ թե՛ մեռ
Նա նվաճեց մի տերություն անզուգական:
Սուրբ ներբանին շուրթը հպեց կայսրը հըռ
Սրժանացավ իրավունքին մեզ իշխելու
Ի լրումն իր տխրոսի ու իր թագի,
Նա մեզ բերեց նաև գղակ խեղկատակի
Բոլորն արգեն վերածնված լինեն կարծես
Բարձրաշխարհիկ ամեն մի մարդ սիրով այնպե.
Մյդ գղակն է քաշում գլխին, ականջներին
Ծաղրածուից չի տարբերվում ամենևին,
Բայց թե իբրև իմաստուն է գալիս հանդես
Ահավասիկ շատերին եմ այստեղ տեսնում
Ներս ևն մանում, դուրս ևն ելնում, ճեմում զույ՛ք լույս
Բերիշներից առանձնացած մի անկյունում՝
Մտերմուկն զրուցում են անհոգ, առույգ:
Է հ վերջապես իմչ ԼԼ Իտիվի արևի տակ,

Իր խենթութեամբ հազարաձև ու դժնդակ
Սշխարհն էլի մնում է մեծ մի խեղկատակ:

Պ Ա Ր Տ Ի Ջ Պ Ա Ն Ո Ի Հ Ի Ն Ե Ր

(Եւ գում են մանդրլինաների նվագակցութեամբ)

Մենք՝ Ֆլորենցիո մատաղ կանայք,
Այսօր շքեղ ղուգվեցինք
Եվ երգելու համար եկանք
Գերմանական արքունիք:

Պճնել են թուխ վարսերը մեր
Սաղիկները գեղեցիկ —
Մետաքս թելեր, մետաքս փնջեր՝
Գեղեցկութեան զորավիգ:

Սրանք փայլով արհեստական
Հմայում են բոլորին
Սչք են շոյում, թարմ են այնքան,
Զեն թառամում ողջ տարին

Տարբեր թելեր են բազմերանգ՝
Համաշափ ու նրբագեղ:
Զատ զատ, գուցե, ծաղրեք սրանք,
Բայց գերո՞ւմ են միատեղ:

Հիացքով եք նայում դուք մեզ,
ՄԻՐ նազանքին սլացիկ
ԶԻ՞ որ մոտ է արվեստն այնպե՞ս
Լութեանը կանադի:

Հ Ե Ր Ո Ղ Գ

Ամեն մեկիդ գլխին, թևին
Լիքը զամբյուղ կա դույնզգույն,
Բերեք նայենք՝ ինչ կա միջին,
Իսկ մեր ուզածն ընտրենք խսկույն:
Շո՛ւտ բացե՛ք մեր աչքի առաջ
Սի ողջ պարտեզ, մի ողջ այգի
Օ՛, թե ապրանքն է հիասքանչ
Եվ թե տերերն այս ապրանքի:

Պ Ո Ր Տ Ի Գ Պ Ա Ն Ո Ւ _ Լ Ն Ե Ր

Եկեք, առեք ինչ կամենար
Միայն շատ մի՛ սակարկէք
Ինչ ապրանք է՝ շուտ կիմանար,
Հաշիվն ի շուտ կփակեր:

Ձ Ի Թ Ի Ն Ո Ւ Ի Ճ Յ Ո Ւ Ղ

(Պատուները վրան)

Ձեզ տախանձում ոչ մի ծաղկի,
Թշնամի եմ՝ թշնամանքի
Եվ քեն չկա իմ սրտում
Ձե՞ որ ե՛ս եմ առհավատչյան
Լեմեն դաշտի խաղաղության,
Ե՛ս եմ բարիք ավետում:

Գուցե այսօր բախտս բերի,
Դստնամ պսակ հերոսների:

Հ Ա Ս Կ Ա Պ Ա Կ

(Ոսկե)

Տերերայի այս շնորհը
Ձեզ կտա շուք նաղելի.
Օգտակարը կարևոր
Եվ գեղեցիկ ավելի.

Յ Ա Ն Ն Ա Ս Ի Կ Օ Ս Ղ Վ Ի Պ Ս Ս Կ

Թղթից, մամուլի թերթ էլ լեր
Ե նշ ծաղիկներ նրբերանգ
Բնական տեսք շունեն թեև,
Լալց հոր մողա Լն սրանք:

Ե Լ Ն Ն Ա Ս Ի Կ Մ Ա Ղ Ի Ն Փ Ա Ի Ն Ց

Իմ անունը ձեզ չի հասել
Թեոֆրաստը չի էլ ասել:
Ամեն տիկնոջ դուր չեմ գա ևս,
Թայց ի՞նչ յս ունեմ, ք լերջապես
Մեկը գուցե ինձ հաժանի
Տանի, չի՞ի դարդը դարձնի
Գուցե անդ տա կի՞նն անծանոթ
Կրծքի մրա իր սրտի մ ա

Վ Ա Ր Դ Ի Բ Ո Ղ Բ Ո Ջ Ն Ե Ր

(Մարտահաւալեր նետելով)

Թող միշտ մողան ի ցույց հանի
Կեղծ ծաղիկներն իր գունագեղ
Դրանք ինչքան լինեն շքեղ,
Չունեն հմայք բնականի:
Թող զարդարեն ամեն գանգուր,
Իսկ մենք միշտ էլ նուրբ ու մաքուր
Թերթերը մեր կթաքցնենք,
Որ գտնողին երջանկադնենք:
Երբ ամառ է այգում, դաշտում,
Ընդ որ վարդերն են բոցկլտում
Բախտից իրեն ո՞վ կզրկի,
Երբ աշխարհում ծառի, ծաղկի
Սիրով ևն լի սիրտ ու հայացք,
Չորս կողմ՝ խոստում, երդում հիացր:

(Կանաչ կամարենքի տակ, ծառուղիներում, պարտիզպանու-
նիները նաշակով դասավորում են իրենց սպրանքը)

Ա Յ Գ Ե Պ Ա Ն Ն Ե Ր

(Երգում են քի որբների նվագակցությամբ)

Թող ծաղիկներն անուշ վթթեն
Ու ձեր գլխի զարդը դառնան,
Բայց միրգն ուրի՞շ բան է արդեն
Հա մն է սրժևք տալիս նշան:

Այգեպաններ ենք թխաղենձ,
Բերել ենք բալ, գեղձ ու սալոր,
Առեք, լեզվի ու քիմքի դեմ
Աչքն ի՞նչ է որ — Յուլյի դատաւոր:

Յկեք այստեղ, համտև արեք
Ճաշակեցեք մրգեր հասուն:
Երգով գովեք վարդը նաղուն,
Բայց խնձորը միայն կերեք:

Մրգեր շարենք լրար կողքի,
Թարս ծաղիկներ անարատ,
Որ ստացվի մրգի ծաղկի
Յուցահանդես լիառատ

Կամարներ են շորս կողմ կանաչ,
Տալաւարներ գեղեցիկ
Կա ամեն ինչ աչքի առաջ
Բողբոջ, տերև միրգ, ծաղիկ:

(Եկու խամբը, կիրառների ու բնութների նվագակցութեամբ
փոխանիփոխ երգելով, շառունակում է բարձունքի վրա սան-
դրված՝ դասավորել ապրանքը և շնորհներ հրավիրել)

Մայր և դուստր

Մ Ա Յ Ր

Երբ դու աշխարհ եկար, դստրիկ,
Ղրիբ նախշուն թասակ,
Ինչքա՛ն էր նուրբ դեմքդ գողարիկ,
Ի՛նչ մարմին ու նազանք:
Խորհում էի միշտ քո մասին,
Քեզ ցանկանում լավ ամուսին,
Եարի թագ ու պսակ:

Բայց ա խ, այդպես, հույսով պատիր:
Տարիք եկան, անցան,
Փեսադուներն ընտիր-ընտիր
Արագ անհայտացան:
Շիշտ է, պարում, զվարճանում
Աչքով-ունքով էիր անում,
Բայց եղան ցիրուցան:

Հնարեցինք տոներ ուրախ—
Ըա էլ լօգնեց կարգին,
է լ բոնոցի, է լ թղթախաղ—
Թակարդ լընկան կրկին:
Հիմարները փախան դեռ դեն,
Բայց գիրկդ բաց. հիմա արդեն
Գուցե որսաս մեկին:

Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Հ Ի Ն Ե Ր

(Վեռափթիթ և գեղեցիկ Հավատվում են, մաքամիկ զբույցի
բռնվում)

Ձ Վ Ո Ր Ս Ն Ե Ր Ի Վ Թ Թ Ձ Ն Ո Ր Ս Ն Ե Ր

(Յանցերով, ասկաններով, իսկոսա նյութերով և այլ պարա-
զաներով մատենում են, միանում սիրունիկ աղջիկներին.
Կատակում են, վազում իբար եակից, փորձում բռնել, հա-
նելի խոսքեր են փոխանակում)

Փ Ա Յ Տ Ա Հ Ա Տ Ն Ե Ր

(Հայանվում են հախուռն, կոշա ու կոպիա շարժումներով):

Հե՛յ, ճամփա՛ բացեք,
Մե՛նք ենք, իմացե՛ք.
Մառեր ենք կտրում
Ու գեախն փռում:
Վա՛յ ով տակն ընկավ.
Մսել է՛ հանգավ:
Մեզ պատիվ ու փա՛ռք.
Մեզնով է, որ կաք
Ձեզ պահողը միշտ
Սարդն է կոշտ-կոպիտ:
Գիտցե՛ք. առանց մեզ
Վայն է տարել ձեզ:
Մենք որ չքրտնենք,

Մարդի՛կ փափկասուն,
Կսառչեք իսկույն
Խելոքներդ նենգ:

Խ Ե Ղ Կ Ա Տ Ա Կ Ն Ե Ր

(Ղոնհիկ ծամածուրջամբ)

Հիմար էք, խաբված,
Կորամեջք ծնված:
Մենք վիզ շենք ձողամ,
Բեռներ շենք կրում.
Թեթև են այնքան
Մաղրածուական
Շորերը նախշուն:
Շրջում օրնիրուն
Պարապ ու սարապ,
Անհող, անշտապ
Շուկա ենք մտնում,
Մարդկանց մոտենում,
Նայում բերանբաց,
Մղրտում հանկարծ:
Ամբոխն է սոսկում,
Դուրս ենք սողոսկում՝
Արագ ու ճապուկ,
Ինչպես օձաձուկ,
Փախչում հեասպառ:

Մեկ է մեզ համար,
Պիտի վրդովվե՞ք,
Թե՞ պիտի գովեք:

Պ Ո Ր Տ Ա Ր Ո Ւ Յ Մ Ն Ե Ր

(Շողոհորթարար, ԲՃՆԵԼԱՎ)

Փայտահատներդ,
Ածխահատներդ
Բարեխիղճ ու լավ
Մարդիկ եք, հարկավա՛
նոր գլուխ տալով,
Քաղցր ժպտալով,
Իրար խաբելով,
Նույնկերպ խփելով
Նալին թե սալին,
Մարդ չի տաքանա,
Փոր չի կշտանա
Փառք, փառք բարձրյալին,
Որ կաք աշխարհում,
Դո՛ւք եք շնորհում
Փայտ, ածուխ, կրակ
Թե չէ երկնառաք
Հուրք կլինեք
Սիակ հույսը մեք
Այնինչ, երբ կա փայտ,
Կրակն է առատ

Եվ ձեր տանը դուք
Եփում եք, խաշում
Թե՛ միս ու թե՛ ձուկ
Երբ հոտն են քաշում
Հյուրերն անկշտում
Լամ պնակալեզ,
Սեղան են նստում,
Բարիք մաղթում ձեզ

Հ Ո Ր Ր Ա Յ Ո Ղ

(Գիտակցութունը կորցրած)

Սի նախատեք դուք ինձ ալուր
Մի՛ պղտորեք իմ հոգին,
Թողեք շնչեմ ազատ ու խոր,
Երգեմ, հրճվեմ սրտագին:
Պիտի խմե մ, խմե մ, խմե մ,
Զարկեք ձեր թուսն իմ թասին:
Մի նայեք ինձ դուք խոսադեմ,
Լկեք խմենք միա ին:

Կինս կովեց հետս դարձյալ
Նեխը կոխեց ու հանեց,
Երբ ուղեցի արգարանալ,
Ինձ խրտվիլակ անվանեց:
Պիտի խմեմ զօր ու գիշեր,
Գավաթները թող զնգան,

Ինձ հետ խմեք, խրտվիլակնե՛ր,
Զնգոցն է կյանքն իսկական:

Գիտեմ ճամփան իմ գինետան,
Պատճառ շունեմ ես վախի,
Ինձ ապառիկ գինի կտան
Տեր, տիրուհի, աղախին:

Պիտի խմեմ գիշեր-ցերեկ,
Զարկեք ձեր թասն իմ թասին,
Ի՞նչ էք հեռու քաշվել, եկեք,
Գինի խմենք միասին:

Այստեղ քեֆ էմ անում սրտանց,
Չէ՞ որ չկա խանգարող,
Թողեք այսպես մնամ ընկած,
Ոտքի կանգնել չեմ կարող:

Խ Ո Ւ Մ Բ

Խմե նք, խմե նք, խմե նք, եղբայրք,
Թասը թասի զարկեցեք,
Սեղանի մոտ, սեղանի տակ,
Ամեն տեղ էլ պինդ կացեք:

(Հերոլդն ազդարարում է, ու ժամանել են տարբեր ուղ-
քուսթյունների պատկանող բանաստեղծներ՝ բնության, առ-

Ֆունիքի և ասպետական դասի գովերգուներ Ոմանք սիրա-
յին, ոմանք էլ մարտական պոեզիայի ներկայացուցիչներ
են Մրցակիցները խոնվում են, իրար խանգարում, բայց
չեն տալիս խոսելու Միայն մեկին է հաջողվում առաջ
մղվել)

Ե Ր Գ Ր Մ Ա Ր Ա Ն

*Գիտե՞ք, ինձ ինչն ամենից շատ
կուրախացներ ու կհուզեր
Այնպիսի բան, որ, ինձնից զատ,
էլ ոչ մի մարդ լսել չուզեր:*

(Գիշեր և շիրիմներ երգող բանաստեղծները ներգություն
են խնդրում, քանի որ իրենք այդ պահին զբուցում են մի
կորահայտ վամպիրի հետ, իսկ դրա շնորհիվ կարող է
զարգանալ պոեզիայի մի կոր հյուսի շերտըր դա հաշվի է
ստնում և ազդարարում, որ հայտնվել են հունական սոսու-
պելների հերոսները Չնայած արդիական հանդիւժանին,
նրանք չեն կորցրել ո՛չ իրենց բնավորությունը ո՛չ
էլ հուսպույրը)

Գրացիաներ

Ա Գ Լ Ա Յ Ա

*Ս ենք ենք բերում թովչանք ու սեր,
Թովչանք դարձրեք ողջ կյանքը ձեր:*

Հ Ե Ք Ե Մ Ո Ն Ա

Մմեն հույզի խառնեք թովչանքս
Քեղեցկացրեք ամեն տենչանքս

Է Ֆ Ր Ո Զ Ի Ն Ս

Որքա ն է լավ, երլ դրա հետ
Միրտ էլ ունեք երախտապետ

Պաշկաներ

Ս Տ Ր Ո Պ Ո Ս

Ես՝ քույրն երեց, նվիրական
Քործն եմ ախօր անել ուզում
Մտորելու բան կա այնքան,
Երբ կյանքի նուրբ թելն ես հյուսում:

Ումենալավ լուշն եմ ընտրում,
Որ միշտ լինի թելն անթերի,
Զորավիգ է ինձ այդ խնդրում
Ճարակությունն իմ մասաների:

Երբ ձեզ այրի, ինչպես կրակ,
Տենչը պարի կամ հեշտանքի
Զգո՛ւյշ եղեք շա՛տ է բարակ,
Կկտրվի թելը կլանքի:

Կենաց մկրատն է իմ ձեռքին:
 Իր վարմունքով մեր քույրն երևց
 Դուր շի գալիս էլ երկնքին
 Պառավր շա՛տ փորձանք բերեց:

Գոյությունն էր աննպատակ
 Երկարացնում նա սպարդյուն,
 Նետում մահվան վիճն անհատակ
 Վառ հույսերով ապրող մարդուն:

Լայց թե ինքս էլ հարյուր անգամ
 Մխալվել եմ, թեև ծեր շեմ:
 Մկրատն այսօր ես ինքնակամ
 Կպահեմ, որ շմեղանշեմ:

Ես ինձ սիրով կկաշկանդեմ,
 Այսօր ոչ մի կյանք չեմ խղի:
 Հրճվեք ազատ ու խնդադեմ,
 Ճախրեք թևով ձեր Լրազի:

Լ Ա Ք Ե Գ Ի Ս

Ինքս եմ այս գործն առաջ տանում,
 Խոհեմ քույրն եմ ես միակ
 Ճախարակն է անվերջ դառնում,
 Լայց ոչ դանդաղ ոչ արագ

Անթիվ թելերն են փաթաթում,
Ամեն թելն իր տեղն ունի.
Չեն խճճվում ու չեն հատվում
Կծիկի մեջ անհունի:

Վերջը կգա ողջ աշխարհի,
Եթե մի պահ թերանամ,
Պիտի հաշվեմ ժամ ու տարի
Եվ ջուլհակին թելը տամ:

Ն Ե Ր Ո Ւ Պ

Չեք իմանա, ովքե՞ր կգան հանդես,
Թեկուզ և լավ գիտեք ասքերը հին
Չարիք են պատճառել միշտ աշխարհին,
Բայց բաղձալի հյուրեր կթվան ձեզ:

Չեք, հավատա, ֆուրիաներն են դրանք՝
Բարեհամբույր, շքնաղ ու գեռատի,
Բայց հետները խոսեք և կիմանաք.
Խայթում են այդ օձերն աղալնատիպ:

Նենգ են, բայց երբ ամեն ապուշ ու խենթ
Սրատով է ուզում հասնել փառքի,
Ինչո՞ւ հագնեն դիմակ հրեշտակի.
Կավ չէ՞, որ խարազան են շարաղեստ:

Փորիաներ

Ա Լ Ե Կ Տ Ո

Ձեզ ի՞նչ կօգնի. դուք մեզ կապավիճեք,
Կատուներ ենք շքնաղ ու փաղաքուշ
Ինչե՛ր կշշնջանք ձայնով քնքուշ,
Եթե հանկարծ սիրահարված լինեք:

Կասենք՝ ուրիշին է աչքով անում
Այն աղջիկը, որով տարված եք միշտ,
Կաղ է, կուզիկ, սուսիկ-փուսիկ անմիտ
Ինչո՞ւ լավ հարսնացու չեք որոնում:

Հարսնացուի միտքն էլ կպղտորենք,
Կասենք՝ իրեն ծաղրում եք շարունակ:
Կհաշտվեք, բայց թե կդառնանաք,
Կասկածը դարձնելով կյանքի օրենք:

Մ Ե Ք Լ Ր Ա

էհ, ի՞նչ է դա: Այ, երբ ամուսնանաք,
Գործի կանցնեմ, թույն կխառնեմ իսկույն
Երջանկությանը ձեր սքանչելագույն
Անկայուն են թե մարդ, թե ժամանակ:

Երբ հաջողակ է մարդն ու երջանիկ,
Ձանձրանում է, ապա անմտորեն
Սուավել մեծ բախտ է փնտրում արդեն,
Արևի տակ տենչում սառնամանիք:

Գիտեմ՝ ինչպես վարվել այդ մարդկանց հետ՝
Ասմոդեյին՝ հավատարիմ ոգուն,
Դրանց մոտ եմ ես առաքում իսկույն,
Սերմանելով պառակտում ու աղետ:

Տ Ի Զ Ի Ֆ Ո Ն Ն

Դաշույն և թույն՝ լեզվի տեղ շար —
Պատիժն ահա դավաճանի ..
Եթե դրժես, կկործանի
Քեզ քո գործած մեղքն անպատճառ:

Քաղցրությունը ակնթարթի
Կդառնա մաղձ ու դառնություն,
Քեզ չի փրկի ջանքն ապարդյուն,
Քավիր մեղքը քո տմարդի:

Կյանքում ոչ ոք չի ների քեզ,
Ի արձագանք քո արարքի,
Փայուն էլ «վր՛ժ» կաղաղակի
Դավաճան ես, պիտի մեռնես:

Հ Ե Ր Ո Ղ Դ

Արդ, հաճեցեք մի կողմ քաշվել արագ՝
Ինչ որ տեսնեք, նոր է առհասարակ:
Ահավասիկ դանդաղ շարժվող մի լեռ՝
Վրան ծաղկանկար շքեղ գորգեր:

Կեռ ժանիքներ, կնճիթ օձանման,
 Խորհրդավոր Սակայն ես անպայման
 Կտամ ձեզ բանալին: Ահա սի կին
 Փղի վղին բազմած, փայտը ձեռքին,
 Մյուսն էլ մեջքին կանգնած, ինչպես արձան
 Կուրացնում է փայլով գեղեցկության:
 Երկու կին են քայլում շղթայակապ,
 Մեկի դեմքին՝ հրճվանք, մյուսի դեմքին՝ սարսափ,
 Մեկը տանջվում, մյուսն աղատ է կարծես
 Թե ովքեր էն, իբև նք թող տեսն ձեզ:

Ն Ր Կ Յ Ա Ի Ն

Քառս-հանդես, կիսավշուշ,
 Ծուխ, աղոտ լույս ջահերի,
 Զորս կողմ դեմքեր ուխտադրուժ
 Եվ, ա՛խ, շղթա ու գերի:

Ինձնից հեռու, ծաղրածունեք
 Միծաղելի, խաբեբա
 Փաշարել են ինձ այս դիշեր
 Լմ ստիաներն անոսյա:

Տեսեք, բնկերն իմ սրտակից
 Մահվան դավ էր որոճում ..
 Ճանաչեցի իր դիմակից:
 Զգաց և հեաքն է ջնջում:

Ա՛խ, ես ինչպե՛ս կուզենայի
Փախչել, շղթաս թոթափած,
Բայց ամենուր շունչն է մահի,
Սարսափ, մշուշ անթափանց...

Հ Ո Ւ Յ Ս

Ողջո՛ւյն, քուրե՛ր իմ սիրեցյալ
Դիմակ եք դուք հագել դարձյալ,
Բայց ես հաստատ գիտեմ արդեն,
Վաղը քողն այդ կնետեք գեն,
Ցույց կտաք ձեր դեմքն իրական:
Այս ջահերի ցուքի ներքո
Այնքան էլ չեք ուրախ ու գոհ,
Բայց երբ լուսով արեգական
Դուրս գանք դաշտեր ու հովիտներ
Եվ միասին կամ մեն-մենակ
Շրջենք ազատ, այն ժամանակ
Բաց կլինեն սրտերը մեր.
Հոգսից հեռո՛ւ, շորս կողմ կանա՛չ
Եվ մի ձգտում — քայլել առաջ:
Մենք ամեն տուն ոտք կդնենք
Որպես հյուրեր ցանկալի,
Զէ՛ որ մի տեղ պիտի գտնենք,
Ի վերջո, լավն աշխարհի:

Ե Ո Ն Ե Մ Ո Ւ Ք Ց Ո Ւ Ն

Հույս և Երկյուղ — ահա մարդկանց
Ոսոխները անագորույն:
Շղթայված եմ պահում դրանց,
Հեռո՛ւ, շունեք այլ փրկություն:

Հսկա փիղն եմ քշում ահա:
Աշտարակ է մեջքի բեռով,
Սակայն վստահ քայլում է նա
Նեղ, գահավեժ կաժաններով:

Աստվածուհին է ճաճանչում
Աշտարակում հպարտ կանգնած
Ամենուր է իշխել տենչում
Կայն թևերով իր սրբնթաց:

Փայլ ու փառք է շորս կողմ սփռում,
Կույս շնորհում ողջ աշխարհին,
Երա անունն է Հաղթանակ,
Նա է Գործի աստվածուհին:

Զ Ո Ւ Լ Ո Ս Թ Վ Ր Ս Վ Տ Ե Ս

Հա - հա , Եկա ժամանակին,
Հիմա ձեղ ջարձ կտամ կարգին,
Այդ Հաղթանակ տիկինն, անշուշտ,
Ուժք զարկիս կզգա շատ շուտ:
Ճերմակ թևեր ունի, տեսեք,

Կարծում է, թե արծիվ է սեզե
 Եվ ուր հասնի, ստրուկն է իր
 Ոմեն մի աղգ, ամեն երկիր:
 Մինչդեռ ամեն հաջողութուն
 Իմ կրծքի տակ ծնում է թույն:
 Ինչ-որ բարձր է, թող ցածրանա,
 Ինչ-որ ցածր է, թող բարձրանա:
 Ժող միշտ լինի արևի տակ
 Շիտակը՝ ծուռ, ծուռը՝ շիտակ:
 Ու է իմ ողջ կյանքն աշխարհում,
 Արանով լմ միայն ապրում:

Հ Ե Ր Ո Ւ Դ

Ա իս, քոստ տ շուն պլխի՛դ իջնի
 Հարվածը սուրբ գայիսոնի,
 Փովես, սողաս ու գալարվես...
 Բայց ի՞նչ է սա: Թղուկն ինչպե՞ս
 Փոխվեց, դարձավ կծիկ դժնի:
 Մ չ բեզ հրաշք ձու դարձավ մեծ,
 Ուտեց, փքվեց, հետո պալթեց,
 Միջից ելավ դույզն երկվորյակ՝
 Մի իծ, շղջիկ մի ալլանդակ:
 Իծն է սողում փոշիներում,
 Սև շղջիկը դուրս է սուրում:
 Սիանալ են ուղում, գիտեմ,
 Ի նչ լավ է, որ երբորդը չե՞

Չ Ա Յ Ն Ե Ր

- Գնանք, պարում են ներսում:
- Ոչ, հեռանալ եմ ուղում:
- Մեզ պաշարում են այստեղ
Ուրունքը շար ու ահեղ:
- Գլխիս ինչ-որ բան դիպավ:
- Ոտքիս ինչ որ բան կպավ:
- Վերք շհասցրին ոչ մեկին,
Բայց վախեցրին ամենքին:
Փշացրին տոն ու հանդես
Վիժվածքներն այդ դժնատես:

Հ Ե Ր Ո Ղ Գ

Այն օրից, ինչ հանդեսներում
Սիսակարգը ինքս եմ վարում,
Հևակում եմ ելում ուտին,
Որ ձեր ուրախ հավաքույթին
Չխառնվեն անկող հյուրեր:
Ոչ մի դիջում չեմ արել դեռ
Բայց առաջին անգամ, այսօր
Զգում եմ ինձ խեղճ ու անզոր:
Ներս են լցվում, ինչպես տեսաք,
Ուրվականներ ամեն տեսակ:
Ինչպե՞ս փրկեմ ձեզ փորձանքից
Ոգիների այս հորձանքից:
Առաջ միայն թղուկն էր շար

Հիմա չկա հնար ու ճար
 Այլ դուրս գնա կամ ներս մտնի,
 Պիտի հայտնեմ, ըստ պաշտոնի,
 Քայց ի՞նչ տսեմ, երբ շղիտեմ,
 Ես ի՞նչ անեմ տեսիլքի դեմ:
 Քեթ օգնեցեք ինձ այս բանում,
 Նայեք, ի՞նչ է մտա սլանում:
 Չխախտելով և ոչ մի կարգ,
 Ինչ-որ շքեղ, քառածի կառք
 Ներս է խուժում բայց գահլիճում
 Քազմ, լիթյանը չի էլ կպչում:
 Շուրջն աստղեր են վառ ճաճանչում,
 Գունագեղ է ցուրքը այնքան,
 Կարծես լապտեր է մոզական:
 Կառքն է գալիս փոթորկի պես:
 Տե՛ղ բացեք, շո ւտ Սոսկում եմ ես:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ս Ա Պ Ա Ն

Չիե՛ր, ծալեք թևերը ձեր,
 Մի՛ մոռացեք, որ կան սանձեր
 Պիտի կանգնեք, երբ ես ուզեմ,
 Սուրաք, երբ ձեզ խրախուսեմ:
 Նվիրական այս հարկի տակ
 Մեզ բազմությունն է բովանդակ
 Զմայլանքով շրջապատում
 Աւ զարմանքով խոսում, դատում:

Հերոզդ, կարողով ավանդական
Ազդարարիր՝ ուղքեր եկան,
Մեր տեսքն այլ է, ինքներս՝ այլէ
Դե, անունս տուր անսխալ:

Հ Ե Ր Ո Ւ Գ

Սակայն անվամբ ինչպե՞ս կոչեմ,
Եթե բնավ քեզ ծանոթ չեմ:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Հապա փորձիր:

Հ Ե Ր Ո Ւ Գ

Նոսեմ ազատ:

Գեղեցիկ ես, երիտասարդ,
Փոքր ես, բայց թե կանայք նազուն
Կհամարեն քեզ այր հասուն:
Կփշրես շա՛տ սիրտ կանացի,
Գայթակղիչ ես բնածին:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Շարունակիր, վատ չէր կարծես,
Առեղծվածը գուցե լուծես:

Հ Ե Ր Ո Ւ Գ

Պանգուրներդ են գիշեր, թայց աշքիդ շանթն է սև
Շողակնի պես ցրում ամեն խավար,
Ճոխ թիկնոցիդ մետաքսն ալիքաձև
Հոսում, իջնում է քո ուսերն ի վար,
Մտնում երիզներով ծիրանավառ:
Տեսքով նաև աղջկա էս նման,
Թեև ճարպիկ ասպետ ես անպայման
Վա յ այն աղջիկներին և երանի
Ով դաս է քեզ տվել այբուբենի:

Պ Ա Տ Ս Ե Ի Կ Ս Ո Ա Պ Ա Ն

Կարո՞ղ ես դու գլխի լնկնել՝
Ով է կառքում գահին թիկնել:

Հ Ե Ր Ո Ւ Գ

Արթա է ինձ թվում, հարուստ, բարի
Նա, ով շահի սիրտն այդ բարերարի,
Բյո՞ւր երանի: Մի հոգս կա կրծքի տակ
Հոգսը ժողովրդի իր հպատակ:
Ապրում է նա՝ շուրջը վիշտ փնտրելով,
Դա վայելքից, բախտից նախընտրելով:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Նրբ առաջ ևս անցել այդքան,
Տուր և պատկերն ամբողջական:

Հ Ե Ր Ո Ւ Դ

Արժանիքին գովք չի հասնի
Գեմքն է նման լիալուսնի,
Հլութեղ շուրթեր, առողջ այտեր,
Գլխին շալմա՝ վրան դարդեր,
Ճոխ հանդերձանք և շուք, և փալլ:
Վեհություն չէ՞ սա կատարյալ
Տիրակալ է նա անպարման:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Աստվածն է նա հարստության,
Պլուտոսն ինքն է բաղմած գահին:
Սիրով կօգնի ձեր արքային:

Հ Ե Ր Ո Ւ Դ

Պատմիր և քո «ինչն» ու «ինչուն»:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Պոեզիա եմ, առատություն.
Բանաստեղծ եմ ևս կատարյալ,
Նրբ վատնում եմ գանձն իմ շռայլ:

Ես էլ հարուստ եմ անսահման,
Հարոստ՝ Պլուտոս աստծո նման,
Զարդն եմ աստծո խնշույքների
Երբ ես շկամ, կյանքն է թերի:

Հ Ե Ր Ո Ւ Ի

Սյդ փշոցից մենք շատ ենք գոհ,
Քույց տուր նաև արվեստը քո:

Պ Ա Տ Ո Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Կկատացնեմ երկու մատով,
Կլցնեմ տունն աղամանդով:
Սհա մանյակ մարգարտահուռ,

(Մատներով շաւունակ կտտացնում է)

Յղեր, գինդեր զարդ ոսկեկուռ,
Ընտիր սանրեր ընտիր պսակ
Սատանիներ տեսակ տեսակ:
Ահա կայծեր էլ գունագէղ
Բոց կարձակեն ոչ ամեն տեղ:

Հ Ե Ր Ո Ւ Գ

Ողջ բաղմությունն ինչպե՛ս իսկույն
Վրա պրծավ առատ ոսկուն
Քանձի հեղեղ, ժխոր ու կանչ,

Տեսի՛լք է սա, թե՛ մղձավանջ:
 Սա ինչ-որ շար խաղ է թվում.
 Հենց որ մեկն է առաջ նետվում,
 Գանձն է որսում իր ձեռքն ընկած,
 Չքանում է ողջը հանկարծ:
 Այո, եթե մանյակ ուղես,
 Դառնալու է մի բուռ բզեզ:
 Խեղճ մարդ, որսդ նետում ես դեմ
 Ու բզզոց ես լսում արդեն:
 Ինչ թվում է դարդ անթերի,
 Իսկույն փոխվում է թիթեռի:
 Ինչ տալիս է այս խարեբան,
 Փայլով է լոկ ոսկու նման:

Պ Ա Տ Ս Ն Ի Կ Ա Ռ Ա Պ Ա Ն

Խոսում ես դու իբրև գիտակ,
 Բայց թե ինչ կա դիմակի տակ,
 Չես վերժանում: Մի՛ ջանա զուր,
 Երբ միտք է պետք առավել սուր:
 Քողնենք այս վեճն անցանկալի,
 Դիմեմ ես իմ տիրակալին:

(Պլուտոսին դիմելով)

Այս քառաձի հողմը, աստվա՛ծ,
 Քո կամքով շի՛ ինձ վստահված,
 Եվ շե՛մ վարում կառքն այս թռչող

Միշտ, ամենուր բարեհաջող:
Զե՞մ նշանել խոյ վազքի մեջ
Արմավենու ճյուղեր կանաչ,
Քեզ համար շե՞մ նեւովել առաջ
Եվ գուպարէլ, հաղթել անվերջ:
Ես շե՞մ հյուսել դափնին քո ճախ
Մաքիս ուժով, բազկով կարող:

Պ Լ Ո Ւ Տ Ո Ա

Կվկաւեմ ես հրճվազին
Որ դու ես իմ ոգու ոգին,
Իմ կամքով ես գործի նեւովել,
Ինձնից հարուստ է, առավել:
Բարձր եմ դասում դափնիդ կանաչ
Քան ամեն թագ լուսանաճանչ:
Կասեմ ի լուր ժողովրդի
Բեզնով հպարտ եմ ես, որդի:

Պ Ա Տ Ա Ն Ի Կ Ա Ռ Ո Պ Ա Ն

Ես շաղ տվի առատ այնքան
Կայծեր՝ շնորհ նվիրական:
Ոմանց գլխին պարզ ու որոշ
Որպես հրե մի ապարոշ,
Փայլ է սփռում հենց այս պահին
Իմ նեւած կայծն աստվածային
Հույսն է մարդկանց գլխին ծագուհի,

Սակայն միշտ չէ բոց արձակում,
Իսկ շատերի գլխին շիջած՝
Տխուր մարում է մոխրացած:

Կ Ա Ն Ա Յ Ի Ա Ս Լ Կ Ո Յ Ի

- Թունդ խաբեբան է երևում:
- Տեսեք, ցցվել է վերևում:
- Բվի պես է թառել կառքին
- Նայեք սմբած խեղկատակին.
- Ոսկոր, կաշի, էլ բան չկա:
- Որ կմշտես, չի էլ դգա:

Ս Մ Ք Ո Մ Մ Ա Ղ

Հևոռ է, կանանց եղկելի ցեղ
էլ քս սրտում շունեմ ես տեղ:
Երբ կինս մի հոգս ուներ՝ տուն
Լմ անունն էր ժլատություն:
Օտախն էր շեն շէինք վատնում,
Բարիքն առատ ու անհատնում
Գուրս չէր հոսում, լցվում Լր ներս .
Վա՛տ է, եթե ժուժկալ լինես
Բայց թե հիմա, երբ աշխարհում
Կինը ոչինչ չի խնայում,
Ինչպես ամեն սնանկ վատնիչ
Որի կրքից իր փողն է քիչ,
Վա՛յ խեղճ կրակ տղամարդուն

Հա պարտքեր է վրան բարդում
Կողակցուհին... Սա թեւ ձանում,
Վարձը երբեք տուն չի ատնում:
Ի՞նչ տուն, երբ կա զարդ, սիրեկան,
Կա գինարբուք մտերմական...
Ո՞նց շողում ոսկու վրա,
Արական է սեռս իրավ...

Կ Ա Ն Ա Ն Յ Պ Ա Ր Ա Ք Լ ՈՒ Խ

Ի՞նչ է փշում ու գոգոռում]
Փլատ վիշապն այդ խայտառակ .
Տղամարդկանց է գրգռում,
Երբ մի բան չեն առհասարակ:

Կ Ա Ն Ա Յ Ք

(Բազմուրջան միջից)

Վա հ, խրտվիլակ: Չարկեք գրան,
Սյդ շոր փայտին խաչելության:
Չի՛ վախեցնի դարձվորն անհայա.
Մենք բուրս էլ գիտենք լավ վատ,
Որ վիշապը թուղթ է ու փայտ:

Հ Ե Ր Ո Ւ Դ

Հանգի՛ստ, հանուն գայխսոնի:
Թայց գայխսոնն էլ չի օգնի,
Երբ հրեշներն են այլանդակ

Սրահն առնում թևերի տակ:
Վիշապների թեփազրահ
Երախներից հուր է ժայթում:
Մարդիկ փախան, և պալատում
Գատարկ է, լուռ ամեն սրահ:

(Պլուտոսն իջնում է կառնից)•

Ի՞նչ վեհորեն իջավ աստված
Նշան տվեց վիշապներին:
Արկղը սրանք (ոսկուն գամված
ժլատության հետ) իջեցրին,
Դրին աստծու ոտքերի տակ:
Մա ի՞նչ հրաշք է դժնդակ

Պ Լ Ո Ւ Տ Ո Ս

(Կառտայտնին)

Աղատվեցիր քեզ ձանձրացնող բեռից:
Անհոգ սուրա քո ոլորտը նորից,
Մա քո տարերքը չէ այստեղ սարսափ,
Իրարանցում տեսար, միայն խուճապ:
Մենության մեջ աշխարհդ արարիր,
Ուր պարզության դեմքին պարզ ես նայում,
Ուր քեզ ես պատկանում ու վստահում,
Ուր գին ունեն ռեզեցիկն ու բարին:

Ես առաքյալն էմ քո հովատարիմ
 Եվ ազգակիցը մոտ ու մտերիմ:
 Գու ամենուր սիրում ես լիություն,
 Իսկ ես վայելք եմ շնորհում մարդուն:
 Աղամորդին հաճախ է տատանվում
 Որի՞ս գերադասի կյանքի բովում:
 Քո հետևորդն անհոգ միշտ կլինի,
 Իսկ ով գա իմ հետքով, պիտի տքնի:
 Ես ոչ մի գործ գազանի չեմ կատարում
 Շնչեմ—դա կլսվի ողջ աշխարհում:
 Ինձ բախտ ես շնորհել. Մնաս բարով:
 Կանչիր, և հղամ նույն ճանապարհով:

(Հեռանում է ինչպիսի եկել էր)

Կ Լ Ռ Ի Տ Ո Ս

Արդ ազատեմ կախարդանքից ոսկին,
 Գովազանով դարկեմ այս փականքին:
 Բացվում է, պղնձյա կաթսաներում
 Ոսկին է արյան պես ահա ետում՝
 Վրան պսակ, շղթա ու մատանի:
 Բայց դա դուրեհ հալչի ու ցած իջն է

— Նայե՛ք, նայե՛ք հուր հալոցքին,
 Բարձրանում է, ետում ոսկին:
 — Ի՞նչ թանկարժեք ամանեղեն,
 Զարդ ու դրամ— ոսկու հեղեղ:
 — Գուկատներն են խայտում, խաղում,
 Սիրտս ինչպե՛ս է նվազում:
 — Ինչ ցնորք էր, այրող երազ,
 Աչքիս առաջ տեսնում եմ պարզ:
 — Բավական է, որ կռանաք,
 Անբալ գանձի կտիրանաք:
 — Եկեք թափով նետվ՛նք առուջ,
 Խլենք արկղը այս հիասթափանչ:

Հ Ե Ր Ո Լ Գ

Խելագարնե՛ր, ի՞նչ եք անում,
 Սա խաղ է լող, շե՛ք հասկանում:
 Հույս շունենաք մեծ բաների.
 Ո՞վ ձեզ ոսկի կտա ձրի:
 Այս խաղի մեջ, անկեղծ ասած,
 Ժեսոնն էլ շատ է շափազանց:
 Սպիկարնե՛ր, ուզում եք դուր
 Որ տեսիլքը այս վեհաշուք
 Լրողութ՛յո՞ւն դառնա կոպիտ:
 Ճշմարտութ՛յունն ի՞նչ է, երբ միշտ
 Ցնորքից եք կառչում տարված:
 Կանի՛ր սրանց, ո՞վ կեղծ աստվա՛յ:

Պ Լ Ո Ւ Տ Ո Ս

Դժվար բան չէ, դրա համար
Գավազանդ շատ է հարմար,
Կթաթտիսեմ հալոցքի մեջ...
Դե, դիմտկներ, շքվեք և վե՛րջ:
Գավազանն է բոց տբձակում,
Հուր անձրևում ու կայծակում:
Ով մոտ գա ինձ, նա անխնայ
Նույն վայրկյանին կմոխրանա:
Ինքս եմ տհա ձեզ մոտ գալիս:

Ա Ղ Ա Ղ Ա Կ Ն Ե Ր ԵՎ Ի Ր Ա Ր Ա Ն Յ Ո Ւ Մ

- Վա՛յ մեզ, վա՛յ ինձ՝ աղետյալիս:
- Ո՞ւր եք այդպես վրա տալիս:
- Ե՛տ գնացեք, դո՛ւրս գցեք ձեզ:
- Կրակն այրեց դեմքս կարծես:
- Վառվող փայտն եմ զգում մեջքիս:
- Կորանք, փրկվել մարդ չի կարող:
- Ստ-ետ գնտ, հիմա՛ք ամբոխ,
- Անմի՛տ հեզեղ դիմտկների:
- Ա՛խ, թե տուտժ դո՛ւրս թռչեի:

Պ Լ Ո Ւ Տ Ո Ս

Ամբոխն արդեն ցրիվ եկավ,
Ու ոչ մի մարդ չայրվեց, հարկավ:
Փախան ահից,

Ինչպես մտհից,
Բայց կգծեմ անտես շրջան՝
Կարգ-կանոնի առհավատչյան:

Հ Ե Ր Ո Ւ Կ

Լավ գործ արիր, ես շատ եմ գոհ
Զորությունից քո ողջախոհ:

Պ Լ Ո Ւ Տ Ո Ս

Համբերիր, այր առաքինի,
Խառնակություն դեռ կլինի:

Ժ Լ Ա Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Էլ ոչ մի բան արդեն չի խանգարի,
Որ ամբոխին նայեք, թե ցանկանաք:
Ինչպես և միշտ, առջևում են կանայք՝
Ազահ աչքերի մեջ տենչն ավարի:
Կարծեմ, լրիվ չեմ ժանգոտվել ես դեռ,
Իսկ սիրուն կինը միշտ սիրտ կդադի ..
Մխիթարված՝ անցնեմ սիրախաղի
Դժվար չէ ինձ համար նման մի դեր
Բայց թե սրահը լիքն է շափազանց,
Ի ոլորը չեն լսի խոսքն իմ ասած:
Ես կփոքձեմ, եթե ինձ հաջողվի,
Խոսել միայն լեզվով շարժուձևի:

Եթե չօգնեն ձեռք, ոտք ու դիմախառ,
Կա այլ հնարք նոր ձև կտամ ոսկուն,
Տրորելով, ինչպես կավի շաղախ...
Ի՞նչ չի դառնա մետաղն այս հրագույն:

Հ Ե Ր Ո Լ Դ

Սմբա ծ հիմար, ի՞նչ է ուղում,
Կմա՞խքն էլ է սրախոսում:
Տեսեք, ամբողջ ոսկին վերցրեց,
Հունցեց, փափուկ խմոր դարձրեց,
Եվ գնդերը մատների տակ
Ձև ստացան հույժ այլանդակ:
Յույց է տալիս կանայք ահա
Դուրս են փախչում սարսափահար
Սղորտոգով անվայելուչ:
Ի՞նչ պտուղն է ոսկրոտն այս փուլ
Էբր մարդ է դվարճացնում,
Ի այց թե բարբեր է փշացնում:
Սի՞թե ես դա կհանդուրժեմ
Փայտս ինձ տուր, որ դուրս քշեմ:

Պ Լ Ո Ի Տ Ո Ո

Պատկերացում շունի նոր վտանգից,
Թող խենթություն անի դեռ իր համար,
Շուտով արդեն տեղ չի գտնի հարմար
Զի կարիքը զորեղ է օրենք!

Ժ Խ Ո Ր Ե Վ Ե Ր Գ

Անզուսպ թափորն իշտվ սարից
Եվ դուրս հորդեց թտվ անտառից:
Ո՞վ կփակի նրա ճամփան:
Հանդեսն է քո, ո՞վ մեծն Պան:
Ներս խուժեցին մարդիկ արդեն .
Ի՞նչ գաղտնիքներ նրանք գիտեն:

Պ Լ Ո Ւ Տ Ո Ս

Ճանաչում եմ թե ձեզ, թե մեծ Պանին,
Գովքի է ձեր խիղախ քայլն արժանի:
Գաղտնիքն արդեն գիտեմ և աներկրա
Բացում եմ ձեր առաջ շրջանն տյս փակի:
Թող բախտը ձեզ ժպտա, որ անարգել
Տեսնեք այստեղ նոր հրաշքներ բազում:
Ձեզ հայտնի չէ, թե ուր եք դուք եկել,
Չգիտեք, թե ձեզ ինչ է սպասում:

Վ Ա Յ Ր Ի Ե Ր Գ

Հե՛ջ, դուզվածներ գոռոզամիտ,
Սկանք ահա՛ կոշտ ու կոպիտ:
Վազում ենք մենք ու թռչկոտում,
Ժիր ենք, ուժեղ ու անկոտորում:

Յ Ա Վ Ն Ե Ր

Տոմբներն ազատ
 Եկան պարով,
 Կանգուրներով
 Պսակազարդ:
 Մեր ականջներն այս սրածալր,
 Մեր մազերը թանձրամացառ,
 Ո՛չ կճատ քիթ, ո՛չ լայն երես—
 Ոչ մի բան չի խանգարի մեզ:
 Ո՞ր շքնաղին կանչենք պարի,
 Եր դա պատիվ շնամարի:

Ս Ա Տ Ի Ր

Տեսեք, Սասիրն էլ է պարում.
 Իր այծային ծուռ, անդադրում
 Ոտքերն է նա թափահարում:
 Լեռն է ելնում, ինչպես քարայծ,
 Դիտում հեռուն լայնատարած
 Ու վայելում ազատություն:
 Հեզնանքով է նայում մարդուն,
 Որը տանջվում այնտեղ, ցածում,
 Սուխն ու փոշին կյանք է կարծում:
 Մինչգեռ մտքուր տշխարհն արաբ
 Լեռան բարձունքն է կենարար:

Ահա փոքրիկ մեր խումբն առույգ:
 Ս ենք շ ենք սիրում շրջել զույգ-ղույգ,
 Սյլ մեն-մենակ, արագ արագ:
 Սամոտ շորով, բոնած ճրագ
 Մրջյունների պես լուսավոր
 Գործ ենք տնում գիշեր ու գոր:
 Ամեն մեկը դես դեն ընկնում
 Իր համար է միայն տքնում:

«Վիրարույժներ» ենք ժայսերի՝
 Մո՛տ ամեն տան ոգուն բարի,
 Երակներն ենք բացում լեռանց,
 Արյուն առնում՝ մետաղ ու գանձ:
 «Գնաք բարով», — հանքաշխարհում
 Այս խոսքն է մեղ մխիթարում:
 Անկե՛ղծ մաղթանք. շէ՛ որ սքտանց
 Լավն ենք ուզում ազնիվ մարգկանց:
 Լացց մեր ոսկին, երբ մաքղն է վատ,
 Գող է դարձնում, ստոր կավատ,
 Մղում մարգուն անագորույն
 Ի պատերազմ և ի արյուն:
 Նա, ով եքք պատվիրանի
 Հետևորդ շէ, ինչե՛ր կանի:
 Մենք մեղք չունենք: Պիտի ներեք,
 Մեղ պես տոկաք ու համբերեք:

Հ Ս Կ Ա Ն Ե Ր

Հայտնի ենք մենք Հարց լեռներում,
Սեզ վայրենի են համարում,
Ողջ մերկությամբ իր բնական
Այստեղ եկած ամեն հսկան
Գաժազան է սոճին դարձրել,
Ճյուղ ու տերև գոգնոց արել:
Հոռմի պապն անգամ հզոր
Չունի մեզ պես պահակազոր:

Ն Ի Մ Յ Ե Ր

(Խմբով ել գում են, շրջապատելով մեծ Պանին)

Մեծն սաստված
Պանն է բարի՝
Տերն աշխարհի,
Տիեզերացի:
Ո վ շքնադևեր Պանին հիմա
Չունենք մի պար հոգեհմա:
Խոժոռ է նա, բայց և բարի,
Ուղում է միշտ, որ մարդ բերկրի:
Լուրթ երկնի տակ նա գոհունակ,
Անքուն շրջում է շարունակ,
Մինչև գլխին նինջը թևի
Առվի երգով, շնչով հովիթ
Երբ կեսօրին նիրհում է խոր,

Լուսմ է շուրջն ամեն ժխոր,
 էլ շեն շրշում տերև ու թուփ,
 Հողն է խնկում բույր մեղմածուփ:
 Արդեն ամեն հավերժահարս,
 Հաղթված քնից հանկարծահաս
 Աչքն է փակում կանգնած տեղում:
 Քայց երբ հետո հողն է գողում
 Պանի ձայնից ամպրոպային,
 Մարդիկ սոսկում են այդ պահին
 Խիզախ զորքն է դաշտից փախչում,
 Հերոսին է սարսափն ընկճում:
 Թող ամեն շուրթ փառաբանի
 Մեծ անունը աստված Պանլու

Թ Ջ Ո Ւ Կ Ն Ե Ր Ի Պ Ա Տ Գ Ա Մ Ս Վ Ո Ր Ո Ի Թ Յ Ո Ի Ն

(Դիմելով մեծն Պանին)

Երակ երակ բարիքն է ծով
 Գոտեվորում ժայռ ու վիհ,
 Լոկ մոզակյան գավաղանով
 Լարիբինթն այդ կթացվի

Հիմնել ենք մենք մութ գետնի տակ
 Տրոզլոդիտյան անշուք տուն,
 Որ արևի լույսով հատակ
 Շոալի բաշխես լիություն:

Բացել ենք մենք աղբյուր մի նոր,
Զարմանալի մի աղբյուր:
Այն, ինչ թվա միայն ցնորք,
Զուրն այդ կտա լիարուր:

Տնօրինիր հրաշքն, աստվա ծ,
Դարձիր հզոր հովանի:
Քո ձեռքի տակ ամեն մի գանձ
Թող աշխարհը շենացնի:

Պ Լ Ո Ւ Տ Ո Ս

(Հեռուդին)

Արդ լայնախոհ լինենք ու միարան,
Երբ դիպվածը պիտի գա անխափան:
Հաստատակամ եղիր, քանզի շուտով
Դու կդառնաս զարհուրանքի վկա:
Զի հավատա դրան մարդն ապագա,
Սակայն արձանագրիր դու անվրդով:

Հ Ե Ր Ո Լ Դ

(Կառչելով Պլուտոսի բռնած գավազանից)

Թողուկները մեծն Պանին
Մոտ են բերում շատրվանին:
Խոր ընդերքից ժայթքում է հուր,
Եռում թափով ահազարհուր:

Վեր նետվելով իջնում դանդաղ,
Փոսը դարձնում հսկա երախ:
Պան առավաժն է նայում ուրախ
Զարմանալի այս հրաշքին,
Մարգարտածուփ այս հորձանքին:
Ո՞վ կերպեր տեսիլն այս վառ
Պանն է թեքվում տնդունդն ի վար:
Հանկարծ մորուքն ընկնում է ցած .
Ո՞վ է մարդը այդ ծայտված
Մածկում է դեմքն իսկույննեթ
Էայց բերում է գլխին աղեա
Մորուքն այրվում, թռչում է ետ:
Պարուրվում է Պանը բոցով,
Հողս է գնդում հրճվանքն աստծո:
Ամբոխն արդեն մոտ է վազում,
Սակայն հրդեհն է դազազում,
Վրա տալիս բոլոր մարդկանց:
Սուլեզնում է տարերքն անսանձ
Եվ լափլիզում է անդադար
Գիմակների մի ողջ անտառ:

Ի՞նչ բան է սա մարդիկ բազում
Քշիշում են ու բամբասում:
Օ՛, շաք գիշեր, նդո վք հավետ,
Ի՞նչ արհավիրք բերիր քեզ հետ:
Վազբ և ոչ մի հողածին
Զի հավատա այս դիպվածին,

Բայց բոլորն են ահա դոռում,
Ոք արքան ինքն է բոցերում:
Ա՛յ թե շքվեր տեսիլն այս շար
Արքան շունի փրկության ճար:
Անե ծք, ովքեր նրան բերին՝
Խեժոտ ճյուղերը հագներին,
Թնդացնելով երգ բարբարոս,
Եվ ամեն ինչ դարձրին քաոս:
Չահե լ հասակ ջահե լ հասակ,
Սահման շունե՞ն խինդ, Երազանք
Բշխանությո՛ւն, իշխանությո՛ւն,
Ե՛րբ ես եղել դու իմաստուն

Վառվեց բեմի անտառն արդեն,
Բոցն է անդուսպ նետվում դես դեն,
Լափում փայտերն առաստաղի:
Ալս ի նչ հրդեհ է կատաղի,
Ո՛վ պիտի մեզ փրկի արդյոք
Փորձությունից այս անողոք,
Արը մինչ լույս կմոխրացնի
Ողջ պերճանքն ու շուքն արքենի:

Պ Լ ՈՒ Տ Ո Մ

Ըա՛վ է, վե՛րջ տանք արհա՛վիրրին,
Ողնենք այրվող արքունիքին:
Օ՛ն, դավադա՛ն քո՛ դարկի տակ
Թող սառանյեն պատ ու հատակ:
Եթե՛ր, սառի՛ր Ե տարածիր

Պաղ գործընդերս շղարշ անծիր,
Ո՛վ մշուշներ, ամպեր հղի,
Իջե՛ք այրվող քառսն ի վար,
Հորդ անձրևը թող ողողի
Զսպի տարերքն այս հրավառ:
Շինծու հրդեհն անհեղազույն
Կայծակի փայլ դարձրեք իսկույն «
Ես կդիմեմ կախարդության,
Թե ոգիներն ինձ սպառնան:

Զ Ր Ո Օ Ս Յ Ք Ի

(Մագոյ արև կայսրը, պալատականներ Ֆաուստը, Մեֆիս-
տոֆելը՝ ավանդական վայելուչ, ոչ այնքան շքեղ տարագույ,
ծնւ աղիւր)

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Կեղծ հրդեհի համար, ներիր, արքա:

Կ Ա Ն Ս Ր

(Վեր կենալու նշան տալով)

Նման կատակի մեջ վատ բան չկա
Սյրվող շրջանակում հանկարծ թվաց,
Թե դարձել եմ արդեն Պլուտոնն աստված:

Հ. Կ. Կ. Կ. Կ.

Բացվել էր իմ առաջ մի վիճ ժեռուտ,
 Սև, քան ածուխ, սև, քան գիշերը մութ
 Բոց էր հորդում խորքից այդ խավարի,
 Շատրվանում գալարումով վայրի,
 Գմբեթաձև ծիփում, կամար դառնում,
 Մերթ մոլեգնում ու մերթ անհետանում:
 Տեսնում էի հրե սյունների տակ
 Ժողովուրդներն էին իմ հպատակ,
 Որ մոտենում էին գլուխ տալու
 Արքունիքս էլ տեսա՝ կանգնած հլու:
 Կարծես դարձել էի հրո արքա՝
 Շուրջս անթիվ սալամանդրեր հսկա:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ն Լ

Ճիշտ է ամեն տարերք այս աշխարհում
 Ուժի առաջ գլուխ է խոնարհում:
 Արդեն հնազանդվեց կրակը քեզ,
 Փորձիր նետվել և ծովը փրփրադեզ:
 Ոտք դիր դու հատակին մարդարտադարդ,
 Ետ կքաշվի իսկույն տարերքն ազատ,
 Կրնդունի ձև շքեղ օթևանի՝
 Կանաչ ալյաց վրա փայլ ծիրանի:
 Եվ ուր էլ դու դնաս տեր իմ արքա,
 Պալատն այս ջրեղեն քեզ հետ կգա:
 Պատերն անգամ կսքանչանան կյանքով:
 Անզուսպ խլրտումով ու սլացրով

Անթիվ էակների դու կտեսնես,
Կգան, Թայց ոչ մեկը չի մտնի ներս:
Ոսկեթեփուկ վիշապները կգան,
Թայց գու երախին էլ շնածկան
Քմծիծաղով նայիր: Նման պատկեր
Արքունիքում երբեք չես տեսնի, տեր:
Սիրուց զուրկ չես մնա այցի կգան
Մատաղ ծովահարսներն անդուգական՝
Ձկների պես երկշոտ ու խուսափուկ,
Թայց կրքով լի, դյուրաշարժ ու ճապուկ:
Քեզ՝ նոր Պելեոսին, Թեախսը մեծ
Կմեկնի իր ձեռքն ու շուրթերն անեղծ,
Եվ կրազմեք Օլիմպոսի գահին:

Կ Ա Յ Ս Ր

Քեզ եմ քաշխում հրաշքն այդ օդային
Ինձ վաղածամ պետք չէ նման մի գահ

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ն Է

Թայց հոգն արդեն վաղուց քոնն է, արքա:

Կ Ա Յ Ս Ր

Ո՞ր երջանիկ դիպվածն է բերել քեզ
«Հաղար ու մի գիշեր» գրքից ասես:
Ճաբտաբ ես դու, ինչպես Շեհերազադեն:

Եվ շնորհիս արժանի ես արդեն:
Միշտ եկ ինձ ձանձրացնում են շարունակ
Ամենօրյա հոգսերն իմ անքանակ:

Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Վ Ե Բ Ա Կ Ա Յ Ո Ւ

(Շաապ-շտապ ներս մտնելով)

Ճանաչափա ո, նման երջանկություն
Չէր ճաշակել ծառադ նսեմագույն,
Հիասքանչ րախտ է սա, որով արբած՝
Կանգնած եմ քո առջև ճակատս րադ:
Էլ ո՛չ մի պարտք աղատ ենք մենք, արքա՞,
Վաշխառուական ճիրաններից ազահ:
Վե՛րջ դժոխքին: Թերկրանքն այս երևի
Երկինքն իսկ յոթերորդ շեր պարզևի:

Ջ Ո Ր Ա Վ Ա Ր

(Նույնպես շտապ)

Ամբողջ գորքի ներկա թե ասպա
Վարձն է լրիվ տրված տեր իմ արքա:
Գոհ են լանդսքնեխթն ու աղջիկներն անքան,
Գոհ է հաև ամեն պանդոկասյան:

Կ Ա Յ Ո Ւ Ր

Ի նշ լիաթոք եք դուք շնչում այսօր.
Շուրջս ես շեմ տեսնում դեմքեր խոժոռ,
Եվ Ելումուտն ուրախ է շափաղանց:

Գ Ա Ն Ջ Ա Պ Ե Տ

(Անակնկալ հայտնվելով)

Պատճառն այդ ամենի հարցրու սրանց:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

Հարկ է, որ խոսքը տանք վարչապետին:

Կ Ա Ն Յ Լ Ե Ր

Երջանկացա կյանքիս մայրամուտին:
Նայիր այս բախտորոշ թղթին փոքրիկ,
Սա լիության փոխւեց ամեն կարիք:

(Կարդում է)

«Այսու հայտնի լինի ամենեցուն,
Որ հազար բրոն արժե թերթիկը սույն:
Առհավատչյան գանձերն են անհամար,
Որ ընդերքում ունի երկիրը մայր:
Երբ հանքը դուրս բերենք, ամեն ոքի
Սույն կտրոնի դիմաց կաանք ոսկի»:

Կ Ա Յ Ս Ր

Կեղծիք է դա, և ո՞վ է նենգորին
Թուղթն այդ ստորագրել իմ փոխարեն:
Ոճրագործին դեռ չե՞ք պատժել, ասա :

Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Տեք իմ, հիշիք քո ձեռադիրն է սառ
 Գիջերը, երբ, իբրև մեծ Պան առտված,
 Կանդնած էիր, քեզ վաբշապետն տսաց.
 «Վավերացբու քա այս ժամին խնդուն
 ժողովրդյան մի ողջ բաբօբություն»:
 Ստորագրեցիր, և այգ գիրը բարի
 Բաղմապատկվեց ձեռքով վարպետների
 Չէ՞ որ ամբողջ երկիրն էք սպասում:
 Մենք հատեցինք թղթադրամներ բազում՝
 Տասր, հիսուն, հարյուր դուկատանոց:
 Տեր, ցնծում է ամեն տուն ու փողոց:
 Մահվան քուն էք իջել գահանիստին,
 Բայց քաղաքդ հրճվում է վերստին:
 Քո անունով աշխարհն էր բախտավոք,
 Բայց քաղցր է առավել այդ բանն այսօք,
 Քանզի դաբձավ խոբհուրդ երջանկության,
 Եվ ոչ մի բառ բաղձալի չէ այդքան:

Կ Ա Յ Ս Ր

Իսկ հաբդի՞ և թուղթը, ինչպես ոսկին,
 Վա՞րձ է տբվում տրբունիքին, զորքին:
 Զտրմանալի է շատ, բայց ի՞նչ արտծ:

Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Վ Ե Ր Ա Կ Ա Ց Ո Ւ

Այդ թղթերը երկրում համատարած
 Սփռվեցին թափով կայծաղեցին,
 Բաց են բոլոր բանկերն ուղած պահին.
 Ամեն թղթի դիմաց, գիտեմ հաստատ,
 Վճարում են զեղջուվ ոսկի, արծաթ,
 Հետո փողն է հաց, միս, գինի դառնում:
 Երկրի կեսն է արդեն խրախճանում,
 Կեսն էլ զտրդարվում է՝ թողած գործ, քան
 Դադար շունեն դերձակ ու խանութպան,
 Եռուզեռ է բոլոր պանդոկներում,
 Եվ բոլորն են «Փա՛ռք տրքայի՛ն» գոռում:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Եթե տչդի դուրս գաք, և պատահի
 Այնտեղ ճեմող մի շիկ պարմանուհի,
 Սիրամարգի փետուրն արած հովհար՝
 Նա կժպտա աչնպես մտերմաբար,
 Որ ձեզ արդեն պետք չէ ոչ մի միջնորդ —
 Ոչ սուք լեզու, ոչ էլ խոսք ավելորդ:
 Պետք չէ նաև քսակ, երբ տմեն կին
 Մոցում, սիրո նամակների կողքին,
 Թղթադրամ էլ կպահի շա՛տ հարմար,
 Ինչպես իր սուրբ գրքում՝ ամեն տեր հայր:
 Դա զինվորի գործն էլ կդյուրացնի,
 Պոտին ոսկիներով էլ շի լցնի .
 Թող ինձ ների մեր ողորմած արքան,
 Որ ես նսեմացրի մի՛ ծ գործն այսքան:

Ֆ Ա Ո Ւ Մ Ց

Երկրի խոր ընդերքում, տեր բաբեգութ,
Անթիվ գանձեր հանգչում են անօգուտ:
Մտրգ չի կարող պատկերացնել բնավ
Ստորգետնյա հարստությունն անբավ,
Որի առաջ կդժգունի իսկույն
Մտքի թռիչքն անգամ խիզախագույն:
Բայց խելոքը հեռատես աչք ունի
Եվ անսահման հտվտտ անսահմանի:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Թղթադրամը հարմար է, քան ոսկին:
Հաստատ գիտես, թե ինչ է քո ձեռքին —
Պետք չէ փոխանակել կամ սակարկել
Գինի, սեր վայելիր դու անարգել:
Մետա՞ղ է պետք — դրամափոխ միշտ կա,
Զկա՞ — կփորփրենք հողը, արքա,
Ակնեղեն ու զարդեր կվաճառենք,
Թղթադրամի պարտքերը կմարենք,
Պինդ կփակենք բերանն անհավատի,
Եվ դա ամեն կասկած կփարատի:
Զափվելու է երկրում թուղթն այսուհետ
Ակնեղենի, ոսկու, արծաթի հետ:

Կ Ա Ն Ս Ր

Երկրիս համար գործեցիք մեծ բարիք,
Եվ ես կհատուցեմ այն, ինչ արիք:
Զեղ եմ հանձնում ընդերքն իմ պետության

Գանձի պահապաններ եք պատվարժան,
Գիտեք, թե ինչեր են պահված հողում:
Թող ձեր խոսքով արվի ամեն պեղում:
Արդ, իմ գանձագետներ, գործի անցեք,
Վեհությունն այս խնդրի լավ գիտակցեք:
Կերջանկանանք, երբ դաշնակցեն հիմա
Աշխարհն ստորգետնյա և ընդլուսնյա:

Գ Ա Ն Ձ Ա Պ Ե Տ

Կապրենք հաշտ ու խաղաղ: Ինչքա՛ն է լավ,
Որ ինձ արդեն կախարդն ընկերացավ:

(Ֆաուստի հեա դուրս է գնում)

Կ Ա Յ Ս Բ

Մարդիկ, խոստովանեք անկեղծորեն,
Ո՞վ ինչ կանի, երբ ես փող տամ իրեն:

Մ Ա Ն Կ Լ Ա Վ Ի Կ

(Վերցնելով)

Սա կապրեմ հոր կյանքով՝ ուրախ-դվարթ:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Մ Ա Ն Կ Լ Ա Վ Ի Կ

Սա սիրածիս համար կգնեմ զարդ:

Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

(Նվերն ընդունելով)

Գինին ձով կդարձնեմ:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

(Նույնպես)

Իմ գրգռում

Ձառերն արգեն սիրտս թունդ են հանում:

Տ Ի Տ Ղ Ո Ս Ա Վ Ո Ր Կ Ա Լ Վ Ա Մ Ա Տ Ե Ր

(Մտախոհ)

Ես կփակեմ պարտքերը կալվածիս:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Կ Ա Լ Վ Ա Մ Ա Տ Ե Ր

(Նույնպես)

Նորը կավելացնեմ ունեցածիս:

Կ Ա Յ Ս Ր

*Հուսով էի, թե նոր գործ կցանկաք:
Մինչդեռ թնշ-աբ էիք, ալն էլ միշտ կաք.
Ոսկու մեջ էլ լողաք, նուլնն եք կրկին,
Ես լավ գիտեմ ձեզնից ամեն մեկին:*

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

(Ներս քալով)

Տեր իմ, ինձ էլ տվեք ողորմություն:

Կ Ա Յ Ս Ր

Կենդանացա՛ր փողը կտաս քամուն:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Կախարդական թուղթ է դօւլար է շատ .

Կ Ա Յ Ս Ր

Կարգին գործ չես բռնի, գիտեմ հաստատ:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Ցած են թափվում. այգքանն ի՞նչ եմ անում:

Կ Ա Յ Ս Ր

Տար, վայելիր, քեզ եմ բաժին հանում:

(Դուրս է գնում)

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Ուղիղ հինգ հազար քրոն, տեր բարեբար:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Գինու տակառ, դու հարությո՞ւն առար:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Շատ է բախտս բանել, բայց ոչ այսպես:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Քրտնեցրել է ուրախությունը քեզ:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Միայն ասեք սա փո՞ղ է թե՞ կատակ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Այն է, ինչ կլցնի փորդ անտակ:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Կարո՞ղ եմ տուն, արտ, անասուն գնել:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ի նչ խոսք, գործդ կանես դու անարգել:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Նույնիսկ պալատ ու որսով լի թալո՞ւտ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Անշուշտ, դարձիր պարոն մեծահարուստ:

Մ Ա Ղ Ր Ա Մ Ո Ւ

Այսօր իմ կալվածքում ես կթնեմ:

(Դուրս է գնում)

Մ Ե Ե Ւ Ս Տ Ո Յ Ե Լ

Սուր միտք ունի մեր ծաղրածուն խոհեմ:

Ի Ա Վ Ա Ր Պ Ա Տ Շ Ք Ա Մ Բ

Ճառուտ և Մեֆիստոֆել

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Ինչո՞ւ ինձ քարշ տվիր միջանցքն այս մութ-
Սի՞թե ղվարճալիք ներսում շկար,
Չկար ծաղր ու կատակ, ծիծաղ անփույթ
Այն հոծ բազմության մեջ խայտանկար:

Գ Ա Ո Ւ Ս Տ

Մաշված խոսք է, պետք չէ ոչ մի բանի,
Նման է կոշիկի հին ներբանի
Դու պոլ ես խաղացնում, իմ բարեկամ,
Որ լուրջ գործից իուրապիես այս անգամ:
Սպասել չեմ կարող ամեն կողմից
Մարդիկ շապեցնում, նեղում են ինձ:
Արքան է կամենում որ հայտնվեն

Մարմինն առած Պարիսն ու Հեղինեն,
Չէ՞ որ դրանք տիպարն են հավիտյան
Այր մարդու և կնոջ գեղեցկության:
Ի գո՛րծ, որ իմ խոսքը շքնկնի գետին:

Մ Ե Յ Ի Ս Ց Ո Յ Ե Լ

Զուր խոստում է, անմտություն հետին:

Յ Ա Ո Ի Ս Ց

Տղա՛, մտքովդ չի՞ անցել բնավ,
Թե ուր կհասցնի արվեստդ մեզ:
Եթե հարստացրինք նրան այսպես
Պիտի նաև զվարճացնենք մի լավ:

Մ Ե Յ Ի Ս Ց Ո Յ Ե Լ

Դա այնքան էլ դյուրին բան չկարծես,
Մեր դեմ կա գահավեժ մի ճանապարհ.
Պիտի օտար ոլորտ ներթափանցես,
Նոր պարտքի աակ ընկնես հանդգնարար:
Գիտցիր, թղթե ուրվական չէ փողի
Հեղինեին ոգեկոչելը, մա րդ:
Ա՛յ, կարող եմ առանց ահ ու դողի
Կանչել վհուկ, ուրու, գաճաճ, կախարդ:
Բայց սիրուհին սատանայի երբե՛ք
Այն չէ, ինչ իսկական հերոսուհին:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Ամեն քայլիդ համար նոր վարձ է պետք,
Իսկ ասածդ երգ է մաշված ու հին:
Հնարում ես հազար ու մի արգելք,
Եր համոզես, թե չկա ճար ու ելք:
Մինչդեռ քո մի խոսքով այս խավարում
Կհայտնվեն Պարիսն ու Հեղինեն:

Մ Ն Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Յ Ե Լ

Հեթանոսներն ինձ չեն վերաբերում,
Չէ՞ որ նրանք իրենց դժոխքն ունենւ
Բայց կա միջոց:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Ո՞րն է, ասա իսկույն:

Մ Ն Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Յ Ե Լ

Հեշտ չէ հայտնել գաղտնիքն այդ գերադույն:
Առանձնացած խորքում ամայության՝
Գիցուհիներն իշխում են հավիտյան
Այնտեղ չկա սահման և ժամանակ:
Անուններն իսկ ազդում են պատկառանք
Մ ա յ ր ե ՚ ր :

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

(Երկյուղով)

Մ ա յ ր ե ՚ ր :

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Սարսու՛ւտ եկա՛վ վրադ:

Յ Ա Ռ Ի Ս Տ

Մայրե՛ր, մայրե՛ր — դարձանալի է շատ:

Մ Ի Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

*Այո, անհաղորդ է մահկանացուն
Անմահների խորհուրդներին անհուն,
Իսկ մեզ խորթ է ամեն աստծո անուն:
Խորոց խորքն է տունը սուրբ մայրության.
Եթե դիմենք, մեղքը քոնն է միայն:*

Յ Ա Ռ Ի Ս Տ

Կա՛ ճանապարհ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Չկա, ինձ հավատա

*Անմատչելի, անհայտ ոլորտ է դա:
Պատրա՛ստ- ես փորձությանն անագորույն:
Չկա ոչ դուռ, ոչ փակ, որ դու փշրես
Ս մայրության գրկում կղեգերտ:
Կիտե՛ս՝ ինչ ասել է ամայություն:*

Յ Ս Ո Ւ Ս

Քո խրատից դարձյալ ես զգացի
Հոտը կախարդուհու խոհանոցի,
Որք չէի առել քանի՞ տարի:
Մի՞թե ծանոթ չէ ինձ կարգն աշխարհի,
Ուր ես ունայնությունն եմ ուսանել,
Նույնը ուրիշներին ուսուցանել:
Երբ խելոք եմ դատել, իմ դեմ մարդիկ
Ծառացել են ցասմամբ կրկնապատիկ,
Չազիր դավից փախել եմ հոսահատ
Դեպի միայնությունն ու անապատ,
Մինչև, շտանելով լքումն անել,
Սատանային եմ ես ապավինել:

Մ Ե Ֆ Ն Ս Տ Ո Յ Ե Լ

Երբ օվկիանում լողալ քեզ վիճակի՛ներ,
Կիմանայիր, թե ինչն է անսահման,
Կտեսնեիր անթիվ գոռ ալիքներ,
Թևկուզ և քեզ պատեր դողը մահվան:
Գեթ խաղաղված կանաչ գրկում ջրի
Կտեսնեիր խաղը դելֆինների
Նահող ամպեր, արև, աստղ ու լուսին,
Մինչդեռ հեռաստանում՝ հավերժ դատարի,
Քո ոտնաձայնն անգամ դու չես լսի,
Եվ հող չկա, որ դեթ առնես դադար:

Յ Ա Ռ Ի Ս Տ

Միստերիայի քրմի ես դու նման,
Որ խաբում է ազնիվ սանին իր նոր,
Բայց ես գրկում քո այդ ամայության
Կգտնեմ նոր արվեստ, ուժ գորավոր:
Կուզենայիր, որ շագանակ հանեմ
Ես կրակի միջից կատվի նման:
Ի գործ, ինչ վճռել եմ, պիտի անեմ.
Քո այդ «ոչնչի» մեջ կա ամեն բան:

Մ Ե Ջ Ի Ս Տ Ո Ջ Ե Լ

Բաժանվելուց առաջ գովում եմ քեզ
Դու լավ ես ճանաչում սատանային:
Վերցրու այս բանալին:

Յ Ա Ռ Ի Ս Տ

Ի՞րն այս շնչին:

Մ Ե Ջ Ի Ս Տ Ո Ջ Ե Լ

Վերցրու հետո դժվար թե ծանակես:

Յ Ա Ռ Ի Ս Տ

Մեծանում է ձեռքիս, փայլատակում:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Դրա արժեքն ի հայտ կգա շուտով,
Երբ ցույց տա այն տեղը տիեզերքում,
Ուր մայրերն են: Գնա դու հավատով:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

(Երկյոտղով)

Մայրե՛ր: Նորից սարսուռ է ինձ պատում,
Ինչպե՛ս է ինձ այդ բառն արդեն շանթում:

Մ Ե Յ Ի Ս Տ Ա Յ Ե Լ

Ինչո՞ւ է կաշկանդում այդ բառը քեզ,
Միայն ծանոթ խոսքե՛ր պիտի լսես:
Ինչ էլ լսես, դա քեզ չի խանգարի.
Չէ՛ որ սովորես դու հրաշքների:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Քարացման մեջ սփռփանք չեմ փնտրում,
Սարսուռը լավագույն ձիրքն է մարդկանց.
Ինչքան էլ պակասի հույզն աշխարհում,
Անսովորը մեզ կցնցի հանկարծ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Իջիր կամ, այլ խոսքով, վեր սլացիր
Գնա գոյաշխարհից սյս հողեղեն
Արարման այն աշխարհն անկաշկանդ ու անծիր³

Եվ տես, ինչ գոյություն շունի արդեն
Բյուր տեսիլներ կհայտնվեն, սակայն
Շարժիր այս բանալին, որ մոտ չգան:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

(Ոգեշնչված)

Այս բանալուց ես նոր ուժ զգացի,
Ինձ համակեց տենչանքը մեծ գործի:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ա Ֆ Ն Ի

Երբ նկատես վառվող եռոտանին,
Հիշիր, խորոց խորքն է դա անհատակ
Մայրերը կերևան ցուրերի աակ
Ճեմում են կամ նստած են միասին
Ստեղծում, վերստեղծում են հավիտյան,
Որ շմեռնի իմաստն հավերժության:
Քեզ շեն տեսնի նրանք էակների
Ուրվասպատկերներն են տեսնում միայն:
Գեպի հուրը նետվիր դու անվարան
Թեկուզ և այդ փորձը փորձանք բերի:
Հպիր քո բանալին եռոտանուն:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

(Բանալին տիրաբար շարժում է)

Մ Ե Յ Ի Ս Տ Ա Յ Ե Լ

(Նւրան դիտելով)

Այդպե՛ս: Վառվող կրակարանն իսկույն
Կհետևի խոնարհ ստրուկ դարձած:
Մինչ նկատեն, կգաս երջանկացած,
Եվ խավարից կրկին աշխարհ կիջնեն
Ոգեկոչված Պարիսն ու Հեղինեն:
Գու ես միակ էակն այն հողածին,
Որ հանդգնեց ձեռք զարկել այս գործին:
Կախարդանքը քույան խնկի ծխի
Շուտով աստվածների էլ կփոխի:

Ֆ Ա Ա Ի Ս Տ

Հիմա ես ի՞նչ անեմ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ա Յ Ե Լ

Ձդաիր իջնել թո էությամբ ամբողջ,
Գոփիր թե՛ իջնելիս և թե՛ բարձրանալիս:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

(Ինփում է և ցած սլանում)

Մ Ե Յ Ի Ս Տ Ա Յ Ե Լ

Երանի՛ թե օգնի քեզ բանալիս,
Եվ դու վերադառնաս ողջ ու առողջ:

ՎԱՌ ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾ ՍՐԱՀՆԵՐ

Կայսրն ու իշխանները. Արքունիքը հուզված է:

Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

(Մեֆիստոֆելին)

Մեզ պարտք եք մի տեսիլ կախարդական,
Գործի անցեք. անհամբեր է արքան:

Ա Ր Ք Ա Ի Ն Ի Ք Ի Վ Ե Ր Ա Կ Ա Ց Ո Ւ

Հենց նոր նա հարցուփորձ արեց, գիտե՞ս:
Նորին մեծությանը չխաբեք, տես:

Մ Ե Ց Ի Ս Տ Ա Ց Ե Լ

Ի՞մ ընկերը նույն այդ նպատակով
Լեռանձնացավ, որ իր փորձն ապահով
Գլուխ բերի, մենակ տքնի, ջանա:
Եթե գաղտնարանից ուզում է նա
Ի չույս հանել գանձ ու գեղեցկություն,
Սրվեստ է պետք՝ վսեմ և իմաստուն:

Ա Ր Ք Ո Ւ Ն Ի Ք Ի Վ Ե Ր Ա Կ Ա Ց Ա Ի

Թե ինչ արվեստ է պետք, ինձ մի՛ ասա,
Շտապեցեք. արքայի կամքն է սա:

Ե Ա Ր Տ Յ Ա Շ Տ Ի Կ Ի Ն

(Մեֆիստոֆելին)

Մի խոսք, սքարոն: Մաշկս այսքա՛ն մաքուր
Փշացնում է ամռան շոգն այլանդակ,
Պեպեններ է շարում հազար ու բյուր,
Աղավաղում է իմ դեմքն սպիտակ:
Փրկե՛ք:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Վատ է, երբ կինը քնքշանազ
Նախշվում է մայիսին, դառնում հովազ:
Դուք գողոշի լեզուն և գորտի ձուն
Լիալուանի լույսով եփեք թաքուն,
Քսեք, երբ նվազի լուսինն արդեն:
Գարնանն էլ չեք տեսնի ոչ մի պեպեն:

Թ Ե Ա Ղ Ե Ր Տ Ի Կ Ի Ն

Ամբողջ բազմությունն է ձեզ պաշարել,
Բայց ինձ օգնեք ոտքս ցուրտն է տարել,
Տանջվում եմ շրջելիս թե պարելիս,
Նույնիսկ երբ մարդկանց եմ գլուխ տալիս:

Մ Ե Յ Ի Ս Տ Ա Յ Ե Լ

Թողեք, որ ձեր ոտքը ոտքով սեղմեմ:

Թ Խ Ա Հ Ե Ր Տ Ի Կ Ի Ն

Միայն սիրահարներն են դա անում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ա Ֆ Ե Լ

*Մանկի՛կ, ոտքով ես շա՛տ ցավ կմեղմեմ:
Նմանով են նմանն ապաքինում.*

*Ոտքը ոտքով, ապա այդ նույն կարգով՝
Սնդամները բոլոր. - Զուբ շառարկեք:*

Թ Խ Ա Հ Ե Ր Տ Ի Կ Ի Ն

(Ճշարով)

*Վա՛յ, վա՛յ, այրվե՛ց . Կարծես կոշտ սմբակով
Տքորեցիք .*

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ոչինչ, էլ նույնը չեք.

*Շրջեք, պարեք, սեղմեք, իբրև կատակ,
Զեր սիրածի ոտքը սեղանի տակ:*

Մ Ի Տ Ի Կ Ի Ն

(Առաջ մղվելով)

Մեծ վիշտ ունեմ, ինձ ճանապարհ տվեք,

Անլուր ցավից մղկտում է հոգիս.

Հայացքս էր այդ մարդու բախտը երեկ,

Այսօր ինձնից երեսն է շուռ տալիս:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Մանր բան է, բայց խորհուրդս լսիր:
Դու մտայնիր նրան զգուշորեն,
Այս ածուխը գաղտագողի քսիր
Ուսին, թեքին, և, հավատա, արդեն
Սրտի խորքում նա կզգա խայթ խղճի:
Բայց ածուխը պիտի կուլ տաս արագ՝
Առանց ջրի, գինու: Մարդն անառակ
Քո դռանն այս գիշեր կհառաչի:

Տ Ի Կ Լ Ն

Իսկ դա թույն չէ՞:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Վրդուված)

Ինձ մի վիրավորեք:
Նման ածուխ դուք չեք ճարի երբեք.
Հանված է խարույկից այն հինավուրց,
Որ բորբոքել ենք մենք եռանդագին:

Մ Ա Ն Կ Լ Ս Վ Ի Կ

Ինձ համարում են խակ, մինչդեռ վաղուց
Սիրահարված եմ թունդ:

Մ Ե Յ Ի Մ Տ Ռ Յ Ե Լ

(ՄԼԿՈՒԻ)

Ես ո՞ր մեկին

Պատասխանեմ: (Մանկավիկին) Հեռո՛ւ հատղաշներից՝
Ձեր արժեքը տարեց կանայք դիտեն:

(Ուրիշներն եւ հավաքվում)

Ա՛յ քեզ փորձանք հավայվեցին նորից
Ստեր դուրս տալ անկարող եմ արդեն,
Կորած եմ ես, էլ ուրիշ ելք չկա:
Մայրե՛ր, մայրե՛ր, թողեք Ֆաուստը գա:

(Շուրջըր դիտելով)

Մեծ դահլիճում ջահերն աղոտացան:
Եռաց ողջ արքունիքն աղմկածայն
Սհա, թողած միջանցք ու պատշգամբ՝
Ամեն կողմից մարդիկ եկան շտապ,
Լցրին ասպետական դահլիճը հին.
Նեղ է թվում հսկա սրահն այսօր:
Նախշանկաք գորգեր կան պատերին,
Անկյուններում՝ գեներ հարչուրավոր:
Եյստեղ պետք չեն խոսքեր կախարդական.
Ոգիները կամովի էլ կզան:

ԱՍՊԵՏԱԿԱՆ ՍՐԱՀ

Աղոտ շուսալորություն՝

Կայսրը և պալատականները նստած են՝

Հ Ե Ր Ո Ւ Պ

Ներկայացում աղդարարելն իմ գործն է հին,
Սակայն այսօր ինձ ոգիներն են կաշկանդում,
Զեմ էլ փորձի մեկնություն տալ այն ամենին,
Ինչ մեղ համար դեռ առևղծված է անպատում:
Ահա, արդեն աթոռներ են շարված շորս դին,
Իվ պատի մոտ արդեն ինքը՝ արքան բազմեց
Կարող է դեռ նայել բնտիր պաստառներին
Ու պարզ տեսնել նախնյաց ռազմի սխրանքը մեծ:
Անհամբեր են տիրակալն ու ավագանին,
Սպասում են բոլորն այնպես տազնապահար,
Սիրահարված մատաղ աղջիկն ու պատանին
Րզիների երկյուղից են հպվել իբար:
Արդ, քանի որ ամեն ինչ է թվում կարգին,
Ոգիները թող երևան մարդկանց աչքին:

(ՇԼԻՓՐԻԿԵՐ)

Ա Ս Տ Լ Ա Գ Ո Ւ Շ Ս Կ

Թող սկսվի ներկայացումն իսկույն:
Կայսեր կամքով ետ գնացեք, պատեր:
Կախարդանքով գորգերն են գուլնզգուլն
Ասես բոցավառվում ու քաշվում վեր:
Պատերն են երկփեղկվում ու պտտվում,

Հայնատարած բեմ է բացվում մեր դեմ,
հորհրդավոր տեսիլն է սկսվում,
Եվ ես արդեն ելնում եմ նախաբեմ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Հուշարարի խցիկից դուրս նայելով)
Ես մեծ հույսեր ունեմ հաջողության
Հուշելու մեջ վարսյետ է սւտանամ

(Աստղագուշակին)

Քիտես ամեն աստղի ուղին անհա,
Իմ շշուկն էլ դու լավ կհասկանաս:

Ա Ս Տ Ղ Ա Ք Ո Ի Շ Ս Կ

Ահա, կախարդանքի ուժով հարյավ
Մի վիթխարի տաճար հնադարյան
Երկինքն ուսին պահող Ատլանտի պես
Զգվում են շար ի շար սյուները վեհ:
Լեռան ծանրության էլ կդիմանան
Մի գույգը նեղուկ է հսկա մի տան:

Ճ Ա Ր Տ Ս Ր Ա Պ Ե Տ

Անտիկ ոճ է, բնավ չեմ հավանում
Խե՛ անճոռնի, թե ծանրաճիստ է շատ:
Կոպիտ ճաշակն ազնիվ են անվանում,
Էայց գոթական ոճն է ինձ հարազատ:
Սուր գմբեթներն ասես միտում դենիթ,
Վեհացնում են, երկինք հանում հոգիդ:

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ի Շ Ա Կ

Քարի ժամ են աստղերն ինձ խոստանում:
Թող մոզական խոսքով կիսամթնում
Դատողությունը ձեր սանձվի մի պահ,
Թող պատրանքը թվա կյանք աներկբա,
Տեսե՛ք, ինչ կարող եք միայն բաղձալ:
Անհնա՞ր է — հավատացե՛ք դարձյալ:

(Նախաբեմի մյուս ծայրին հայանվում է Ֆաուստը)․

Հանդերձանքով, ապարոշով քրմի
Հրաշագործն ահա եզրին բեմի:
Կրակարանն այնպե՛ս մեղմ է վառվում,
Չորս կողմ խնկի բուրմունքն է ծավալվում:
Հիմա կօրհնի ծեսը ոգեկոչման,
Հուսանք, որ բարի է վերջն անպայման:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

(Հանդիսավոր եղանակով)

Ձեր անունից, մայրե՛ր դուք հավիտյան
Գահին եք անսահման ամայության,
Բայց ոչ միայնության: Ձեր վերևում
Նենաց պատկերներն են անշունչ թևում
Ում էլ դուք մի անգամ լույս եք տվել,
Նա ուղում է ապրել, հարատևել
Պատկերներին մերթ ցերեկվա վրան,
Սերթ գիշերվա կամար եք շնորհում,

Մեկն ընկնում է կենաց հորձանքը լայն,
Մեկին խիզախ մոզն է ի հայտ բերում,
Ստիպելով մարդկանց, որ հավատան
Իրագործմանն ամեն մի զանկուժյան:

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ի Շ Ա Կ

Հպեց նա բանալին եռոտանուն,
Մշուշի մեջ կորավ սրահն իսկույն,
Ամպի քուլաներն են հատվում, զատվում,
Զիգզագվելով խաշվում ու երկատվում:
Ոգիներն են աշխարհ իջնում այգպես,
Երգ է նրանց ամեն շարժումն անտես,
Ամեն քայլից մեղեդի է հառնում,
Եթերային համանվազ դառնում:
Ղոզանջում է ամեն խոյակ ու սյուն
Ողջ տաճարն է աստու երգում ներհուն,
Մշուշն է փարատվում, և ձեր առաջ
Հայտնվում է պատկեր մի հիասքանչ:
Անունն էլ ի՞նչ ասեմ, ճանաչեցիք.
Այս պատանին Պարիսն է գեղեցիկ:

(Պարիսև առաջ է գալիս)

Մ Ի Տ Ի Կ Ի Ն

Օ՛, ի նչ ծաղկուն հասակ հրաշագեղ:

ԵՐԿՐՈՐԴ ՏԻԿԻՆ

Ա՛խ, կարծես դեզձ լինի՝ թարմ ու հյութեղ:

ԵՐՐՈՐԴ ՏԻԿԻՆ

Ի՛նչ անուշիկ, լեցուն շուրթեր ունի:

ՋՈՐՐՈՐԴ ՏԻԿԻՆ

Մարդ այս թասով կում-կում խմեր գինի:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԻԿԻՆ

Լավիկն է շատ, բայց ոչ մի նրբություն:

ՎԵՑԵՐՈՐԴ ՏԻԿԻՆ

Ճարպիկ էլ լես ասի այս պատանուն:

ԱՍՊԵՏ

Հովիվ է սա, ոչ թե գահաժառանգ,

Ազնվական էլ լէ առհասարակ:

ԵՐԿՐՈՐԴ ԱՍՊԵՏ

է՛հ, կիսամերկ տղան միշտ է սիրուն:

Ջենք դրահով պետք է տեսնել մարդուն:

Մ Ի Տ Ի Կ Ի Ն

Նստեց նայեք, որքա՛ն կիրթ շարժուձևս

Ա Ս Պ Ե Տ

Տիկին,

Ձեզ համար լավ տեղ կա նրա գուգին:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ի Կ Ի Ն

Գլուխն է վեհորեն ձեռքին թևքով:

Ս Ի Ն Ե Կ Ա Պ Ե Տ

Գռեհկություն, այն էլ արքունիքում:

Մ Ի Տ Ի Կ Ի Ն

Տղամարդիկ մանրախնդիր են շատ:

Ս Ե Ն Ի Կ Ա Պ Ե Տ

Նմլտկո՛ւմ է ներկայությամբ կայսեր .

Ն Ո Ւ Յ Ն Տ Ի Կ Ի Ն Ը

Իրեն սկտք է զգա մենուկ, ազատ:

Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

Մեզ կիրթ ներկայացում է սկտք, իմ սեր:

Ն Ո Ւ Յ Ն Տ Ի Կ Ի Ն Ը

Սքանչելի աղան քնեց մուշ մուշ:

Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

Խուփո՛ւմ է պակաս բան շմնաց:

Դ Ե Ռ Ա Տ Ի Տ Ի Կ Ի Ն

(Հիագմունմով)

*Ի՞նչ խառնվեց խնկի բույրին անուշ.
Հուզվեց ու ջերմացավ սիրտս հանկարծ:*

Մ Ի Զ Ի Ն Տ Ա Ր Ի Ք Ի Տ Ի Կ Ի Ն

*Բույրը թափանցում է սիրտ ու հոգի
Նրա շունչն է:*

Տ Ա Ր Ե Յ Տ Ի Կ Ի Ն

*Դա բույրն է արբունքի
Մնվում է մարմնի մեջ պատանեկան
Եվ խնկարկվում ամբրոսիայի նման:*

(Հայանվում է Հեղինեն)

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

*Սհա և նա: Սառնությամբ եմ նայում
Գողտրիկ է շատ, բայց ինձ չի հմայում:*

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ւ Շ Ա Կ

Այստեղ լռում եմ ես ազնվորեն,
Զէ՛ որ Գեղեցկուհին է ձեր դիմաց,
Գեղեցկությունն հնուց է գովերգված:
Ես որտեղի՞ց գտնեմ խոսք հրեղեն:
Նայողն ինքնամոռաց կվերանա...
Ծրանի՛ այն մարդուն, ում պատկանել է նաև

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Չե՛մ կուրացել արդյոք, և դեռ հոգիս
Լցվո՞ւմ է հեղեղով գեղեցկության. .
Լուսավորվե՛ց ուղին տառապանքիս
Աշխարհն աչքիս որքա՛ն նեղ էր, ունայն,
Որքա՛ն փոխվեց, երբ դարձա բուրմբ բո —
Բաղձալի է, կայուն և մշտագու:
Ի այց թող այդ աշխարհից չքվեմ անդարձ,
Եթե քեզնից պիտի զրկվեմ հանկարծ:
Այն պատկերը, որն ինձ մի օր գերեց
Է լ հայելու միջից երջանկացրեց,
Քո հմայքի թույլ ստվերն էր միայն:
Քեզ եմ ձոնում, իբրև աստվածության,
Մրրիկները հոգուս, խոհեր, հույզեր,
Պոռթկումներս բոլոր ցնորք ու սեր

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Հուշարարի խցիկից)

Քեզ մի՛ կորցնի խազ է թատերական:

Մ Ի Ջ Ի Ն Ց Ա Ր Ի Ք Ի Տ Ի Կ Ի Ն

Բարեձև է, բայց գլուխն է փոքրիկ:

Դ Ե Ռ Ա Տ Ի Տ Ի Կ Ի Ն

Հոգ չէ, երբ խոշոր են ոտքերն այնքան:

Դ Ի Վ Ա Ն Ա Գ Ե Տ

*Հատ իս, թագուհի է անզուգական,
Ոտքից գլուխ է նա շնաշխարհիկ:*

Պ Ա Լ Ա Տ Ա Կ Ա Ն

Չարաճճին մոտ է գնում անձայն:

Տ Ի Կ Ի Ն

Սլլանդակ է կողքին սիրահարի:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ

Գեղեցկությամբ լուսավորվե՛ց տղան:

Տ Ի Կ Ի Ն

էնդիմիտնն ու իուսի նն են նկարի:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Մ

*Աստվածուհին խոնարհվում է երկար,
Շո՛ւնչն է ըմպում... Ի՞նչ բախտ նախանձելի
Համբո՛ւյր . Երանության գավա՛թն է լի .*

Ն Ա Ժ Ի Շ Տ

Այսքանի մո՛տ .. Որքա՛ն է անսպասկալ

Տ Ա Ո Ի Ս Տ

Ի՛նչ երջանիկ տղա՞

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Հանդի ստ մնա,
Թող ուրվականն անի, ինչ կամենաս

Պ Ա Լ Ա Տ Ա Կ Ա Ն

Գնաց թեթևաքայլ: Տղան զարթնեց:

Տ Ի Կ Ի Ն

Այդպես էլ գիտեի ետ կնայի:

Պ Ա Լ Ա Տ Ա Կ Ա Ն

Հրաշք է նա աչքին խեղճ տղայի:

Տ Ի Կ Ի Ն

Տղան կնոջ աչքին հրաշք լէ մեծ:

Պ Ա Լ Ա Տ Ա Կ Ա Ն

Հովվի մոտ է գանդաղ վերադառնում:

Տ Ի Կ Ի Ն

Հիմա դասեր կտա վարպետորեն:
Շատ է ապուշ տղամարդն այդ բանում
Սիշտ էլ առաջինն է կարծում իրեն:

Ա Ս Պ Ե Տ

Քաղուհու տեսք ունի՝ նուրբ, վեհապանծ:

Տ Ի Կ Ի Ն

Շատ հասարակ սիրուհի է անսանծ:

Մ Ա Ն Կ Լ Ա Վ Ի Կ

Ե ս լիների ինչպես ս շնախանձել .

Պ Ա Լ Ա Տ Ա Կ Ա Ն

Ո վ սիրով շէր ընկնի նման մի ցանց

Տ Ի Կ Ի Ն

Սիրուն զարդը ձեռքից ձեռք է անցել:
Ոսկեջրած է, և մաշվել է ոսկին:

Ի Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ի Կ Ի Ն

Գուրս է ընկել՝ տասր տարին շանցած:

Չ Ս Պ Ե Տ

Իհ, մեղքի է մղում շա՛վն ամենքին .
Մնացորդն էլ մեծ դանձ է, անկասկած:

Գ Ի Տ Ն Ա Կ Ա Ն

Պարզ եմ տեսնում, սակայն չեմ հավատում,
Թե Հեղինեն ինքն է մեր պալատում.
Գուցե պատրանք է լոկ տեսանելին:
Ուստի գիրքն է միայն ճիշտ բանալին:
Կինն այս ծերակույտին է տրոյական
Իերել գեղեցկությամբ անզուգական:
Ըստ իս, այստեղ ճշմարտություն կա մեծ
Մեր եմ, բայց թե ինձ էլ նա հմայեց:

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ի Շ Ա Կ

Սա տղա չէ, այլ հերոս է խիզախ.
Զորեզ ըրզուկներով Հեղինեին շքնաղ
Գրկեց, և կինն իզուր է գալարվում:
Առևանգե՞ց:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

Կանգ առ, հանդու լզն խենթ,
Ինձ չե՞ս լսում: Այս ի՞նչ է կատարվում:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

է հ, ինքզ ես հնարել խաղն անհեթեթ:

Ա Ս Տ Ղ Ա Գ Ո Ւ Շ Ա Կ

Ինչպես տեսաք, ինչպես ինքս էլ տեսա,
«Հեղինեի առևանգումն» է սա:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Առևանգո՞ւմ: Ես ոչի՞նչ եմ ունայն,
Հրաշք բանալին չէ՞ դեռ իմ ձեռքին,
Որով անցա սարսափն ամայության
Եվ հաստատուն հողին հասա կրկին:
Օ՛, իրեզե՛ն օրրան, ուր իմ ոգին
Բնդղեմ ողիների կգուպարի
Կտիրանա երկու մե՛ծ աշխարհի:
Հեռու էր Հեղինեն, բայց հիմա մոտ է նա,
Փրկեմ, որ կրկնակի իմը դառնա:
Մայրե՛ր, մայրե՛ր եզեք ինձ հովանի
Ով էլ նրան տեսնի, կորուստը չի տանի:

Ո Ս Տ Ղ Ա Գ Ո Ւ Շ Ա Կ

Կա նգ առ, Ֆա ուստ, Ֆա ուստ, ի՞նչ ես անում:
Կառչե՛ց Խամբում է դեմքն ուրվականի:
Բանալին է ուղղում նա պատանուն
Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, հիմա կկործանի

ևն Ֆառաար փովում է հատակին Ուրվականն: Ը
փոխվում են գոլորշու)

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Ֆառուսախն շալակելով)

Ի՛հ, հիմարից աստված հեռու տանի.
Սատանայի հոգին էլ կհանի:

(Խաղար Իրաբանցում)

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԳ

Գործական բարձրակամար, նեղ սենյակ՝ Ֆառաստի
հասկիին աշխատանոցը անսիրտիս վիճակում

Վարագույրի ետևից հայտնվում է Մեֆիստոֆելը:
Երբ նա վարագույրը բարձրացնում և կտ է նայում,
երևում է պապենական հիմարվուրց մահնակաչին փրո-
ված Ֆառաստը

Մ Ի Ֆ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Պառկի՛ր, թշվառ: Սիրո շղթան
Քեզ շա՛տ երկար կկաշկանդի
Ու՛մ Հեղինեն հանկարծ շանթի,
Նա կկորցնի ճամփան իր տան:

(Շուրջը նայելով)

Ահավասիկ նայում եմ վար ու վեր.
Կարծես թե չի փոխվել դեռ ոչ մի բան,

Նախշուն ասյակիներն են գունատվել,
 Եվ սարդոստայնն է շատացել միայն:
 Քանաքն է շոր, թուղթն է դեղնել կողքին,
 Բայց նույնն է ամեն ինչ, գրիչն անդամ,
 Որով Ֆատուտն այստեղ կյանքն ու հոգին
 Սատանային ծախեց հոժարակամ:
 Այո, գրչի ծայրին մնում է դեռ
 Սառած կաթիլն իմ պահանջած արջան:
 Հարկավ, դա անսպասման կերջանկացներ
 Նրան, ով սիրահար է հնության:
 Կախված է այս կեռից թիկնոցը նույն:
 Ի նչ կատակ էր իբրև իմաստասեր,
 Ես դաս տվի անփորձ այն պատանուն,
 Դաս, որ խեղճը գուցե սերտում է դեռ
 Տարտվ թիկնոց, կուղենայի հիմա
 Քեզ, ինչպես այն օրը, ուսիս գցել,
 Դողենտի պես փշել ինքնավստահ
 Սմեն խոսքս ճշմարտություն կարծել:
 Գիտնականը ստում է հմտորեն,
 Բայց սատանան ձանձրացել է արդեն:

(Թափ է տալիս մորթե թիկնոցը Սիջից դուրս են թափվում
 ծղրիղներ, բզկներ և գեգ-թթեռնիկներ)

Մ Ի Ջ Ա Տ Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Բ

Դու բարով եկար,
 Մեր հին տիրակալ,
 Քեզ ճանաչեցինք

Բզոգում ենք դարձյալ:
 Մեկը քո ցանած
 Դարձել է հաղար .
 Հա՛յր, հրճվում ենք մենք,
 Որ եկար հասար:
 Խորամանկ ենք մենք.
 Խոր տեղ ենք մտնում,
 Ոջիլն է միայն
 Ինքն իրեն մատնում

Մ Ե Տ Ի Յ Տ Բ Տ Ե Լ

Ինչպե՞ս ուրախացրեց ինձ սերունդը այս նոր
 Մտ, ցանիր, և կհնձես մի օր:
 Թափ եմ տալիս հին թիկնոցը դարձյալ
 Կուրս են նետվում նոր էակներ ծպտյալ
 Շուտ, իմ սիրեցյալնե՛ր, շորս կողմ շարվիք
 Բոլոր անկյուններում պատսպարվեք:
 Մտեք տուփերի մեջ փոշեթաթավ,
 Մազաղաթի թերթերի տակ խոնավ,
 Զարդված ամանները մտեք հանգիստ,
 Ակնախոռոչները թափուր գանգի:
 Այս խցիկում, ուր բորբոս կա այսքան,
 Միջատների կյանքն է հավերժական:

(Հագնում է թիկնոցը)

Մի անգամ էլ ծածկիր ուներս դու,
 Որ տնօրեն թվամ և դասատու,

Ի այց իլուր չէ՞ կոչումն այդ պատվական
Ինձ մեծարող մարդիկ այստեղ չկան:

(Քաշում է զանգի թելը: Էսվում է սուր, խլացուցիչ զնգոց,
ու ից պատերը ցնցվում են, դռները կրկնի վրա բացվում)

Յ Ա Մ Ո Ի Լ Ո Ւ Ս

(Երկար, կիսախավար միջանցքն անցնելով, երեւում
բալետով մուսնում է)

Ի՞նչ զնգոց է, ի՞նչ թնդյուն է
Սասանվում է ամբողջ տունը:
Դրսում կայծակն է շողշողում,
Ապակիներն են դողդողում,
Սեփն է թափվում առաստաղից,
Եվ սալարկն է շարժվում տեղից:
Ամուր փակված դուռն ինքնիրեն
Հանկարծ բացվում է ուժգնորեն:
Ի՞նչ զարհուրանք Մի աժդահա
Ֆաուստի շորն հագել ահա,
Չեռքով ներսից ինձ է կանչում
Վա՛յ ինձ Ինչպե՛ս եմ երկնչում
Արդյոք փախչե՞մ, մնամ կանգնա՞ծ
Փորձանք չգա՞ դլխիս հանկարծ

Ի Ե Տ Ի Ս Տ Ս Տ Ե Լ

(Ներս է երսվիրում)

Եկեք, իմ բարեկամ: Դո՞ւք եք, նիկողեմուս:

Տ Ա Մ ՈՒ Լ ՈՒ Ս

Պատվարժան տեր, ես ինքս եմ: Oremus*.

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Թողեք:

Տ Ա Մ ՈՒ Լ ՈՒ Ս

Ի՛նչ լավ է, որ դուք ճանաչում եք ինձ:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Մերացել եք, սակայն ուսանող եք նորից,
Մամռակալած պարոն: Գիտունը չի կարող
Զսովորել նա միշտ է ուսանող:
Թղթե պալատներ է շինում ամեն մի մարդ,
Բայց դա իմաստունն իսկ թողնում է անավարտ:
Զեր ուսուցիչն ուրի՛շ մեծ փորձ ունի,
Ազնիվ դոկտոր Վազներն ո՞ւմ չէ հայտնի:
Առաջինն է նա աշխարհում ուսյալ,
Վարում է գիտության դեկն անսխալ,
Իր միտքն է ամեն օր հարստացնում:
Ում մեջ գիտության տենչն է անհատնում,
Գալիս է հավատով մի անսովոր.
Զի՛ որ լոկ Վազների ամբիոնն է լուսավոր:
Սուրբ Պետրոսի նման ձեռքին ունի
Նա բանալին երկրի, երկնի գաղտնյաց,

* Ա լոթում ենք (լատ):

Պայծառ փառքի առաջ իմաստունի
Գծգունում է փառքը բոլոր մարդկանց:
Խամբել է Ֆաուստի համբավն անդամ
Վազները միակն է, իմ բարեկամ:

Յ Ա Մ Ո Ւ Լ Ո Ւ Ս

Պատվարժան տեր, եղեք ներողամիտ,
Եթե ես հանդգնեմ ձեզ առարկել,
Ուսուցիչս համեստ է եղել միշտ,
Ինչո՞ւ նրան իզուր անվանարկել:
Երբ այրն իմաստնադույն անհայտացավ,
Վազներն իրեն կորցրեց, զգաց խոր ցավ,
Վերադարձի հույսն է դեռ փայփայում:
Այս սենյակն էլ այնպես է նա պահում,
Ինչպես Ֆաուստն ինքն է թողել մի օր
Նրբեք ձեռք չի տալիս ոչ մի բանի,
Տիրոջն է սպասում մտամոլոր
Սյտեղ մտնել ես սիրտ չէի անի -
Աստղերը չե՞ն գուժում աղետ մի նոր
Պաանքը ցնցվեցին, փակը թռավ:
Թե չէ, ինչպե՞ս ներս կգայիք, իրավ -

Ի Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Որտե՞ղ է դարանը ձեր ուսուցչի,
Գնանք, կամ թող ինքը բարեհաճի:

Տ Ա Մ Ո Ւ Լ Ո Ւ Ս

Ա խ, արգելքը նրա այնպես է խիստ,
 'ի ժվար է խանգարել խղճով հանգիստ
 Ամիսներով, ի սեր իր մեծ գործի,
 Փակվում է նա, որ նոր գյուտը փորձի:
 Հիմա գիտուն այրն այդ մաքրակենցաղ
 Կարծես մրոտ ածխահատ է, ալմա՞ղ:
 Ոտքից գլուխ մրոտվել է վաղուց,
 Աչքերն են կարմրել կրակ բորբոքելուց:
 Երգ է նրան թվում ձայնն արցանի.
 Այն վայրկյան գուցե բախտը բանի:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ջ Ե Լ

Մի՞թե ինձ կմերժի ես մարդն եմ այն,
 Որ կարող է բացել բախտի ճամփան:

(Ֆամուլուար դուրս է գնում: Մեֆիստոֆելը վեհաբեկ
 բազմում է)

Գեռ բազմոցի վրա հանգիստ շառած՝
 Տեսնում եմ ես ծանոթ մի արարած,
 Նոր ոճի մարդ է սա դարձել, անշուշտ,
 Պնդերեսն է կարծես պոկ շի գա շուտ:

Ր Ա Կ Ա Լ Ա Վ Ր

(Թափով ներս է մտնում):

Բաց եմ տեսնում դարպաս ու դուռ
 էլ չեմ խորհի հուսակտուր,
 Թե ամեն ինչ այս հարկի տակ

Պիտի նեխի աննպատակ
Մարդը թռչնի և լուռ ու մունջ
Ասլրի, ինչպես մեռյալն անշունչ՝

Այս պատերը հին են այնքան,
Այսօր-վաղը փուլ պիտի դան
Զգուշանանք չզգուշացանք
Մեր գլխին էլ կգա փորձանք:
Ինձնից խիզախ մարդ չեք դանի,
Բայց թե ոսքս ներս չեմ դնի:

Օ ևս հանկսրժ ի նչ հիշեցի
Հարկի ներքո այս նույն խցի
Նրբ փոքր էի, խակ պատանջակ
Գրաս առա լուռ ու գլխահակ:
Գեռ համատում էի գյուրին
Մարութալոր խարդախնձրին:

Միշտ սուան էին դրքից կարգո՞՛
Կեղծ հավատով սուտ քարոզում,
Թունավորում կյանքն անտեղի
Թե իրենց, թե ուսանողի
Ի՞նչ բան է սա ո՞ւմ եմ տեսնո՞՛մ
Մյս խցիկի կիսամթնում:

Ս ի քեզ դարմանք հագել է նույն
Մորթե թիկնոցն այն գորշագույն:
Մեր հանդիպման վերջին օրից
Նա չի փոխվել նույնն է նորից:

Շա՛տ խորամանկն էր խաբերան,
Լավ էր թվում ինձ ամեն բան:
Հիմա ուրի՛շ տեղնուտեղը
Սրան պիտի կոխել ցեխը:

Մերուկ պարոն, եթե Լեթան պղտոր
Պեռ չի պատել տիղմով ձեր գլուխը ճաղատ,
Հիշեք, որ սանն եմ ձեր՝ արդեն աղատ
Կեղծ գիտության ճիպտաներից բոլոր:
Ինչպես ես ձեզ տեսա, այնպես էլ կաք,
Իսկ ես ուրի՛շ մարդ եմ, հիմա կզգաք:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Ուրախ եմ, որ ձեզ բերեց զանգն այստ՛ղ:
Այն ժամանակ էլ բարձր էիք աչքիս
Զէ՛ որ թրթուրից է աշխարհ գալիս
Ամեն թիթեռ՝ սիրուն ու գունագեղ:
Կրում էիք դուք հրճվանքով մանկան
Խոպոպիկներ, ժանեկավոր օձիք:
Հլուս շունեի՞ք: Այսօր էլ շվեդական
Սանրվածքն է թվում ձեզ գեղեցիկ:
Բայց ձեզ սուբյեկտիվիզմը բացարձակ
Կվնասի, թեև դուք շատ եք համարձակ:

Բ Ա Կ Ա Լ Ա Վ Ր

Սերուկ պարոն, սա այն նույն տեղն է հին,
Սակայն ժամանակներն այլ են հիմա:
Խնայեցեք խոսքերն այդ երկիմաստ

էլ միամիտ պատանին շեմ նախկինս
Երբ ես դեռ փոքր էի, գյուրահալատ,
Գլխիս խաղ խաղացիք հեշտ ու հանգիստ,
Հիմա շեք հանդգնի, դժվար է շատ:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Երբ ճիշտ խոսք ես ասում խակ տղային,
Դեղնակտուցն այնպե՛ս է խոսվում,
Քայց տարինէր հետո Լրբ դիվային
Հարվածներ է ուտում կլանքի բովում,
Կարծում է թե փորձով իմաստնաղավ,
Իսկ ուսուցիչն ավանակ է, հարկավ:

Ք Ա Կ Ա Լ Ա Վ Ր

Գուցե և խարեւա ուր դասատուն
Աշակերտին կասի ճշմարտություն .
Գիտե՛ պակասն ասել կամ ավելին,
Կատակներով խարել անմեղներին:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Ուսանելն էլ ինչ որ սահման ունի
Կարող եք դուք արդեն ուսուցանել,
Ձեր տարիներն իզուր շեք սպանել
Եվ հիմա փորձ ունեք գիտնականի:

Ք Ա Կ Ա Լ Ա Վ Ր

Փո՛րձ դատարկ բան է դա, միայն փրփուր,
Համարժեք չէ ոգուն փորձը երբեք:
Խոստովանեք արժե՛ք տանջվել իզուր,
Իմանալ այն, ինչ մենք հիմա գիանեք:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Փոֆր-իճչ լոելուց հետո)

Ինքս էլ նույնն եմ խորհել երկա՛ր, երկա ր
Երեկ ևս խենթ էի, այսօր՝ հիմար:

Ք Օ Կ Ս Լ Ս Վ Ր

Ուրախ եմ շատ դա լավ խոսք է, իրոք,
Դուք առաջին ծերունին եք խելո՞ք:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Միշտ փնտրել եմ ոսկու թաքցրած գանձ,
Բայց թե աղբ է եղել գանձն իմ գտած:

Ք Ա Կ Ա Լ Ա Վ Ր

Խոստովանեք ձեր այդ գանգից ճաղատ
Այստեղ շարված գանգերն ինչո՞վ են վատ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Թարեհագությամբ)

Իմ բարեկամ, գիտե՛ս, դու շատ ես բիրտ:

Ք Ա Կ Ա Ի Ա Վ Բ

Գերմանացիք սուտն են համարում կիրթ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Սեիվալոր բազկաթոռը հետզհետե մոտեցնում է նախաբեմին, պարտերին)

Այստեղ սրանք արդեն հոգիս առան,
Գուցե դո՞ւք ինձ կտաք ապաստարան:

Ր Ա Կ Ա Լ Ա Վ Բ

Հանդուգն ես դու, Լթե կյանքիդ վատ շրջանում,
Երբ ոչինչ ես արդեն, քեզ ցույց տալ ես ջանում:
Կյանքը արյան մեջ է, իսկ ծերունին արդյոք
Ունի՞ պատանկան արյուն բորբոք:
՚Իա կրակ է մատաղ երակներում,
Բոցկլտում է, կյանքից կյանք արարում:
Մեզ գործի է մղում և պայքարի,
Թույլը պարտվում, հաղթում է մարդն արի:
Երբ մենք նվաճեցինք կեսն աշխարհի,
Դուք ի՞նչ էիք անում հանգիստ բազմում,
Խորհում էիք, հա՞ ծրագրեր կազմում:
Դե, տարիքը տենդ է հենց որ մարդուց կառչի,
Նա պետք է զառանցի, այրվի, սառչի:
Երբ երեսուն տարիդ ես բուլորել,
Նույն է, թե քեզ շիրիմ ես գլորել:
Ձեզ սպանել էր պետք ժամանակին:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

էլ ի՞նչ ամելացնի սատանան այդ խոսքին:

Բ Ա Կ Ա Լ Ա Վ Ր

Ես որ շուգեմ, էլ ի՞նչ սե սատանա

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(ՍԵԿՈՒԻ)

Մ ստանայից շուտով սա հստանա

Բ Ա Կ Ա Լ Ա Վ Ր

Ազնիվ կոչում ունի մարդը ջահել
Սշխարհ չկար — ես ինքս եմ արարել
Իմ կամքով է ծովից արփին ծագում,
Հուսինն իր հեղհեղուկ ցուքն արձակում
Ցերեկն է շողշողում աչքիս առաջ,
Ոտքերիս տակ ծաղկում հողը կանաչ:
Առաջին իսկ գիշերն արարումի
Լս վառեցի աստղեր հազար ու մի
Արդյոք շաղատեցի՞ ձեզ հավիտյան
Կապանքներից մտքի քաղքենության:
Անսում ազատ ոգուս թելադրանքին,
Գնում եմ, ուր տանի լույսն իմ ներքին,
Ընթանում եմ արագ ու խանդավառ,
Առջևում՝ լույս, իսկ ետևում՝ խավար:
(Դուրս է գնում)

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Գնա, կորիւր, հոպոպաւոր հաճքակ:
Դեռ շի՞ մտել քո գլուխը տափակ,
Որ ինչ ասվի՝ անմիտ կամ թե խելոք,
Ի դաժ քան է և կրկնությունն է լոկ:
Բայց դրանից ոչ մի վնաս չկա,
Հետո ամեն ինչ էլ կարգի կգա
Խմորումը ինչ ձևի էլ լինի,
Ամեն մաճառ դառնալու է գինի:

(Նրիտասարդ հանդիսականներին, որոնք շեն
ծափահարում)

Դուք ինձ լսում եք սառն ու անտարբեր,
Բայց ես ներում ևմ ձեզ, երեխաներ
Եթե սատանան է ձեզնից ավագ,
Պիտի հասունանաք, որ հասկանաք:

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ

Երկարավուն, տարօրինակ սարքեր՝ ֆանտաստիկ
նպատակների համար:

Վ Ա Գ Ն Ե Ր

(Օջախի առաջ)

Զարհուրելի զանգն է հնչում,
Ղողղողում են պատերը սև,
Բայց արդեն հույս է ներշնչում

Սպասումը երկարատև
 Մութն է լույսին տեղը դիջում
 Ծվ անոթում լուռ ու մեռյալ
 Հրո բեկորն է ճաճանչում
 Նոնաքարի պես հոյափայլ,
 Հույսն է շորս կողմ նետում կայծեր,
 Պայծառանում ու թրթռում .
 Երանի՜ թե էլ շհանգչեր,
 Ա՛խ, տե՛ր աստված Գո՛ւռն է ճոռում և

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Ներս մտնելով)

Բարեողջո՞ւյն և ամենայն բարի՞ք:

Վ Ա Գ Ն Ե Ր

(Երկյուղով)

Ի՞նչ աստղերը ձեզ էլ բախտ շնորհեն:

(Կիսաձայն)

Ի՞նչ շուռչներդ պահեք, լռեք արդևն
 Վսեմ գործի ավարտն է երջանիկ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Շշուկով)

Ի՞նչ վսեմ գործ:

Վ Ա Ք Ն Ե Ր

(Շշուկով)

Մարդ է գալիս աշխարհ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ռ Ֆ Ե Լ

Մա՞րդ: Խցիլել էք զույգին ձեր սիրահար
Նեղ անցքի մե՞ջ, որ հազիվ է ծխում:

Վ Ա Ք Ն Ե Ր

Աստված չանի: Բազմացման հին մոգան
Հայտարարում ենք խաղ ունայնության:
Կետն այն քնքուշ, որից կյանք է բխում,
Մեր ընդերքից ժայթքող ուժն այն եռուն,
Որն առնում է, տալիս, նկարում ինքն իրեն,
Զգտում տիրել մերձավորն ու հեռուն,
Զունի նախկին իր արժանիքն արդեն:
Եթե տրված է դա և կենդանուն,
Իսկ մարդն իր ձիրքերով բարձր է կյանքում,
Նրան պետք է վսեմ, ազնիվ ծագում:

(Շրջվելով դեպի օջախը)

Պարզվե՞ց, տեսե՛ք: Հուսալ կարող ենք դեռ,
Որ երբ խառնենք հարյուրավոր նյութեր
(Զ!՝ որ մարդն էլ խառնուրդ է շա՛տ ծանոթ),
Եվ երբ երկարավիզ մի փորձանոթ

Վերցնենք ու մարդանյութ մեջը լցնենք,
Մեղմ կրակի վրա լավ տաքացնենք,
Գործը հեշտ ու հանդիստ գլուխ կգա:

(Նորից շրջվելով դեպի օջախը)

Հրա՛շք ներսում շարժվե ց զանգվածն ահա
Ես խո՛րն եմ, խո՛րն եմ հավատում արդեն,
Որ այն, ինչ բնության գաղտնիքն ենք համարում,
Կարող ենք նվաճել հանդգնորեն
Սյն, ինչ նա մարմնի մեջ է արարում,
Ելուրեղացնում ենք մենք մեր փորձերում:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Ով փորձ ունի գիտե նա անկա՛ված
Ոչ մի նոր բան շունի աշխարհն այս հին
Ես իմ անդաստական տարիներին
Տեսել եմ և բյուրեղացած մարդկանց:

Վ Ա Ք Ն Ե Ր

(Սենյիք հայացելով նստում է սուվակին)

Եարձրանում է, փայլում սյարզ ու հստակ,
Տնո՛րքն է կյանք դառնում: Միշտ է այդպես
Խենթությունն է թվում ամեն մեծ նպատակ
Էլ ոչ մի դիպվածից չեմ սոսկա ես
Նրբ ուղեղը կարող է մտածել,
Մտածող էլ կարող է ստեղծել:

(Հիացմունքով դիտում է սրվակը)

Մեղմ հաբվածից զնգում է ապակին,
Պղտորվում է, պարզվում ժամը հասա՛վի
Ահա , տեսնո՛ւմ եմ ես նոր էակին
Պատկերն այս մարդուկի որքա՛ն է լավ:
Էլ ի՞նչ է պետք մեզ սրանից ավել,
Երբ մեր կյանքի գաղտնիքն է վերժանվել
Կսե՛ք հնչյուններն էլ պայծառացան,
Դարձան մարդկային խոսք, մարդկային ձայն:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Յ Ո Ս

(Սրվակի միջից՝ վազներին)

Ինչպե՛ս ես, հայր: Տեսա՞ր՝ կատակ չէր սուտ:
Եկ, ջերմորեն կրծքիդ սեղմիր որդուդ,
Բայց ոչ այնպես, որ ապակին ճաքի:
Դու միշտ հիշիր օրենքը մեր կյանքի
Բնականի համար տիեզերքն էլ է նեղ,
Աբհեստական բանին պետք է փակ տեղ:

(Մեֆիստոֆելին)

Ա՛, խորամանկ ու խարեբա քեռի՛,
Այստե՛ղ ես դու ժամանակին հասար,
Զլինի՞ դա կամքն է ճակատագրի:
Կսիր, եթե արդեն եկա աշխարհ,
Պիտի իսկույն գործի կպչեմ կարգին,
Օգնիր, չե՞ որ ամեն հնար կա քո ձեռքին:

Վ Ա Ք Ն Ե Ր

Միայն մի խոսք: Ես ամաշում եմ շատ,
 Երբ ինձ նեղն են լծում ծեր թե ջահել .
 Այ օրինակ, կասի՞ թեկուզ մի մարդ,
 Թե մարմինն ու հոգին՝ իրար այնքան վայել,
 Իր մեզ նույնիսկ թվում են անբաժան,
 Ինչո՞ւ են իրար դեմ լցված ոխով դաժան:
 Հետո էլ

Ո Ե Ց Ի Պ Տ Ո Լ Ե Լ

Կաց: Հարցիս պատասխանիր
 Ինչո՞ւ են այր ու կին հավետ անհաշտ:
 Իչ բարեկամ, դու գլուխ չես հանի
 Գո՞րծ ես ուզում փոքրիկ, Այ, սա հարմար է շատ:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Ի՞նչ գործ:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Կողմի դուր մատնացույց անելով)
 Այստեղ ցույց տուր տաղանդը քո:

Վ Ա Ք Ն Ե Ր

(Շարունակ նայելով սրվակին)

Անուշ տղա ես դու, որքա՞ն եմ գոհ:

(Կողմի դուր քացվում է Երևում է անկողնուն փոված
Ֆանաար)

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

(Չարմացած)

Հետաքրքիր է շատ:

(Սովակր դուրս է սահում վազների ձեռքերից և Ֆանուսի
գլխավերևում պատվելով, լուսավորում նրան)

Ի նշ եմ տեսնում.

Լճուկ, անտառ: Կանաչք են մերկանում:
Հմայքով շի դիջի մեկը մեկին,
Սակայն ուրիշ հմայք ունի մի կին:
Հերոսուհի՞ է նա, դիդուհի՞ է արդյոք:
Մաքուր ջրի մեջ է ոտքը դնում կամաց,
Աղնիվ մարմնի բոցը կենսաբորբոք
Մեղմանում է ճկուն բյուրեղի մեջ ալյաց:
Այս ի՞նչ հողմ է շաշում, անցնում լճով,
Ի՞նչ թևեր են վշրում ջինջ հայելին,
Ահից աղջիկներն են փախչում ճիշով
Բայց անխուճապ նայում է թագուհին:
Նա կանացի հպարտությամբ լեցուն
Տեսնում է, թե ինչպես կարապ արբան
Իր ծնկին է հավում սիրով ցնծուն,
Ինչ որ հանդգնությամբ մտերմական:
Բարձրանում է հանկարծ թանձր մշուշ,
Վարագուրում այս տեսարանն անուշ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Պատիկ ես դու, բայց թե ճատիկ ես շատ.
Ինչե՛ր ես հնարում առատ առատ:
Ես շեմ տեսնում ոչինչ:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Ճիշտ ես ասում
Մնվել ես խոր հնում, ցուրտ հյուսիսում,
Երկրում ասպետների, տերտերների
Սչքդ այնտեղ լավ բան չէր էլ տեսնի ..
Ուստի խափարն ես դու գերադասում:

(Շուքը կայելով)

Խունացած են պատերն ու գոսացած,
Նախշուն կամարները՝ ցածրիկ ու նեղ:
Եթե նա արթնանա հանկարծ այստեղ,
Նույն վայրկյանին մեռած կփռվի ցած:
Անտառ, լիճ, հարապներ և մերկ կանայք —
Օ , ինչպիսի՛ նրազ բազմախոստում:
Ո չ, նա էլ չի ապրի այս հարկի տակ.
Ես, որ համեատ եմ շատ, դուրս եմ ձգտում:
Տանենք:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ուրախացրեց փճիող շատ:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Երբ զինվորին ճամփում ուղմաճակատ,
Իսկ աղջկան շուրջպարի են տանում,
Երկուսի գործն էլ լավ է ընթանում:
Գնանք, էլ չկորցնենք ոչ մի վայրկյան,
Այսօր կլասիկ գիշերն է վալպուրգյան:
Պա երջանիկ դիպված է շատ հարմար
Ի՞նչ հարազատ տարերք նրա համար:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Այդպիսի բան ես չեմ լսել երբեք:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Մ

Եվ որտեղի՞ց պիտի դուք լսեիք:
Լոկ ոռմանտիկ ուրունքերին գիտեք,
Կարգին ուրուն պիտի լինի կլասիկ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Հիմա մենք ո՞ւր պիտի գնանք այսպես:
Անտիկ ընկերներից խորշում եմ ես:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Մ

Հյուսիս արևմուտքն ես սիրում դու, սատանա,
Իայց մեր խումբը հարավ-արևելք կդնա
Պենեոսն է հոսում դաշտում ազատ,

Չորս կողմ ծառեր, ռետախորշեր անդորր,
Սինչ լեռներն են ձգվում պուրակ ու դաշտ,
Ֆարսալուսն է ափին՝ և հին, և՛ նոր:

Մ Ե Ֆ Ի Ս Ո Ֆ Ե Լ

Վա՛յ ինձ, վկա լինել ես շեմ ուզում
Ստրուկների և տերերի վեճին:
Չանձրալի է շավարտած վեճը հին՝
Նոր վեճ, նոր պատերազմ են սկսում:
Ոչ ոք չի նկատում, որ գաղտնորեն
Ասմոդեյն է մուրեցնում իրեն
Իբր, մարտ են մղում ազատության,
Բայց ստրուկն է ելնում ստրուկի դեմ միայն:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Դե լավ, թողնենք մարդկանց այդ կամակոր,
Թող մեկը մեկի դեմ մանկուց զինվի,
Որ տղամարդ դառնա տղան մի օր:
Դու այն ասա, սա ե՞րբ կապաքինվի:
Եթե հնար գիտես, իսկույն փորձիր,
Եթե չունես, ինքս անցնեմ գործի:

Մ Ե Ֆ Ի Ս Ո Ֆ Ե Լ

Կան բրոքենյան շատ միջոցներ, սակայն
Աշխարհն այդ հեթանոս փակ է իմ դեմ:
Հույներն անպետք ժողովուրդ են, գիտեմ,

Բայց անկաշկանդ խաղով զգայական,
Ուրախ զվարթ մեղքով սիրտ են թովում,
Մեզ մոտ մեղքերն անկրակ են թվում:
Հը՛, ո՛ւր գնանք:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Ամաշկոտ շես բնավ,
Հիշիր քո թեսալյան վհուկներին,
Եվ դա սրտիդ շատ բան կասի, հարկավ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Տարփանքով)

Թեսալուհիք ուրի՛շ հմայք ունեն,
Այնպե՛ս եմ կարոտել նրանց արդեն .
Հետներն ամեն գիշեր շլի բնի,
Բայց համտեսին ես դեմ չէի լինի,
Նորը փորձարկելուն .

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Թվ կեոցդ բեր

Եվ մեջը փաթաթիր այս ասպետին:
Թող սլանա այդ լաթը վերստին
Տեղ հասցնի մեզ պես թեթև մի բեռ ,
Ես լույս կտամ:

Վ Ա Ք Ն Ե Ր

(Երկյուղով)

Իսկ ե՞ս:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Գու տանը կաց

Ու վերժանիր առեղծվածներ խրթին,
Թերթիր մագաղաթները հին,
Հավաքիր, ըստ գրոց տարրեր կենաց,
Զգուշորեն միավորիր կլի,
Կշռադատիր «ինչ»-ը, «ինչպես»-ը ավելի:
Իսկ ես այս աշխարհում մի քիչ շրջեմ,
Գուցե պարզեմ, ինչի իրազեկ չեմ:
Եվ դու կիրագործես մի մեծ բաղձանք,
Ոգորումիդ վարձն առատ կլինի՝
Փող, փառք, պատիվ, երկար, քաջաոռոջ կյանք,
Եվ գիտություն, և բարք առաքինի:
Մնաս բարլավ:

Վ Ա Ք Ն Ե Ր

(Տխրությամբ)

Գնաս բարլավ: Վշտացած եմ այնպես
Հույս շունեմ, թե նորից կտեսնեմ քեզ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Թող թիկնոցս մեզ Պենետո տանի,
Քանզի դա կամքն է իմ ազգականի:

(Հանդիսականներին)

Ինչ էլ լինի, կախում ունենք նորից
Մեր իսկ աշխարհ բերած էականերից

ՎԱԼՊՈՒՐՔՅ ԿՆ ԿԱՍԻԿ ՔԻՇԼՐ

Ֆարուսչյան դաշտեր Խաչար

Է Ր Ի Ե Թ Ո

Գիշերային այս հանդեսին զարհուրելի
Եկա դարձյալ ես՝ էրիխթոն հավետ մռայլ,
Մռայլ, բայց ո՛չ այնքան դադիր, ինչպես հաճախ
Բանաստեղծներն են բամբասում շարալեղու,
Որոնք ձաղկման և գովեստի շափ շգիտեն ..
Վրանների ալիքն է գորշ ծփում հովտում,
Մթնում խմբված ուրվականներ ասես լինեն .
Այս տեսարանն ինչքա՞ն, ինչքա՞ն է կրկնվել
Ու դեռ ինչքա ն կկրկնվի Ո՞վ կզիջի
Իր նվաճած իշխանութունն ուրիշներին,
Երբ, մանավանդ, բռնությամբ է հասել դրան ..
Զե՞ որ ով չի կարող իրեն կառավարել,
Հարևանի կամքին սիրո՞վ է բռնանում

Այստեղ ուզմի շառաշով է դա հաստատվել,
Երբ հզորն է հզորի դեմ ելել ոխով,
Փշրել պսակն ազատության բյուրածաղիկ,
Հաղթության շոր դափնով պճնել ճակատը յոր:
Պոմպեոսն է այստեղ հիշել փառքը նախկին,
Մարտի ելքն է կշռադատել Կեսարն անքուն
Պիտի բախվեն Վերջը հայտնի է աշխարհին:

Պահնորդական խարույկներն են բոցավառուում,
Հրացուլքն է գետնին փովել, ինչպես արյուն:
Հրաշք լույսից հրապուրված՝ մոտ է գալիս
Լեգեոնը հելլենական առասպելի:

Կրակի շուրջն ուրվադժվում են անորոշ
Անթիվ դեմքեր հնադարյան, հեքիաթային
Լուսնի մահիկն ի՞նչ անսովոր պայծառությամբ
Հողին, ջրին շնորհում է ցուլքն իր անուշ:
Վրանների ուրվականներն են շքանում,
Խարույկներն են աղոտանում, կապտին տալիս:

Սյս ի՞նչ ասուպ, ի՞նչ լուսավոր գունդ եմ տեսնում
Մարդ արարած է երևում ներսում գնդի:
Կլանքի հոտ եմ առնում արդեն: Ինձ վայել չէ,
Որ մոտենամ ու վնասեմ շնչավորին
Օգուտ չունեմ, ինչո՞ւ իզուր ինձ բամբասեն:
Իջնում է ցած: Շուտ հեռանամ իոհեմաբար

(Հեռանում է)

(Օղագնացները սլտավում են վերևում)

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Մի անգամ էլ ճախրենք արագ.
Ի՛նչ խարույկներ, ի՛նչ զարհուրանքի
Հովիտ ու ձոր լիքն են այսօր
Տեսիլներով խորհրդավոր:

Մ Ե Ֆ Ի Ս Յ Ո Ֆ Ե Լ

Ինչպես հին տան պատուհանից՝
Իմ հյուսիսում աղբաշատ,
Ուրունք եմ տեսնում նորից
Ասես տանն եմ հարազատ:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Մի տես վհուկ այն լողլողին.
Ճողոպրում է, ցատկոտում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ջուր է կարել խեղճի լեղին.
Նկատել է մեզ օդում:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Թող ճողոպրի: Դիր այս հողին
Քո ասպետին կարթնանա,
Չէ՞ որ աշխարհն հեքիաթային
Կարոտով էր փնտրում նա:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

(Հողի՛ն դիպչելով)

Որտե՛ղ է նա:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Դա հեշտ բան մի կարծիր,
Բայց թե հարցուփորձով առաջ գնա,
Հերթով մի խարույկից մյուսն անցիր:
Աճապարհի. շուտով կլուսանա:
Ով հանդգնեց հասնել Մայրերի մոտ,
Նրա համար արդեն ի՞նչ խոչընդոտ:

Մ Ե Ձ Ի Ս Տ Ո Ձ Ե Լ

Ես էլ գործին սիրով կմասնակցեմ,
Բայց ավելի լավ կլինի, կարծեմ,
Եթե մենք ճանապարհ ընկնենք զատ դատ
Սվ արկածներ փնտրենք հեովում ալա: :
Հևոս, փոքրիկ, գնդով քո պատվարժան
Կտան փերադարձի աղդանշան:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Գունդս ե՛կ կզնգա, ե՛կ կփայլի:

(Ապակի՛ն ուժգին զնգում է և պայծառ լույս առ օտկում):

Առաջ ի հրաշքներ գարմանալի:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

(Միայնակ)

Որտե՞ղ է նա... Ուրի՞նչ էլ լիմ հարցնի .
Դիցուք, սա լէ երկիրն իր հայրենի,
Այլ գիտ է ծփացել ոտքերի տակ,
Իայց այս օդում նրա շունչն է հստակ:
Օ՛, Հունաստան Կռահեցի իսկույն,
Թե ինչ հողի վրա եմ ես կանգնած:
Քունս շանթեց անհայտ մի զորություն,
Ոգով Անթիյ ինձ զգացի հանկարծ:
Փնտրեմ նրան հրո լաբիրինթում,
Այստեղ, ուր տեսիլներ կան անպատում:

(Հեռանում է)

Պեննուսի վերին հոսանքի մոտ

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Ի

(Շուրջը դիտելով)

Ինչքան կանգնեմ ամեն խարույկի մոտ,
Միևնույն է, ես ինձ օտար կզգամ
Բոլորն այստեղ շրջում են մերկանդամ,
Անսլատկառ է սֆինքսը, գրիֆն՝ անամոթ:
Այնքան ազատ ու բաց է երևում
Ինչ կա թե առջևում, թե՛ ետևում...
Մենք էլ ամոթ լուսնիք, անկեղծ ասած.

Բայց հին աշխարհն անզուսպ է շափազանց:
Մինչդեռ եթե սրանք խելք խելքի տան,
Կզարգարվեն, և չի տուժի մոզան .
Ի՞նչ խաժամուժ Սակայն շղայրացնեմ,
Իբրև նոր հյուր, գնամ, ջերմ ողջունեմ
Չքնաղ տիկնանց և ծերերին խոհեմ:

Գ Ր Ի Ֆ

(Կոնչաձայն)

Ի՞նչ ծեր, ես ձեր Ո՞վ կուզի, որ իրեն
Սեր անվանի ինչ որ մի անօրին:
Չէ՞ որ ամեն մի բառ ունի ծագում,
Ինչ որ երանգներ է պարունակում .
«Մոռյլ», «մեռյալ» և «մառ» բարերը մեզ
Խորթ են, թեև մոտ են իրար կարծես

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

«Գրիֆ» տիտղոսն էլ մոտ է «գոփիր» բառին:

Գ Ր Ի Ֆ

(Նույն ձևով, հետագայում ևս)

Հարկավ, հայտնի է դա ողջ աշխարհին.
Գոփիր, խլիր աղջիկ, ոսկի ու թագ,
Կշահես շատ գովեստ և քիչ լուտանք,
Բախտը միշտ է ժպտում գոփողներին:

Մ Ր Զ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

(Վիրիսարի)

«Ոսկի» ասիք: Ինչքա՞ն էինք գտել,
Ժայռերի մեջ, քարայրներում կիտել,
Սակայն արիմաստիները գողացան
Եվ մեզ հիմա ծաղրում են բարձրաձայն:

Գ Ր Ի Յ

Կատիպինք, որ խոստովանեն այսօր:

Ա Ր Ի Մ Ա Ո Փ Ն Ե Ր

Ոչ, այս գիշեր տուն է հանդիսավոր:
Իսկ մինչև լույս կմսխենք սղջ ոսկին,
Կհասնենք այս անդամ նպատակին:

Մ Ս Պ Ի Ս Ո Յ Ե Ր

(Նստում է սփիեմաքսի ալաբաստին)

Ի նլ հեշտությամբ ընտելանում եմ ձեզ,
Զեր մտքերն էլ եմ հասկանում կարծես:

Ս Յ Ն Ե Ք Ո

Ոգեհնչուններ ենք մեղմ արձակում,
Լսում եք և մարմնավորում դրանք:
Ո՞վ ես, ասա, որ մենք էլ իմանանք:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Շատ անուններ են ինձ տվել կյանքում:
Այստեղ լկա՞ն ճամփորդ բրիտանացիք.
Սիրում են ջրվեժներ ու ռազմադաշտ,
Ավերակներ, վայրեր խուլ, գեղեցիկ...
Այս պատկերը նրանց դուր կգար շատ:
Ինչ որ մի հին պիեսում այդ նույն մարդիկ
Ինձ անվանել են «Old Iniquity».

Ս Ց Ի Ն Ք Ս

Պատճառն ի՞նչ է:

Ո Ե Ֆ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Իչ որ դա շղիտի:

Ս Ց Ի Ն Ք Ս

Ոչինչ: Իսկ աստղերի լեզուն գիտե՞ս:
Բարի ժա՞մ է հիմա, հապա մի տես:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Նրկնիև նայելով)

Աստղերի ու լուսնի ցուլքն է ծաթում,
Անպես լավ եմ զգում ինձ այս պահին.
Ջերմացնում է մորթիդ առյուծային...
Ի՞նչ գործ ունենք երկնի ցուրտ ոլորտում:
Հանելուկներ ասա, հարց տուր դիպուկ:

Ս Ֆ Ի Ն Ք Ս

Քեզնից պատմիր, քեզնից լավ հանելու՞ւկ:
Ինքդ քեզ վերժանիր ազնվաբար
«Պետք է մեղավորին թե արդարին,
Շարյաց դեմ է վահան մեկի համար,
Մյուսի համար՝ ընկեր շարյաց ճանապարհին:
Երկու դեպքում էլ միտքն այդ ամենի
Այն է, որ նա Զեսին զվարճացնի»:

Ա Ռ Ա Ջ Ի Ն Գ Ր Ի Ֆ

(Կոնչալով)

Թող դա կորչի :

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Գ Ր Ի Ֆ

(Ավելի սուր կոնչալով)

Մեզ հետ ի՞նչ գործ ունի:

Ե Ր Կ Ո Ւ Ս Ո Վ

Այդ գարշելին հյուր չէ մեզ արժանի:

Մ Ն Ֆ Ի Ս Ո Ֆ Ե Լ

(Կոպտորեն)

Հյուրին դուք մի՛ կարծեք այդքան անզեն,
Տեսեք ձեր ճանկերից եղունգներս սուր չե՞նե
Փորձե՛ք:

Ս Ֆ Ի Ն Ք Ս

(Մեղմությամբ)

Մնա Լթե հաճո է քեզ,
Բայց թե ինքդ շուտով առն կծկես.
Սիրտը բաց է միայն հայրենիքում:
Տեսնում եմ, քեզ այստեղ լավ չես զգում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Նայում եմ վեր — ախորժալի ես շատ,
Նայում եմ վար — գազան ես ահարկու:

Ս Ֆ Ի Ն Ք Ս

Խարդախ, երկու ոտքով ընկար թակարդ,
Չես ազատվի մեր թաթերից հուժկու:
Մեր զորության առաջ ի՞նչ է, համբակ,
Չիս մի գույգ ողորմելի սմբակ:

(Բարձունքից լավում է սիրենաների երգը)

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ի՞նչ հավքեր են երգում հազարերանգ
Ճյուղերի մեջ այն գետափնյա բարդու:

Ս Ֆ Ի Ն Ք Ս

Զգուշացիր իրենց երգով դրանք
Կործանել են քանի՜ ազնիվ մարդու:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Ա՛խ, ի՞նչ ես դու գտել արդյոք
Այդ հրեշի մեջ այլանդակ,
Կսիր, ինչպես ննք լիաթոք
Երգում հստակ երկնքի տակ,
Կսիր երգը մեր ներդաշնակ:

Ս Ֆ Ի Ն Ք Ս Ն Ե Ր

(Նույն եղանակով, հեգեելով)

Յող լսողին մի քիչ հարգեն,
Ճյուղերի մեջ շքողարկեն
Իրենց ճանկերն անգղային:
Հենց որ լսեք, դրանք արդեն
Կծվատեն ձեզ նույն սլահին:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Կորչի նախանձ, ատելութուն,
Երբ աշխարհում խինդն է անհուն
Հորձանք տալիս լիուլի:
Ջրի վրա թե ցամաքում
Մեզ միշտ հրճվանք է համակում,
Երբ հյուր ունենք ցանկալի:

Մ Ե Տ Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Սրգն ու նվագն, անկեղծ ասած,
Նոր և մաքուր են շափազանց,
Բայց թե վրաս չեն ներգործում,
Ուստի սոսկալ չեմ էլ փորձում.
Չեն թափանցում սիրտս բնավ:
Լոկ ականջի շոյանք են լավ:

Ս Ց Ի Ն Ք Ս Ն Ե Ր

Սրտից զուր մի՛ ճամարտակիր,
Քո մոռվթին այդ զզվելի
Կաշվե տոպրակ կվայելի:

Տ Ա Ո Ի Ս Տ

(Սոտեհալով)

Հրա՛շք տգեղություն տգեղությանց,
Բայց և զորեղ դիմազծեր խոշոր
Էարին եմ նախազգում, հրճվում սրտանց .
Ուր կտանի ինձ հայացքն այս խոժոռ:

(Սֆինգսներին նայելով)

Սյուրեղ էգիպն է խոհերով տարվել:

(Սիրենաներին նայելով)

Սրանց առաջ Ուլիսն է գալարվել:

(Մրջյուններին նայելով)

Սրանք են թաքցրել գանձն անսպասու

(Պրիժներին նայելով)

Սրանք են պահպանել ազնվաբար:
Նոր ոգի է այստեղ ինձ տոգորում
Վեհ են դեմքեր, դեպքեր ու ոգորում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Առաջ կփախչեիր ճիվաղներին ահեղ,
Բայց նրանցին հիմա ունես օգուտ
Որտեղ սիրածիդ ես փնտրում, այնտեղ
Հրեշները նույնիսկ մոտ են հոգուդ:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

(Սֆինգաներին)

Կնանման արարածներ, ասեք,
Հեղինեին դուք չե՞ք տեսել երբեք:

Ս Ն Ի Ն Ք Ս Ն Ե Ր

Մեզնից առաջ է նա եկել աշխարհ
Հերկուլեսը վերջ տվեց մեր ցեղին:
Բայց Քիրոնը գիտե հավանարար
Եվ ամեն ինչ կասի տեղը տեղին:
Գտիր, վազվզում է դաշտում անծայր:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Մենք էլ գիտենք գաղտնիքն այդ մեծ ..
Երբ Ուլիսը մեզ մոտ մնաց,
Մեզ շատ ու շատ բաներ պատմեց
Ե վ սիրալիր, և սրտաբաց:
Մենք ամեն ինչ քեզ կասենք պարզ,
Եթե հիմա դու կամովի
Գաս եզերքը կանաչ ծովի:

Ս Յ Ի Ն Ք Ս

Ո վ ազնիվ մարդ, շհավատաս:
Կապել տվեց Ուլիսն իրեն,
Ս եր խոսքն էլ դո՛ւ դարձրու կապանք:
Քիրոնը քեզ անկեղծորեն
Կհայտնի այդ գաղտնիքը թանկ:

(Ֆաուստը հեռանում է)

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Ն

(ԽոժոռովԼլով)

Այս ի՞նչ կռինչ է վերևում,
Ի՞նչ երամ է արագ թևում:
Ամենալավ որսորդն արի
Դրանց հազիվ նետահարի:

(Մրջյուններին նայելով)

Սրանք են թաքցրել գանձն անսպառ:

(Գրիֆներին նայելով)

Սրանք են պահպանել ազնվաբար:
Նոր ոգի է այստեղ ինձ տոգորում
Վեհ են դեմքեր, դեպքեր ու ոգորում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Սուաչ կփախչեիր ճիվաղներից ահեղ,
Բայց նրանցից հիմա ունես օգուտ
Որտեղ սիրածիդ ես փնտրում, այնտեղ
Հրեշները նույնիսկ մոտ են հոգուդ:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

(Սֆինսներին)

Կնանման արարածներ, ասեք,
Հեղինեին դուք շե՞ք տեսել երբեք:

Ս Ֆ Լ Ն Ք Ս Ն Ե Ր

Մեզնից առաջ է նա եկել աշխարհ
Հերկուլեսը վերջ տվեց մեր ցեղին:
Բայց Քիրոնը գիտե հավանարար
Եվ ամեն ինչ կասի տեղը տեղին:
Գտիր, վազվղում է դաշտում անծայր:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Մենք էլ գիտենք գաղտնիքն այդ մեծ ..
Երբ Ուլիսը մեզ մոտ մնաց,
Մեզ շատ ու շատ բաներ պատմեց
Ե վ սիրալիր, և սրտաբաց:
Մենք ամեն ինչ քեզ կասենք պարզ,
Եթե հիմա դու կամովի
Գաս եզերքը կանաչ ծովի:

Ս Ֆ Ի Ն Ք Ս

Ո վ ազնիվ մարդ, շհավատաս
Կապել տվեց Ուլիսն իրեն,
Ս եր խոսքն էլ դո՛ւ դարձրու կապանք:
Ք իրոնը քեզ անկեղծորեն
Կհայտնի այդ գաղտնիքը թանկ:

(Ֆաուստը հեռանում է)•

Ի Ր Ֆ Ի Ս Ո Ֆ Ս Ի

(Խոժոռու[Լլով])

Այս ի՞նչ կռինչ է վերևում,
Ի՞նչ երամ է արագ թևում:
Ամենալավ որսորդն արի
Գրանց հազիվ նետահարի:

Ս Յ Ի Ն Ք Ս

Ինչպես ձմռան հողմ կատաղի,
Ինչպես նետեր ալքիդեսյան
Սագի ոտքով, կտցով անգղի
Սլանում են աղմկաձայն
Ստիմֆալիդներն արագաթև:
Ցեղակիցներ ենք արդարև,
Գալիս են մեզ այցելության:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Նրկյուղով)

Ի՞նչ ձայն է սա նման է ֆշշոցի:

Ս Յ Ի Ն Ք Ս

Մի վախեցիր: Դրանք մարմնից զատված
Գլուխներն են այն լերնեյան օձի,
Որին թվում է դեռ թե չի մորթված:
Բայց քեզ հանկարծ ի՞նչ պատահեց, ասա,
Ինչո՞ւ ես անհանգիստ նայում այգալես:
Խո՞ւմբն է հրապուրում: Գնա ազատ
Թե չէ վիզդ հիմա դու կծռես:
Գնա, քեզ մի զրկիր, սեր վայելիր
Տես, այնտեղ ի՞նչ գեմքեր կան սիրալիր:
Լամիաներն են՝ սլոռնկուհիք ուրախ,
Հանդուզն են շատ, ժպտում են օջ ու օախ,
Երբ Սատիրի խումբն է զվարճանում:
Գին ունի այժի ոտքն ալդ շրջանում:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Յ Ե Վ

Կարո՞ղ եմ ձեզ այստեղ գտնել նորից:

Ս Ց Ի Ն Ք Ո Ւ Ե Ր

Այո, ետ մի մնա թեթևամիտներից:
Եգիպտացի ենք մենք՝ արդեն սովոր
Նստել տարիներով հազարավոր:
Միակ մեր սփռփանքն է իսկական —
Ցույց տալ ուղին լուսնի, արեգական:
Մենք բուրգերի առաջ նստում,
Դիտում ենք դատն ազգերի,
Մեզ վրա ոչ ոստմն է ազդում,
Ո՛չ հաղթույր, ոչ գերին:

Պ Ե Ն Ե Ո Ս Ի Ն Ե Ր Ք Ի Ն Հ Ո Ս Ա Ն Ք Ի Մ Ո Տ

Պենևուսը՝ շրջապատված վտակներով
և նիւթերով

Պ Ե Ն Ե Ո Ս

Օրոր ասեք ինձ մեղմաբար
Եղեգնիկներ՝ քույր ու եղբայր,
Հեզ ուռենու կանաչ թփեր,
Բարդու ճյուղեր անրջաբեր,
Փակեք աչքերն իմ հոգնած

Քաղցր պահին այս անժխոր
Ինձ արթնացրեց քնից իմ խոր
Տագնապալի դողն ալյաց:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

(Գետին մատենալով)

Ի՞նչ շշուկ է հովն ինձ բերում:
Ճյուղերի մեջ ե թփերում
Քչփչում են ասես կամաց
Ինչ-որ մարդիկ դարան մտած:
Կատակում է ամեն ալիք
Զեփյուռի հետ թեթևուլիկ:

Ե Ի Մ Յ Ե Ր

(Նաուատին)

Կավ կանես՝ փովես
Սփին զովասուն,
Հանգիստ տաս մի քիչ
Մարմնիդ պարտասուն:
Վայելիր անդորր,
Որից միշտ ես զուրկ,
Թող քեզ օրորեն
Կարկաչ ու շշուկ:

Քուն մի՛ բերեք դուք իմ ալքին,
 Թողեք մնան, ինչպես որ կան,
 Գեղուհիներն անզուգական:
 Զափ չկա իմ զմայլանքին:
 Ի՞նչ են սրանք՝ պատրանք, երանգ .
 Երջանկացա այսպես մի օր
 Ամեն կողմից ջրերը պարզ,
 Աղբյուրները հարյուրավոր
 Թփուտների, ծաղկանց միջով
 Ահա գալիս են մրմունջով,
 Ալիքներն են իրար խառնում,
 Մաքուր ու խոր լճակ դառնում:
 Տես, կանաչի թարմ ու մատաղ
 Մարմիններն են անուշ ցոլում
 Հանդարտ ջրի ջինջ հայելում:
 Կող է տալիս խումբը ուրախ,
 Ահով անցնում խոր տեղերով,
 Ճշում, րոնվում ջրակովի:
 Այս պատկերով պիտի գերվի,
 Սքանչանա սիրտս խսով,
 Բայց թե միտքս է թռչում հեռուն,
 Ուր թփերում հենց այս պահին
 Սաղարթների մեջ երերուն
 Ապաստանել է թաղուհին:

Հրածեշտ տալով ծովածոցին,
 Իբրև հրաշք, հայտնվեցին
 Վեհատեսիլ կարապներ
 Քնքուշ, հպարտ ու ինքնագոհ՝
 Հող են տալիս լուսնի ներքո,
 Կտուցները պարզած վեր .
 Մեկն առաջ է նետում իրեն,
 Կուրծքը պրկում խիզախորեն,
 Ետ է թողնում բոլորին,
 Թևերն անզուսպ թափահարում,
 Խրոխտանում, ուժն է լարում,
 Որ շուտ հասնի սուրբ վայրին .
 Մյուսներն ահա ամբողջ խմբով
 Աղջիկներին հառնում թափով,
 Սարսափահար են անում,
 Երկշոտ կանայք փախչում արագ,
 Թագուհուն են թողնում մենակ
 Երևնց պարտքը մոռանում:

Ն Ի Մ Ֆ Ե Ր

Ականջներդ, քույրիկներ,
 Դրեք հոգին ծաղկաբեր,
 Ես լսում եմ պարզ այնքան
 Ձիու դոփշուն իսկական:
 Ո՞վ է սուրում դաշտերում,
 Մեզ գիշերով լուր բերում:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Ասես աշխարհն է բովանդակ
Թնդում ձիու ոտքերի տակ:
Զեմ հավատում
Բա՞խտն է ժպտում,
Նպատակի՞ս արդեն հասաւ
Անասելի հրաշք է սա:
Մի հեծյալ է քաջակորով
Ահա գալիս ճերմակ ձիով .
Երևում են հեծյալ թե ձի
Օ՛, խիզախին ճանաչեցի՝
Չիլիրայի մեծն որդուն:
Կանգ առ Քիրոն հարցմունք ունեմ

Ք Ի Ր Ո Ն

Ի՞նչ ես ուզում:

Ֆ Ս Ո Ւ Ս Տ

Զսպիր վաղրդ ո վ իմաստուն:

Ք Ի Ր Ո Ն

Կանգ առնելու ես սովոր չեմ:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Ինձ տար քեզ հետ:

Ք Ի Ր Ո Ն

Արի տանեմ,
Նստիր հարցրու, պատասխանեմ:
Ո՞ւր սլանամ: Գետափին ես կանգնած հիմա,
Զո՞ւրն անցկացնեմ: Դա՞ է գուցե փափագը քո:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

Տար ուր կուզես: Երախտապարտ եմ քեզ ցմահ
Քեզ, ով մեծ մարդ, ով ուսուցիչ մաքրաբարո .
Ի պատիվ քեզ, դու կրթեցիր քաջեր բազում,
Սաներն են քո արգոնավտներն հաղթաբազուկ,
Բոլոր նրանք, որոնց վրա է խարսխված
Բանաստեղծի ամբողջ աշխարհը փառապանծ:

Ք Ի Ր Ո Ն

Եկ լիտսենք դրա մասին
Հաղիվ գովեմ ես Պալլասին:
Լավ դայակ չէր, բայց լավ էր այն,
Որ խելք ուներ ամեն մի սան:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

Գրկում եմ քեզ՝ բժշկողին հիվանդների,
Ով միշտ ցավեր է ամոքում, վերք դարմանում,
Քեզ՝ գիտակին բույսերի ու արմատների,
Ով հավետ է հոգով, մարմնով և ուղղ մնում:

Ք Ի Ր Ո Ն

Նրբ մեկն ընկնում էր վիրավոր,
Բժիշկ էի, խորհրդատու,
Բայց թողեցի արվեստն այդ խոր
Տերտերներին, կանանց ջադու:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Դու հիրավի մեծ ես, համեստ,
Չես հանդուրժում ոչ մի գովեստ,
Ցույց ես տալիս, թե ի՞նչ կա որ,
Շատ կան մարդիկ արժանավոր:

Ք Ի Ր Ո Ն

Շողորթրթում ես դու հիանալի,
Զարկում ես թե՛ սալին և թե նալին:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Բայց տեսել ես այն մեծագույն մարդկանց,
Ում քո դարը հանել է ասպարեզ,
Հետևել ես ազնիվ բարքին նրանց,
Ապրել ես և գործել կիսաստժո պես:
Ասա դու ինձ, թե ում ես համարում
Ամենալավ հերոսն այս աշխարհում:

Ք Ի Ր Ո Ն

Ամեն մի արգոնավտ էլ յուրովի
Առաքինի դյուցազն էք կորովի
Երբ մեկը զորեզ շէր ինչ-որ բանում,
Մյուս ընկերն էր դժվար գործը անում:
Գեղեցկությամբ, խանդով պատանեկան
Դիտակուրները միշտ հազթում էին,
Արագությամբ, թափով փոթորկային
Բորեադներն էին անզուգական:
Ուժով, խելքով, խորհուրդներով իր խոր
Յասոնն առաջինն էր՝ սիրեցյալը կանանց,
Զգուշավոր, խոհուն, շրջահայաց
Օրփեոսի տավիղն էք զորավոր:
Գիշեր-ցերեկ ալյաց մեջ փրփրադեզ
Նավն էր վարում կինքեյը սրատես:
Բուրն էլ խիզախում էին սիրով,
Հրճվում ամեն մեկի սխրանքներով:

Յ Ա Ո Ի Ս Տ

Լոտ՞ւմ ես դու Հերկուլեսի մասին:

Ք Ի Ր Ո Ն

Բորբոքում ես, ավա՛ղ, ցավս հիմա .
Չէի տեսել Թեբին, ո՛ւ Արեսին,
Ո չ Հերմեսին՝ աստվածներին անմահ,
Երբ տեսա այն մարդուն, ում աշխարհում,

Ի չրև աստժո, բոլորն են մեծարում:
 Արքայորդի էր նա ծաղկահասակ,
 Չէիք նայի առանց զմայլվելու,
 Հպատակվում էր իր եղբորն ավագ,
 Քնքուշ կանանց կամքին էլ էր հլու:
 Նման հոգի Գեան էլ չի ծնի,
 Ոչ էլ Հեբան եթեր կբարձրացնի:
 Ի՞նչ են արձան ու երգ—ջանք խելադար:
 Իզուր թող շտանոցեն ոչ լար, ոչ քար:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Ոչ մի քանդակագործ դեռ քեզ նման
 Սյսպես լի պատկերել Հերկուլեսին՝
 Գեղեցկագույն մարդուն: Խոսիր հիմա
 Նաև գեղեցկագույն կնոջ մասին

Ք Ի Ր Ո Ն

Ի՞նչ ասել է կնոջ գեղեցկություն
 Հաճախ՝ մեռած պատկեր, ուրիշ ոչինչ:
 Օրհնում եմ այն, ինչ աղբյուր է հորդուն,
 Կտրկաչում է ուրախ ու լուսաջինջ:
 Թրթիռ շունի գեղեցկությունն անհուր,
 Մինչդեռ նազանքն հաղթում է ամենուր:
 Այդպես էր Հեղինեն, երբ ես տարա ..

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Տարա՞ր:

Ք Ի Ր Ո Ն

Այո, տարա մեջքով այս նույն:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Ի նչ բախտ օ՛ր սա նստած տե՛ղն է նրա,
Մտքի պատրա՛նք է թե՛ իրողություն:

Ք Ի Ր Ո Ն

Ամուր կառչել էր նա իմ մաղերից,
Ճիշտ քեզ նման:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Արդեն կորցնում էմ ինձ,
Խոսիք նրա մասին, պատմիք մի բան
Նա է միակ իմաստն իմ գոչության:
Արտղի՞ց ս՛ր տարար ՀԷդիենեին:

Ք Ի Ր Ո Ն

Ասեմ: Դիտակուրներն այդ ժամանակ
Առևանգված քրոջն ազատեցին,
(Տարել էին Ելուզականերն անարգ):
Սակայն պարտության հետ շահաշավելով,
Էցված մոլեգնությամբ, ցասմամբ վայրագ,
Հրոսականերն էին ետքից գալիս .

Փախանք էլևսիսյան ճահիճներով,
Եղբայրները՝ ոտքով, քույրը՝ մեջքիս:
Երբ դուրս եկանք, աղջիկը թռավ ցած,
Գորովանքով շոյեց իմ բաշը թաց,
Հետո ասաց. «Շնորհապարտ եմ քեզ»:
Այնպե՛ս էր հմայիչ, մատա՛ղ այնպես,
Սերունական հոգիս այնպե՛ս՝ ցնծաց՛

Յ Ա Ո Ւ Ս Տ

Տասը տարեկան էր

Ք Ի Ր Ո Ն

Լեզվազետնե՛ր անբան
Խաբել են քեզ, իրենց էլ քեզ նման:
Այնքան տարեկան է կինը առասպելի,
Ինչքան բանաստեղծին է հաճելի
Ոչ շափահաս, ոչ ծեր և շարունակ
Ախորժալի նրան վաղ հասակում
Սուկանգում են միշտ, հետո փրկում
է՛հ, պոետի համար ի՞նչ ժամանակ:

Ն Ա Ո Ւ Ս Տ

Ասենք, Հեղինեն էլ կախում շունի
Ժամանակից, սակայն ո՞ւմ չէ հայտնի
Աքիլը Ֆերեում գտավ նրան:
Ի՞նչ հաղվագյուտ վայելք երջանկության —
Ի հեճուկս բախտի, սեր նվաճել:

Մի՞թե ես չեմ կարող կյանքի կոչել
 Հավերժ սիրո արժանի մեծ մի կին՝
 Աստվածակերպ, միակ այդ էակին:
 Դու հնուս ես տեսել, իսկ ես ա յ ս օ ր :
 Եվ շփտեմ՝ ինչով է առինքնում,
 Գեղեցկությա՞մբ, թե՞ հմայքով հզոր ,
 Սուսնց նրա ապրել չեմ ցանկանում:

Ք Ի Ր Ո Ն,

Դու իբրև մարդ սիրահար Լ ս, եկվոր
 Բայց ոգիները խլենթ կանվանեն քեզ:
 Փույթ չէ, ժամանակին եկար կարծես
 Այցելում եմ ամեն տարի, այսօր,
 Ես Մանտոյին՝ դատերն էսկուլապի:
 Աղոթում է աղջիկը ջերմորեն,
 Հորն աղերսում, որ ի պատիվ իրեն,
 Կա թանձրամիտ բլիշկներին զսպի
 Մնովեզ մարդկանց իզուր շկոտորեն.
 Մանտոն լավն է վհուկներից բուլոր,
 Նենգ չէ բնավ, քնքուշ է, բարեսիրտ
 Գեղ ու դարման ունի նա զորավոր
 Եվ, հույս ունեմ, քեզ կբուժի ընդմիշտ:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Խենթ չեմ և կարոտ չեմ ապաքինման
 Խող շղառնամ ստոր այլոց նման:

Ք Ն Ի Ա Ն

Զուր մի հրաժարվիր, ո՛վ արարած:
Մենք արդեն տեղ հասանք, դե , իջիր ցած:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Գու ինձ այս գիշերով ահա դարհուր,
Անցնելով գետ ու ժայռ, ո՞ւր բերիր ո՞ւր:

Ք Ն Բ Ո Ն

Պենեսր ահա Օլիմպոսը պայծառ:
Այստեղ Հունաստանն ու Հռոմը բախվեցին
Ավաղներում կորած մեծ տերության համար:
Քաղաքները փախավ հաղթեց քաղաքացին:
Հասլա նայիր, արդեն մոտ է այնքան
Լուանի լույսով օծված տաճարն հավերժական:

Ս Ա Ն Տ Ո

(Ներսում ահեջլ լուլ)

Զիու գոփյուն ես լսեցի,
Եվ սուրբ սանդուղքն ահա թնդադ
Կրասատվածնե՛րն եկան ալցի

Ք Ն Բ Ո Ն

Շշմարիտ է,
Աչքերդ բա՛ց:

Մ Ա Ն Տ Ո

(Սքափվելով)

Բարի գալուստ. Եկար ժամանակին:

Ք Ի Ր Ո Ն

Կանգուն է դեռ քո տաճարը այս հին:

Մ Ա Ն Տ Ո

Դարձյալ դաշտե՞րն ես չափշփում անվերջ:

Ք Ի Ր Ո Ն

Դու ապրում ես խաղաղ պատերի մեջ,
Իմ բերկրանքը սլացքն է անդադրում:

Մ Ա Ն Տ Ո

Իմ փոխարեն ժամանակն է սուրում:
Ո՞վ է բեշ հետ:

Ք Ի Ր Ո Ն

Սրան բերնց մեզ մոտ
Հորձանքն այս գիշերվա վատահամբավ:
Հեղինեին է սա տենչում տենդոտ
Տենչում է խելագար կրքով անբավ,
Քայց շգիտե, թե ինչ պիտի անի,
Եվ կսրոտ է փրկիչ գեղ դարմանի:

Մ Ա Ն Տ Ո

Սիրում եմ, երբ ձգտում են անհասին:

(Քիրունն արագ հեռանում է)

Եկ, հանդուգն, մոտ էս քո Երազին:
Մութ գեղեցիկն մեզ կտանի հիմա
Օլիմպոսի անձամբ սարգեանյա,
Որտեղ Պերսեփոնեն ականջը միշտ ձայնի,
Սպասում է, որ այցելեն գաղտնի:
Օրփեոսին էլ եմ այնտեղ տարել:
Գնանք, ճարպիկ եղիր դու առաջը:

(Իջնում են)

ԱՆԵՈՍԻ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔԻ ՄՈՏ, ԻՆՉՊԵՍ ԱՌԱՋ

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Գիրկր նետվենք Պենեոսի,
Հողանք հրգենք օրնիրուն,
Թող մեր անուշ երգը հոսի,
Մխիթարի խեղճ մարդուն:
Ի՞նչ կյանք ու բախտ առանց ջրի:
Սուրանք խմբով քաղցրաձայն,
Որ մեր սիրտը նորից բերկրի
Մփուն ծովում էգեյան:

(Երկրաշաժ)

Գեան է հանկարծ ճամփան փոխում,
Նոր հունով է հոսում ցած,
Սփն է ցնդվում, նեղբվում, ծխում,
Զուրն է ետում դադադած:
Աղետ է սա փախչենք, քուլքեր,
Արհամիտք է ա՛ռ ու մահ .

Ի ուր էլ փախեք, ա չնիվ հյուրեր,
Ապահով է ծովն հիմա
Ալիքներն են շողում չորս դին
Խաղում, ափերն են կոծում,
Երկնում լուսին ծովում լուսին —
Սուրբ ցողով է մեզ օծում:
Երկրաշարժ է աչստեղ հիմա
Աչնտեղ՝ աղատ կյանք անդոր
Ով խոհեմ է, թող հեռանա
Աչս լաչրերից ա ալորս

Ս Ե Յ Ս Մ Ո Ս

(Երկրի ընդերում ֆրամնջալով և ուստալով)

Մի անգամ էլ ուժս լարեմ,
Ուսերս լավ թափահարեմ,
Վեր բարձրանամ ահագնաթափ,
Զորս կողմ սփռեմ ահ ու սարսափ:

Գետնի խորքում ի՛նչ է թնդում,
 Ի՛նչ որոտ է խոր անդնդում,
 Ի՛նչ ցնցում է կոյժանարար
 Ուսանվում է աշխարհն արար:
 Բայց շենք շարժվի, ինչ էլ լինի,
 Թեկուզ մեր դեմ դժոխքն ելնի:

Ահա մի սյուն ձգվում է վեր
 Դա ծերունին է ալեհեր,
 Որն երկունքի ցավով բռնված
 Այն մոր համար բազմահալած
 Դեկոս կղզին կերտեց մի օր,
 Ի լույս հանեց վիհերից խոր:
 Բազուկներն ու մեջքը պրկած,
 Ծովից ելավ՝ կղզին գրկած,
 Ատլասի պես վեր բառձրացրեց
 Կավ ու ավաղ, քարեր մեծ մեծ,
 Տեղից խախտեց ափը գետի
 Ճեղքեց ամբողջ լայնքը հովտի,
 Կանգնեց մնաց անշարժ անձայն,
 Իբրև մի հին հսկա արձան:
 Կեսը հողում՝ նա իր գրկին
 Պահում է դեռ բեռն ահագին
 Ու չի հոգնում: Կավ է այդպես,
 Թե չէ էլ տեղ չէր մնա մեզ:

Մեր գահն է սա, և իրար հետ
Պիտի բաղմենք հար ու հավետ:

Ս Ե Յ Ս Մ Ռ Ս

Իմ արածը ո՞վ լգիտի,
Իմ վաստակը թող շուրանան:
Զգնցեի, ինչպե՞ս պիտի
Զքնաղ լիներ աշխարհն այսքան:
Լեռներն այսպես կլողայի՞ն
Լազուրի մեջ Եթերային,
Էթե նրանց վեր նետելով,
Սս շտայի տեսք հոգեթով:
Սչքի առաջ նախնիների
Լ վ Քառսի, և Գիշերի,
Հսկաներին ընկերանում
Ու շարություն էի անում:
Պատանեկան ի՞նչ խենթ է սուակ
Պարծրել էինք խաղաղնդակ
Դելիոսն ու Օսսան բարձրիկ:
Իբբ ձանձրացանք, դրանք դարձրինք
Մեծ Պառնասի համար գլխարկ
-խմա դրանց հովանու տակ
Սպողլոնի, մուսաների
Օթեանն է երանելի:
Գահն Լմ Զևսի ես առս վի
Վեր բարձրացրել ու շուր տիկել

Ելնում եմ ևս վիճից կրկին,
Նոր տեղ բացում որոտալով,
Եկեք, կանչում եմ ամենքին,
Սպրեք ուրախ ու ապահով:

Ս Ֆ Ի Ն Ք Ս Ն Ե Ր

Գուցե թվար, թե ժայռ ու լեռ
Ծնվում են լոկ հրաբխից,
Բայց մեր աչքի դեմ են հողից
Գանդաղ ելել դար ու դարեր:
Ժայռի վրա ժայռն է կախված,
Անտառ Մեր սուրբ տեղից այս հին
Չենք հեռանա դայթակղված,
Չէ, չես խարի սֆինքսներին:

Գ Ր Լ Ֆ Ն Ե Ր

Տերևներին ու ճեղքերում,
Տեսեք, ոսկին է հուրհուրում:
Շուտ, մրջյուններ վրա՛ տվեք,
Թե չէ դանձիղ կղրկվեք:

Մ Ր Զ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Ք

Որտե՞ղ է ոսկին
Հսկա բարձունքին:
Ելե՛ք լեռն ի վեր,
Արագավաղեն յ:

Շուտ անցեք գործի,
Զորքն առաջ շարժեք,
Իզուր չկորչի
Գանձը թանկարժեք:
Սմեն ճեղք ու փոս
Մտեք, լավ նայեք,
Զեպ մի խնայեք
Ոսկին է ափսոս:
Դե, գործի դրեք
Ամեն մի հնար
Լեռը թող մնա,
Իսկ սսկին բերեք:

Ք Ր Ի Ց Ն Ե Ր

Լ կ է ք, Լ կ է ք, ոսկին բերեք,
Մեր ճանկերի տակը դրեք.
Ավելի լավ փակածք չկա,
Գանձի գլխին փորձանք չի պ "

Պ Է Դ Ո Ւ Ց Յ Ն Ե Ր

Մենք օթևան գտանք հարմար,
Բայց այստեղ ե՞րբ ենք եկել,
Մով գաղտնիք է դեռ մեզ համար
Որտեղի՞ց ենք լույս ընկել:
Կյանքի համար ամեն մի վայր
Օրրան է, տուն հայրենի,

Որտեղ նեղքվի հանկարծ մի ժայռ,
Թզուկն այնտեղ կլինի:
Թզուկն ու իր կինը թզուկ
Կազմում են հաշտ ընտանիք,
էլ ի՞նչ դրսիստ, երբ ամեն զույգ
Համերաշխ է, երջանիկ:
Գոհ ենք և մեր բախտն ենք օրհնում,
Չէ՞ որ շորս կողմ հողը մայր
Սիրով է միշտ ծնում, սնում
Զավակներին անհամար:

Դ Ա Կ Տ Ի Ը Ն Ե Ր

Իրր մայր հողն է մի գիշերում
Սյա փոքրերին աշխարհ բերում,
Կշնորհի երջանկություն
Գաւ ցեղին մէջ փոքրագույն:

Ս Վ Ա Գ Պ Ի Դ Մ Ե Յ

Ի գո թծ, ձեզ համար
Տեղ ճարեք հարմար
Նրբ շիք զսրություն,
Նղեք եռանդուն:

Գարբնոց կառուցեք,
Կյանքն է դեռ խաղաղ,
Զենքեր կռեցեք,
Զորք պարձեք ի իզախ:

Ճարպիկ ու արի
Մրջյուններ բարի,
Տեղն հանքաքարի
Դուք վաղուց գիտեք,
Բերեք ու կիտեք:
Դակտիլներ՝ ր փոքրիկ,
Դուք էլ փայտ բերեք
Թաթերով մանրիկ,
Հողի տակ այրեք,
Փայտածուխ դարձրեք:

Գ Ե Ն Ե Ր Ա Լ Ի Ս Ս Ի Մ Ռ Ի Ս

Նետ, աղեղ առեք,
Խմբով պաշարեք
Չկնկուչներին՝
Լճում, ափերին:
Սաղավարտներով,
Փետրափնջերով
Հարձակվեք իսկույն,
Մոտեցեք թաքուն
Այդ գոռոզներին,
Չարդեք բոլորին:

Մ Ր Ծ Յ Ռ Ի Ն Ն Ե Ր ԵՎ Գ Ա Կ Տ Ի Լ Ն Ե Ր

Կորած էնք արգեն.
Մեր հանքից սրանք
Շղթա կձուլեն:

Դեռ շրմբոստանանք,
Մինչև օրն ազատ
Լինենք հնազանդ:

Ի Ք Ի Կ Ո Ւ Ի Կ Ռ Ո Ի Ն Կ Ն Ե Ր

Բարձունքներում պարզ Լթերի
Կանչ ենք լսում դահիճների,
Մեռնողների ճիշ սրտահույզ
Եվ թևերի բախում անհույս:
Հեծեճանքներն են մարմրում,
Արյունիդ լիճն է կարմրում:
Ամեն պիգմեյ՝ կաղ, դարշելի
Փետրափունջն է ձկնկուլի,
Իբրև ավար, թափահարում,
Իր սաղավարտն է դարդարում՝
Ոչ, հավիտյան մենք շենք ների
Կորուստն անմեղ թռչունների:
Բարեկամներ՝ ծովում, լճում,
Հատուցման ենք մենք ձեզ կոչում,
Տանք ուժ, արյուն, լուծենք վրիժ
Պիգմեյների ցեղից հրեշ:

(Կսկռոցով դեսուդեն են եետվում).

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Ն Ե Լ

(Դաշտավայրում)

Ծա մտա եմ հյուսիսի վհուկներին,
Բայց սրանցից, չէ՛, գլուխ չեմ հանում:
Բլոքսբերգն ուրիշ, խորթ չեմ ամենեին,
Այնտեղ իմ տանն եմ ես, իմ օրրանում:
Հսկում եմ մեզ պահնորդների նման
Հայերիսն՝ իր բարձունքից, Իլդեն՝ ժայռից,
Եվ նույն խամփոզն է հնազարյան
Էլենդ գլուզի վրա փռվում նորից:
Հարթ և ուղիղ հովտով անցնում եմ ես,
Հողն է հանկարծ ուռչում ու լեռնանում,
Լավ լեռ շասեմ, թումբը բարձր է այնպես,
Որ ինձ սֆինքսներից է բաժանում:
Խարույկներն են ձգվում հովիտն ի վար,
Ի ցույց հանում արկածները բազում...
Կանանց խումբն է սլարում նամփիս խավար,
Հրապուրում, սեթևեթում, նազում:
Գեմ չեմ սիրահարը քաղցրեղենի,
Բերանն ամեն տեղ էլ կքաղցրացնի:

Լ Ա Մ Ի Ա Ն Ե Ր

(Սեֆիստոֆելին հուպուրելով)

Մերթ փախչենք արագ,
Մերթ էլ դանդաղենք,
Խոսենք, ծիծաղենք

Ազատ, համարձակ,
Ի՞նչ լավ է. թող դեռ
Քարշ դա մեր ետքից,
Պատժվի մի քիչ
Մեղապարտը ծերու
Այ քեզ տեսարան,
Մի նայե՛ք դրան.
Ինչպե՛ս է վաղում,
Ճոճվում կաղալով,
Ոտքը քարշ տալով,
Հասնել է ուզում

Մ Ի Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Կանգ առնելով)

Ա՛խ, Ազամի օրից խաբված այրեր,
Ս՛խ, անիծվի ճակատագիրը ձեր.
Խենթ եք՝ ծեր թե ջահել, և շարունակ
Հիմարացնում են ձեզ, ծաղրում կանայր:

Այո, այդ ցեղն իր արմատից է պիղծ.
Շինծու մարմնաձևեր, դեմքեր ներկած,
Ղրանք ոչինչ շունեն առողջ, անբիծ,
Ինչ շոշափես, փտած է, կեղծ, կոկած:
Դա տեսնում ես, գիտես, բայց կպարես
Հենց որ ծափ տան լրբերն այդ ժպտերես:

Լ Ա Մ Ի Ա Ն Ե Ր

(Կանգ առնելով)

Կանգնենք մի քիչ: Միտքը փոխում է նա,
Շուտ մոտենանք, թե չէ ետ կգնա:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Առաջ գալով)

Առաջ, հիմարաբար մի ընկիր դու
Կասկածանքի որոգայթը անել:
Եթե աշխարհ չգար ոչ մի ջադու,
Ո՞ր սատանան կուզիր սատանություն անել:

Լ Ա Մ Ի Ա Ն Ե Ր

(Նազանձով)

Պատվենք շուրջն այս հերոսի,
Մինչև սրտում՝ նման լույսի,
Մեկիս հանգեպ սեր փարոսի:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Լույսի ներքո այս լղարիկ
Ինձ թվացիք լնաշխարհիկ,
Պակասություն կարծես չունիք:

Է Մ Պ Ո Ւ Ջ Յ

(Խմբին խառնվելով)

Ինձ էլ խմբի մեջ ընդունեք,
Թողեք ես ձեզ ընկերանամ:

Լ Ա Մ Ի Ա Ն Ե Ր

Մեջ ես ընկնում անհամ անհամ,
Մեզ իանգարում ամեն անգամ:

Է Մ Պ Ո Ւ Ջ Յ

(Մեֆիստոֆելին)

Լմպուզան է ողջունում քեզ՝
Հորարույրդ իշամբակ:
Դու ձիու ստք թեև ունես,
Իմ աղագակիցն ես մոտ ու թանկ:

Ս Ե Ն Ի Ս Ն Ո Ն Ե Լ

Կարծում էի, թե ինձ ձեզ մոտ
Չի պատահի ոչ մի ծանոթ,
Բայց կյանքն հին գիթք է ուր զնուս,
Աղգուտակդ կա անպակաս:

Է Մ Պ Ո Ւ Ջ Ա

Ես հմտորեն առհասարակ
Կերպարանքս եմ փոխում արագ,
Բայց ի պատիվ իմ ցեղակցի,
Լշի գլխով հայտնվեցի:

Մ Ե Ց Ի Ո Տ Ո Ց Ե Լ

Աղգակցութիւնն այս կողմերում
Կարևոր բան են համարում,
Բայց աշխարհը թեկուզ քանդվի,
Լշերի հետ ևս չեմ հաշտվի:

Ի Ա Ս Ի Ս Ե Բ

Գլուխ մի դիր ցուցանքի հետ,
Թող հեռանա, կորչի անհետ
Պա որ եկավ կանի ի չիք,
Ինչ որ լավ է ու գեղեցիկ:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Դուք էլ նուրբ էր ու նաղելի
Ի այց թե շատ էր կասկածելի
Վարդ-այտերի տակ ներկառատ
Չէ՛ր թաքցնում ինչ որ արատ:

Ի Ա Մ Ի Ս Ն Ե Բ

Եկ, մի քաշվիր, սխրագործիր,
Այս խաղի մեջ բախտդ փորձիր,
Շատ ենք ընտրիր մեզնից մեկին,
Սեր շխաղաս, դա երգ է հին:
Սեր փեսացու խեղճ ու կրակ,
էլ մի փքվիր, ևկ, անճարակ,

Մի մտածիր Երկար-բարակ,
Մեզ տես առանց գիմակների,
Տես, ինչ ունենք՝ լավ կամ թերի:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Սա սիրունիկն է առավել:

(Գրկելով)

Վա՛յ, տեղով տեղ շոր ցախավել:

(Մի ուրիշին որսալով)

Սա՛, ի՛նչ դարձվոր սի՛րտ կխսունի .

Ի Ա Մ Ի Ո Ն Ե Ր

Իսկ դու լավի՛ն ես արժանի:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ընտրեմ փոքրին բայց սա էլ, տես,
Գուրս է սահում, ինչպես մողես,
Հյուսերն օձեր են դալարուն .

Սյուաին փորձեմ բարձր է, սիրուն .

Սակայն կարծես ձող է սրած՝

Եղևնու կոն դիխին դրած:

Վե՛րջրու Փորձեմ այն հաստիկի՛ն

Նրա նման պարարտ մի կին

Միշտ կունենա մեծ համարում

Սրեկյան երկրներում
Էայց, ա խ, փերին այդ փափկամոլթ
Պայթեց, ինչպես անձրևաորդ:

Լ Ա Մ Ն Ա Ն Ե Ր

Երկինք սուրանք, ինչպես կալձակ,
Շրջան գործենք, իջնենք արադ
Երամի պես շղջիկների,
Որ մեզ տեսնի ու դարձուրի
Վճուկորդին այս աներես
Ինչո՞ւ էժան սրծնի այսպես:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Սքափվելով)

Հիմա խելոք շեմ ավելի
Հյուսիս, հարավ—նույն բռան են սուտ,
Ամենուրեք ուրվալաններն էն դղվելի
Պոետներն ու ամբոխը՝ բուլթ:
Գիմակների հանդեսը նույն,
Նույն կրքերի խաղն հնագույն,
Հիասքանչ է ամեն գիմակ,
Բայց դարձուրանք ունի իր տակ
Ինձ օտար չէ սուտն ամոքիչ,
Եթե երկար տեի մի քիչ:

(Քարերի մեջ խառխափվելով)

Ինչպե՞ս պիտի ես գնամ ետ,
 Չկա էլ ոչ մի արահետ,
 Խառնվել է շուրջն ամեն բան,
 Քարերի տակ կորավ ճամփան:
 Ելք եմ փնտրում, ինչպե՞ս կրկին
 Գտնեմ ես իմ սֆինքսներին:
 Աչքիս ես չեմ հավատում դեռ,
 Այսքան լեռներ մի գիշերո՞ւմ:
 Ի՞նչ չեք անում դուք, վհուկներ,
 Ի լոբսրերդն էլ եք այստեղ բերում:

Շ Ր Ե Ա Դ

(Բնական ժայռի գլխից)

Իմ լեռն է հին և աննման,
 Նույնն է օրից իր արարման,
 Եկ, քո այցով դու կպատվես
 Սեր Պինդոսի ժայռերը վեա:
 Պոմպեոսի անկման օրից
 Լս անսասան եմ, կամ նորից,
 Իսկ այդ լեռները կհալչեն,
 Աքաղաղներն հենց որ կանչեն:
 Տեսիլքը միշտ է կրկնվում,
 Հանկարծ ծնվում, հանկարծ շքվում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Փառք ու պատիվ թեղ, ո՞վ գապաթ,
 Լարձունք խրոխտ կաղնիների
 Խավարը քո թանձրասաղարթ
 Լուսինը շի լուսավորի,
 Թայց ի՞նչ շող եմ ես նկատում,
 Որն առկայծում է թավուտում,
 Մթնում փայլում ջահի նման:
 Հոմունկուլոսն է անպայման:
 Փոքրիկ, այստեղ ի՞նչ էս անում:

Հ Ո Մ Ո Ի Ն Կ Ո Ի Լ Ո Ս

Թափասեցի ամբողջ հեռաստանում,
 Ուզում էի վերջ տալ այս անոթին,
 Որ ծնունդս լիակատար լիներ,
 Է այց ալսպիտի բաներ տեսա շորս դին,
 Որ աշխարհ գալ շեմ հանդգնում ես դեռ:
 Սակայն խոստովանեմ անկեղծորեն,
 Երկու փիլիսոփա դուր եկան ինձ:
 Անվերջ խոսում էին բնությունից,
 Նրա նց հետքով ես կղնամ արդեն,
 Խորհուրդը երկրային նրա նք գիտեն,
 Ինձ ուղի ցույց կտան իմաստնաբար,
 Կասեն, թե ե ըբ, ինչպե՞ս դամ լույս աշխարհ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ինքդ պիտի գտնես հնար ու ճար
Քանզի որտեղ կան ուրուներ անբան,
Չարչաց կուսակիցն է փիլիսոփան:
Նա քեզ կղարմացնի լեզվով ճարտար,
Քայց մի խոսքն է արդար, տասն՝ անարդար:
Չեոքիդ է բանալին միակ ելքի.
Մինչև շխալվես, շես դա խեղքի:

Հ Ո Ս Ո Ի Ե Կ Ո Ի Լ Ո Ս

Լավ խորհուրդներն օգտաւ են միշտ բերում:

Մ Ի Ֆ Ի Ս Տ Ա Ֆ Ե Լ

Գնանք, էլի շրջենք յավիղներում:

(Բաժանվում են)

Ա Ն Ա Ք Ս Ա Ֆ Ո Ւ Ա Ս

(Թալեսին)

Համառ ես լես զիջում, և այսուհետ
Մի՞թե արժե իդուր միճել քեզ հետ:

Ք Ա Լ Ե Ս

Միքն ամեն բամուց կտատանվի,
Սակայն ժայուր ևրբեք չի սասանվի:

Ա Ն Ա Ք Ս Ա Գ Ո Ր Ա Ս

Հրո ծնունդ է ժայռն այդ անսասան:

Ք Ա Լ Ե Ս

Ջուրն է կենաց ահունքը սրբազան:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

(Ն. կուսի արանքում)

Քողեք շրջեմ ձեզ հետ, շէ՞ որ սրտանց
Նրազում եմ ծնվել ըստ օրինաց:

Ա Ն Ս Ք Ս Ա Ի Ո Ւ Ա Ս

Քալես, ջուրն իզուր ես դու մեջ բերում
Տիղմից լեռ կատեղծե՞ս մի դիշերում:

Ք Ա Լ Ե Ս

Ի՞նչ են դիշեր, ցէրեկ ու ժա՞ կյանքի համար
Չափանիշ չեն, և բնությունը մայր
Մեծն ու փոքրը կարգով է արարում,
Զի բռնանում, լի էլ աճապարում:

Ա Ն Ա Ք Ս Ա Գ Ո Ր Ա Ս

Բայց Պլուտոնի հուրն է դարձել այսուեղ
Որդեղնել է էոլի շունչն ահեղ,
Վեր է նետվել երկրի կեղևը հին,
Ծնվել են բարձունքներն այս լեռնային:

Ք Ա Լ Ե Ս

Ի՞նչ ես ուզում ասել: Լալն այն է ի վերջո,
Որ կան լեռներն իրոք: Մենք այս վեճով
Ժամանակ ենք վատնում, դուր ջանք թափում,
Հաղար ու մի ստով մարդկանց խաբում:

Ա Ն Ա Ք Ս Ա Գ Ո Ր Ա Ս

Բաղմոթյունն է լեռներն ի վեր ելնում,
Որ բնակվի բարձր ժայռաստանում
Պիգմեյներ են դրանք, միրմիդոններ,
Մրջյուններ են անխոնջ և դակտիլներ:

(Հովուեկույսիե)

Դու շես ձգտել փառքի ու մեծարման
Փակ ես ապրել, ճգնափորի նման
Եթե ուզես դառնալ իշխանավոր,
Սիրով կթագադրեմ ես քեզ այսօր:

Հ Ո Մ Ո Ւ Կ Ո Ւ Ր Ս

Թախան ի՞նչ է կարծում:

Ք Վ Լ Ե Ս

Ոչ, խորհուրդ չեմ տա քեզ:
Փոքրերի հետ փոքր դորձեր կանես,
Մինչդեռ մեծերի հետ ինքդ էլ ես մեծ:
Նայիր վերև, երկինքն ասես մթնեց

Մնթիվ կռուներէ սե երամից:
 Տես, ցած են սլանում սպառնալից:
 Քղուկների ժամն է օրհասական:
 Վա՛յ քեզ, Եթէ դու լինեիր արքան .
 Սուր ձանկերով, կտուցներով պորեղ
 Երամն է ծվատում դաճաճներին
 Աղետ է սա: Տեղն է դահլիճներին
 Նրանց ձեռքով ձկնկուլներն անմեղ
 Ընկան լճի խաղաղավետ Եզրին:
 Բայց նետերի տարափօ ալն մահաբեր
 Եթէ բորբոքեց, և օրն է հատուցման:
 Մոլեղնում են անթիվ ցեղակիցներ,
 Եկել են լուծելու վրէժն արջան
 Էլ չի օգնի թղուկներին հպարտ
 Ո՛չ նիզակ, ո՛չ վահան ո՛չ սաղավարտ:
 Գալտիլներն ու մրջյուններն են լախաշում
 Արդեն ամբողջ բանակն է նահանջում:

Մ Ն Ս Ք Ս Ա Չ Ո Ր Ս

(Փ. Լ. ինչ լուրուց հետո, հանդիսավոր ձայնով)

Ես միշտ ապավինել եմ ընդերքին,
 Մակայն այսօր դիմում եմ երկնքին
 Ո վ դիցուհի՛ հավերժորեն մատաղ,
 Ո վ եռանուն, եռապատկեր շքնաղ,
 Դիանա , Հեկատե՛, Լուսի՛ն,
 Գթա՛ իմ աղետույ ժողովրդին:

Դու սիրտ ես ամօքում, հույզ ներշնչում,
Մեղմ ես, բայց և խիստ ես ու անզիջում,
Ուրուներիդ երախը բա՛ց արա այսօր,
Առանց կախարդանքի ցույց տուր ուժդ հզոր:

(Առում է)

Մի՞թե աստվածուհին
Անսաց իմ աղերսին,
Փոխեց արագ այսքան
Կարգը մայր բնության:
Սեծանում է, ծոտենում է, տեսա՞ք,
Գահը աստվածուհու լուսապսակ,
Ահարկու է այնպես ու վիթխարի,
Բողկլտում է գրկում սև խավարի
Ով հսկա գունդ, զարհուրանք ես համակ
Զիջնե՛ս, կկործանես ծով ու ցամաք:

Ուրեմն՝ ճի՞շտ է, որ թեսալացի կանայք
Հանդուգն երգերով վհուկալին
Քեզ ցած են իջեցրել և դժնդակ
Աղետ ու ցավ բերել ողջ աշխարհին .
Մթնեց գունդը սլաշձառ, ցնցվեց, գողաց,
Հանկարծ պայթեց և կայծակներ տեղաց:
Օ՛, ի՛նչ շաշ ու շառաշ, ի՛նչ գղրղյուն,
Ի՛նչ փոթորիկ, ի՛նչ որոտ ու ճայթյուն:
Գահի առաջ փովեք խոնարհաբար...
Ե՛ս աղետն այս բերի, ների ր, աշխա՛րհ:
(Բերանխիլայր գետնին է փովում)

✽ Ա Լ Ե Ս

Այս մարդն ինչե՛ր ասես, որ չի խոսում,
Ինչե՛ր ասես, որ չի տեսնում, լսում:
Ինքս շեմ նկատում ոչ մի նոր բան,
Խե՛նթ է գուցե, հանկարծ բռնե՞ց նոպան:
Լուսինն ահա. նորից իր հին տեղում,
Լողում է անվրդով, հանդարտ շողում:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Հապա տեսեք լեռը պիգմեյների.
Կլոր դադաթ ուներ, սրվեց հանկարծ:
Լեռան գլխին իջավ հուժկու հարված.
Լուսնից պոկված ծայռ էր դա վիթխարի՝
Ընկավ, ճգմեց մարդկանց անդթաբար,
Չհարցնելով մեղավոր ու արդար,
Բայց ես հիացմունքով պիտի խոսեմ
Այս արվեստի մասին անզուգական,
Որը մի դիշերում, արագ այսբան
Վեր խոյացրեց շորս կողմ լեռներ վսեմ:

✽ Ա Լ Ե Ս

Չէ մի: Պատրանք է սա, կեղծիք դատարկ:
Լավ է, որ շղարձար գաճաճների արքան,
Կորչի այդ ցեղը պիղծ ու այլանդակ:
Գնանք, տեսնենք ուրախ ծովահանդես,
Որտեղ հարգ ու պատիվ ցույց կտան մեզ:

(Հեռանում են)

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Հանդիպակաց ժայռն ի վեր մագլցելով)

Քարշ եմ գալիս՝ կանչած սուր ժայռերից,
 Կաղնիների փտած արմատներից:
 Իմ հարցն ուրիշ Չորս կողմ ի՞նչ խեղճահոտ,
 Դա ծծմբի, կպրի հոտն է ծանոթ:
 Խեղճի բուրմունքն այստեղ շատ չէ հարգի,
 Խեղճ շեն տեսել հույներն իրենց օրում:
 Մարդ իմանա՝ կրակը դժոխքի
 Ինչո՞վ են վառ պահում այս կողմերում:

Դ Ր Ի Ա Ի

Դիցուք, խելոք ես տանն առհասարակ
 Բայց թե այստեղ դու շատ ես անճարակ,
 Քիչ գրվատիր հյուսիս ու մայր երկիր,
 Այլ սուրբ կաղնիներին երկրպագիր:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

Այդ ո՞վ չի կարոտում երկիրն իր մայր,
 Դրախտ է միշտ քո հողը քեզ համար:
 Բայց լուսնի տակ այս ի՞նչ է երևում,
 Ի՞նչ է երեքտակվել քարանձավում:

Դ Ր Ի Ա Գ

Քույրերն են Ֆորկիաս: Մի՛ վախեցիր,
 Համարձակ մոտ գնա և զրուցիր:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Սիրով, Սպառաժ կանգնել եմ սրանց դեմ:
 Հպարտ եմ շատ, սակայն ի՞նչ թաքցնեմ,
 նման բան չեմ տեսել դեռ ոչ մի տեղ,
 Թճրախոտից էլ են սրանք աճեղ .
 Ամենածանր մեղքն անբավելի
 նողկալի չի թվում ինձ ավելի,
 Բան այս եռահրեշք զազրելագույն:
 Կրքեինք մենք այս ցուղանքն իսկույն
 նույնիսկ մեր դժոխքի դռան շեմքից
 Մինչդեռ գեղեղկության հայրենիքում
 Սյս դարշանքը ծիլեր է արձակում,
 Ազատ օգտվելով անտիկ փառքից .
 Չղջիկ-վամպիրներն են իրար քսվում,
 Գազցին, որ մոտ եմ: Սուլում են, ավալում:

Յ Ո Ւ Կ Ե Ս Ս

Քույրեր, տվեք աչքը մեր մինուճար,
 Տեսնեմ՝ ո՞ր հանդուգնը մտավ տաճար

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Պատվարժաններ, թողեք ձեզ մոտենամ
 Երիցս օրհնանքի արժանանամ:
 Ես ոչ օտար եմ ձեզ, ոչ անծանոթ
 Իբրև ազգակից եմ եկել ձեզ մոտ:
 Երեկ տեսա աստվածներին ձեր հին,

Գլուխ տվի Օփսին ու Հոեային,
Ձեր քույրերով սքանչացա սրտանց՝
Պարկաներով, որոնք Քաոսից են ծնված:
Բայց ձեզ նման կանայք չեմ տեսել մինչ այսօր,
Զմայլանքից լուռ եմ ես անզոր:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս Ն Ե Ր

Ձէ, այս ոգին խելահասն է կարծես:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ինչո՞ւ ոչ մի պոետ չի երգել ձեզ:
Ինչպե՞ս է պատահել, ինձ ասացեք,
Որ չեմ տեսել ձեր քանդակներն երբեք:
Դուք արվեստի համար միշտ կմնաք անհաս,
Ի՞նչ են Հերա, Վեներա կամ Պալլաս:

Ֆ Ո Ր Կ Ի Ս Ս Ն Լ Բ

Խոր խաղարում նստած ենք միասին,
Ձենք երազում ենք խորհում այդ մասին:

Ս Ս Ֆ Ի Ս Տ Ո Լ Լ Լ

Ինչպե՞ս խորհեք ողջ աշխարհից զատված,
Ձեզ ոչ մարդ է տեսնում, ո՛չ էլ աստված:
Պիտի ապրեք միայն այն վայրերում,
Ուր արվեստն ու սերճանքն են միշտ թաղավորում:

Ուր մարմարի զանգվածն է ամեն օր
Աշխարհ մտնում, իբրև հերոս մի նոր:
Ուր

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս Ն Ե Ր

Հավ, լոիր, ի՞նչ ես գայթակղում,
Իզուր շե՞ն քո խորհուրդները բարի.
Գիշերն է մեզ ծնել, գուտրերն ենք խավարի,
Անհայտ էլ կմնանք այս փակուղում:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Գծրախտություն շէ դա մի առանձին
Կարող ենք նոր տեսք տալ մեր սեփական անձին .
Երեքովդ ունեք մի աչք ու մի ատամ
Առասպելի ուժին դիմենք մենք այս անդամ
Երկուսի մեջ երեքդ ամփոփվեք,
Իսկ երրորդի կերպարանքն ինձ տվեք
Շատ կարճ ժամանակով

Ք Ք Ի Յ Ր Ե Ր Ի Յ Մ Ե Կ Ը

Մերժե՞նք, թե հավատանք:

Մ Յ Ո Ւ Ս Ն Ե Ր Ը

Փորձենք, բայց թե աչք ու ատամ չտանք:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Կարևորն եք մերժում: Պատկերն արդեն
Կատարյալ չի լինի հավանորեն:

Ք Ո Ի Յ Ը Ե Ը Ի Յ Մ Ե Կ Ը

Աչքդ փակիր, դուրս դցիր մի ծանիք,
Եվ պակաս չի մնա էլ ոչ մի արժանիք:
Արդեն կնմանվես մեղ անպայման,
Ինչպես իր քույրերին եղբայրն է միշտ նման:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ի՞նչ մեծ պատիվ: Լավ թող լինի այդպես:

Ֆ Ո Ը Կ Ի Ա Ս Ն Ե Ը

Լավ, թող լինի այդպես:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Ֆուկիասի պրոֆիլ բնդունելով)

ԱՆՈՆԵՍ

Որդին եմ Քառսի արժանավոր:

Ֆ Ո Ը Կ Ի Ա Ս Ն Ե Ը

Դուստրերն ենք Քառսի մենք՝ քույրերս բոլոր:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ամո՛թ, հերմաֆրոդիտ դարձա այսօր:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս Ե Ե Ր

Մեր նոր երրորդությամբ ինչպե՛ս դեղեցկացանք,
Երկու ատամ, երկու աչք ունեցանք:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

էլ շերեամ, թե չէ կվախենա
Հիմա ինձնից ամեն մի սատանա:

(Գնում է)

Ի Գ Ե Յ Ա Ն Ծ Ո Վ Ի Ժ Ա Յ Ռ Ո Տ Խ Ո Ր Շ Ե Ր

Հուսին՝ զենիթում անշարժ կանգնած

Ս Ե Ր Ե Ն Ա Ն Ե Ր

(Փայտերին նստած՝ սրինգ են նվագում և երգում)

Հուսին ինչպե՛ս թեսալուհիք՝
Այդ հանդուգն կախարդուհիք,
Քեզ երկնքից իջեցրին ցած:
Քայց դու ամեն ինչ մոռացած,
Հանդարտ շողա խոր խավարում,
Ցուրդ սփռիր հողին, ջրին,

Մովում խայտող վտառներին,
Ալիքներին այս անդադրում:
Բարի ալքով նայիր դու մեզ
Մառաններիդ խոնարհ ու հեղ:

Ն Ե Ր Ե Ի Դ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

(Մովային հրեշների տեսում)

Ծրգն հնչեցրեք հողմի նման,
Սարսուռներք ծովն անսահ ջան
Եվ բոլորին կանչեք դուրս,
Փախել էինք մենք փոթորկից,
Բայց ետ եկանք ծովի խորքից
Գերեց երգը սրտահույզ:
Զուգվել ենք մենք մանյակներով
Ճարմանդներով, ժանյակներով,
Գլխազարդեր ունենք շքեղ,
Քարեր փայլուն ու գունագեղ:
Սա ձեր արածն է, դեեր
Հրապուրում անմեղ մարդկանց,
Կործանում եք և նավ և դանձ
Մեզ էլ երգով հանում վեր:

Ս Ի Ր Ե Ն Ս Ն Ե Ր

Մովի դրկում զով, կապտազարդ
Լող եք տալիս անհող, աղատ,
Անհաղորդ վիշտ ու ցավի:

Այսօր փորձենք, տեսնենք, թե որ
Ավելին չե՞ք, թե՞ միշտ եք ձուկ,
Թեկուզ աշխարհն էլ քանդվի:

Ն Ե Ր Ե Ի Դ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Ավելորդ հարց և կասկածանք
Մենք ամեն ինչ լավ հասկացանք,
Երբ վեր ելանք ցնծալից:
Քույրե՛ր, եղբայրք, շուտ ետ սուրճ նք,
Թող համոզվեն այսօր սրանք,
Որ մենք բարձր ենք ձկներից:

(Հեռանում են)

Ս Ի Ր Ե Ն Ս Ն Ե Ր

Վայրկենապես կորան,
Սամոթրաքեի կողմը թռան
Նրանց տարավ բարեհաջող քամին
Ի՞նչ նպատակ ունեն, ո՞ր են սուրճ մ,
Ի՞նչ գործ ունեն կաբիրների երկրում:
Տարօրինակ ցեղ է սաստվածային
Դրանք իրենք իրենց են արարում,
Բայց լգիտեն, թե ինչ են աշխարհում:

Մի՛ հեռանա, շքնաղ լուսին,
Կարոտ մի թող քո վառ լույսին,
Թող գիշերը լանցնի, գթա՛.
Կգա ցերեկն ու վերջ կտա
Այս ամենին:

(Ափին կանգնած, Համունկոպոսին)

Կտանեի քեզ, հավատա,
 Ես ծերունի ներեի մոտ,
 Մենք կողքին ենք իր անձավի,
 Բայց շատ է նա անմարդամոտ
 Եվ ծանրաշունչ հանիրավի

Նա մարդկային մեր ցեղի հետ
 Չի հաշտվի հար ու հավետ,
 Բայց հարգանքի է արժանի.
 Ապագան է նրան հայտնի,
 Բուրբի բախտն է դուշակում,
 Շատերին է օղնել կյանքում:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Փորձենք, թեկուզ գրկվեմ կյանքից
 Իմ ապակուց, իմ կրակից:

Ն Ե Ր Ե Ո Ս

Մարդկային ձա՞յն: Ետադ զայրույթը իմ սրտում:
 Աստվածներին հասնել են խենթերն այդ ձգտում,
 Թեև դրանց գլխին նզովք է միշտ կախված.
 Չգտել, սակայն մնալ մարդկայինից էլ ցած:
 Կարող էի ապրել աստվածաբար անդորր,
 Բայց ուզել եմ անվերջ գործել բարիք մի նոր,

Թեև հետեւելով արարքներին մարդկանց,
Խորհուրդներս եմ բուրբ ես համարել կորած:

Թ Ա Լ Ե Ս

Ո՞վ տիրակալ ծովի, մեզ մի վանիր այսօր,
Մեզ շնորհիր խմաստությունդ խոր,
Նայիր այս կրակին մարդանման
Քո խորհրդով կօզնես մեղ անպայման:

Ն Ե Ր Ե Ո Ս

Խորհո՞ւրդ: Խորհուրդն արժեք ունի՞ մարդկանց աչքին,
Խելոք խոսքեր լսող մարդիկ շկանե
Ինչքան էլ դո՛հ գնան իրենց վարք ու բարքին,
Ոչ դաս կառնեն, ոչ էլ խելքի կգան:
Հոր պես խրատեցի ևս Պարիսին,
Երբ Հոնաստան եկավ հանդգնալ ար,
Ասի՛ թող շխլի կնոջն օտար,
Սմեն ինչ հայտնեցի աչդ հերոսին
Ինչ մտովի տեսա մահ, կոտորած,
Հրդեհ և արհավիրք համատարած:
Ահեղ դատաստանն էր դա Տրոյացի
Որ հայտնի է քանի՞ հազար տարի:
Նա խոսքը ծերունուս կարծեց կատաւ
Եվ Իլիոնն ընկավ հիմնահատակ:
Ընկավ իբրև դիակ մի վիթխարի
Ի կեր Պինդոս լեռան արձիւների:

Մի՞թե շհայտնեցի ես Ուլիսին
Ե վ Կիրկեի, և՛ Կիկլոպի մասին,
Բայց դա օգնե՞ց թեթևամիտ մարդուն:
Բնավ՝ Եվ ճաշակեց նա վիշտ ու դառնութ՜յուն,
Մինչև տառապանքից հետո երկար
Հյուրընկալ ամին իջավ պատահարար:

Ք Ա Լ Ե Ս

Իմաստունին դա ցավ կայատճառի,
Բայց կշեռքի վրա դիր լավն ու վատն այսօր:
Չէ՞ որ թեկուզ մի մարդ, երախտագետ, բարի,
Կջնջի քո մտքից մարդկանց երախտամոռ:
Չնչին բան շենք խնդրում գտիր հնար,
Որ այս սողան մի կերպ գա լույս աշխարհ:

Ն Ե Ր Ե Ո Մ

Ուրախութ՜յունս դուք մի պղտորեք,
Այս տոնն եմ երագել գիշեր ցերեկ,
Կանչել եմ ես բոլոր իմ դուատրերին,
Ծովի գրացիաներին դորիդներին:
Չկան Օլիմպոսում, երկրում ծագկուն
Այդքան շքնաղ կանայք դեղաճկուն
Վիշապների մեջքից վեր են նետվում ուժգին,
Իջնում Նեպտուն աստժո նժույզների մեջքին:
Այնպես են տարերքին ձուլվել ծնված օրից,
Որ թվում է թեթև են փրփուրից:
Գալու է աննման Գալաթեան

Շողուն կառք խեցիով Վեներայի
Երբ Կիպրիդան լքեց մեզ հավիտյան,
Նա Պափոսում դարձավ աստվածուհի:
Վաղուց է ժառանգել գեղեցկուհին
Քաղաք, տաճար և գահ աստվածային:
Զբվե ք: Բերկրանքս թող շխաթարեն
Այսօր ոչ կշտամբանք ու ոչ ցասում:
Պրոթեոսը կասի մեծ մարգարեն,
Մարդն ի նլ անի, երբ ծնվել է ուղում:

(Գնում է դեպի ծովը)

Ք Ա Լ Ե Ս

Իդուր եկանք: Եթե գտնենք էլ այդ մարդուն,
Միևնույն է, կանցնի դա ապարդյուն,
Մերթ կողքիդ է, մերթ էլ տեսար՝ հեռվում
Շփոթվում ես ձայնից ու մոլորվում:
Բայց իր խորհուրդներով նա քեզ կօգնի,
Եկ որոնենք, դեռ հույսդ մի կորցնի:

(Հեռանում են)

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

(Ժայտի վերեում)

Ի՞նչ է հեռվից գալիս դանդաղ
Ճեղքում ալիք ու շամանդաղ:
Թեթև քամուց արդյոք ծովում

Առագաստներ շե՞ն օրորվում:
Մոտ են արդեն, տեսնում ենք պարզ
Քանի՞ շքնաղ հավերժահարս
Իջնենք, նստենք ծովեզերքին,
Ականջ դնենք նրանց երգին:

Ն Ե Ր Ե Ի Դ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Ինչ որ տեսնեք մեր ձեռքին,
Կուրախացնի ամենքին
Քելոնայի զրահով
Տեղ հասցրինք ապահով
Աստվածային օլատկերներ .
Թող զիլ հնչի երգը ձեր:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Աստվածներն այս փոքր են տեսքով,
Բայց զորեղ են հուժկու բազկով,
Սուզվող նավեր են միշտ փրկում
Փսթորկահույզ այլադ գրկում:

Ն Ե Ր Ե Ի Դ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Մեր այս տոնին հանդիսավոր
Կաբիրներին բերինք այսօր
Չէ՞ որ այնտեղ, ուր հայտնվեն,
Բարեգուժ է նեպտունն արդեն:

Ս Ի Բ Ե Ն Ա Ն Ե Ր

Մենք շենք հասնի երբեք նրանց,
Հորձանուտում խեղդվող մարդկանց
Եվ խորտակվող ամեն նավի
Վիզ ու սատար են հիրավի:

Ն Ե Ր Ե Ի Գ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Երեքին ենք բերել հարկավ,
Իսկ շորրորդը մեզ հետ շեկավ,
Ավագն է նա (ինքն էր ասում),
Ուրիշ հոգսեր ունի բազում:

Ս Ի Բ Ե Ն Ա Ն Ե Ր

Ե ող աստվածներն հեգնեն իրար
Բայց մենք պիտի խոնարհաբար
Նրկրպագենք նրանց կրկին,
Զգայրացնենք հզորներին:

Ն Ե Ր Ե Ի Գ Ն Ի Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Յոթն են նրանք:

Ս Ի Բ Ե Ն Ա Ն Ե Ր

Բայց հիմա մենք
Մյուս երեքին որտե՞ղ գտնենք:

Ն Ե Ր Ե Ի Գ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Ձեզ ի՞նչ պատմենք մենք այդ մասին:
Հարցում արեք Օլիմպոսին:
Ութերորդն է եկել հանդես,
Իր հայտնությամբ զարմացրել մեզ:
Մեզ խոստացան գալ ինքնակամ,
Բայց ուշանում են այս անգամ:
Ինչ անհաս է ու անսահման,
Մնմահներին այս աննման
Տանջում է միշտ ու տոշորում,
Անհայտ հեռվի տենչով այրում:

Ա Մ Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Որտեղ էլ որ լինեն յազմած
Մեր աստվածներն այդ ողորմած,
Թե արևի, թե՛ լուսնի տակ
Կաղսթեիք ջերմ ու գոհունակ:

Ն Ե Ր Ե Ի Գ Ն Ե Ր Ե Վ Տ Ր Ի Տ Ո Ն Ն Ե Ր

Եթե այս տունն ուրախ անցնի
Մեր փառքն երկիրը դա կհասցնի:

Ս Մ Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Հերոսներին հելլենական
Ձենք զրվատում այնքան,
Նրանք ոսկե գեղմբ բերին
Իսկ դուք՝ կարիքներին:

(Միասին)

Նրանք ոսկե գեղմը բերին,
Իսկ մենք } կարիքներին:
Իսկ դուք }

(Ներեխղճերն ու տրիտոնները լողալով անցնում են)

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Կա՛վե տձև արձանիկներ...
Այնինչ դրանց համար
Գլուխ կտարում, վիճում են դեռ
Իմաստուններն համարու

Ք Ա Լ Ե Ս

Գաղտնիքն էլ դա է, սիրելիս,
Փանգն է փողին արժեք տալիս:

Պ Ր Ո Ք Ե Ո Ս

(Աննկատ)

Դուր են եկել ինձ շարունակ
Առեղծվածներ տարօրինակ:

Ք Ա Լ Ե Ս

Հե՛ջ, Պրոթեո՛ս, ս՛ր ես, ապա

Պ Ր Ո Ք Ե Ո Ս

(Որովայնախօսի ձայնով, մերթ մտերեփից, մերթ հեռվից)

Այնտեղ էի, այստեղ հասաւ

Ք Ա Լ Ե Ս

*Ներում եմ, հին կատակաբան
Նույն տեղումն ես, կեղծիք է սա,
Չես էլ փոխում դու քո ճամփանւ*

Պ Ր Ո Ք Ե Ո Ս

(Իբրև թե հեռվից)

Մնաս բարով:

Ք Ա Լ Ե Ս

(Կիսաձայն Հոմոսեկույսիւն)

*Մեր կողքին է, լույս տուր ուժեղ,
Ծվ ձկան պես կգա այստեղ,
Ինչ տեսք առնի, ինչ էլ ասի,
Լույսի վրա մոտ կվազի:*

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ ՈՒ Լ Ո Ս

*Լույս կտայի այնպե՛ս ուժգին,
Բայց կպայթի իմ ապակին:*

Պ Ր Ո Ք Ե Ո Ս

(Վիթխարի կրիայի կերպարանք ընդունելով)

Այս ի՞նչ հրաշալի լույս է պայծառ:

Ք Ա Լ Ե Ս

(Հոմունկուլոսին քողարկելով)

*Լավ, կտեսնես, եթե սքանչացար,
Բայց մի պայման. պիտի երևաս դու
Երկու ոտքով, կերպարանքով մարդու
Եթե շնչին նեղութունն այդ կրես,
Թաքցրածս իսկույն ցույց կտամ քեզ:*

Պ Ր Ո Ք Ե Ո Ս

(Ազնվականի կերպարանք ընդունելով)

Դու խորամանկ իմաստունն ես էլի:

Ք Ա Լ Ե Ս

Իսկ դու նույն դարձվորն ես անուղղելի:

(Հոմունկուլոսին ցույց տալով)

Պ Ր Ո Ք Ե Ո Ս

(Զարմագած)

Լույս արձակող թղո՞ւկ: Չլի տեսել:

Թ Ա Լ Ե Ս

Քեզ համար է եկել, այսանդ հասել:
Պիտի ծնվի կարգով այս աշխարհի,
Մինչդեռ կեսն է անցել ճանապարհի:
Խելքի պակաս չկա ամենեին,
Բայց մարմինը թերի է տակավին
Կշիռ ունի միայն իր ապակին:
Ասա, ինչպե՞ս մարմնավորվի հոգին՝

Պ Ր Ո Ք Ի Ո Ս

Կույս արգանդի պտուղ ես վաղահաս
Այն ևս, ինչ կոչվում է օրապակաս:

Թ Ա Լ Ի Ս

(Կիսածայն)

Մի թերի կողմ էլ կա, ինչպես տեսա
Իմ կարծիքով, հերմաֆրոդիտ է սա:

Պ Ի Ո Ք Ե Ո Ս

Ավելի լավ որ սեռին մոտ լինի,
Այն սեռին էլ մի օր թող պատկանի:
Ս անկիկ, երկար-բարակ մի՛ մտածիր,
Իջիր ծովի խորքերն անծայրածիր,
Բոլորն այնտեղ սկսում են փոքրից:

Խժոռում են թույլերին, ուրախանում,
Զորանում են ու հոշոտում նորից,
Մինչև լիակատար խժոռողներ են դառնում:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Օղբ այստեղ մեղմ է ու զովաշունչ,
Զորս կողմ կանա՛չ, կանա՛չ, բույր ու շշունջ:

Պ Ր Ո Թ Ե Ո Ս

Ճշմարիտ է, մանկիկ սքանչելի,
Մակայն քեզ դուր կգա ծովն ավելի:
Եթե հրվանդանի ծայրը գնաս,
Բուրումներից արդեն դու կարբենաս:
Ահավասիկ թափոր մի ահագին:
Մոտ ենք, այստեղ եկանք ժամանակին:
Գնանչ:

Թ Ա Լ Ե Ս

Կգամ:

Հ Ո Մ Ո Ւ Ն Կ Ո Ւ Լ Ո Ս

Ահա երեք ոգի,

Տարօրինակ ձևով լողում են կողք-կողքի:

(Հոռոդսի տելֆինները նեպտունի եռաժանիք բռնած, ծովածիբեր և վիշապներ հեծած):

Ե ՈՒՄ Ր

Կռել ենք մենք եռաժանին Նեպտունի,
Որ նա անսանձ ալիքները մեղմացնի:
Երբ շանթարձակ Ջեան է տեղում ամպրոպներ,
Սեպտունն է միշտ դեմք կանգնում աներեր:
Երբ կայծակներ են զիգզագվում անհունում,
Կոհակները եռում ու ծառս են լինում,
Ինչ որ ընկնի նրանց երախն այդ պահին,
Կուլ կգնա հորձանուտին դիվային:
Նա գայիսոնն այսօր մեզ է պարզեել,
Որ մեր հանդեսն անցնի ուրախ առավել:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Ո՛վ տելքիններ հելիոսապաշտ,
Ում աղոթքով օրն է շողում,
Ձեզ ողջույն ենք սրտանց հղում
Մենք՝ լուսնապաշտ քույրերս հաշտ:

Տ Ե Լ Ք Ի Ն Ն Ե Ր

Պաշտելադույն աստվածուհի լուսասուռ,
Սիրով ես քո Լիբոր դովքը լսում դու
Հրճվում ես միշտ, երբ Հոողոսից երանյալ
Հավերժահունչ հիմն է հառնում հոգեզմայլ,
Երբ քո եղբայրն օրն է բացում, նայում վար
Կուսք ավետող իր աչքերով հրավառ:
Սիրում է նա քաղաք ու գյուղ, ծով ու լեռ,

Բողոքին է շնորհում լույս բարեբեր:
Կողոու վրա մեզ շի իջնում վերևից,
Փարատվում է մեն-մի շողից, մեղմ հովից:
Արև-աստծո պատկերն ամեն տեղ էլ կա
Վսեմ, բարի, մերթ պատանի, մերթ հսկա:
Մե՛նք առաջին անգամ արև հսկային
Կոթող դարձրինք, տվինք պատկեր մարդկային:

Պ Ր Ո Թ Ն Ո Ս

Թող պարծենան, գլուխ գովեն դարձյալ:
Սուրբ ու կենսահաստատ արեգակին
Պե՛տք են եղած անցած գործեր մեռյալ:
Միշտ նույնն են տարփողում եռանդագին:
Հալեցնում են հանքը, ձուլում արձան
Եվ կարծում են, թե շատ վեր բարձրացան:
Իսկ ի՞նչ է վախճանն այդ գոռոզների
Աստվածներ են կերտում սմբարտավան,
Մինչև երկրաշարժը գա, ավերի,
Մինչ կոթողները հալեցնի լավան:

Ցամաքային կյանքը, ինձ հավատա,
Տառապանք է, զրկանքների շղթա:
Լևելի լավ, ԼԹԼ ծովում ապրես:
Պրոթեոս-դելֆինը հիմա քեզ
Թող իջեցնի հավերժ գիրկը սյաց:

(ԿԼԵՄԵՆՏԻՆԻԱՎՈՒԽՎՈՒՄ Է)

Այնտեղ քեզ կժպտա բախտն, անկասկած:
Նստիր մեջքիս: Ողջ կյանքդ այսուհետ
Պիտի կապես միայն օվկիանի հետ:

Թ Ա Լ Ե Ս

Այրվիր դու գոյության տենչով վսեմ,
Անցիր երկար ուղին արարումի,
Եղիր շրջահայաց, այդ էլ ասեմ,
Կան փոփոխման փուլեր հաղար ու մի,
Ծնունդը կարգ ունի հնուց ի վեր:
Մարգ դառնալուց դու շատ հեռու ես դեռ:

(Համունկուսը նստում է Պլուրեա-դելֆինի մեջքին):

Պ Ր Ո Թ Է Ո Ս

Գնա հեռաստաններն այս ջրեղեն,
Սպրիտ իբրև մի անմարմին հոգի,
Լողա ազատ, սակայն խոհեմորեն,
Թող քեզ շայրի ծարավը բարձունքի
Հլիճի, հենց որ դու դառնաս մարդ, արդեն
Քո ձգտումներն այդ օրը կալսւրտվեն:

Թ Ա Լ Ե Ս

Նայած մարդու: Մի՞թե վատ կլինի,
Երբ մեկը դառնա մարդ առաքինի:

Պ Ր Ո Ւ Ե Ո Ս

(Թալեսին)

Եթե քեզ իր բարբոժ նման է նա,
Այս աշխարհում երկար կդիմանա.
Խառնամբոխում դժգույն ուրունների
Գու կաս արդեն քանի՞ հարյուր տարի:

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

(Փայտերի վրա)

Ի՞նչ ամպեր են լուսինն ահա
Պսակաձև պարուրում:
Աղավնինե՞ր են սիրահար,
Որ ճախրում են լազուրում:
Առաքել է Պափոսն այստեղ,
Թռչուններին լուսնաթով:
Կատարյալ է ու փառահեղ,
Մեր հանդեսն այդ Լրամուզ:

Ն Ե Ր Ե Ո Ս

(Թալեսին մոտենալով)

Թող անցորդին հրաշք թվա
Շքեղ պսակը լուսնի,
Իսկ մեզ տեսիլքն այս գիշերվա
Վաղո՞ւց, վաղո՞ւց է հայտնի:

ԱղաՎնիներ են սպիտակ
Իմ դատեր շուրջը ճախրում:
Այդպես եղել է շարունակ,
Բոլոր, բոլոր գարեբում:

Ք Ա Լ Ե Ս

Ես էլ ուրախ եմ անսահման,
Որ քո գուտոր-դիցունհին
Վեներայի խեցու նման
Իռլն է գտել տաք ու հին:

Փ Ս Ի Լ Ն Ե Բ Ե Վ Մ Ա Բ Ս Ե Բ

(Մովացույեւ, ծովահուրթեւ և ծովախոյեւ
հեծած)

Կիպրոս կղզու այրերում խոր,
Ուր Նեպտունը շի հոխորտում,
Ուր Սեյամոսը շի որտում,
Ուր հովերի շունչն է անդորր,
Այնտեղ հիմա, ինչպես հնում,
Կիպրիդի կառքն ենք պահպանում:
Գիշերները դուրս ենք հանում
Եվ իջեցնում խեցին թեթև
Այլաց Վրա ժանեկաձև:

Սուրում է կառքն աստվածունս
Նոր սերնդի աչքից հեռու
Չենք վախենում արծիվներից
Կամ թևավոր առյուծներից,
Խաչից, լուսնից... Չենք էլ հարցնում,
Թե վերևում ինչ են անում,
Ով է տանջվում, ով է գահին,
Ով է լկում, մորթում զոհին,
Այրում, քանդում քաղաք ու գյուղ...
Մեզ հետ շրջում է աներկյուղ
Մեր պաշտելի աստվածունս

Ո Ւ Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Կառքի շուրջը բոլորվելով,
Խմբով դվարթ ու կայտառ
Օձոնման գալարվելով
Ու սուղվելով անդադար,
Եկեք, քնքուշ ներեիդներ՝
Լի սիրով ցոփ ու վայրի,
Բերեք նորից քրոջը ձեր՝
Չեր մոր պատկերը բարի—
Վեհ և ազդու աստվածորեն
Ունմահների պես անհաս,
Բայց և թովիչ մարդկայնորի՝
Կանացիորեն հեզանազ

Գ Ո Ր Ի Գ Ն Ե Ր

(11) Գֆիններ հեծած՝ խմբով անցնում են Նեւեոսի մատով) .

Մեզ շնորհիր ցուրդ, լուսին,
Որ սլարզ տեսնի հայրը մեր՝
Ում ենք ընտրել մենք ամուսին
Ում ենք տվել սիրտ ու սեր:

(Ներեւոփն)

Մենք փրկեցինք տղաներին
Սրբիկներից մուկանած,
Երբ շամբուտում, մամուռներն,
Բնկած էին ուշադնացի
Եղանք սաստար, և թող արդեն
Համբույրներով բոցավառ
Մեզ հատուցեն ազնվորեն:
Տուր օրհնանքդ հայրաբար:

Ն Ա Ր Ե Ո Ս

Հավ 1 հաջողութունն է կրկնակի,
Երբ լարիւր տղրյաւր 1 բերկրանէի՝

Գ Ո Ր Ի Գ Ն Ե Ր

Եթե մեզ շեռ սլարսավում, հայր,
Անմահացրու ամենքին,
Որ մենք նրանց հավերժաբար
Սուղմենք մատաղ մեր կրծքին:

Ն Ե Ր Ե Ո Ս

Ձեր անուշ որսն անհոգ վայելեցեք,
Թող պատանիք ձեզ հետ ամուսնանան,
Բայց չեմ կարող ես շնորհել երբեք,
Ինչ կարող է բաշխել Ձևսը միայն:
Նման ձեզ օրորող ալիքներին,
Ուրն էլ է անկայուն ու դյուրարեկ.
Իլը հագինար սիրուց, գերիներին
Դուք հրաժեշտ կտար, ափ կհաներ:

Գ Ո Ր Ի Գ Ն Ա Ր

Տղաներ, թանկ եք մեզ համար,
Բայց մեր սիրույն քիչ է մնում
Սատվածները չեն կամենում,
Որ մենք հավետ սիրենք իրար:

Պ Ա Տ Ա Ն Ի Ն Ե Լ

Եթե ազնիվ նավազներիս
Գարձյալ սիրեք առաջվա պես,
Հարկավոր չէ ավելին, մեզ
Բարձունքն է դա երազներիս:

(Խեցի-կառնով լստենում է Գալաթեան)

Ն Ե Ր Ե Ո Ս

Դու՛ւ ես, դուստր իմ:

Գ Ա Լ Ա Թ Ե Ա

Ի՞նչ բարատ է, հա յրու
Կանգ առեք, գեյֆիններ, նայեմ երկար .

Ն Ե Ր Ե Ո Ս

Անգուսպ թափով առաջ են սլանում,
Շուտով կանհետանան հեռաստանում:
է հ, նրանց ի՞նչ հոր սիրտ և հոր կարտա .
Ա՛խ, թե ինձ տանեի ն դստերս մոտ
Բայց դիցուհու մի հայադրով անգամ
Տարին բուր ինձ բախտավոր կզգամ:

Թ Ա Ն Է Ո

Փառք ու օրհնանք, փառք հավիտյան:
Ճշմարտության, գեղեցկության
Խորհրդով եմ հրճվում նորից
Ամեն ինչ է ծնվում ջրից,
Ջուրն է տալիս մեզ ամեն բան:
Մո՛վ, միշտ եղիլ տեր ու պաշտպան:
Եթե ամսեր վեր շհանես
Ամպերն անձրև շղարձես,
Անձրևից գետ շգոյաղնես,
Հեղեղները գիրկդ շառնես,
էլ ի՞նչ լեռ դաշտ, էլ ի՞նչ աշխարհ .
Կենաց ակունք ևս անսպառ:

Ա Ր Ձ Ա Գ Ա Ն Ք

(Բոլորը միասին)

Կենաց ակունք ես դարեդար:

Ն Ե Ր Ե Ո Ս

Խուճրը հաղիվ է Երևում:
Ահա մի կողմ թեքվեց հեռվում,
Չգվեց, խաղաց խայտանկար
Մեծ թափորի շղթան Երկար:
Մի պահ նորից շողշողացին
Քալաթեան և իր խեցին
Հետո և շատ գահն իմ դստեր,
Բայց աստղի պես փայլում է դեռ:
Բաղմության մեջ ահա էլի
Գեմքն էմ տեսնում իր սիրելի՛
Պայծա՞ռ այնքան,
Մոտ, իրական

Հ Ո Մ Ա Ի Ն Կ Ր Ի Լ Ո Ս

Այ՛, հիասքանչ հորձանուտում
Ինչի վրա լույս եմ նետում,
Գեղեցիկ է, շքեղ:

Պ Ր Ո Թ Ե Ո Ս

Չրերի մեջ ալս կենալ ար
Ավելի է փայլող պայծառ
Եվ զնւոցդ զորեղ:

Ն Ե Ր Ե Ո Ս

Ի՞նչ կատարվեց աստվածունհու հոծ թափորում,
Ի՞նչ տեսիլք է խորհրդավոր ու անծանոթ
Խեցու կողքին, Գալաթեայի ոտքերի մոտ
Ի՞նչ է վառվում, մերթ ընդմիջում, մերթ մարմրում
Թվում է՝ սիրտ է բաբախում սիրուց այրված:

Թ Ա Լ Ե Ս

Համունկուլոսն է գա՛ Պրոթեոսից խաբված
Սնդուսպ տենչն է նրան տոշորում ու տանջում,
Ցնցված է ողջ հոգին հեծում է, հառաչում
Գահին բախվեց անոթն ու փշրվեց ահա,
Վառ լույսը դուրս հորդեց խղից իր ապակյա .

Ս Ի Ր Ե Ն Ա Ն Ե Ր

Ի՞նչ հրեղեն հրաշք ցուլաց խոր խավարում:
Ալիքներն են փարվում, իրար ընդամենում,
Ովկիանոսը լուսավորվել է ծայրեծայր,
Մարմիններն են ուրվագծվում պարզ ու պայծառ
էրոսի՛ հուր, ի՞նչ տիրարար ես ճառագում:
Ամեն ինչի սկիզբն ես դու տիեզերքում:
Փառք, փա՛ռք ծովին, փառք ալիքին
Որ ձուլվել է սուրբ կրակին,
Փառք կրակին, ջրին հզոր,
Այս տեսիլքին խորհրդավոր:

ԲՈՂՈՐԸ ՄԻԱՍԻՆ

Փա՛ռք հողմերին, մեղմ հովերին,
Փառք դամբարան-անձա՛վներին,
Չորս տարերքին մեծ ու արդար
Փառք ու օրհնանք դարե ի դարս

ԱՐԱՐՎԱԾ ԵՐՐՈՐԴ

ՍՊԱՐՏԱ ՄԵՆԵԼԱՌՍԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋ

Հայտնավում է Հեղինեն՝ գերի տրոյուհիների
դեկցությամբ, որոնց գլխավորում է Պանթալիսը:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Իս՝ Հեղինեն փառաբանված ու նախատված,
Ահավասիկ ոտքս ցամաք դրի արդեն:
Հարբած եմ գեռ ցնցումներից ալիքների,
Իր ծառս եղած հսկայական լեռների պես՝
Ախարադադ հարթավայրից փոչուգիական
Պոսեյդոնի կամքով, ուժով էվրոս հողմի
Մեզ հասցրին ծովախորշերն այս հարազատ:
Թող ծովափին Մենելաոս արքան տոնի
Մեր վերադարձն իր անվեհեր քաջերի հետ,
Իսկ դու գալուստն իմ ողջունիր, ո՛վ բարձրիկ տուն,
Չէ՞ որ հայրն իմ՝ Տինդարեոսն է տարագիր
Քեզ կառուցել ըլրի լանջին Աթենասի:

Երբ ես այստեղ կաստոր, Պոլլուքս եղբայրներիս,
 Կլիթեմնեսթրա քրոջս հետ խաղում էի,
 Ողջ Սպարտայում չկար այսքան շքեզ պալատ:
 Ողջո՛ւյն, դռներ պղնձակուռ: Չեմ մոռանա
 Ձեր հյուրընկալ փեղկերն ինչպե՛ս լայն բացվեցին,
 Երբ ողջ շուքով փեսայական իմ դեմ ելավ
 Մենելաոսն, ում ընտրեցի շատ շատերից:
 Բացվե՛ք նորից, որ կատարեմ ես անհապաղ
 Խոսքն արքայի վսեմ պարտքն իմ ամուսնական
 Բացվեք, և թող մնա ամեն բան ետևում,
 Ինչ փոթորկվեց շուրջս կամքով ճակատագրի:
 Այն օրվանից, ինչ դուքս ելա ես ձեր շեմից,
 Տաճար մտա սրբազան պարտք հատուցելու,
 Եվ ինձ տարավ այն ելուզակ փոչուզիացին,
 Շատ բան եղավ, որ աշխարհն է սիրով պատմում,
 Սակայն սիրով չի լսում այն մահկանացուն,
 Ում կյանքի վեպքն այսպես փոխվեց, դարձավ հեքիաթ:

Ն ՈՒՄ Ր

Հրաշադե դ տիկին, մի անգոսնիր
 Քեզ շնորհված բարիքն անզուգական,
 Մեծագույն բախտն է քեզ տրված վերուստ՝
 Փառքը անմրցելի գեղեցկության:
 Երջանիկ է հերոսն իր հոշակով,
 Բայց որքան էլ լինի ամբարտավան,
 Կխոնարհի նա իր գլուխն իսկույն
 Գեղեցկության առաջ ամենազոյ:

Բա՛վ է: Այսօր, երբ ափ իջա ամուսնուս հետ,
 Լնքը մնաց, ինձ պատվիրեց գնալ քաղաք,
 Լսկ թե ինչու, դա առեղծված է ինձ համար:
 Լր թագուհին, իր ամուսի՞նն եմ տակավին,
 Թե՞ ինձ պիտի զոհարերի, որ ես քավեմ
 Տառապանքներն իր և բոլոր հույն քաջերի:
 Ինձ հայտնի չէ՞ գեղրվա՞ծ եմ ես, թե՞ ազատված:
 Անմահների կամքն է գուցե, որ աշխարհում
 Գեղեցկության ուղեկիցներ լինեն խարդախ
 Փառքն անկայուն, ճակատագիրը խարուսիկ,
 Որոնք այս տան շեմքին անգամ դավում են ինձ:
 Նավում էլ շատ խածոս Լր դեմքն իմ ամուսնու,
 Չիր սփոփում, հազիվ էր ինձ նայում դժկամ,
 Գեմս նստած՝ որոգայթ էր ասես լարում:
 Երբ մենք հասանք գետարերանն էվրոտասի,
 Երբ ամեն նավ կտուցն հպեց մայր ցամաքին,
 Մենեկառան ասաց, գուցե աստժո կամքով.
 — Իմ ռազմիկներն այստեղ կիջնեն ըստ օրինաց,
 Հիմա զորքի սաուդատես սլիտի լինի,
 Իսկ դու գնա, ճանապարհդ շարունակիր
 Էվրոտասի բերրի ու սուրբ ափերն ի վեր:
 Չիերը թող սուրան ծաղկած մարգագետնով,
 Քեզ հասցնեն հարթավայրն այն գեղատեսիլ,
 Մրտեղ երեկ այգի էր, արտ, մինչդեռ այսօր
 Կակեղեմոնն է՝ լեռների խոհուն գրկում:
 Ասիր դու մեր վեհաշուք տունն արքայական,

Տես, թե այնտեղ ինչ են անում ստրկուհիք,
 Որոնց թողի տնտեսուհու մտտ ալեհեր:
 Կինն այդ խոհեմ քեզ ցույց կտա գանձերը մեր,
 Այն, ինչ քեզ հայրդ է կտակել, և այն, ինչ ես
 Կարողացա ավելացնել, բազմապատկել
 Պատերազմի, խաղաղության տարիներին:
 Ամեն ինչ էլ դու կգտնես նախկին տեղում,
 Քանզի անխախտ իրավունքով տիրակալի
 Տանս պիտի նույնը տեսնեմ վերադարձիս:
 Ոչ մի ստրուկի զորու չէ կարգ փոխելու:

Խ Ո Ւ Մ Թ

Ո՛վ թագուհի, փայլով այդ գանձերի
 Պայծառացրու հայացքն ու սիրտը բու
 Ամեն շղթա և ակնազարդ պսակ
 Միայն իրեն է կատարյալ կարծում,
 Բայց տիրաբար մտիր, հրամայիր,
 Որ քեզ սլճնեն այդ ղարդերով հպարտ:
 Յույց տուր, թե ինչպես է ծունկի գալիս
 Գեղեցկության առաջ ամեն մի գանձ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ահա վերջին պատվիրանը մեր արքայի
 — Երբ ամեն ինչ տեսնես կարգով ավանդական,
 Վերցրու այնքան եռոտանի, ինչքան կուղես,
 Ամեն շափի, ամեն ձևի ամանեղեն,

Որ պեսօք է՝ միշտ զո՛հ մատուցող ծիսարարին:
 Վերցրու թասեր, սկսւտեղներ ու կաթսաներ,
 Սափորները լցրու շքով սուրբ աղբյուրի,
 Այնուհետև շոր, գլուրավառ փայտ էլ դիզիր,
 Որ խարույկի բոցերն իսկույն վեր սլանան:
 Չմոռանաս պատրաստ պահել մի սուր դաշույն,¹³³
 Մնացածի մասին արդեն ինքդ հոգա:
 Բաժանվելիս այգպես ասաց ինձ անհամբեր,
 Սակայն շասաց՝ ինչ շնչավոր պիտի զո՛հի
 նա ի պատիվ օլիմպոսյան աստվածների
 Չարագուշակ բան կա այստեղ, բայց շեմ սոսկում,
 Աստվածներն են տնօրինում բախտը մարդու,
 Ինչ ցանկանան, այն կվճռեն, շեն էլ հարցնի՝
 Սրդա՞ր է դա մարդկանց աչքին, թե՞ անարդար...
 Մահկանացուն կամակատարն է անմահի:
 Քուրմը հաճախ գետնին փռված զո՛հի գլխին
 Սանր կացինն է բարձրացնում, սակայն հանկարծ
 Կամ թշնամին է խափանում հարվածն իջնող,
 Կամ աստվածներն են ողորմած միջամտում:

Խ Ո Ւ Մ Բ

Չես գուշակի ճակատագիրը քո,
 Թագուհի, ներս մտիր
 Առանց ահի:
 Մարդու գլխին հանկարծ են միշտ գալիս
 Չարն ու բարին:

Չենք հավատում ոչ մի մարգարեի:
Չէ՞ որ Տրոյան այրվեց, և մեր աչքով
Տեսանք ավեր ու մահ ամոթալի:
Բայց մի՞թե մենք չկանք՝
Քեզ հետ, բեզնով ուրախ,
Չե՞նք տեսնում այս պայծա՛ռ, սլայծա՛ռ արփին,
Քեզ, հողեզեն հրա՛շք զարմանալի,
Քեզ, մեր բերկրա՛նք ու բախտ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

է հ, թող լինի, ինչ անսլայման պիտի լինի:
Մտնեմ տունն այս, որից զրկված անմտորեն,
Ես կարոտից երկա՛ր, երկա՛ր տառապեցի:
Ի՞նչ հրաշքով կանդենց իմ դեմ, ինձ հայտնի չէ,
Բայց շեմ զգում ուժն այն, որով սանդուղքն ի վեր
Վազում էի, երբ դեռ աղջիկ էի փոքրիկ:

Խ Ո Ի Ո Յ

Ուրախացեք մի պահ,
Գերի բույրեք տրտում,
Չեր թախիծը թողած՝
Հրճվեք Հեղինեի
Մեր տիրուհու բախտով:
Ուշ է վերադարձել,
Բայց հաստատուն քայլքով
Մտնում է նա կրկին
Օջախն իր հայրական:

Փառք տուն վերագարձնող,
Հինը վերստեղծող
Աստվածներին բարի:
Երբ ազատվում է մարդ
Իր ծան փոքձությունից,
Թե է առնում, թռչում,
Իսկ բանտի խեղճ դերին,
Երբ ձեռքերն է պարզում,
Բախվում է պատերին:

Նդնեց տարագրուհուն
Մեկլ աստվածներից,
Այսանդ լերեց կրկին
Իլիոնից ավեր,
Բերեց տունն հայրական
Հին, բայց բարենորոգ,
Որ վերապրի գերին
Իր հասակը ծաղիկ,
Վայելքն անասելի
Ու տվալտանքն անդյալ

Պ Ա Ն Թ Ա Լ Ի Ս

(Խմբի գլուխն անցած)

Երգի ուրախ ճանապարհից շեղվեք մի պահ
Եվ նայեցեք արբայական տան գոներին:
Այս ի՞նչ եմ ես տեսնում, բույրեր. մի՞թե շեմքից

Մեր թագուհին ետ է դառնում հուզախոով:
Մեծ տիրուհի, քո տան արձակ սրահներում
Քեզ, փոխանակ ողջունելու, սարսափեցրի՞ն,
Քո գեմքին կա և՛ շփոթմունք, և՛ զարհուրանք,
Ազնիվ ցասումն է կայծակում աշքերիդ մեջ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

(Դոները բաց թողնելով, հուզված)

Սովորական վախն է Զևսի դստերն օտար,
Չնշին բանից ես երբևէ շեմ սահմակել,
Բայց կցնցվի հերոսն անդամ այն սարսափից,
Որ Գիշերն է աշխարհ բերել խոր անցյալում
Հազար ու մի կերպարանքով, այն սարսափից,
Որ նման է լեռան խորքից ժայթքող բոցի:
Այդպես այսօր իմ դեմ ելան ժանտատեսիլ
Ոգիները Ստիքսի ափի՝ այնքան լահեղ,
Որ բազձալի այս տան շեմքից նվիրական
Ես ետ դարձա իրրև հետին մի հյուր անկողի
Տունը պետք է սրբազործվի, որ մաքրված
Իր հարկի տակ առնի տիրոջն ու տիրուհուն:

Պ Ա Ն Թ Ա Լ Ի Ս

Ազնիվ տիկին, հայտնիր խոնարհ նաժիշտներիդ,
Թե ինչ ես դու տեսել ներսում ապարանքի՝

Հ Ե Ղ Ե Ն Ե

Ինչ ես տեսա, շուտով ինքներդ էլ կտեսնեք,
 Եթե նրանց կուլ շի տվել Գիշերը ծեր,
 Գեռ շի նետել իր որովայնն անդնդախոր
 Սակայն պատմեմ, որ դուք ընդունել էլ իմանաք
 Երբ ներս մտա սրահները հանդիսավոր
 Կատարելու պատվիրանն իմ տիրակալի,
 Ինձ զարմացրեց քար լուսթյունն ամենուրեք
 Չլսեցի ժխորն աշխույժ եռուզեռի,
 Ոչ էլ տեսա տան փութաջան ծառաներին,
 Չկար ոչ մի անտեսուհի, ոչ մի նաժիշտ,
 Որոնք միշտ էլ այնպես ուրախ ու սրտաբաց
 Գլուխ էին տալիս անգամ օտարներին:
 Օջախի մոտ, հանգած մոխրի կողքին տեսա
 Մի հսկա կին: Փաթաթված էր շորերի մեջ,
 Բայց քնած չէր, այլ մտքի մեջ խորասուզված:
 Իս ձայն տվի, պատվիրեցի անցնել գործի,
 Քանզի թվաց, թե դա է այն անտեսուհին,
 Որին արքան ինքն էր կարգել այդ պաշտոնին:
 Բայց կինն անշարժ մնաց նստած: Երբ վրդովված
 Սպասնացի, նա թափ տվեց ձեռքն անտարբեր,
 Կարծես ուզեց ինձ հասկացնել, որ հեռանամ:
 Հույժ զայրացած՝ ես նետվեցի սանդուղքն ի վեր,
 Որտեղ, կողքին աժուսնակա՞ն առաջադասի,
 Իսույն է բացվում դանձարանի: Հենց այդ պահին
 Գետնից արագ վեր բարձրացավ, վրա հասավ
 Եվ տիրաբար ճամփա փակեց հրեշ հսկան,

Ինձ հառելով արնակալած հայացքը մութ:
 Ի՞նչ զարհուրանք աւքի համար և թե հողու:
 Քայց ի՞նչ եմ ձեզ պատմում իզուր, ոչ մի խոսքով
 Չեմ տա պատկերն այդ այլանդակ արարածի:
 Ահա և նա, հանդգնել է ելնել ի լույս:
 Տան տերն եմ ես, բանի դեռ շի եկել արքան...
 Ապուլոնը է արեկամը գեղեցկության,
 Մեզ կփրկի գիշերածին այս հրեշից:

(Գուան շեմֆին հալոնովում է Ծուկիասը)

Խ Ո Ւ Մ Թ

Ախրտա շա՛տ է ցավել, թեև դեռ
 Գանդուրներ են ծփում իմ գլխին,
 Ես ուզմի արհավիրքն եմ տեսել,
 Երբ գիշերն տոհավետ պարուրեց
 Իլիոնն ավերակ:

Փոշու իխտ ամպերում գրոհող
 Ռազմիկներն էին մերթ մոնշում,
 Աստվածներն էին մերթ որոտում
 Եվ խառնում կանչն իրենց
 Գուպարի շառաշին պղնձյա:
 Ա՛խ, կանգուն էին դեռ մեր առջև
 Պարիսպներն Իլիոն բազաքի,
 Քայց հրդեհն էր նետվում տնից տուն,
 Ամեն ինչ մոլեգնած լափլիզում,

Փոթորկվում, ծալալվում թաղից թաղ,
Սվատում աև խաւարն անթափանց:
Կրակից ու ծխից փախչելիս
Գալարվող ըոցերի ցուլքի տակ
Ես տեսա աստվածներ զայրացած,
Որ հասակ ունեին վիթխարի:
Շրջեցին հրդեհի քառսում,
Նայեցին ալբերով բարկացալտ:

Սա պատկե՞յ է արդյոք իրական,
Թե՞ ծնունդ է միայն սարսափի—
Ինձ համար մնալու է գաղտնիք:
Բայց այս կինն այլանդակ տեսիլք չէ
Եվ բնավ պատրանք չէ անցողիկ,
Սեփական աչքով պարզ եմ տեսնում:
Կուզեի մատներով շոշափել,
Սակայն ինձ կաշկանդում է հիմա
Զարհուրանքն անպատում:

Գո՞ւտարն Լս Ֆորկիսի,
Ի՞նչ դու ո՞րն ես, ասա,
Երևում է արդեն,
Որ ցեղիցն ես նրանց:
Մեկն ես դու անպայման
Քույրերից այն երեք,
Որոնք մի աչք ունեն,
Մի աստիճան ընդհանուր:

Հանդգնո՞ւմ ես, ճիվաղ,
Այս լքնազկնոջ հետ
Երևալ Թերոսի
Իմաստուն հայացքին:
Մեկ է, նա շի նայի
Գարձվորիդ այլանդակ,
Ստվերներ շեն տեսնում
Սուրբ աչքերը նրա:

Մեր վիճակն է տխուր,
Մենք մարդիկ անցավոր,
Գեղեցիկն ենք սիրում,
Բայց պիտի հանդուրժենք
Քեզ նման ցուցանքին:

Դե, հիմա, անսպասկա ո,
Սեր նզովքը լսիր
Երջանիկ այն մարդկանց,
Ում պատկերն են կերտել
Աստվածներն արարիչ:

Տ Ո Ր Կ Ի Ա Ս

Միշտ ճշմարիտ, միշտ է վսեմ այն խոսքը հին,
Թե ամոթն ու դեղեցկությունն այս աշխարհում
Հաշտ ու խազաղ շեն գնա նույն ճանապարհով:
Երկուսի մեջ ըույն է դրել խոր թշնամանք:

Ուր հանդիպեն,՝ երեսները լուռ կթերեն,
 Կհեռանան՝ ամեն մեկն իր ճանապարհով,
 Ամոթը քարշ կգա տխուր ու գլխիկոր,
 Գեղեցկությունն առաջ կանցնի հանդգնորեն
 Մինչ Սրբուսի խուլ գիշերվա գիրկը հասնի
 Կամ ծերության ձեռքը նրան սանձահարիւ
 Անպատկառներ, օտար հողից ափ եք իջել,
 Քայց ի՞նչ եք դուք. նման եք այն կոունկներին,
 Որ երկինքն են լցնում խոպոտ կոկոսոցով:
 Գլուխը վեր բարձրացնելով՝ ամեն անցորդ
 Մի պահ նայում, գնում է իր ճանապարհով,
 Երամն էլ իր կոկոսոցն է շարունակում:
 Ահալասիկ նույնը ձեղ հետ է լինելու:
 Ովքե՞ր եք դուք, որ արքունիք ներխուժեցիք
 Վայրաքարո մենադների նման հարբած
 Եվ հաշեցիք պահապանի վրա այս տան,
 Ինչպես ոհմակը շների՝ լուսնի վրա:
 Կարծում եք, թե ինձ հայտնի չէ՞՝ ինչ ցեղ եք դուք
 Ապօրինի դուստրերն եք ցոփ ոազմիկներին,
 Այլասերված, այլասերող ու առնախանձ
 Կործանողների բաղաբայու թե զինվորի...
 Նման եք դուք մորեխների այն երամին,
 Որ վրա է տալիս հանկարծ կանաչ արտին,
 Խժոռում վաստակն ուրիշների: Միրում եք դուք
 Լափել այլոց բարօրությունն իր սաղմի մեջ:
 Շուկաներում էժան ծախվող ապրանք եք դուք .

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ով աղախնուն կշտամբում է տիրուհու մաս,
Նա տանտիկնոջ իրավունքն է արդեն խլում,
Մինչդեռ տիկնոջ իրավունքն է անկապտելի—
Հավք գո՛վել, վատը պատժել իր հարկի տակ:
Ես ի սրտե գոհ եմ իմ այս ծառաներից,
Ինձ օգնեցին, երբ Իլիոնն էր պաշարված,
Երբ կործանվեց ազնիվ քաղաքն հիմնահասակ,
Երբ բաց ծովում նավն էր ցնցվում ալիքներից,
Երբ ամեն մարդ պիտի հոգար լոկ իր մասին:
Այստեղ էլ են ինձ սփոփում գորովալից...
Տրրոջ համար կարևոր չէ՝ ո՛վ է ծառան,
Կարևոր է, թե ինչպե՞ս է նա ծառայում:
Ուրեմն՝ վե՛րջ, աղջիկներին շնախատես:
Եթե տունն այս, իրոք, լավ ես դու պահպանել,
Փոխարինել տանտիրուհուն, քեզ փառք, պատիվ,
Քայց երբ նա է արդեն եկել, տեղդ զիջի՛ր,
Թե չէ ընծան կարող է և փոխվել պատժի՛

Յ Ո Ր Կ Ի Ա Ս

Տան ծառային սպանալու իրավունքին
Տիրակալի կինն է միայն արժանանում
Երկարամյա յարք ու բարքով իր իմաստուն:
Քանի որ դու վերադարձար օջախդ հին,
Իբրև նախկին տանտիրուհին ու թագուհին,
Վերցրու սանձն այն, որը վաղուց էր թուլացել:

Իշխիր կրկին և՛ գանձերիդ, և՛ բուրբիս:
Բայց, տիրուհի, նախ պաշտպանիր ինձ սրանցից,
Որոնք կողքին գեղեցկությանդ կարապի
Սագեր են լոկ անհրապույր ու շաղակրատ:

Խ Մ Բ Ա Վ Ա Ր Ո Ի Հ Ի

(Պանթալիս)

Այլանդակն ի՛նչ այլանդակ է գեղեցկի մոտ:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Իսկ բթավիտն ինչքա ն է բութ խելոքի մոտ:

(Այնումեան աղջիկների խմբից հերթով դուրս են գալիս,
պատասխանում առանձին-առանձին)

Ս Ռ Ս Ջ Ի Ն Ը

Պատմիր քո հայր էրեբոսից, մայր Գիշերից:

Ֆ Ո Ր Կ Ի Ս Ս

Դու էլ պատմիր քո հարազատ քույր Սցիլլայից:

Ե Ր Կ Ր Ո Ր Կ Ը

Ի՛նչ հրեշներ կան ճյուղերին տոհմածառիդ:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Օրքուսի մոտ հետքը փնտրիր ազգուտակիդ:

Ե Ր Ր Ո Ր Գ Ը

Բոլորն այնտեղ երիտասարդ են քեզանիցս

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Գնա, ծերուկ Թիրեսիոսին սեր խոստացիր՞

Չ Ո Ր Ր Ո Ր Գ Ը

Քո ծոռան ծոռն է ստնտուն Օրիոնի:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Հարպիաներք քեզ կեղտի մեջ են մեծացրել:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ Ը

Ինչո՞վ ես դու լղարութունդ պահպանում:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Ոչ այն արյամբ, որի համար խելքդ է գնում:

Վ Ե Յ Ե Ր Ո Ր Գ Ը

Լեջ ես լափում, դու էլ մի լեջ ես եղկելիս:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Ի՞նչ փայլ ունեն արտամներդ վամպիրային:

Խ Մ Ք Ա Վ Ա Ր Ո Ւ Չ Ի

Ասեմ՝ ով ես, լեզուդ իսկույն կպապանձվի:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Ասա՛ ով ես, և հանելուկն էլ կլուծվի՛:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ո չ բարկությամբ, այլ տխրությամբ ուզում եմ ես
Վերջ տալ ձեր այս լեզվակո՛վին անվայելուչ
Ի՞նչն առավել կվնասի տիրակալին,
Քան պառակտումն հաժատարիմ ծառաների:
Արձագանքը նրա ոչ մի հրամանի
Էլ չի թնդա իբրև իսկույն կատարված գործ:
Ոչ, ամեն ինչ շուրջը պիտի դառնա քառս,
Միշտ բորբոքվեն վեճեր անմիտ ու ապարդյուն,
Գա էլ թողնենք: Լեզվակո՛վով ձեր անպարկեշտ
Իմ հուշերում դուր արթնացրիք ժանա սլատկերներ,
Սվ ես ահից Սրբուսի մութ գիրկն եմ տենչում,
Թեև նոր եմ ոտքս դրել մայր իմ հողին:
Ո խ, ի՞նչ է սա իրողությո՞ւն, թե՞ լոկ պատրանք:
Մի՞թե իրոք երազանքն ու սարսափն եմ ես
Քաղաքները քանդող, այրող ուղմիկների:
Լեզիկներն են դողում վախից, իսկ դու, պառավ,
Կանգնած ես սառն ու անտարբեր, խորհուրդ տուր ինձ:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Նա, ով երկար է վայելում երջանկություն,
Երազ է միշտ կարծում շնորհն աստվածների:
Իսկ բախտը քո չի ունեցել շափ ու սահման
Սիրատոշոր հերոսներ ես միայն տեսել,
Որ քեզ համար նետվել են միշտ սխրանքների:
Փոքր էիր դեռ, երբ դյութեցիր Թեզեոսին,
Հերակլեսի նման գորեղ այն դյուցազնին:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Առևանգեց, երբ տասնամյա եղնիկ էի,
Ինձ Ատտիկա տարավ, ամբողջ Աֆրիզնուսի:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Բայց Կաստորն ու Պոլլուքսը քեզ ազատեցին,
Եվ սիրավատ հերոսներով պաշարվեցիր:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Պատրոկլեսն էր ամենից շատ ինձ դուր գալիս:
Պելիդն ու նա երկվորյակներ էին կարծես:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Սակայն քեզ հետ, հորդ կամքով, ամուսնացավ
Մենելաոսն՝ արիասիրտ մի ծովազնաց:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Իր դասեր հետ պետութիւնն էլ հանձնեց նրանք
Հերմիտնան եղաւ պտուղն ամուսնութեան:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Երբ այրը քո գնաց կրետեն նվաճելու,
Քո մենութիւնն էր քաղցրացնում անուշ մի հլուրք:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ես կիսով շափ այրի էի Ինչո՞ւ ես դու
Հիշեցնում այն, ինչից այնքան շարիք ծնվեց:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Քո ամուսինն ինձ կրետուհուս ազատաբաղձ,
Էերեց շղթա ստրկութեան ու գերութեան:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Է սցց շէ՛ որ քեզ իսկույն կարդեց անասունի,
Քեզ վստահեց սլալատ, ամբոց ու գանձարան:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Այն ամենը, ինչ լքեցիր ու հեռացար,
Որ անսպառ սեր վայելիս Իլիոնում:

Հ Ե Ղ Ի Ն Ե

էլ ի՞նչ վայելք, երբ ես այնտեղ ճաշակեցի
Անշափելի դառնություններ ու տվայտանք:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Ասում են, թե երկու պատկեր ընդունելով,
Եղել ես և՛ Եգիպտոսում, և՛ Տրոյայում:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ինձ համար էլ դեռ պարզ չէ դեմքն իմ իսկական,
Հերյուրանքով ամեն ինչ մի՛ խառնիր իրար:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ո

Ասում են, թե անդրաշխարհից ոգիների
Քեզ Աքիլլեան է այցելել սիրատուչոր:
Չէ՞ որ քեզ էր երկրպագում և կենդանվույն:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Իբրև կուռք եմ ես միացել իմ կուռքի հետ,
Բայց չէ՞ որ դա երազ է լոկ, և ես հիմա
Ինքս իմ աչքին ուրվական եմ դառնում կարծես:

(Ուշագնաց ընկնում է աղջիկների թևերին).

Լոխ'ր, լոխ'ր,
 Չարալեզու, շարագեմ կինւ
 Ա՛խ, ի՞նչ լավ բան պիտի գուրս գա
 Այդ շուրթերից, այդ երախից՝
 Զինված ահեղ մի ատամով:

Երբ ոշխարի մորթի հագած
 Գայլն է դերում բարերարի,
 Վտանգավոր է նա, հարկավ,
 Անգամ շնից եռադլուխ:
 Ապասում ենք ահուդողով,
 Թե ե՛րբ, ինչպե՞ս ի հայտ կգա
 Խարդավանքը
 Դիմակավոր այս հրեշի:

Դու փոխանակ Լեթայի պես
 Մոռացությամբ սփոփելու,
 Ողջ անցյալի լավը թողած՝
 Հիշեցնում ես վատը միայն,
 Պղտորում ես պայծառ ներկան,
 Վայրկյանի հետ այս լուսավոր
 Ապագայի հույսն ես խլում,
 Հանգցնելով շողը վերջին:

Լոխ'ր, լոխ'ր
 Ար թագուհու հոգին մնա,

Մեզ շքի, շնուանա,
Զբաժանվի իր պատկերից,
Որի նմանն այս աշխարհում
Արևը չի լուսավորել:

(Հեղինեն սքափվում է և կրկին կանգնում խմբով
շրջապատված):

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Ամսի տակից դուրս եկ, արև հիասքանչ ես շղարշով,
Բայց հրք շողում ես լիալույս, տիեզերքն է զմ սլլվում:
Երբ աշխարհն ես տեսնում պայծառ, ճառագում ես ցնծալից...
Գեղեցկության գինը գիտեմ, թեկուզ կոշեն այլանդակ :

Հ Ե Լ Ի Ն Ե

Ինկած էի ուշակորույս, սթափվեցի թմբիրից,
Հոգնած եմ դեռ, կուղենայի հանդիստ առնել գեթ մի պահ,
Բայց այս դեպքում թե թագուհին և թե մարդիկ հասարակ
Պիտի տոկան, արիանան, ինչ էլ նրանց սպառնա:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Կանգնած ես դու գեղեցկությամբ ու վեհությամբ քո ամբողջ,
Հրամայիր քո հայացքում կա խստություն տիրապան:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Լեզվակովի բռնվեցիք, դուր ծամանակ վատնեցիք,
Շուտ ամեն բան պատրաստեցեք, որ արքան զոհ մատուցի:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Արդեն պատրաստ են գավաթներ, կոտտանի, սուր կացին,
Նաև բուրվառ և օրհնած ջուր: Միայն զոհը հայտնի չէ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Արքան շասացե

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Չասա՞ց: Մի՞թե: Դժբախտութիւնն է գալու

Հ Ե Ղ Ի Ն Ե

Դժբախտութիւ՞նն:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Օ՛, թագուհի, քե՛զ է արքան զոհելու:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ի՞նչ:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Եվ սրանց:

Խ Ո Ի Մ Բ

Կորած ենք մենք:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Կընկենես կացնի հարվածից:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ես նախազգում էի, ա՛վա՛ղ:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Վճիռ է դա անխափան:

Խ Ո Ւ Մ Բ

Ա՛խ, մի՞թե վերջ:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Զեր տիրուհին ազնիվ մահով կմեռնի,
Եւ դուք շարք-շարք պիտի կախվեք գերաններից տանիքի
Սվ թպրտաք թակարդ ընկած կեռնեխների պես թշվառ:

(Հեղինակն և խումբը փառացած ու սարսափահար
կանգնած են)

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Ուրվականներ, արձաններ եք ասես քարե,
Գողում եք ձեզ շպատկանող կյանքի վրա:
Մարդիկ նույնպես արևից շեն ուզում զրկվել,
Մարգիկ, որոնք ուրվականներ են ձեզ նման,

Սակայն ո՞վ է նրանց փրկում բախտի վճռից:
Ամենքն էլ դա գիտեն, բայց շեն հաշտվում երբեք:
Բու՛վ է, արդեն կորած եք դուք: Գործի անցնենք:

(Մափ և աալիս Շեմֆին հայանվում են դիմակավոր
բզուկներ, որոնք արագ-արագ կաաառում են տւվող
հրամանները)

Դե, ճիվաղներ, առաջ եկեք և կուշտ նայեք,
Սքանչացեք տեսարանով ահասարսուռ:
Թողեք բերեն զոհասեղանը ոսկեղջյուր,
Արծաթ եզրին դնեն փայլուն կացիներ սուր:
Սափորները լցրեք ջրով, որ լվանաք
նև արչունից ապակաւնված Լոոտանին՝
Բերեք, փոկք փոշոտ գետնին ընտիր մի գորգ,
Որ ծունր իջնի զոհը վրան արբայաբար
Եվ նույն գորգի մեջ փաթաթված, կառափնատված,
Պատվով, շուքով ճամփա ընկնի դեպի շիրիմ:

Ե Մ Բ Ա Վ Ա Ր Ո Ի Հ Ի

Թագուհին և խորհում ահա մտամուշոր,
Իսկ աղջիկներն ասես արդեն խոտ են հնձված:
Ճարեց եմ ես, սրբազան պարաքս եմ համարում
Էս խորհրդին դիմել, ո՞վ կին բազմահմուտ:
Փորձված ես դու, հույժ իմաստուն և բարեհաճ,
Քնն այս խումբն անմտորեն վարվեց քեզ հետ...
Ոսա, մի՞թե չկա ոչ մի դուռ փրկության:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ո

Հեշտ է ասել: Քաղուհուց է միայն կախված
Ձեր փրկությունն ու փրկությունն իր սեփական,
Բայց ամեն ինչ վճռեք հաստատ ու անհապաղ:

Խ Ո Ւ Ս Ր

Ո՛վ Ձևսի դուտր ազսվագույն, իմաստնագույն թովչուհի,
Մի բաց ոսկե մկրատը քո, կյանքի թելը մի՛ կտրիր,
Սվետիր լույս և փրկություն: Դողում ենք մենք սարսափից,
Մենք, որ սովոր ենք հրճվանքի, մենք, որ սիրում ենք պարել,
Հանգչել կրծքին սիրածի:

Հ Ի Ղ Ի Ն Ն

Սրանց իման շեմ դարհուրում, ցավ եմ զգում
Բայց թե փրկես, կմնամ քեզ կրախտապարտ
Ողջախոհի, հեռատ սի համար հաճախ
Անհնարինն էլ է դառնում հնարավոր:
Խոսի՛ր, խոսի՛ր:

Խ Ո Ւ Մ Բ

Ասա՛ իսկույն, ինչպե՛ս փրկվենք արհավիրքից,
Կախաղանի ծանտ օղակից, որ, ա՛խ, իբրև մահվան
մանյակ,
Պիտի շուտով ամուր սեղմի պարանոցը դժբախտներիս,
Եվ մեզ խեղդի, եթե Հռեա՛, ո՛վ մայր բուրբ աստվածների,
Մեզ շփթա՛ս, մեզ շողորմաս:

Ն Ո Ր Կ Ի Յ Ո

Համբերութիւն ունե՞ք այդքան, որ ինձ լսիք,
Ձեզ հայտնելիք պատմութիւնս երկար է շատ:

Խ Ո Ր Ո Ր

Ինչքան պատմես, մեր կյանքն այնքան կերկարացնես:

Գ Ո Ր Կ Ի Յ Ս

Ով իր օջախն է պահպանում, իր դանձն աւելիվ,
Ով սրբազան պատերն է տան պահում կանգուն,
Ով շի թողնում՝ անձրև հարդի տանիքից ներս,
Նա բախտավոր իր հարկի տակ երկար կապրի:
Իսկ ով լքում է վատաբար սուրբ շեմքն իր տան,
Հնշտ ու հանգիստ է հեռանում իր օջախից,
Նա կգտնի տեղը նախկին, երբ դառնա ետ,
Բայց կտեսնի կամ շատ փոխված, կամ ավերված:

Ն Ո Ր Կ Ի Յ Ն

Ինչո՞ւ ես դու պատմում գեղքեր հանրածանի թ,
Խոսիր առանց նախատելու:

Յ Ո Ր Կ Ի Յ Ո

Սա, թագուհի,
Նախատինք չէ, այլ անբասիր իրողութիւն:
Մենեղաոսն արդեն դարձել էր ծավահեն,

Կողոպտում էր ամեն կղզի ու ծովախորշ.
Ձեր գանձարանն այդ ավարով է լեփ-լեցուն:
Երկար մնաց Իլիոնի պատերի տակ,
Տարբ տարի, երկար լողաց մինչ տուն հասավ,
Եվ հայտնի չէ նրան վիճակն այս գղջակի,
Իր հպատակ ժողովրդի, իր տերության:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ամբաստանելն արդեն դարձրած միս ու արյուն՝
Քերանդ շե՛ս բացում առանց պարսավանքի:

Յ Ե Ր Կ Ի Ա Ս

Շատ տարիներ լքված մնաց սարահարթն այն,
Որ Սպարտայի հյուսիսումն է վեր խոյանում,
Տայգետի մոտ: Բարձունքից այս լեռնապարի
էվրոտան է սկիզբ առնում, իջնում հովիտ,
Կարում շամբուտն, ուր կարասյներ են լող տալիս:
Ահա այստեղ, լեռնահովտում է բնակվել
Քիմերական հեռուներից եկած մի ցեղ
Այդ խիզախներն ունեն ամբոց մի անառիկ
Եվ շարունակ նեղում են մեր ժողովրդին:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ի՞նչ հնարքով: Հավատալ չեմ կարողանում:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Քսան ստարում հնարավոր է ամեն բան:

Հ Ե Վ Ի Ն Ե

Կա՞ առաջնորդ, մե՞ծ է հորդան հրոսակների:

Յ Ո Ր Կ Ի Ա Ս

Հրոսակներ շեն և առաջնորդ ունեն, հարկավէ
Այցելել է նա մեզ, սակայն լեմ դժգոհում,
Չի պահանջել մեզնից ոչինչ, հարկ չի ուզել,
Ետ է դարձել սակալաթիւ ընծաներով:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ի՞նչ տեսք ունի:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Լավն է և ինձ դուր է գալիս:

Արի է նա, զվարթ, առույգ ու բարեկիրթ,
Հույների մեջ հազիվ գտնեք այդպիսի մարդ:
Մերոնք նրանց բարբարոսներ են համարում,
Բայց մալոու միս շեն հոշոտել նրանք երբեք,
Ինչպես հույներն Իլիոնի պատերի տակ:
Հալատում եմ վեհանձնությանն այդ օտարի
Եվ ի՞նչ ամբոյ ունի, գիտե՞ս, տեսնել է պետք:
Ինչ նման չէ այն շենքերին կոշտ ու կոպիտ,
Որ ձեր նախնիք են կառուցել վայրիվերո,
Կիկլոպների նման բերել, մի կերպ շարել
Անտաշ քարերու Հոյակապ է ամբոյն այդ նոր,
Ամեն ինչ է այնտեղ ուղիղ ու համաշափու

Կզմայլվես. երկինքն ի վեր է խոյանում՝
Կռկիկ, ողորկ, ինչպես պողպատ հայելափայլ:
Մազլցելու միտքն անգամ ցած կզլորվի.
Ներսում՝ բակեր լայնատարած, իսկ շորս բոլոր՝
Ամեն ձևի, ամեն շափի շինություններ,
Սյունե՛ր, սյունե՛ր, ի նշ կամարներ փոքր ու մեծ,
Ի՛նչ սրահներ պատկերազարդ, պատշղամբներ,
Քանի՛, քանի՛ զինանշան:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Զինանշան:

Ֆ Ո Ր Կ Է Լ Ս Ը

Կծկված օձ ուներ Այաքսն իր վահանին:
Յոթ հերոս էլ վահանները Թեբեի մոտ
Զարդարեցին այդպես տարբեր պատկերներով.
Դրանց վրա կային աստղեր, լիալուսին,
Դիցուհիներ, դյուցապուններ, սանդուղք ու ջահ,
Ինչ թշնամու քաղաքներին գումում էր մահ:
Այս նորահայտ ցեղն էլ ունի զինանշան,
Որ հեռավոր նախնիներից է ժառանգել.
Առյուծ, արծիվ, մագիլ, կտուց, թևեր, վարդեր,
Սիրամարգի պոչ, գոմեշի կեռ եղջյուրներ,
Նախշուն շերտեր՝ կապույտ, կարմիր, սև, ոսկեղույն,
Արծաթազույն: Դրանք կախված են շար ի շար
Աշխարհի շափ լայն ու արձակ սրահներում:
Պարե՛ք ազատ:

Խ Ա Ի Մ Բ

Կա՞ն պարողներ:

Ֆ Ա Ր Կ Ի Ա Ս

Ի՞նչ պարողներ.

Ոսկեզանգուր, գարնանաբույր պատանիներ,
Միայն Պարիսն այդ բույրն ունեք այն օրերին,
Երբ արդեն շա՛տ էր մտերիմ թագուհու հետ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Քո դերից մի՛ շեղվիր, աստ խոսքդ վերջին:

Ֆ Ա Ր Կ Ի Ա Ս

Վերջին խոսքը քոնն է Լթե ասես «այո»,
Նույն վայրկյանին կհայտնվես այն ամրոցում:

Խ Ա Ի Մ Բ

Օ՛, թագուհի, խոսիր, փրկիր թե քեզ, թե մեզ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ինչպե՞ս կարող եմ հավատալ, որ իմ արքան
Կարող է ինձ պոտածել այդպես անդթորեն:

Ֆ Ա Ր Կ Ի Ա Ս

Ոտացե՞լ ես վախճանը քո Դեյֆոբոսի՝
Մարտում ընկած Պարիսի այն կրտսեր եղբոր,
Որ բռնությամբ տիրացավ քեզ՝ այրի հարսին,

Հարճ գարձրեց հաջողությամբ: Քո արքան չէ՞ր,
Որ կտրատեց ականջներն ու քիթը նրա,
Անլուր ձևով այլանդակեց մարմինն ամբողջ:
Սոսկալի էր նայելն անգամ:

Հ Ե Պ Ի Ն Ե

Ի մ պատճառով:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Սիրեկանիդ պատճառով էլ քե՛զ կսպանիտ
Ո՞վ կկիսի գեղեցկությունն ուրիշի հետ,
Այլելի շուտ կկործանի, քան կզիջի:

(Շեփորների ձայն՝ հեռվից եռամբր սարսափահար է լինում):

Շեփորների որոտն ինչպե՛ս է խլացնում.
Ձայնն է կարծես դա այն խանդի, որ կբժքի մեզ
Կորցրածն երբեք չմոռացող տղամարդու
Իր մագիլներն է մխրճում:

Խ Ո Ւ Մ Բ

Դու չե՞ս լսում փողերի ձայն, չե՞ս տեսնում փայլ զենքերի:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Բարի գալո՞ւտ, տե՛ր և արքա, քեզ կհայտնեմ ամեն ինչ:

Խ Ո Ւ Մ Ք

Ի սկ մե՞նք:

Ֆ Ո Ր Կ Ի Ա Ս

Պարզ չէ՞, դուք թագուհու մահն եք տեսնում ձեր առջև,
Շուտով ձեր մահն էլ կտեսնեք: Ոչ, ձեզ օգնել չեմ կարող:
(Դադար)

Հ Ե Ղ Ի Ն Ե

Իմ անելիքն արդեն հաստատ ես վճռեցի:
Դու դե կա շար պարզ եմ տեսնում ու նախազդում,
Որ շարիքի պիտի փոխես ամեն բարիք,
Բայց թե հիմա ինձ այդ ամբողջն առաջնորդիր:
Իսկ մնացածն ինքս գիտեմ: Սրտիս խորքում
Ես կպահեմ իմ գաղտնիքն այդ խորհրդավոր
Եվ չեմ հայտնի ոչ մի մարդու: Տար ինձ, պառավ:

Խ Ո Ւ Կ Ք

Ի՞նչ հրճվանքով ու արագ
Հիռանում ենք այստեղից,
Զէ՞ որ մահն է ետևում,
Իսկ առջևում վիթխարի
Ամբոցն է վեր խոյանում
Պարիսպներով անառիկ:
Ապաստարան մեզ կտա

Իլիոնի բերդի պես,
Որն ի վերջո կործանվեց
Միայն ստոր նենդությամբ:

(Մշուշ է ծավալվում, ծածկում բեմի խորքը և նախաբեմը):

Քույրեր, այս ի՞նչ պատահեց:
Հապա նայեք շուրջը ձեր:
Օրը պարզ չէ՞ր ու պայծառ...
Մինչդեռ մշուշ է ելնում
էվրոտասից սրբազան:
Եղեգնուտով պսակված
Գետակն էլ չի երևում,
էլ չեն լողում ջրերում
Զյունափրփուր ու հպարտ
Կարասյները մեղմասահ:
Ա՛խ, ի՞նչ եղան, ի՞նչ եղան:

Բայց ի՞նչ կանչեր են լսվում,
Խոպոտ կանչեր հեռավոր
Ասում են՝ բոթ է մահվան
Տխուր կանչը կարապի:
Ա՛խ, թե պատրա՞նք լիներ դա,
Զգուժեր մահ ու ազետ,
Այլ փրկություն ավետեր
Ա՛խ, մենք էլ ենք կարապներ,
Կարապ է մեր թագուհին,

Կարապի դուստր է շքնաղ՝
Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, հազար վա՛յ:

Սեր շուրջն արդեն ամեն ինչ
Մառախուղով պարուրվեց,
Իրար անգամ չենք տեսնում:
Արդյոք շարժվո՞ւմ ենք առաջ,
Թե՞ նույն տեղում խարխափում:
Հերմեսը չէ՞ եթերում
Գայիսոնով իր ոսկյա:
Ետ է տանում տիրաբար
Գեպի Հադեսն անուրախ,
Որ լցվում է շարունակ
Ուրուներով անմարմին,
Բայց դատարկ է հավիտյան:

սնկարժ խավարն է թանձրանում մեզն է ցնդում, բայց
լույս չկա,
սփարն ասեա պարիսպ է սե, պարիսպներ են մեր դեմ
Ելնում
ր են ձգվում պատերը մութ: Սա ի՞նչ է լա՞կ, թե՞
դամբարան:
ավոր է, ինչ էլ լինի: Թակարդ ենք մենք ընկել, քույրերս
պես չէինք ընկել երբեք:

ԱՍ ԲՈՑՈՒՄ

Բակ՝ շուրջը միջնադարյան շքեղ,
Ֆանտաստիկ շենքեր

ԽՄԲԱՎԱՐՈՒՀԻ

Ա՛յ թե կանայք եք խկական՝ բուծ, անհամբեր,
Խաղալիքն եք ձեր անկայուն ու կարճ խելքի,
Ձեզ չեք դսպում, դժբախտ լինեք թե բախտավոր,
Սառնասիրտ չեք, վիճաբանում եք շարունակ
Եվ բորբոքված՝ իրար ասածն անվերջ հերքում:
Ոռնում եք դուք վշտի ժամին թե խնդության,
Ծիծաղում ու լալիս եք նույն եզանակով:
Պապանձվեցեք, տեսնենք, թե ինչ է թագուհին
Հիմա վճռում իմաստնորեն:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Պիթոնի սա,

Որտե՞ղ ես դու Ինչ էլ լինի անունը քո,
Շուտ հայտնվիր, դու քս եկ խորքից մութ ամբողջիս
Թե իմ գալուստն ես ավետում առաջնորդին,
Որ ընդունի նա ինձ շուրջվ հանդիսավոր,
Գոհ եմ քեզնից, ինձ անհապաղ տար նրա մոտ:
Հոգնել եմ ես գեգերելուդ, հանգիստ առնեմ:

Խ Մ Բ Ա Վ Ա Ր Ո Ւ Հ Ի

Իմ թագունի, դուր ես այդպես շուրջդ նայում
 Անհալտացավ կարծես պառավն այն այլանդակ,
 Գուցե մնաց նա մշուշում, որի միջով
 Եկանք արագ, իսկ թե ինչպես, շհասկացանք:
 Խարխափում է նա գուցե դեռ լաբիրինթում
 Բազմասրահ ու հոյակապ այս ամրոցի,
 Որ տիրոջը գտնի հալտնի գալուստը քո,
 Եվ առաջնորդն ալ քայարար ընդունի քեզ
 Բայց տե՛ս, ամբոխն է խլրտում ամենուրեք,
 Սրահներում, շքամուտքի առաջ ահա:
 Նշան է դա, որ բարեհաճ են, հլուրասեր:

Խ Ր Ւ Մ Ր

Սիրտս բացվեց: Նալեք այնտեղ ի՞նչ տեսարան:
 Ի նշ բարեկիրթ պատանիներ—մի ողջ թափոր,
 Ուղիղ շարքով դանդաղաքալի իջնում են ցած:
 Արդյոք այդ ս՛ում հրամանով հայտնվեցին
 Մաղկահասակ պատանիներն սքանչելի:
 Ի՞նչն է դերում ամենից շատ քա՛յլքը խրոխտ,
 Ճակատներին թափված փո՛ւնջը գանգուրների,
 Թե՛ այտերը՝ դեղձերի պես վարդագունված
 Եվ ծածկված փափուկ, փալլուն աղվամազով:
 Ես այտերն սլոկ կկծեի, սակայն, ավա՛ղ,
 Եթե կծեմ սոսկալի է նույնիսկ ասել,
 Իմ բերանը լցվելու է շիրմի փոշով:

Հրաշք տղաներն
 Արդեն մոտեցան,
 Գորգեր են բերում,
 Գահ, գահասանդուղք:
 Իբրև ամպեղեն
 Պսակ շողշողուն,
 Ճոխ ամպհովանին
 Ծփում է ահա
 Գլխին թագուհու,
 Որն ելնում է վեր
 Շքեղ սանդուղքով
 Գահին բազմելու:
 Մոտենանք, կանգնենք
 Ծղրին սանդուղքի,
 Փառք տանք և օրհնենք,
 Երիցս օրհնենք
 Օջախն հլուրընկալ:

(Աստիճանաբար կատարվում է այն ամենը, ինչ ազդա-
 բարում է խումբը երբ սանդուղին ի վար իջնում է մանկյա-
 վիկների ու զինակիրների հոծ թափուրը, վերևում, միջնա-
 դարյան ասպետի հանդերձանով, հայտնվում է Ֆաուստը
 և դանդաղ, արժանապատվությամբ մտանում)

Ե Մ Ր Ա Վ Ա Ր Ո Ւ Հ Ի

(Նրան զննելով)

Եթե միայն սա կատակ չէ աստվածների,
Ինչպես հաճախ է պատահում, և այս մարդուն
Նրանք ընդմիջտ են շնորհել հմայիչ դեմք,
Վսեմ կեցվածք, որով նա սեր է արթնացնում,
Առաջ երբեք չի պարտովի այս մահկանացուն
Ոչ քաջազեն ալրերի դեմ գուպարելիս,
Ոչ էլ քնքուշ կանանց սիրո պատերազմում:
Սա, հիրավի, բարձր է բազում ալն մարդկանցից,
Որոնց տեսել, նայել եմ խոր պատկառանքով:
Դանդաղաքայլ ու հարդալիր իջնում է ցած:
Ո՛վ թագուհի խո սրղ ասա առաջնորդին:

Յ Ա Ո Ւ Ս Տ

(Ստուճում է կողմին շղթայակապ մի մանր):

Փոխանակ բեզ շուքով ընդունելու,
Ողջունելու բարի գալուստը քո,
Բերում եմ շղթայված այս ստրուկին,
Որի մեղքով իմ պարտքն եմ վանց առել:
Մանկի՛ եկ վեհատիպ տիկնոջ առջև,
Մեղքդ խոստովանիր քո բերանով:
Մե՛ծ օխրուհի, ալրն ալս հույժ հեռատես
Պահապանն է բերդի, գիշեր ու զօր
Ե վ երկինքն է դիտում, և դաշտը լայն:

Նա կտեսնի, ինչ էլ հանկարծ շարժվի
 Բլուրներին, հովտում, ամբողջի մոտ
 Լինի դա հոտ, լինի թշնամու զորք:
 Հոտը գազաններից կպաշտպանենք,
 Իսկ զորքի գեմ կելնենք պատերազմի:
 Սակաֆն ալսօր ինչսլի՞ս նա կուրացավ,
 Ինձ շհայտնեց, որ ես քեզ ընդունեմ
 Քեզ արժանի շուքով հանդիսավոր:
 Նա իրավունք չունի ողջ մնալու:
 Արնաշագախ կընկներ քո ոտքի տակ,
 Բայց դատավորն ի նքդ եղիր միայն,
 Պատժիր կամ խնայիր, քո կամքն է դա:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Եթե վեհանձնորեն շնորհեցիր
 Դատավորի կոչումն ալդ պատվավոր
 Թեկուզ ինձ փորձելու նպատակով,
 Ապա ալս է պարտքը իմ առաջին.
 Լսենք մեզադրյալին: Ո՛վ մարդ, խոսի՛ր:

Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ի Պ Ա Հ Ա Պ Ա Ն Լ Ի Ն Ք Ե Ո Ս

Թող ծունր իջնեմ, թող նայեմ քեզ,
 Մեռնեմ՝ հլու քո կամքին,
 Իրրև գերի ու ողջակեղ,
 Աստվածատի՛սյ օտար կին:

Արևելքին աչքս հառած՝
Ես ալզն էի դիտում լուռ,
Բայց հարավի ց արփին շողաց,
Երբև հրաշք մի անլուր:

Թողած բարձունք ու հարթավայր,
Թողած հովիտ ու ձորակ,
Քե գ նալեցի ես խանդավառ,
Զմալլվեցի, ո վ միակ:

Սրատես եմ լուսանի պես,
Բայց դժվար էր հավատալ,
Ըր դու պատրանք և տեսիլք շես,
Ցուրք ևրազ կասուարլալ:

Պարիսպ, դարպաս ու աշտարակ
Զէի տեսնում այդ պահին,
Սշուշ իջալ, հալվեց արագ,
Եվ հալտնվեց դիցուհին:

Քո լույսն էի ես ըմբռնչխնում
Թե հայացրով, թե սրտով,
Ինձ կուրացրեց քո անպատում
Գեղեցկությունն հոգեթով:

Մուսցա պարտքն իմ սրբազան...
Պատժի ր, սրտանց եմ ասում
Հւնայքը քո գեղեցկութլան
Սանձում է ոխ ու ցասում:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ինչպէ՛ս պատժեմ այն հանցանքի համար,
 Որի պատճառն եմ ես: Վա՛ր ինձ, եղո՛ւկ:
 Դաժան բախտն ինձ ինչպէ՛ս է հալածում
 Ամենուքեք սրտերն եմ ալրերի
 Ալեկոծում ալնպես, որ ոչ իրենց,
 Ոչ էլ այլոց են խնայում նրանք:
 Առևանգել են ինձ, իրար ձեռքից խլել
 Կիսաստվածներ, քաջեր, աստվածներ ու դէ՛ր .
 Սշխարհն եմ կրկնակի քառս դարձրել,
 Հիմա էլ նոր աղևտներ եմ բերում:
 Աղատիր այս մարդուն անմեղ է նա,
 Ամ աստվածներն իրենք են կուրացնում:

Պ Ս Ո Ւ Ո Տ

Չարմանքով եմ նայում, ով թագուհի,
 Խե որսորդին, թե վիրավոր որսին
 Թե աղեղին, որի նետերը սուր
 Խորն են խոցել նրան ինձ էլ արդեն
 Վերք հասցրիր: Քո նետերը, գիտեմ,
 Սուրալու են շուտով ողջ ամբողջում:

Ի՛նչ անեմ ես սարուկներս խոնարհ
 Կապստամբվեն: Ամբողջ կդառնա
 Անապահով Սմբողջ զորքս կերդվի
 Մառայել քեղ՝ կնոջն անապարտելի:

Ուրիշ ի՞նչ է մնում: Քե՛ղ եմ հանձնում
 Ինձ, այն՝ ամենն, ինչ իմն էի կաթծում:
 Թույլ տուր ազդարարել ոտքդ ընկած.
 Դո՛ւ ես ընտրյալ իմ թագուհին միակ,
 Որը եկավ ու նվաճեց իսկույն
 Ե վ թագ, և՛ գահ, և՛ սրտերը բուրբ:

Լ Ի Ն Ք Ե Ո Ս

(Արկղ է բերում նրան հետևող տղամարդիկ նույնպես):

Ո՛վ տիրուհի, եկա հլու՛
 Գեթ մի հայացքդ մուրալու:
 Ով քեզ նայի, իրեն կլզա
 Ե՛վ մուրացկան, և թե արքա:

Ի՞նչ էի ես, ի՞նչ եմ այսօր,
 Իլ ի՞նչ ցանկա ստրուկն անզոր.
 Աչքս թեկուզ դառնա, կայծակ,
 Կմոխրանա քո ոտքի տակ:

Արևելքից եկանք այստեղ,
 Եվ սասանեց մեր ուժն ահեղ
 Արևմուտքի բերդերն անառ,
 Անթիվ էինք ու անհամար:

Մեկն ընկնում էր, մեկը ելնում,
 Երրորդն էր տեղն իր ձեռքն առնում,

Հաղարն ընկներ, ո՞վ կտեսներ
Մեկին հարլուրն իսկուզն կօգներ:

Կովում, ջարդում, առաջ սուրում,
Չէինք մնում նոսյն վայրերում.
Որտեղ այսօր մենք էինք տեր,
Վաղն ուրիշը կկողոպտեր:

Տանում էինք, ինչ գուր գար մեղ,
Մեկը՝ մի կին սիրունատես,
Մյուսը՝ մի եղ, իսկ ձին ընտիր
Բոլորիս որսն էր պարտադիր:

Ես հազվագյուտն էի փնտրում,
Ես բացառիկն էի ընտրում,
Չէի սիրում առհասարակ
Ինչ ուրիշն էր գտնում արագ:

Հետքը գտա ճոխ գանձերի.
Տեսողութունն իմ անթերի
Հեռվից որսում էր ամեն բան,
Թափանցելով գղրոց, գրպան:

Այդպես շեղջ-շեղջ դիզվեց ոսկին,
Դիզվեցին և քարերն անգին:
Սակայն կրծքին քո հոլանքի
Լսկ այս ղմբուխտն է արժանի:

Այս մարգարիտն հրաշալի
Թող ականջիդ վրա փայլի,
Բայց այս գոհարն այտերիդ մոտ
Շատ է գունատ, շատ է աղոտ:

Քո ոտքերի տակ եմ դնում
Գանձերն իմ այս՝ բերքն անհատնում,
Որ հնձել եմ սրով զորեղ
Պոխիներում արլունահեղ:

Արկղներիս նայիր, ահա,
Սնդուկներ էլ կան երկաթյա:
Քեղ կընծայեմ այս գանձն առատ,
Միայն թույլ տուր լինեմ ծառայ:

Թեև նոր ես բաղմել գահին,
Բայց դարձել ես կուռք երկրային.
Խոնարհվեցին քո դեմ իսկույն
Խելք, զորություն, հարատություն:

Քեղ եմ առլիս խոնարհաբար
Իմ պահպանած դանձն անսպառ
Այն, ինչ թվում էր թանկագին,
Արժեք չունի էլ իմ աչքին:

Արդեն չունեմ գանձ ու ոսկի,
Նման եմ խեղճ մուրացիկի,
Բայց թե ժպտաս ինձ մի անգամ
Վարձա, որված ես ինձ կղզամ:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Տւր քաջությամբ վաստակած բերք թո,
 Ոչ էախատինք է պետք, ո՛չ հատուցում
 Թաղուհունն է, ինչ կա այս ամբողջում,
 Քո այս ընծան ոչ մի իմաստ չունիս
 Գոտ, զանձերն ի մի հավաքիր շուտ
 Եվ ստեղծիր մի տեսարան վսեմ,
 Տայսօր շեղած սլատկեր շքեղությանս
 Թող երկնի պես կամարները շողան,
 Կյանքի կոշիք դրախտն անշունչ զանձիցս
 Թող տիրուհու ոտքերի տակ փռվեն
 Մաղկանկար գորգեր, թող ամենուր
 Սյնպիսի փայլ ու շուք լինի, որից
 Չեն կուրանում աստվածները միայնս

Լ Ի Ն Ք Ե Ո Ս

Տեր իմ, կանեմ, ի՞նչ է դա,
 Վտանգն ալլ է, հավատա.
 Գեղեցկությունն այս կնոջ
 Մունկի բերեց բերդը ողջ՝
 Բանակն եղավ անձնատուր,
 Եվ բթացավ ամեն սուր:
 Այնպես է նա մեղ թովում,
 Արևը սառն է թվում,
 Եվ ոչինչ է ամեն ինչ,
 Երբ շողում է դեմքը ջինջ:

(Գնում է)

Հ Ե Ղ Ի Ն Ե

(Ֆառուսիկ)

Քեզ հետ կուղենայի ևս զրուցելի
Ելիր սանդուղքն ի վեր, նստիր կողքիս:
Տիրոջն է սպասում տեղն այս թափուր,
Եկ և իմ տեղն էլ ապահով դարձրու:

Ֆ Ս Ո Ւ Ս Տ

Մեծ արուհի, թույլ տուր, որ ծնրադիր
Սրդում տամ քեզ, այն ձեռքը համբուրեմ,
Որ հասցրնում է ինձ քս բարձունքին,
Թույլ տուր տնօրինեմ քեզ հետ մեկտեղ
Բախտը անծալր երկրիդ, իբրև ծառա,
Իբրև երկրպագու և պահապան:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Շատ բաշքներ եմ Լս ականում, լսում,
Ետա հարցեր եմ ուղում տալ զարմանքով,
Լայց նախ տոա ինչո՞ւ խոսքն այն մարդու
Այդքան սրտառուչ էր, տարօրինակ:
Բասերը ջերմ էին ու ներդաշնակ,
Քաղցր էին հնչում իմ ականջին
Մեկը մեկից շոյող, գորովալից:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Եթե քեզ դուր եկաւ մէր մայր լեղուն,
Մեր երգերով արդեն կսքանչանաս,
Կւփոփես քո հոգին և սիրտը քո:
Շուտով դու այդ բանում կհամոզվես,
Երբ զրուցենք անկեղծ մտերմութեամբ:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ինչպե՞ս խոսեմ ոճով ձեր գեղեցիկ:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Հեշտ է, եթե շկա ոչ մի կեղծիք:
Երբ հույզերն ու կարոտն են մեզ այրում,
Մենք մեր շուրջն ենք նայում .

Հ Ե Ղ Ի Ն Ե

Հնկեր փնտրում:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Ծտ կամ առաջ ինչո՞ւ նայենք այսօր,
Եթե ներկայով ենք ..

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ս ենք բախտավոր:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Պանձ է ներկան, բախտի առհավատչյաւ
Ո՞րն է ապացույցը ..

Հ Ե Ղ Ի Ն Ե

Զեոքս ահաւ

Խ Ո Ւ Մ Բ

Ո՞վ թագուհուն կամբաստանի
Նե նա ինչու է բարեհաճ
Ճիրոջ հանդեսլ այս ամբողջի:
ԶԷ՞ որ, եթե խոստովանենք,
Մենք բոլորս ենք գերութիւն մեջ
Այն ողբալի օրից ի վեր,
Ինչ Իլիոնը կործանվեց,
Եվ մենք դարձանք անդաստական:

Կինն այրական սիրո սովոր,
Լք կամքով շի ընարում երբեք,
Բայց լավն ու վատն է հասկանում,
Երբ և հովվին ոսկեզանգուր,
Եվ թուխ ֆամինին թավամորուս
Նույն իրավունքն է նա տալիս
Իր բարկ մարմնին տիրանալու,
Անշուշտ, նալաժ հանգամանքին:

Խագուհին և տերն ամբողջի
Այնպե՛ս են մոտ նստել, տեսեք
Ծունկը ծնկի, ուսը ուսի,
Զեռքը ձեռքի ամուր հպած՝
Օրորվում են գահի վրա,
Ճոխ բարձելի վրա փափուկ,
Երկու նորին մեծութունն այս
Ժողովրդի աչքի առաջ
Գուցե հանկարծ սնեն և այն,
Ինչ մարդ գաղտնի է վայելում:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ե վ այնքան եմ հեռու, և՛ մոտ այնքան,
Բայց ուղում եմ լինել այստե՛ղ միայն:

Ֆ Ս Ո Ւ Ս Տ

Երա՛զ է սա, այս ի՛նչ է կատարվում
Գողում եմ ես և շունչս է կտրվում:

Հ Ե Ղ Ի Ն Ե

Ե վ ծեր եմ ինձ թվում, և՛ դեռատի,
Սնդավաճան ձուլված քեզ՝ անհայտին:

Չ Ա Ո Ւ Ս Տ

Ոչ մի կասկած պահին միակ երջանկության
Մարդու պարտքն է՝ ապրել, թեկուղ և մի վայրկյան:

Ֆ Ո Ր Կ Ի Ս Ս

(Արագ ներս մտնելով)

Սեր եք խաղում քաղցրաբերան,
Հեզում սիրո այբբենարան,
Բայց վերջ տվեք հիմա դրան,
Խուլ որոտը շե՞ք լսում:
Թշնամին է հողդ խուժում,
Շեփորներն են տազնապ գուժում,
Աղետ է սա, փլուզում:
Ս ենելաոսն ահա ոխով
Մոտենում է հոժ ամբոխով,
Նրան հաղթելն է դժվար:
Եթե սրան կին, քնտրեցիր,
Ուրեմն՝ ել և հատուցիր
Դեյֆոբոսի պես թշվառ:
Նախ կկախվեն տրոյուհիք,
Իսկ թագուհին այս գեղեցիկ
Կացնի դարկով կընկնի վարս

Ֆ Ա Ո Ի Ս Տ

Խանդարեցիր մեղ, անպատկառ Խուճապն անմիտ
Չում հանդուրժի ես վտանգի ժամին անգամ
Ուրուն բանքերն է վատ լուրից տգեղանում,
Իսկ դու ի ծնե այլանդակ ես և բոթասեր...
Բայց այս անդամ շհասար քո նպատակին,

Ձի հաջողվի ամրոցն անել սարսափահար:
Ծթե նույնիսկ լինի վաանգ, չեմ երկնլի:

(Սգդանշաններ, աշտարակներից տրվող համազարկեր,
շեփորներ և եղջերափողեր, ռազմական երաժշտություն,
մեծաթիվ զորքերի տեղաշարժ)։

Ո շ, ի մարտ կտանեմ բանակը ողջ,
Հերոսներիս խիղախ ու միարան:
Լոկ նա է արժանի սիրույն կնոջ,
Ով կարող է կրճքով կանգնել պաշտպան:

(Զորապետերին, որոնք շարասյուներից ասանձեանում և
մոտենում են)։

Չեղ եմ դիմում, հյուսիսի քաջ որդիք,
Արևելքի խրոխտ պարմանիներ,
Չեղ, որ գիտեք սանձել ոխը սաստիկ,
Հաղթել տոկունությամբ ձեր աներեր:

Կովի էիք նետվում պողպատազրահ,
Տերութուններ էին հերթով պարտվում,
Հողն էր դողում ձեր ոտքի տակ սնահ,
Չեղնից հետո որոտն էր հանդարտվում:

Հիշեք երբ ամի իջանք Պիլոսի մոտ,
Ծեր նեստորն իր մահկանացուն կնքեց,
Մեր դեմ խոնարհվեցին բոլոր ըմբոստ
Արքայիկներն հաղթված ու գահընկեց:

Սրդ, ետ մղեք բերդի պարիսպներից
Մենելաոս թագավորին փոթով,
Սեղմեք ծովին, որ նա այնտեղ նորից
Տարվի սպանութեամբ, կողոպուտով:

Կուզենալի ձեզ հոշակել դուքսեր,
Ի՜նչ կամքն է Սպարտալի մեծ տիրուհու
Կվարձատրենք արիութեանը ձեր,
Երբ ստոխին ջարդեք զարկով հուժկու:

Քոնն է, գերման, Մոցը կորնթոսյան,
Շրջափակիր պարիսպներով հզոր,
Իսկ քեզ էլ, գոթ, հանձնում եմ Աքայան
Չորահովիտներով հարլուրավոր:

Թող Փրանկ զորքերը շուտ էլիս հասնեն,
Սաքսերը տիրանան Մեսսինային,
Նորմանները թող Արգոլիսն առնեն
Իւ պաշտպանէն սահմանը ծովային:

Ապրեք, և թող ստոխներին համառ
Հեռից զսպի շանթը ձեր զորութեան,
Բայց Սպարտան է դարձլալ քաղաքամայր՝
Ուտանը թագուհու հնադարյան:

Տիրուհին քաղցր ալքով ձեզ կնայի,
Բարիքը ձեր հողում կդառնա ծով,

Կվայելեք դրոշի տակ Սպարտայի
Արդարություն, լույս և կյանք անխոռլ:

(Ֆաուստը ցած է իջնում Իշխանները նրան շրջապատում են,
որպեսզի ավելի մոտիկից լսեն հրամաններ և կարգապար-
թյուններ)

Խ Ա Ի Մ Յ

Ով ամենից շքնաղ կնոջ
Քնքուշ սրտին է տիրանում,
Զենքը թող միշտ պատրաստ պահի:
Նվաճում է քաղցր շեզվով
Աշխարհի գանձն ամենամեծ,
Սակայն հանգիստ չի վայելում,
Հսկում է, որ սիրեցյալին
Շողոքորթը չգալթակղի,
Ավագակը շառեանդի:

Պետք է գովեչ մեր իշխանին,
Խոհեմ է նա ուրիշներից.
Ընտրեչ է քաջ դաշնակիցներ,
Որոնք պատրաստ են դօր-դիշեր
Նրա ամեն հրամանին:
Կատարելով կամքն իշխանի,
Սեփական շահն են պաշտպանում,
Զինվորի պարտքն են հատուցում
Եվ պանծացնում փառքն ընդհանուր:

Ո՞վ, ո՞վ կարող է կին խշեշ
Նման հղոր տիրակաշից:
Սիրում է նա Հեղինեին,
Հեղինեն է նրան սիրում,
Գոհ ենք և մենք մեզ պաշտպանեց
Ամուր բերդով, խիզախ զորքով:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Թագուհի, քո շնորհն է հիասքանչ.
Ամեն մեկին՝ մի երկրամաս բերրի:
Այ՜՛ն թուլշ տուր, որ շարժվի զորքն առաջ .
Իսկ մենք այստեղ կապրենք, սրտում երկրի:

Նրանք ոսոխներից կպաշտպանեն
Ալլաց գրկում ծաղկող թերակղզին
Որին թիկն է տվել հավերժորեն
Նվրուպա ի լեռնաճյուղը վերջին:

Արևի տակ չկա նման երկիր,
Երջանիկ է այստեղ ամեն մի ցեղ:
Քրօրրանը նորի՛ց գու վայելիր,
Չէ՞ որ լույս աշխարհ ես եկել այստեղ:

Էվրոտասի խաղաղ եղեգնուտում
Չվի միջից եչար դու, թագուհիդ,
Ն | դարմացրեց փալշդ հրաշապատում
Սորդ, եղբայրներիդ ու քույրերիդ:

Գսայլանքով հալաօրը քեզ հառած,
Սաղկում է շուրջը քո մի օղջ երկիր,
Քայց տերութիանդ մեզ լայնատարած
Մենդավայրդ միշտ գերադասիր:

Զին տաքանում դադաթները լեռան.
Արևը նետ է պաղ, սակայն ցածում
Կանաչին են տալիս ժայռ ու կածան,
Սյծերն են աղբատիկ խոտն արածում:

Աղբուրներն ու առուններն են հորդում,
Պտղավորում ամեն լանջ ու ձորակ,
Ամեն քրի վրա, ամեն հովտում
Ոչխարներ կան ճերմակ ու թխորակ:

Անասուններն են մոտենում շոգին
Զով կիրճերի եզրին անդնդախորտ
Նրանց համար պատրաստ է հովանին՝
Անձավների մուտքը կամարավոր:

Զորավիգ է այնտեղ Պանը նրանց,
Զով թփերում նիմֆերն են րնակվում,
Քարձունքների հրապույրով արբած՝
Մտներն են կարոտով երկինք ձգվում:

Հի՛ն անտառներտ Այստեղ հսկա կաղնին
Տերևներն է նախշում ատամնաձև,
Քաղցր հլութով լեցուն խոնարհ թղկին
Իր կանաչ բեռն է օրորում թեթև:

Եվ մայրական կրծքից խոր անդորրում
Կաթ է ըխում մանկան համար, գառան,
Ծառի փշակներից մեղր է ծորում,
Միրզն է հասնում արեի տակ ամռան:

Գոհությունն է այստեղ հարստեամ,
Ամեն շուրթից վարդ է թափվում ասես,
Մարդն է աստծո նման անմահ թվում.
Քաջառողջ է նա միշտ, զվարթատես:

Ամեն որդի վճիտ երկնքի տակ
Մեծանում է, ժառանգում ուժն իր հոր:
Հարցնում ես ինքդ քեզ արդյոք սրանք
Մարդի՞կ են, թե՞ աստվածներ են հզոր:

Չի՞ որ անգամ Ապոլլոնին մարդիկ
Տվել են դարեդար տեսք հովվական:
Աչնուեղ են աշխարհներն իրար մոտիկ,
Ար մարտը և սյորտը բնության:

(Հեղինակի կողմից կառուցված):

Ո՛ր, հիրավի, մենք էլ ենք ըստապար,
Հրաժեշտ ենք տվել մեր անցյալին .
Հիշիր, որ գուստրն ես աստվածահոր,
Եվ Հելլադան աշխարհն է տառաջին:

Թող մեզ շկաշկանդի ամբոցն այս նեղ,
Սպարտայի մոտ ծաղկում է Արկադիան,
Երանություն կվայելենք այնտեղ,
Հավերժ օրրանն է դա ջահելության:

Կանչում է մեզ երկիրն այդ ավետյաց,
Ուր վայելքն է վերին մեղ սպասում:
Տաղավարի փոխենք և՛ դահ, և՛ գանձ,
Շուտ ազատվենք մեր հոգսերից բազում:

(Տեսարանը բոլորովին փոխվում է Բագմաթիվ ֆարայե-
նեի մոտ երևում են խիա թփուտաներով բողարկված տա-
ղավարներ Սավերախիտ պուրակը տարածվում է մին, և
շրջակա գահավեժ ժայռերը: Տառուսան ու Հեղինեն շեն երե-
վում հումքը ցանուցիւ պառկած ֆենլ է)

Ֆ Ո Ր Կ Ի Ս Ս

Այս աղջիկներն ինչքա՞ն պիտի մնան քնած:
Արդյոք նրանք հիմա տեսնո՞ւմ են երազում,
Ինչ ես տեսնում եմ արթմնի՝ պարզ ու որոշ
Լավ, արթնացնեմ, թող աղջիկները դարմանան:
Դուք էլ տեսեք, ցածում նստած բեղավորներ,
Ահա մկունդ մի պողպատյա.
Իմ վաղեմի բաղձանքն է դա:

Ա Ն Ե Ր Ո Յ Թ Ե

Կարմիր թիկնոցն այս ոսկեթել
Ամբողջ կյանքումս եմ երազել:

Հ Ա Ք Ե Ք Ա Լ Պ

(Զեմքը վերցնելով)

Ով դեմդ գա տո՛ւր անխնա
Ու ջարդելով առաջ գնաւ
Իսկ դու բան չե՞ս գտել կարգին,
Գա՛ ես ընտրել, իմ թանկագինւ
Շուտ հնոտին դենը կորցրու
Ու այս փոքրիկ արկղը վերցրու,
Մեջը վարձն է ամբողջ զորքի:
Ի՞նչ է, գիտես մաքուր ոսկի:

Ա Յ Լ Ե Ք Ա Ղ Թ Ի

Չեղավ, ծանր է սա լափադանց,
Իմ բանը չէ, անկեղծ ասած:

Հ Ա Ք Ե Ր Ա Լ Պ

Հավ, եկ գնեմ ուսիդ գնա,
Միջրդ սրան կղիմանա:

Ա Յ Լ Ե Ր Ծ Յ Թ Ի

Վա՛յ ինձ, վա՛յ ինձ կորած եմ ես,
Գոտկատեղս կիսվեց կարծես:

(Սրկղը վայ: է բնկնում և բացվում).

Հ Ա Ր Է Բ Ա Ն Գ

Ի՞նչ մեծ շեղջ է դեղին սսկու,
Փեշդ լցրու ձեռքով երկու:

Ա Ն Լ Ե Ռ Ո Յ Թ Ե

(Պալգեյով)

Արագ-արագ լցնեմ հիմա,
Հերիք է սա մեզ մինչ ի մահ:

Հ Ա Ր Ե Բ Ա Ն Գ

Շուտ վերջացրու, չգա փորձանք:

(Այլեբոլթեն ոտի է կանգնում)

Վա՛յ մեզ, վա՛յ մեզ, գոգնոցդ է ծակ
Հենց որ կանգնում, ման ես դալիս,
Ոսկին առատ շաղ ես տալիս:

Թ Ի Կ Ն Ա Պ Ա Հ Ն Ե Ր

(Մեր կայսեր)

Ի՞նչ եք անում սուրբ վրանում,
Կայսեր գանձերն ո՞ւր եք տանում:

Հ Ա Ք Ե Ք Ա Լ Գ

Այս ավարից, ո՞ւմ շէ հայտնի,
Մեզ էլ պիտի բաժին հասնի.
Սա թշնամունն է, փառք աստծու,
Իսկ ո՞վ եմ ես—զինվոր վարձու

Թ Ի Կ Ն Ա Պ Ա Հ Ն Ե Ր

Ուրիշ կարգի ենք մենք սովոր
Եթե գող ես, էլ ի՞նչ զինվոր
Եթե զինվորն ես մեր կայսեր,
Եղիք պարկեշտ ու պատվասեր

Հ Ա Ք Ե Ք Ա Լ Գ

Բայց անունն այդ պարկեշտության
Կս թեմ տուգանք է ռազմական
Բոլորդ եք բուրդ մի սանդերքի
«Տուր»—ոգին է ձեր օրենքի

(Այլերօյրեին)

Ինչ փեշիդ մեջ մնաց, տանենք,
Անցանկալի հյուրեր ենք մենք:

(Ղևում ԵՆ)

Ա Ռ Ա Զ Ի Ն Թ Ի Կ Ն Ա Պ Ա Հ

Ինչո՞ւ այդ լիրբ ավազակին
Չարդ շուվիր սեղին, կարգին:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Թ Ի Կ Ն Ա Պ Ս Հ

Ինձ կաշկանդեց մի ուժ անտես,
Ուրվականներ էին ասես:

Ե Ր Ր Ո Ր Գ Թ Ի Կ Ն Ա Պ Ա Հ

Ա քիս առաջ մթնեց այնքան,
Ի ր շտեսա էլ ոչ մի բան:

Չ Ո Ր Ր Ո Ր Գ Թ Ի Կ Ն Ա Պ Ա Հ

Ինձ համար կա մի այլ գաղսնիք:
Ամբողջ օրը շոգ էր սաստիկ,
Հեղձուցիչ տոթ մի ահավոր,
Մարդիկ փռվում էին անզոր:
Ինչ որ մեկն էր տեղում հարված,
Թշնամին էր ընկնում հնձված:
Չորս դին մշուշ, չորս դին ժխտր,
Չնգոց, բվվոց խորհրդավոր:
Մեր սրտում կա մի մութ կասկած,
Ինչպե՞ս այստեղ ընկանք հանկարծ:

(Հայտնվում է կայսրը շորս իշխանների հետ Թիկնապսե-
ները հեռանում են):

Կ Ս Յ Ս Ր

Պատերազմն ենք շահել, ինչ ուզում է լինի,
Փախչում է ցանուցիր բանական ախոյանի:
Ահա գահը թափուր, գանձարկղը լեփ-լեցուն,

Որով նա սաղրանքի մղեց ամենեցուն:
 Բայց կործանվեց, իսկ ես կամ, տերն եմ այս հողի:
 Թող ժողովուրդն ինձ մոտ պատվիրակներ հղի:
 Ամեն կողմից բարի լուրեր են մեզ բերում
 Երկիրն է հանդարտվել, և բոլորն են բերկրում:
 Կախարդանքն էլ, հարկավ, մեր ուղին է հարթել,
 Բայց մենք ենք ի վերջո մարտնչել ու հաղթել:
 Դիպվածներ շատ գիտե պատմությունը ուզմի,
 Քարե կարկուտ և կամ անձրև արնակարմիր,
 Անձավներից ինչ որ դղրդյուն է հառնում,
 Սոսկում է թշնամին, իսկ մենք սիրտ ենք առնում:
 Նույնն է այսօր ընկավ հաղթվածն ամոթապարտ,
 Հաղթօցն է արարչին փառաբանում հպարտ
 Թուրքն են ձայնակցում առանց հրամանի,
 Միլիոններն են գոչում «Տե՛ր, փառքդ շատ լինի»:
 Բայց ավելի եմ ևս աստծուն փառաբանում,
 Երբ վարքս եմ սեփական ծանրութեթև անում,
 Տարիներ է վատնում երիտասարդ արքան,
 Հետո է հասկանում՝ ինչ են ժամ ու վայրկյան *
 Ուստի և անհասպաղ դաշն եմ ձեզ հետ կնքում,
 Ծնօրեններ կարդում ձեզ իմ արքունիքում:

(Առաջինին)

Դու բարձր էիր պահում գորքի ոգին, իշխան,
 Եվ դա ուզմիկներին մղեց հերոսության:
 Խաղաղ գործերդ էլ թող լինեն հրաշալի՝
 Ես բեզ եմ շնորհում սուրը ֆելդմարշալի:

Ֆ Ե Լ Դ Մ Ա Ր Շ Ա Լ

Հավատարիմ զսրբոյ կովեց ներսում երկրի,
Իսկ թե գահիդ համար դրսում նա պայքարի,
Տոհմիդ հին ամրոցում, ողջ աշխարհին ի տեսս,
Տոն կսարքենք, խնջույք, հաղթանակի հանդեսս
Ես կկանգնեմ կողքիդ, սուրս բարձր պահած,
Իբրե ցմահ պաշտպան գահի և հայրենյաց:

Կ Ա Յ Ս Ր

(Երկրուղին)

Այբ ես քաջաբազուկ և կիրթ ամենքի հետ,
Ուստի կարգում եմ քեզ ավագ սենեկապետ:
Գծվար է գործդ շատ, քանզի իմ պալատում
Պիտի կանխես ամեն սադրանք ու պառակտում
Պարկեշտ վարք ու բարբոժ ցույց տուր դու ամենքին՝
Ինչպես ևն ծառայում կայսերն, արքունիքին:

Ա Վ Ա Գ Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

Իմ պարտքն է՝ կատարել կայսեր կամքը վսեմ
Հավին պիտի օգնեմ, վատին շվնասեմ,
Կինեմ պարզ ու շիտակ, ոչ կեղծ, ոչ խորամանկ,
Որ վստահես, իսկ դա ինձ համաք շատ է թանկ:
Քույլ տուր ուրախանալ գալիք մեր հանդեսով:—
Քեզ ջուր կմատուցեմ ոսկե շքեղ թասով,
Մատանիները քո մի պահ ինձ կհանձնես,
Ձեռքերդ կլվաս, խրախճանքի կանցնես:

Կ Ա Յ Ս Ր

Ավելի լուրջ հոգսեր ունեմ ես այս պահին,
Բայց խնջույքն էլ է պետք, պահանջ է մարդկային:

(Նրբորդին)

Դու ես արքունական սեղանապետն ավագ,
Վարիր գործը որսի, թռչնանոց ու կալվածք,
Ճաշերը մեր սիրած ընտրիր ժամանակին,
Ինչպես հարմար է դա տարվա եղանակին:

Ա Վ Ա Պ Ս Ե Ն Ե Կ Ա Պ Ե Տ

Իմ պարտքն եմ համարում խստորեն սլաս պահել,
Եթե համեղ ճաշով քո սիրտը չեմ շահել:
Անխոնջ ծառայանին կամքս կկատարի,
Իվ ոչ մի խոչընդոտ գործս չի խաթարի:
Ինչ ճաշեր ես սիրում, գիտե աշխարհն արար
Սղանակին հարմար, պարզ ու սննդարար:

Կ Ա Յ Ս Ր

(Չոււորդին)

Խնջույքից ենք խոսում, ուստի և այսուհետ,
Նրիտասարդ հերոս, դարձիր մառանապետ:
Նղիր միշտ ձեռներեց, նաև բժախնդիր,
Որ մեր նկուղներում գինին լինի ընտիր:
Խորախճանքի ժամին շատ զուսպ եղիր, ժուժկալ,
Եթե դալթակղվես, ազետ կարող է գալ:

Երբ վատահում են, տեր, երիտասարդ մարդուն,
 նա անանում կարծես, դառնում է եռանդուն,
 Ինձ էլ խորն է հուզում հանդեսն այդ ապագա:
 Ինչպե՞ս կզարդարեմ սեղանն արքայական
 Ոսկյա և արծաթյա ամաններով շքեղ. .

Քայց, տեր, գյուտ կլինի քո գավաթը այնտեղ՞
 Վենետիկյան բյուրե՛ղ գինին է ցուլցլում,
 Համովանում կարծես, ուժ ու միտք չի խլում:
 Հրաշք այդ գավաթով, տեր, անվերջ կխմես,
 Քայց քո ժուժկալուծյա՛մբ մխիթարիր դու մեզ՝

Կ Ս Յ Ս Ր

Ինչ սր ձեզ հայտնեցի այս բախտորոշ պահին,
 Գուք հավատով լսեք սա խոսք է արքայի,
 Եվ չի ազդի վրան շարունակյան սչ մի թույն,
 Սակայն մեզ թուղթ է պետք վրան ստորագրություն,
 Որ վճիռը կայսեր հրովարտակ դառնաս
 Վավերացնող է պետք: Ահավասիկ և նա:

(Գալիս է արհեսլիսկոպոս-կանցլիեր):

Եթե անկյունաքար ունի ամեն կամար,
 Հավերժ կանգուն մնալն ի՞նչ է շենքի համար:
 Այս շորս իշխանի հետ, նստած այս վրանում
 Սրբունիքի գալիք հոգսերն եմ ես քննում:
 Քայց որ կառավարեմ ամբողջ մի կայսրություն,

Հինգերորդ մարդն է սկտք հմուտ և իմաստուն
 Սյա հնգյակի դիրքը լի հարուցի կասկած,
 Եթե ձեզ նվիրեմ կալվածներն այն մարդկանց,
 Ովքեր երես դարձրին մեզնից ստորաբար:
 Ես իրավունք եմ ձեզ տալիս անվերապահ
 Կարող եք այդ հողերն ազատ ընդարձակել
 Վերցնել ժառանգաբար, գնել, փոխանակել:
 Կանոսեմ նաև արտոնություն վերին,
 Իր տրված է միայն ազդու իշխաններին
 Գատավորներ եղեք դուք ձեր սահմաններում:
 Ձեր վճիռն է օրենք՝ պատիժ և կամ ներում:
 Ձերն են կոռ ու բահրա, մաքս, հանք, աղի հարկեր,
 Կարող եք դուք հատել նաև դրամը ձեր:
 Տլարք, ես, ի արիտուր, ձեզ բարձրացրի այնքան,
 Իր գրեթե հասցրի գահին արքայական:

Ա Վ Ք Ե Պ Ե Ա Կ Ո Ղ Ո Ս

Երախտապարտ ենք, տեր, գոհություն ենք հայտնում,
 Է սյո մեր հպարտությամբ ինչդ էս հպորսնում:

Կ Ա Վ Ս Մ

Արժանացնում եմ ձեզ և գերագույն պատվին:
 Լի եմ կյանքի տենչով, ապրում եմ տակավին,
 Ե այց կարող է ազնիվ նախնիներիս շղթան
 Ինձ ետ քաշել, տանել գիրկը անէության:
 Երբ ես լրեմ հանկարծ մարդկանց մոտիկ ու թանկ,

Ձեր պարտքն է սրբազան՝ ընտրել գահաժառանգ՝
Քագաղրվածք թող խաղաղ կարգավորի
Այն, ինչ պատճառ դարձաւ այսքան աղետներէ:

Ա Ր Ք Ե Պ Լ Ս Կ Ո Պ Ո Ս

Անշափ հպարտ ենք մենք մեծերն այս աշխարհի,
Գլուխ ենք խոնարհում քո առաջ, տեր բարի:
Քանի դեռ մեր սրտում վառ է եսքը արցան,
Մենք քո կամքով շարժվող մարմինդ ենք սեփական:

Կ Ա Յ Ո Ր

Թող, ի վերջո, այստեղ ընդմիշտ վալերացվի՞
Այն, ինչ բաղձանքը մեր և կամքն է հիրավի,
Դուք ձեր կալվածների տերերն եք պատվարժան,
Քայց մի պայման հողը շանեք բաժան-բաժան:
Որքան էլ մեծացնեք ձեր կայքը, վերստին
Դրանց օրինական տերն է ավագ որդին:

Ա Ր Ք Ե Պ Լ Ս Կ Ո Պ Ո Ս

Կամքդ մագաղաթին ես կհանձնեմ սրտանց,
Ի մեծ բարօրություն թե մեր, թե՛ հայրենյաց,
Դպիրը կարտագրի հրովարտակն շտապ,
Սվ դու կհաստատես քո սուրբ ստորագրությամբ:

Կ Ա Յ Ս Ր

Սրգ, գնացեք աղատ, որ օրն այս փառահեղ
Իր ողջ անցուդարձով կշռադատեք մեկտեղ:

(Աշխարհական իշխանները հեռանում են)

Հ Ո Ք Ե Վ Ո Ր Ի Շ Ե Ա Ն

(Սնում է և խոսում կրֆով)

Կանցլերն, արքա, գնաց, հովվապետը մնաց:
Իս լի եմ տագնապով, ահով տառապանաց,
Իմ հայրական հողում ցավ կա դժոխային:

Կ Ա Ի Ս Ր

Խոսիր ի՞նչ, ցավ ունես մեր ցնծության պահին:

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Ո ի նշ դուր կսկիծ օծյալ արքադ հզոր
Կաշնակից ևս դարձել սատանային այսօր:
Կահդ գուցե հիմա թվա հույժ հաստատուն,
Ասկայն ծաղրել ևս դու Հոռմի պապին, աստվուն՝
Երբ մեր հայրը լսի, քեզ կպատժի խստիվ,
Կովերի սուրբ ցասմամբ երկիրն այս անպատիվ:
Չի մոռացել, որ դու օրը թագադրման
Փակել ևս կախարդին՝ դատապարտված մահվան,
Կ'ս պսակից հառնող գթո շողն առաջին,

Ի վնաս քրիստոնեից, շնորհել ևս վատին:

 Զղշա, կուրծքդ ծեծի բ և մայր եկեղեցուն

 Մեղսոտ ևրջանկության մի մասը տուր խսկուհի:

 Շրջակայքն այն բլրի, ուր մեծ վրանն էր քո

 Ուր դու էիր շարչաց սև հովանու ներքո,

 Ուր քո խորհրդատուն կեղծ իշխանն էր այն լար:

 Տուր մեզ, որ մենք այնտեղ կառուցենք նոր տաճար:

 Մեզ տուր բարձունքների արտոնները, արքա,

 Անտառները անծայր, լեռնապարը հսկա,

 Լճերը ձկնատատ, առվակները անթիվ,

 Որ օձաձև դաշտ ևն վազում գիշեր ու տիվ,

 Մեզ տուր հովիտը լայն՝ իր գլուպերով հանդերձ,

 Եվ դու միայն անժամ կրավես մեզքդ մեծ:

Ե Ա Ս Է

Ծանրությունից մեղդիս ցնցված է իմ հոգին,

 Սահմանը հոգերի թողնում էմ քո կամբին:

Ա Ր Է Ե Պ Է Ս Կ Ո Ղ Ո Ս

Այո, պղծված վայրում վարպետները ճարտաբ

 Տաճար թող կառուցեն տիրոջ համար արդար:

 Պարզ եմ սլատկերացնում ամեն ինչ մի առ մի

 Արևն է վաղորդյան փարվել եզրին բեմի,

 Պատերն են բարձրանում և շենքի նավն ազդու

 Վեր է ձգվում ի խինդ հավատապլալ մարդու:

 Ամբոխն է շերմեռանդ սուրբ սեմից ներս հորդում:

Ղողանջն է անդրանիկ արգեն հնչում հովտում,
Կանչում երկինք միտվող բարձր աշտարակից,
Սեղանչողն է գալիս, մաքրվում իր մեղքից:
Հեռու չէ օրն օժման, այդ պահը շուտ կգա
Եվ քո ներկայությամբ կզարդարվի, արքա:

Կ Ա Յ Ս Ր

Որ բարեպաշտ եմ ես, թող գործն ի լույս հանի,
Մեզքս իսպառ լվա, աստծուն փառաբանի,
Բավ է, խորն եմ զգում, որ վեհացա մտոք:

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

Բայց կանգչերին պետք չէ՝ ձևական կողմն արդյոք:

Կ Ա Յ Ս Ր

Այո, ձևակերպիր թղթերն ըստ օրինաց,
Հրովարտակը ես կատորագրեմ սրտանց:

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

(Ղուխ տալով դուս 1 գեում, բայց դուան մոտից էտ Է
դառնում)

Ընդմիշտ սրբարանին թող պատկանեն, արքա,
Եկամուտներն ամեն՝ տասանորդ, կոռ, բահբա,
Չէ որ պարտ ու պատշաճ շուքը նոր տաճարի
Ծախսեր կպահանջի, մեծ հոգս կպատճառի:

Եթե քո ավարից մեզ էլ բաժին հանես,
Գործն ամայի վայրում ոսկով կարագացնես,
Ասեմ նաև, որ դու պետք է մեզ տաս ձրի
Որոշ պաշար փայտի, թերթաքարի, կրի:
Երբ ժողովուրդն էլ դա անվարձ տեղափոխի,
Եկեղեցին կօրհնի զավակներին հողի:

(Ռուս է գևում)

Կ Ա Յ Ս Ր

Մանր է մեղքս իրոք, և հատուցումն է թանկ,
Կրակն է ինձ գցել կախարդն այն խորամանկ:

Ա Ր Ք Ե Պ Լ Ս Կ Ո Պ Ո Ս

(Վերադառնալով և խոր գլուխ տալով)

Ներիր, արքա: Այն հույժ վատահամբավ մարդուն
Մովափը դու տվիր ի տնօրինություն,
Բայց եթե նա չտա տասանորդ, կոռ, բահրա,
Նզովքն եկեղեցու կիջնի գլխին նրա:

Կ Ա Յ Ս Ր

(Խոժոռվելով)

Հող գեռ չկա, ափը հատակ է օվկիանիւ

Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ա Ռ Պ Ո Ս

*Բայց ով համբերութիւնն և իրավունք ունի,
Նրա օրը կգա: Դու խոստացիք հիմա:*

(Դուս է զնում)

Կ Ա Յ Ո Ր

(Միայնակ)

Եթե այսպես գնա, երկրից բան չի մնա

ԱՐԱՐՎԱԹ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Հարթալայր

Օ Տ Ա Ր Ա Կ Ա Ն

նույն լորիններն են սլացիկ
Իրենց շուքով հնօրյա
Թափառեցի երկար ու ձիգ,
Սակայն այստեղ եմ ահա:
Նույն վայրն է սա, նույն հյուղը մունս,
Ուր ապաստան ինձ տվին,
Երբ ալիքը փոթորկաշունչ
Ինձ թավալեց ավազին:
Կուզենայի օրհնել սրտանց
Փրկողներին իմ արի,
Բայց կտեսնե՞մ արդյոք նրանց
Մեռ էր զույգը այն բարի:
Ախ, ի՞նչ ազնիվ մարդիկ էին:
Էախե՞մ, զոչե՞մ. «Ձեզ ողջո՞ւյն,

Եթե խինդ է բերում կրկին
Արդար գործը ձեր հոգուն»:

Ի Ա Ո Ի Կ Ի Ս

(Ջառամյալ կին)

Կամա ց, կամա ց, ճամփորդ Եղբայր,
Ամուսինս թող քնի,
Թող ձերունին քնով երկար
ԳԼԹ հարճատե ուժ առնի

Օ Տ Ա Ի Ա Կ Ա Ն

Մա յր իմ, քե՛զ Լճ Իրախոտապարտ,
Վո՛ւ ևս կիննն այն ուր մի օր
Փրկեց կյանքս իմ Լրիտալարդ
Ամուսնու հետ ալևոր:
Բա՛ռեկիսն ես այն կարեկից,
Դո՛ւ մեռնողիս տվիր կյանք:

(Վալիս է ամուսինը)

Նիկեմո՛սն ևս դո՛ւ հորձանքից
Ափ հանեցիր դանձ ու կայք...
Նույն դանգակը արծաթաձայն
Նույն կրակը բոցկլտուն:
Ահ էդ ժամին այն փորձության
Ձեր ջանքերով դարձա տուն:

Հիմա գնամ, ծովը դիտեմ
Մովն անսահման, անվրդով,
Եվ ծունր իջնեմ, և աղոթեմ
Ես լի հոգով, լի սրտով:

(Ավագուտով քայլում է տուաջ)

Ֆ Ի Լ Ե Մ Ո Ն

(Բառուկիսին)

Սուփրա փոխր այգում ծաղկած:
Թող նա շրջի խնդագին,
Ինչ էլ տեսնի այստեղ հանկարծ,
Չի հավատա իր աչքին:

(Օտարականին մոտենալով)

Այն ափն, ուր ձեզ նետեցին դաժ
Ալիքները փրփրադեզ,
Տեսնում եք դուք արդեն դարձած
Եղեմական մի պարտեզ:
Շատ էի ծեր գործի համար,
Անգոր տքնել այլոց հետ,
Բայց մինչ մարեց իմ ուժն իսպառ,
Մովը արդեն քաշվեց ետ:
Շարել են, տես, ամբարտակներ
Անթիվ ճորտեր կոռսվի,
Ընդմիջտ սանձել աղետաբեր

Քմայքները այս ծովի:
Նայիր գյուղեր, անտառ, այգի,
Սեզ ու կանաչ անհատնում
Է այց եկ, մեղ հետ հաց ճաշակիր,
Արեգակն է մայր մտնում:
Առագաստներն հեռաստանի
Որոնում են հանգրվան:
Քոչունը միշտ բույն կգտնի
Նավահանգիստ կա թող գան:
Էլ շես տեսնի այնքան մոտիկ
Ծովն իր կապույտ հորձանքով,
Ամենուր են արդեն մարդիկ
Կյանք վայելում ասլահով:

(Սյգում սեղան է բացված երեք հոգու համար):

Թ Ա Ո Ի Կ Ի Ս

Հո՞տու ես, ծարավ քո շուրթերին
Չե՞ս մոտեցնում ոչ մի բան:

Ֆ Ի Լ Ե Մ Ո Ն

Հավ ես պատմում, եկ մեր հյուրին
Հայտնիր հրաշքն անպայման:

Ք Ա Ո Ի Կ Ի Ս

Այո, հրաշք մինչև այսօր
 Ինձ հանգիստ չի տալիս դա,
 Այստեղ ինչ որ խորհրդավոր
 Մի գաղտնիք կա, հավատա:

Ե Լ Ի Ն Ս Ի Ն

Մեղանշե՛լ է արդյոք արքան,
 Որ ծովափն է տվել ողջ:
 Մունետիկը պալատական
 Չազգարարե՞ց բարձրագույ:
 Արմատ գցեց ավազուտում
 Մեր ցանած սերմն անդրանիկ,
 Վեր բարձրացան զով թափուտում
 Տներ, դղյակ Լրկնաձիգ:

Ր Ա Ո Ի Կ Ի Ս

Ճորտերն իզուր էին տքնում,
 Զուր էր աղմուկ ու զնգոց,
 Ամբարտակն էր վեր բարձրացնում
 Գիշերները ինչ որ բոց:
 Արչուն-քրտինք էին թափում,
 Բայց հաշորդ օրն, ո՛վ հրաշք,
 Որտեղ բոցն էր մուխը լափում,
 Այնտեղ ծփում էր ջրանցք:
 Սնաստված է եկվորը նա

Կխլի տուն ու պարտեզ,
Հարեան էլ թե ձեանա,
Պիտի անձայն խոնարհվես:

Ֆ Ի Լ Ե Մ Ո Ն

Չի ստիպում: Հովտում կտա
Նրգավանդ հող, իմ անգին:

Ք Ա Ո Ի Կ Ի Ս

Քարձունքն է լավ, մի հավատա
Դու այդ ծովի հատակին:

Ֆ Ի Լ Ե Մ Ո Ն

Եկ բարձրանանք զանգակատուն
Նու վերջալույսը դիտենք,
Ապավինած մեր հին աստծուն՝
Չլրմ, ծնրադիր աղսթենք:

ՊԱՍՏ

Ընդարձակ այգի՝ ծաղկանոցով Պարսպապատ մեծ
ջրանցք Խոր ծերուք յան հասած Ֆառաստը
մտախոհ շրջում է:

Լ Ի Ն Ք Ե Ո Ս

(Աշտու աղապահ գինվոր, ձայնափողը ձեռքին)

Արեն արդեն մայր է մտնում,
Վերջին նավերն ահա եկան,
Ջրանցք մտավ, լողաց մթնում
Մի լաստանավ հսկայական:
Իրոշներն եմ տեսնում ծփուն,
Կայմերն ուղիղ ձգված են վեր,
Բոցմանն է քեզ հղում ողջույն,
Բախտ ցանկանում ողջանվեր:

(Ավագուտում զանգ է դռանը)

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

(Սարսուռով)

Նզովյա՛լ դողանջ Որպես անարգանք,
Հնչում է, խոցում, իբրև սուր դաշույն:
Սողում անծայր տերություն ու կայք,
Եսեում՝ միայն խոցող դառնություն:

Այդ նենգ դողանջն է հիշեցնում կրկին
Որ ես շեմ այստեղ տերը լիիրավ,
Իմը չէ զառամ այս եկեղեցին,
Շենքերը այս գորշ, պուրակը այս թավ:
Ուզեցի տրվել անդորր բերկրանքիս .
Սոսկում եմ օտար ստվերից անգամ,
Միշտ փուշ եմ զգում ոտքիս մեջ, աչքիս
Կավ չէ՞ հեռանամ, էլ այստեղ շգամ:

Ա Շ Տ Ա Ր Ա Կ Ա Պ Ա Հ

(Ինչպես վերևում)

Հողմն է փշում, նավն է արագ
Սուրում, սահում ջրանցքն ի վեր,
Հեռվից թվում էն աշտարակ
Լեցուն սլարկեր ու արկղներ:

(11 դ յաստանավ, առատուեն բևեռավորված օտարերկրյա
բազմատեսակ ապրանքներով)

Սև թիստոֆելյ նյութ հզորներ

Խ Ո Ւ Մ Ք

Կս նգ առ, մեր նավ,
Արդեն հասար,
Մեր պարոնին
Ողջո՞ւյն հազար:

(Իջնում են, բեռը ափ հանում)

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Մեծ փորձության բովով անցանք,
 Չգովելն է ծանր հանդանք:
 Երկու նավով դուրս եկանք ծով,
 Վերադարձանք քսան նավով:
 Գործեր արինք հերոսական,
 Մեր ավարն է դրա վկան:
 Ազատ ծովում ազա՛տ ոգի.
 Չի կաշկանդում և ոչ ոքի
 Խոհեմության ձեռքը բնավ. .
 Հասիր, որսա թե՛ ձուկ, թե նալ:
 Հենց տեր դառնա՛ երեք նավի,
 Կգա շորրորդն էլ հիրավի,
 Հինգերորդն էլ կտիրես դու.
 Իրավունքը ուժն է մարդու:
 Կհարցնեն «ի՞նչ», ոչ թե «ինչպե՛ս»,
 Այլ ճանապարհ չգիտեմ ես:
 Ուզմ, կողոպտտ և առևտուր
 Նույնը բանը շե՛ն, պատասխան տուր:

Ե Ր Ե Ք Հ Ձ Ո Ր Ն Ե Ր

Ոչ գոհություն,
 Ոչ էլ ողջույն:
 Կարծես թե մենք
 Գործել ենք մեղք:
 Նայում է մեղ

Գժգոհ այնպես
Արքային է գանձն այս վայել,
Իսկ նա շի էլ ուղղում նայել:

Խ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Ձուր շսպասեր
Վարձատրության,
Ձեր բաժինը
Սա է միայն:

Հ Ձ Ո Ր Ն Ե Ր

Ի՞նչ, այսքան քի՞չ,
Մա՞ղր է, կատա՞կ:
Ոչ, հավասար
Բաժին կտաք:

Ա Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Գանձերը ողջ
Կիտեք ի տես
Իրենդ շուքով
Թող գան հանդես:
Կա՞վն ու վատը
Գուցե գատի,
Սեր ավարը
Գնահատի
Ժլատություն

Գուցե շանի,
Մեղ հետ սրտանց
Խրախճանի:
Նախշուն ճայեր վաղը կգան,
Երանց մասին ես կհոգամ:

(Ավարը սանում են)

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Ֆաուստին)

Նայում ես դու խոժոռ, դժգույ,
Քո այս բախտին վսեմագույն
Սովն ու ամին են հաշտ հավխալան,
Պսակն է դա հմաստության:
Սովը նավերն ամեն անգամ
Առնում է իր գիրկն ինքնակամ:
Քո պալատից, ճիշտ չե՞մ ասում,
Ողջ աշխարհին ձեռք ես պարզում:
Այստեղ սկիզբ դրվեց գործին
Այստեղ շինվեց հյուղն առաջին,
Եվ փոս փորվեց. նախկին փոսում
Ղեկն է այսօր ջուրն ակոսում,
Ճարտար մտքով, անխոնջ գործով
Շահել ես դու ցամաք ու ծով:
Այստեղ

Նզո՛վք այդ «այստեղին»:
 Հենց դա է, դա անտանելին:
 Խորամանկ ես, ճարպիկ այնքան,
 Օգնիր, ունեմ ես խոր կսկիծ,
 Ծա՛նր է. . . Ինչպե՞ս ասեմ, սակայն,
 Ամաշում եմ ես այդ խոսքից:
 Մերուկներն ինձ եթե զիջեն,
 Կանեմ լորուտն աթոռանիստ:
 Այդ ծառերը, որ իմը չեն
 Թույլ չեն տալիս իշխեմ հանգիստ:
 Ես աշտարակ կկառուցեմ,
 Պարզ կփուլի հայացքիս դեմ
 Ողջ հարթավայրն այս ծայրեծայր,
 Որն իմ ջանքով եկավ աշխարհ:
 Ես կտեսնեմ մարդու ոգու,
 Խորունկ մտքի հրաշքը նոր,
 Որով քանի՛, քանի՛ հոգու
 Նա օթեան տվեց անդորր:
 Լինել հարուստ, զգալ կարիք—
 Կա՞ ասավիլ տանջող շարիք:
 Զանգ, լորու բույր . և անպատճառ
 Ես կհիշեմ շիրիմ, տաճար .
 Պիտի բեկվի՞ ավազներում
 Այն, ինչ հզոր կամքն է վճռում:
 Ի՞նչ անեմ ես, ձայնը զանգի
 Վրդովում է սիրտ ու հոգի:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Կարող է այդ պատճառն ազդու
 թունավորել կհանքը մարդու
 Այո, ոչ մի ազնիվ ահանջ
 Չի հանդուրժի զանգի զողանջ:
 Սրդ նդովյալ ձաւնն անդադրում
 Պարզ երկինքն է միշտ պղտորում,
 Կնունքից մինչ ծեսը թաղման
 Միջամտում է անպայման:
 Իբր իր դեմ կհանքն ի՞նչ է որ—
 Միայն երազ մի անցավոր:

Ֆ Ա Ռ Ի Ս

Համառում են, որ խաթարեն
 Հաղթանակիս փառլը գերող,
 Հոգնել եմ ես և չեմ կարող
 Սրդալուադատ լինել արդեն:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ի՞նչ ես քաշվում, թող շուտ գաղթեն,
 Երկա՞ր պիտի քեզ կաշկաւէլեն:

Ֆ Ա Ռ Ի Ս

Գնա, նրանց հովիտը տալ,
 Այն կալվածքը գեղանկար
 Որ նրանց եմ քաժին հանել:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Այնպես կարող եմ էս տանել,
Որ ուշքի գան ցածում միայն:
Բռնաթշուր կմոռանան
Հանգրվանում այդ աննման:

(Ուժգին սուլում է Երեմ հզուների գալիս էն):

Վաղը, տոնն է նաժաղների,
Թող ձեր խավքն էլ շնորհ բերի:

Ե Ր Ե Ք Զ Զ Ո Ր Ն Ե Ր

Պարսներ մեզ ընդունեց վատ,
Բայց քեֆ կանենք, դա լավ է շատ:

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Հանդիսականներին)

Նման է սա հին առակին.
Նարո՞ր այդպես զիջեց այգին:

(Գիւ Լ քաղալուաց, 1, 21)

ԽՈՐ ԳԻՇԵՐ

Լ Ի Ն Ք Ե Ո Ս

(Ամբողջ հսկելով երգում է)•

Մնված եմ, որ տեսնեմ,
Նայեմ անդադրում,
Աշտարակն այս վսեմ,
Աշխարհն եմ սիրում:
Եայում հեռուներին,
Մոտերքն եմ դիտում,
Տեսնում աստղ ու լուսին,
Վիթեր թախտատում:
Հավերժ գեղեցկության
Շո՛ւնչ երկնի ներքո
Ե վ աշխարհից համայն,
Ե վ ինձնից եմ զոհ:
Ինչ ձեր շուրջն եք տեսել,
Աչքերու երջանիկ,
Ցանկալի է եղել,
Այնքա՛ն գեղեցիկ:

(Իադալ)

Քայց բերկրանք չէ միայն հառնում
Քարձունքն ի՛ վեր ինձ նորից
Ինչ որ սարսափ է սպառնում
Խուլ գիշերվա խորքերից,
Ահա կայծեր թռան դես-դեն

Թանձրախալար լորուտում,
 Տարածվում է կրակն արդեն,
 Հողմի շնչից բոցկլտում:
 Մ՛խ, այրվում է խրճիթը հին
 Թեև խոնավ է, մամոտ,
 Ո՞վ կփրկի թշվառներին,
 Ոչ ոք չկա հյուղի մոտ:
 Ափսո՞ս, բարի ծերունիներ,
 Սոսկում էին կրակից,
 Բայց տունն այրվում է յիմն ի վեր,
 Եվ չկա մարդ կարեկից:
 Բորբոքվում է բոցն անխնա,
 Տան սև կմախքն է մնում .
 Կոնե զույգը շմոխրանա
 Այդ հրեղեն դեհենում:
 Կայծակի պես նետվում են վեր
 Լեզուները բոցերի,
 Լափում անթիվ զալար ճյուղեր,
 Ծառաբներ վիթխարի:
 Աչքե ր, ազետն ինչո՞ւ տեսաք
 Ինչո՞ւ եմ ես հեռատես
 Ընկնող ծառի ծանրության սակ
 Փլվեց մատուռն էլ կարծես:
 Կատարներին բոցը հասնում,
 Գալարվում է օձաբար,
 Արջան փալլով է շիկանում
 Մինչ արմատներն ամեն ծառ:

(Երկար դադար, ապա երգեգոհություն)

Ինչ դարերով էր հիացնում,
Հոգ ու մոխիր է դառնում:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

(Ավագուտնեի ին նայող սլատշգամբում)

Ի՛նչ թախծոտ երգ այս ուշ պահին,
Պահնորդն ինչպե՞ս է մորմոքում,
Սլա՛ղ, հրդեհն այս դիվային
Վերք է բացում և իմ հոգում:
Հորուտն եղավ հրո ճարակ,
Բայց նույն վայրում կկատուցեմ
Մի բարձրաբերձ նոր աշտարակ,
Որ ողջ հեռուն բացվի իմ դեմ:
Մերուկներին կտամ նոր տուն,
Կղզան, որ մարդ չեմ անհոգի,
Եվ թող այնտեղ ապրեն խնդուն
Վերջին օրերն իրենց կյանքի:

Ս Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ Ե Վ Ե Ր Ե Ք Զ Գ Ո Ր Ե Ե Ր

(Ներքևից)

Շտապ եկանք, ներիր դու մեզ,
Վատ վերջացավ բանն իսկապես:
Ս Լ նք բախեցինք երկա՛ր երկա՛ր,

Սակայն իզուր, բացող շկար:
 Եվ ջարդեցինք մենք ուզղակի
 Փտած դոնական այն հյուղակի:
 Սպառնացինք ծերուկներին,
 Ոչ մի բանի տեղ չդրին,
 Լսել անգամ շկամեցան
 Ոչ մի խոստում կամ հրաման:
 Արդեն անցավ բանը բանից,
 Ուզեցինք դուրս հանել տանեց,
 Բայց սարսափից դուլզը ձեռաց
 Շունչը փչեց, ընկավ մեռած:
 Հյուր կար օտար, ելավ կովեց,
 Սա էլ տեղում անշունչ փովեց:
 Կովի պահին մեկ էլ հանկարծ
 Զոր խստի մեջ թուսվ մի կայծ,
 Բոցը արագ նետվեց շորս դին,
 Տան հետ վառվեց երեքի դին:

Ֆ Ա Ո Ի Ս Տ

Փոխել էր պետք տեղը հին տան,
 Ոչ թե դիմել նենգ բռնության:
 Վայրագության համար անմիտ
 Ես նդովում եմ բոլորիդ:

Խ Ո Ի Մ Բ

Հնոց խոսք է, հնոց պատգամ.
 Ուժին անսա դու ինքնակամ,

Իսկ թե քաջ ես, կովի ելնես,
Գրավ դիր կայք, տուն-տեղ ե քեզս

(Կենում են)

Ձ Ա Ո Ւ Ս Տ

(Պատշգաւքում)

Մշուշն աստղերն է պարտւրում,
Հեռվում հրդեհն է մարմրում,
Հովհարում է քամին երկշոտ,
Բերում է ծուխ և խանձահոտ:
Հապճեպ վճիռ, հապճեպ ոճի՛ր
Ի՞նչ ստվերներ են ցանուցիր՝

ԿԵՍԿԻՇԵՐ

Հայտնվում են չորս աշեհեր կի՛ն

Ա Ռ Ա Ջ Ի Ն Կ Ի Ն

Անունս Պակաս է:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Կ Ի Ն

Ես Պարտքն եմ, քույրիկ:

Ե Ր Ր Ր Ո Ր Դ Կ Ի Ն

Իմ անունը Հոգս է:

Ջ Ո Ր Ր Ո Ր Դ Կ Ի Ն

Իսկ իմը՝ Կարիք:

Ե Ր Է Ք Ո Վ

Բայց փակ է այս դուռը, ինչպե՞ս ներս մտնենք:
Տանտերը հարուստ է, այստեղ դուրժ չունենք:

Պ Ա Կ Ա Ս

Կփռիսվեմ ստվերի:

Պ Ա Ր Տ Ք

Ես ոչ մի բանի:

Կ Ա Ր Ի Ք

Նա չի էլ նայի ինձ, հաշվի չի առնի:

Հ Ո Գ Ո

Քույրեր իմ, ձեր առաջ դուռն է փակ մնալու,
Բայց Հոգսը կմտնի անցքից էլ բանալու:

(Հոգսը շփտնում է)

Պ Ա Կ Յ Ս

Քույրեր իմ, գնանք շուտ, այստեղ ի՞նչ անենք՝

Պ Ա Ր Տ Ք

Գալիս եմ, ամեն տեղ անբաժան ենք մենք՝

Կ Ա Ր Ո Ք

Ինչպես միշտ, Կարիքն էլ ձեզ հետ է հիմա՝

Ե Ր Ո Ք Ո Վ

Ամպերը ելնում են, աստղերն են մարում,
Հեռվից ենք, հեռվից ենք մենք պարզ նշմարում,
Եկավ մեր եզրայրը, որ կոչվում է . Սահ:

Յ Ա Ո Ր Ս Տ

(Դոյակում)

Չորսը եկան, Երեքն են հեռանում:
Նրանց խոսքերը ես չեմ հասկանում,
Բայց լսեցի կարծես «Կարիք .. հիմա ..»,
Դրանց հետ հանգ կազմող մի ժանտ բառ «մահ»:
Ի նչ խուլ ձայներ, մշուշ, ուրվականներ .
Կախարդանքից ես չեմ ազատվել դեռ՝
Ա՛խ, եթե դա վանել կարենայի,
Խոսքերը մոգական մոռանալի,
Մա՛րդ լինեի, սոսկ մա՛րդ, մա՛յր բնութիւն,
Մարդ լինելը վեհացնում է մարդուն:

Մարդ էի, բայց խոսքով մի դժնդակ
 Աշխարհն ու ինձ դրի նզովքի տակ:
 Շուրջս վխտում են ուրուները շար,
 Եվ շեմ տեսնում ոչ մի հնար ու ճար:
 Երբ օրն է պարզ, գիշերն արդեն խոռով
 Մտքերս է խճճում տեսիլներով:
 Մաղկած դաշտից ուրախ գալիս եմ ետ
 Եվ ի՛նչ, կոռոց: Ի՞նչ է գուժում, աղե՛տ:
 Նախապաշարումը ցանց է դառնում,
 Ամեն դիպվածի հետ ինձ սպառնում:
 Սիրտս ահից հիմա էլ սարսուղ
 Ոչ որ շկա, թեև դուռը ճստաց:

(Յնգվելով)

Մեկը եկա՞մ:

Հ Ո Ք Ս

Սյո, այդ ես եկա:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Իսկ ո՞վ ես դու:

Հ Ո Ք Ս

Մեկը, որ պետք է դա:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Զքվիբր:

385

Հ Ո Ք Ս

Իմ իսկական տեղն եմ եկել:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

(Նախ զայլուցած, ապա մեզմտնալով՝ ինքե իւրե)

Պետք չէ կախարդական խոսքեր հեզել:

Հ Ո Ք Ս

Եթե շուղես ականջ անել,
 Սրտիցդ չես կարող վանել:
 Իմ տեսքն եմ ես անվերջ փոխում,
 Բայց իմ առաջ ո՞վ չի դողում:
 Ճամփին, ծովում փոթորկալի
 Ուղեկից եմ անցանկալի:
 Չփնտրեն էլ, միշտ կգտնեն,
 Կնզովեն կամ կքծնեն:
 Հոգսին երբեք չե՞ս հանդիպել:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Աշխարհն եմ ծայրեծայր ես շափշփել,
 Ինձ չեմ զրկել և ոչ մի հաճույքից,
 Չեռք եմ քաշել, ինչ չի գոհացրել ինձ,
 Եվ կորցրածի համար չեմ տառապել:
 Ոչ մի ձգտում չեմ թողել անկատար,
 Չգտել ու ցանկազել եմ անդադար:

Կյանքս անցավ անսանձ փոթորկի պես,
 Հիմա խոհեմ, շրջահայաց եմ ես,
 Սյս աշխարհին ա՛յլ աչքով եմ նայում,
 Իսկ անդրաշխարհն արդեն լի հմայում:
 Խենթ է, ով խաբում է ստով իրեն,
 Հանդերձյալից կառչում անմտորեն:
 Շա՛տ բան կասի աշխարհն անխոնջ մարդուն,
 Երբ նա հողին կանդնած է հաստատուն:
 Ինչո՞ւ հավերժությամբ իզուր տարվի,
 Երբ ինչ տենչա, այստեղ կկատարվի,
 Իր երկրալին ուղին կանցնի անվախ
 Եվ ո՛չ մի ուրվական, ոչ մի ճիվաղ...
 Վիշտն ու բախտը ձգտումներն են միայն,
 Մարդը չի հագննա կյանքից ոչ մի վայրկյան:

Հ Ո Ք Ս

Երբ որսում եմ հանկարծ մեկին,
 Սթնում է ողջ աշխարհն աչքին,
 Հավերժ խավար, էլ ո՛չ մի հույս,
 Ոչ արշալույս, ո՛չ վերջալույս:
 Զգացմունքներն են կատարյալ,
 Ըացց խավար է ներսում դարձյալ,
 Թեկուղ և տաս դանձն աշխարհի,
 Լնչի՞ն է սլետք կույր թշվառի:
 Բախտ, ցավ տանջանք են անխնա,
 Լիության մեջ քաղցած է նա
 Եվ միշտ վաղվանն է ապարդյուն

Թողնում բերկրանք ու դառնություն,
Գալիքին է ապավինում,
Որին երբեք նա չի հասնում:

Յ Ա Ո Ի Ս Տ

Չքվի՛ր: Ինձ նեղը շեռ լծի ալդպես,
Բայց տաղտկալի են խոսքերը դատարկ:
Քո այդ լացուկո՞ծով աննպատակ
Իմաստունին էլ դու կխենթացնես:

Հ Ո Գ Ս

Ի՞նչ անի նա՛ գնա՞, մնա՞:
Ո չ կվճռի, ո չ կիմանա,
Եվ մեջտեղում ուղիղ համփի
Կտատանվի, կխարխափի:
Ոչ մի բան չի թվում շիտակ,
Ողջ աշխարհն է կեղծ լույսի տակ:
Արդեն տանջվում է շնչասպառ,
Բեռ է իր թե ալոց համար,
Ո՛չ մեռած է, ո չ կենդանի,
Ո չ նվիրված ինչ որ բանի,
Ոչ այդ բանից հիասթափված:
Անզուսպ խոռվք, ցավոտ կասկած,
Մերթ հույս ու մերթ վհատություն,
Կամ կիսաբուն, կամ կիսարթուն,
Սա է տեղում նրան մեխում,
Սա է նրան դժոխք մղում:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Զազի ր ուրվականներ, հազար ձևոջ
 Դուք խարանում եք ցեղը մարդկային,
 Սնգամ սովորական օրն անվրդով
 Դարձնում եք տանջանաց քառս մթին:
 Գիտեմ, որ դեերից ազատվելն է գժվար,
 Ոգու շղթան փշրելն է անհնար,
 Բայց, Հոգս, շեմ խոնարհվի ուժի առաջ քո մութ,
 Իշխանության առաջ դարանամուտ

Հ Ո Գ Ս

Կխոնարհվես, երբ ես, ի տրիտուր,
 Պատժեմ պոռթկումն անմիտ քամահրանքիդ.
 Եթե մարդիկ ամբողջ կլանքում են կույր,
 Դու կուրացիր, Ֆաուստ, վերջում կլանքիդ

(Փչում է սչֆերին)

Ֆ Ս Ռ Ի Ս Տ

(Մուրանում է)

Գիշեր իջավ, գիշեր մի սոսկալի,
 Բայց իմ ներսում լո՛ւյս կա արեգական,
 Աճապարեմ, իդձն իմ նվիրական
 Իրագործեմ ուժով տիրակալի:
 Ոտքի ելեք, ջանք թափեցեք, ճորտեր,
 Ծրագիրս դսրձրեք իրողություն,

Քլունգ ու Բահ գործի դրեք իսկույն,
Թող կատարվի, ինչ երազանք է դեռ
Ազնիվ ջանքի համար ամեն մեկի
Բարձր պարգև եմ ես ձեզ խոստանում:
Ի՞նչ գործ գլուխ չի գա այս աշխարհում,
Երբ հազարն են մի սիրտ ու մի հոգի՞

ԳՂՅԱԿԻ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱԿ

Ջահելը

Մ Ն Ֆ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Առջևում, իբրև վերակացու)

Եկե՛ք, եկե՛ք, շո՛ւտ, լեմուրներ՝
Մկաններից, ոսկորներից
Հյուսված դողդոջ արարածներ,
Շո՛ւտ, հոճվելով եկեք նորից՝

Լ Ե Մ Ո Ի Ր Ն Ե Ր

(Խմբով)

Ահա գալիս ենք միասին,
Չէ՞ որ կամքիդ միշտ ենք հլուս
Ասա, այս լայն երկրամասին
Իրո՞ք մենք ենք տիրանալու՞

Ա՛յ, բերել ենք սուր սուր ճողեր,
Հող շափելու երկար շղթա,
Քայց թե ինչու ես կանչել, տեր
Մենք մոռացել ենք, հավատա

Մ Ի Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Վարպետութիան հարկ էլ չկա,
Չափն հասակն է ձեզնից մեկի
Ո՛վ երկար է, թող նա պառկի,
Փորեք, գործը գլուխ կգա:
Լավ խորացրեք քառակուսին,
Ինչպես վարվել են ձեր նախնիք:
Ճոխ պալատիդ խուղն այս նեղլիկ .
Մարդու վախճանն ինչքա՛ն է սին:

Լ Ե Մ Ո Ի Բ Ն Ե Բ

(Հողը փուռում են ծաղրակյա՛ն ծամածուրփյուններով)

Ինչքա՛ն էր լավ, երբ ողջ էի,
Չահել էի, սիրահարված,
Որտեղ հնչեր նվագ ու երգ,
Այնտեղ էի վազում տարված:
Քայց մահակը նենգ ծերութիան
Ս ր սր գլխիս տվեց հարված,
Սայթաքեցի շիրմի շեմին,
Ա՛խ, դուռն ինչո՞ւ, ինչո՞ւ էր բաց:

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

(Խարխափում է, դուրս շոշափելով դուրս գալիս դռնակից)․

Ջնգո ցն է բահերի հաճո այնպես.
Այս բազմությունն իմ իղձն է կատարում,
Դաշն կնքած մայր հողի հետ ասես,
Ալիքներն են մարդիկ սանձահարում,
Ջսպում ծովի հորձանքը առհավետ։

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

(Մեկսուսի)

Բայց միայն մեղ համար են շահավետ
Պատնեշներդ, փակոցներդ բոլոր,
Դրանք ծովի սատանային մի օր,
Մեր նեպտունին, կպատճառեն հաճույք,
Երբ Նա սարքի վարհուրելի խնջույք։
Ամեն դեպքում կորած ես այս գործում
Բոլոր տարելքներն են մեզ դավակցում։

Ֆ Ա Ո Ւ Ս Տ

Վերակացո՛ւս

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Լ

Ես քեզ լսում եմ, տերս

Տ Ա Ռ Ի Ս Տ

Վարձիր դու նորանոր աշխատողներ,
Ամեն գնով խրախուսիր մարդկանց,
Հրապուրիր, խոստացիր կայք ու գանձ:
Ես ամեն օր լսել եմ ցանկանում,
Որ փորձում են, գործն առաջ է գնում:

Մ Ե Ֆ Ի Ս Ո Ֆ Ե Լ

(Կիսաձայն)

Ճիշտը կասեմ քեզ անպայման
Փոս չեն փորում, այլ գերեզման:

Ֆ Ա Ռ Ի Ս Տ

Ճահիճն ահա. շուրջն է ձգվում լեռնապարի,
Քունավորում, ինչ մեր ձեռքով կյանքի կոչվեց:
Երբ վերջ տրվի նեխած ճահիճին, գործն այդ բարի
Կդառնա իմ վերջին սխրանքն ամենամեծ:
Միլիոնների համար ես տեղ կբացեմ դեռ,
Անապահով կապրեն, սակայն դորժով աղատ,
Ողջ խոպանը կդարձնեն դաշտ մի բերքառատ,
Ու կբերկրեն շորս դին մարդիկ, անթիվ հոտեր:
Փողովուրդը և՛ ժրաջան, և՛ քաջարի
Ամբարտակներ կբարձրագնի շուրջն այդ վայրի,
Եվ կծաղկի դրախտալին երկիրը նոր .
Քող մուկեզնի պատերի տակ ծովն ամեն օր,
Փորձի քանդել. . Փողովուրդը կգտնի ելք:

Ոտքի կելնի ու կփակի ամեն մի ճեղք:
 Սա է, այո, միակ բարձունքն իմ անուրջի,
 Սա է միայն վերջին պատգամն իմաստութիան
 նա՛ իրավունք ունի կյանքի, ազատութիան,
 Ով ամեն օր դրանք կովո վ կնվաճի:
 Թող իրենց դարն այդպես ասրեն մանուկ ու ծեր,
 Արհավիրքի դեմ սույրբարեն, անդուլ գործեն:
 Իմ երազանքն ունի միայն մի կատարում
 Տեսնել ազատ մի ժողովուրդ ազատ երկրում:
 Սյնժամ կասեմ ակնթարթին
 «Զքնա՛ղ ես դու, կանգ առ, վայրկյա ն»:
 Սրդեն գրկում հավերժութիան
 Զի կորչի հետքն իմ երկրային:
 Կանխազգալով նման վսեմ երջանկություն,
 Վայելում եմ ես ակնթարթն իմ գերագույն:

(Ֆառուսար մեջքի վրա տապալվում է կեմուրները բռնում
 եև թևերից, պառկեցնում գետնին)

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Նա վայելքով, բախտով չէր հագնում,
 Տարվում էր սին ցնորքներով միայն,
 Վերջին պահից կառչել էր ցանկանում,
 Կյանքի վերջին ակնթարթից ունայն:
 Մաքառում էր իմ դեմ, բայց մադդը ծեր
 Փոված է ավազին: Ժամանա՛կն է՝ արքանս
 Ժամացույցը կանգնեց:

Խ Ո Ւ Մ Բ

Հոեց, ինչպես գիշեր:
Սլաքն էլ չի շարժվում:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Վճի՞ռ օրհասական:

Խ Ո Ւ Մ Բ

Վե՞րջ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Վե՞րջ: Օ՛, միամի՞տ մոլորություն,
Ի՞նչ վերջ, երբ ոչինչն ու վերջը բաներն են նույն:
Ո՞րն է խորհուրդն հավերժ այս աշարման,
Երբ ոչինչն է արարածի ճամփան,
«Վե՞րջ» — ընդերքն այս բառի պե՞տք է պեղել,
Երբ եղածը կարծես չի էլ եղել,
Լինելու պատրանքն է եղել միայն,
Ուստի ջատագով եմ հավերժ ունայնության:

ԹԱՂՈՒՄ

Լ Ե Մ Ո Ւ Բ

(Մեկակ)

Ո՞վ է շինել տունն այսքան վատ
Քլունգով ու բահով:

Լ Ե Մ Ո Ւ Ր Ն Ե Ր

(Խմբով)

Քեզ, հա՛մբ հչուր, հարմար է շատ
Եվ շատ էլ ապահով:

Լ Ե Մ Ո Ւ Ր

(Մենակ)

Ոչ աթոռ կա ու ո՛չ սեղան,
Տունն ինչքա՛ն է աղքատ:

Լ Ե Մ Ո Ւ Ր Ն Ե Ր

(Խմբով)

Լավ թաքցրել է ամեն բան,
Պարտատերերն են շատ:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Հոգին կանջատվի այս մարմնից շուտով,
Շտապ ցույց տամ թուղթը՝ արչամբ վավերացված,
Թե չէ սատանայից հոգիները մարդկանց
Կարող են և խլել հազար ու մի ստով:
Սայթաքում եմ արդեն հին ճամփեքին,
Նոր ճամփեքին էլ ես դեռ սովոր չեմ,
Առաջ մենակ էի առնում հոգին,
Հիմա օգնականներ պիտի կանչեմ:

Սատանայի վիճակը շատ է վատ.
 Օրենքն ու իրավունքն այն հնավանդ
 Մի՞թե այսօր նեցուկ են հաստատուն:
 Առաջ հենց որ մի մարդ շունչը փչեր,
 Նույն վայրկյանին հոգին դուրս կթռչեր,
 Կճանկեի, ինչպես մուկ է որսում կատուն:
 Շատ դանդաղ է հոգին լքում արդեն
 Եղկելի դին՝ օթկանն իր մթնած,
 Սպասում է, մինչև դուրս վռնդեն
 Իրար ատող տարերքները անսանձ:
 Ամեն անգամ խորհում եմ դառնագին,
 Թե ե՞րբ, ինչպե՞ս, որ տե՞ղ որսամ հոգին,
 Մեռա՞ծ է մարդն իրոք Ինչպե՞ս շկասկածես,
 Երբ ծերուկ մահն ուժն է կորցրել կարծես:
 Հաճախ է պատահում նայում եմ դիակին,
 Մեկ էլ տեսար հարյավ, շարժվեց կրկին:

(Նանտաստիկ շարժումներ անելով, մոզական հրաման-
 ներ է արձակում)

Ուղիղ ու կեռ եղջյուրներով շարքե ր,
 Տյա՛րք իմ հնադավան ու հնասեր,
 Շտապ եկեք և շարված կողք կողքի
 Հա՛յն բաց արևք երախը դժոխքի:
 Դժոխքն, ասենք, շատ երախներ ունի,
 Խժռում է ըստ մեղաց աստիճանի,
 Բայց այս ներկայացումն ավարտելուց առաջ
 Չարժե լինել այգբան խստապահանջ:

(Չախ կողմում բացվում է դժոխքի սարսափելի երախը)

Քաղ երախից ժանիքներ են ցցվում,
Հրո հեղեղն է նետվում վեր ու վար,
Շոգու միջից նշմարվում է հեռվում
Քոցերի մի քաղաք հավերժավառ
Կարմիր հորձանուտն է եռում, շողում,
Մեղապարտներն հույսով մոտ են լողում,
Քայց փակվում է հսկա երախն ահա,
Ետ են փախչում նրանք սարսափահար
Իր մութ անկյուններում այս վիհը նեղ
Ուրիշ գազանիքներ էլ ունի ահեղ
Տեղն է, թող դժոխքից սոսկան դրանք,
Թե չէ սա էլ կհամարեն պատրանք:

(Կառն, ուղիղ եղջյուրներով հաստ ուստանաներին)

Սլիկաներ կարմրաթուշ ու ցմփոր,
Դուք, որ լափում եք ծծում՞ր ու կրակ,
Դուք, ում վզերն անշարժ կրճղեր են շոր,
Հենց ֆոսֆորը փայլի, վրա կտաք:
Հոգին է դա, Պսիխեն է թևավոր,
Ուարմինն առանց հոգու որդ է միայն,
Իմ կնիքը ես կղնեմ վրան
Եվ կնետվեմ այս հորձանուտը խոր
Աչքներդ շորս արեք փորի վրա,
Հարբեցողներ, հենց դա է պարտքը ձեր,
Ի՞նչ իմանաք, հիմա հոգին սրա
Որտեղից է ուզում թռչել հիթեր,

Գուցե պարտի՞ միջից վա՛յ ձեր օրին,
Եթե փախչի, հասնի Երկնավորին:

(Եւ կար, կեռ եղջյուրներով լղար սատախաների՞ն)

է յ, հսկանե ր, լող-լո ղ ծաղրածուներ,
Օգին հետեցեք ուշի-ուշով,
Առաջ պարզեք սուր մագիլները ձեր,
Որսին վրա պրծեք ամբողջ ուժով:
Հին տունն, ի նշ խոսք, վաա է հոգու համբ ր,
Երկինք հառնելն ավելի է հարմար:

(Աջ կողմում վերեից պայծառ լույս է իջնում):

Ե Ր Կ Ն Ա Յ Ի Ն Ո Ի Փ Ե Ր

Քոչենք, հրեշտակներ,
Երկնի առաքյալներ,
Երկիր իջնենք դարձյալ,
Ներենք մեղապարտին,
Կենդանացնենք պաղ դին:
Քող հոգիները գան
Օրբանն հավերժական
Միանան մեր երթին
Ազատ և երանյալ:

Մ Լ Յ Ի Ս Տ Ո Յ Ե Է

Վաղորդյան լույսի հետ անցանկալի
Իջնում է վերեից տհաճ մի ձայն:
Երկշո՞տ ստահակներ Այդ երգը նողկալի

Դուր կգա կեղծ բարեպաշտին միայն,
Գիտեք, որ մենք ժամին այն անիծյալ
Մարդկային ցեղն էինք ջնջել տենչում,
Եվ ինչ զազրելի էր, այսօր դարձյալ
Սրանց աղոթքների մեջ է հնչում:

Ապուշները շողոքորթ են, փորձված,
Քթիդ տակից հոգի կթոցրնեն,
Մեզ մե ր զենքով պարտության կմատնեն,
Սրանք էլ են շարքեր, բայց քողարկված:
Քե վրիսյենք, մեզ հավիտյան ամոթ,
Պարիսպ կաղմած՝ կանգնեք այս փոսի մոտ:

Հ Ր Ե Շ Տ Ս Կ Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Բ

(Վարդեր շաղ տալով)

Վարդե ր, դուք շողշողում,
Բայասան եք ցողում,
Անտես իջնում եք ցած,
Կյանք շնորհում մարդկանց:
Ճյուղե՛ր, հյութով լցվեք,
Բողբոջնե ր, շո ւտ բացվեք,
Գարուն բերեք շուայլ,
Զորս կողմ սփռեք դարձյալ
Անթիվ գույներն երկնի,
Որ մարդը հանգուցյալ
Շուրջը եղե՛մ տեսնի:

Մ Ե Ն Ի Ս Տ Ո Յ Ե Լ

(Ստաանաներին)

Ի՞նչ եք դողում, վայե՛լ է դժոխքին,
Մի նահանջեք, թող հա՛ շաղ տան վարդեր,
Ապիկարնեք, ձեզ կպահեք կարգին
Ձեն սառեցնի կրակոտ ցեղը մեր
Ձյան պես իջնող ինչ-որ ծաղկաթերթեր
Փշեք, և կթռչնեն նույն վայրկյանին:
Փշե՛ք, փութե՛ք . Հերի՛ք է, կանգ առա՛ք,
Հրե շնչով դուք ամեն ինչ կայրեք,
Ձեր քիթն ու բերանը փակեք արագ,
Չափավորեք ձեր ուժն առհասարակ,
Թե չէ շափ լգիտեք ոչ մի բանում:
Մաղիկները վառվում, ջահ են դառնում
Եվ թունավոր բոցով իջնում են ցած:
Գիմադրեցեք, շթուանա՛ք հանկարծ...
Բայց թուացա՛ն իսկույն, այս ի՞նչ գառան,
Վատ է, շարքերն օտար քնքշանքի հոտ առան:

Հ Ր Ի Շ Տ Ա Կ Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Բ

Վարդեր լրջանկարեր,
Բերկրանքի վառ բողեր,
Իջեք, աշխարհով մեկ
Սեր ու բարիք սփռեք:
Ամեն, ամեն սրտի
Ձ նեք ճշմարտություն,

Քող եթերից անհուն
Ձեր թափորը մարդուն
Հավերժ լո՛ւյս ավետի:

Մ Ե Յ Ի Ս Տ Ո Յ Ե Լ

Չարքերն ահից կանգնել են գլխիվայր,
Անե՛ծք, ամո՛թ վախկոտներին թշվառ .
Ճողոպրում են, հետույքները ցցած,
Նետվում են դժոխքի երախը բաց:
Գնաք բարո՛ւ, բաղնիքներդ անո՛ւշ .
Ես կմնամ, քանի մեջս կա ուժ:

(Կովի է բռնվում իր շուրջը նախրող վարդերի հետ)

է՛յ, թափառո՛ղ լույսեր, զուր շապառնաք,
Եթե սեղմեմ, դուք դոնդող կդառնաք,
Հեռո՛ւ Այրում են ծոծրակս այնպես,
Վառվող ծծումբ կամ ձյու՛թ լինեն կարծես:

Հ Բ Ծ Տ Ա Կ Ե Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Բ

Ինչ խորթ է ձեզ թվում,
Խուսափեցեք, մերժեք,
Ինչ սիրտ է վրդովում,
Մի հանդուրժեք երբեք:
Ի մա՛րտ, ի հատուցում,
Հաղթե՛ք, ո՛չ մի նահանջ
Սերն իր գիրկն է բացում
Լոկ սիրողի առաջ:

Գլուխս այրվեց, այրվում են սիրտ ու լյարդ,
 Այս ի՞նչ զորություն է գերդիվական,
 Դժոխքի հուրն ասավոր չէ այսքան:
 Նո՛ր հասկացա, սիրահարներ դժբախտ,
 Թե դուք ինչու տանջվում եք, հեկեկում,
 Բայց ձեզ մի թողնե՞րից աչք շեք թեքում:

Ե ս էլ ինչո՞ւ թվում են մտերիմ
 Նախկին թշնամիներն իմ ոխերիմ:
 Զայրացնում էր սրանց տեսքը գերող,
 Հիմա ի՞նչ խորթ հույզ է ինձ համակում.
 Անուշ տղաներին տեսնել եմ փափազում .
 Ի՞նչն է ինձ կաշկանդում նզովել շեմ կարող:
 Եթե այս խենթութիւնը շփանեմ,
 Հետո էլ ո՞ւմ պիտի խենթ անվանեմ:
 Սրանց ատում էի, ինչո՞ւ այսօր
 Բաղձալի է հանդիպումը այս նոր:

Ո՛վ մանչուկներ սիրուն, ինձ ճիշտն ասեք,
 Լյուցիֆերի ժառանգները հո չե՞ք:
 Այնքան լալն եք, համբուրել եմ ուզում,
 Մեր հանդիպումն այնպե՛ս է ինձ հուզում
 Իմ հիացմունքն անկեղծ է, և կարծես
 Հազար անգամ արդեն տեսել եմ ձեզ:
 Ինձ կատվային գգվանքն է տոշորում
 Անվերջ գեղեցկանում եք իմ աչքին. .
 Եկեք, արժանացրեք ձեր հայացրին:

Հ Ր Ե Շ Տ Ա Կ

Ահա եկանք, ինչո՞ւ ես ճողոպրում:
Քե կարող ես, մնա տեղում նախկին:

(Հրեշտակները, իրարից բաժանվելով, գրավում են ամբողջ
շրջակայքը)•

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Յ Ե Է

(Նահանջելով հասնում է նախաբևեմին)

Պիղծ ոգիներ եք դուք մեզ համարում,
Բայց մեր կախարդանքն է ձերի առաջ խամբում,
Գայթակղում եք միշտ և այր, և՛ կին:
Այս ի՞նչ փորձանքի մեջ ընկա արդյոք:
Գուցե հենց սա՞ է տարերքը սիրո.
Ողջ մարմինս այրվում է անամոք,
Մեխվում են վզիս մեջ նետեր հրո:
Իջեք և հմայիչ այդ մարմինները ձեր
Մի քիչ շարժեք, իբրև հողածիններ:
Վայել է ձեզ լրջությունն այս պատշաճ
Բայց տենչում եմ ժպիտ մի բարեհաճ
Որը հար-հավիտյան հիացներ ինձ:
Գեթ շուրթներդ շարժեք, ինչպես իրար
Սիրահարվածներն են ժպտում սովորաբար:
Պարթև տղա, դու լավն ես բոլորից,
Քեզ հարմար լէ հայացքն աբեղայի,
Մի քիչ մեղսոտ աչքերով ինձ նայիր:

Ինչո՞ւ մերկ շեք շրջում՝ առոք-փառոք,
Պե՞տք են այդ հնաձև շորերն արգյոք:
Ե՛տ են գառնում Պատկե՛ր հրաշալի,
Ետքից ավելի են ախորժալի:

Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Ք

Վառվիր հավիտյան,
Հուր ճշմարտության,
Հույս տուր հողածին
Ամեն ընկածին,
Որ ապաքինված,
Չարի դեմ զինված՝
Չարից հեռանա,
Բարուն մի սես:

Մ Ե Ց Ի Ս Տ Ո Ց Ե Լ

(Սթափվելով)

Վա՛յ ինձ, Հոբի նման եմ խոցոտվել,
Սարսափում եմ ինձնից ո՛չ անտեղի,
Սակայն հրճվանքս խորն է առավել,
Չգցեցի ես պատիվն իմ ցեղի:
Սատանայի ազնիվ մասերը շեն ալղծված,
Սիրո ուրվականից մաշկս է միայն խոցված,
Հանգել է ինձ տանջող կրակն ահեղ,
Ես նզովո՞ւմ եմ բոլորիդ մեկտեղ:

Հ Ր Ե Շ Տ Ա Ա Ն, Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Բ

Սրբաշնագույն բոցեր,
Երջանիկ է կյանքում,
Ով շերմությունը ձեր
Բարու հետ է զգում:
Ճախրեք և անդադրում
Երգեք փառքն արարչի,
Թող մաքրված օդում
Հոգին ազատ շնչի՝

(Երկինք են բարձրանում, տանելով Ֆաուստի անմահ
էությունը):

Մ Ե Ֆ Ի Ս Տ Ո Ֆ Ե Է

(Շուրջը նայելով)

Ինչպե՞ս, այս ի՞նչ եղան, ո՞ւր շքացան:
Ա՛խ, մատղաշնե՛ր, ինչպե՞ս հիմարացրիւ:
Ավարն առած՝ երկինք թռան անձայն:
Այ թե ինչու էին խմբվել շիրմի եզրին:
Կողոպտեցին, տարան գանձա միակ՝
Քրավ դրված վե՛հ ու վսեմ հոգին:
Դրանք մաքսանենդներ են խորամանկ:
Ո՞ւմ բողոքեմ, ո՞վ օգնության կգա,
Ո՞վ ինձ կտա, ինչ իմն էր օրենքով:
Օր ծերության ինչպե՞ս թակարդն ընկա . .
Տե՛ղն է, խայտառակվի ր, դե՛ ինքնադով:

Այս ի՞նչ վրիպում է ամոթալի,
 Որքա՞ն ուժ ու եռանդ աննպատակ ..
 Փորձված սատանան է տեղի տալիս
 Ստոր կրքին, սիրախաղին դատարկ
 Եթե փորձված խելոքն է խառնվել
 Նճան խելառությանը մանկական,
 Հիմարությունը մեծ է առավել,
 Արդեն շա՛տ ողբալի է ապագան:

ԼԵՌՆԱՅԻՆ ԿԻՐՃԵՐ

Անտառ, ժայռեր, անապատ:
 Սուրբ նգնավորյաներ՝ անդունդների եզրերի՞նք

Խ Ո Ւ Մ Ր Ե Վ Ս Ր Զ Ս Գ Ս Ե Ք

Անտառ, խաղաղ վայրեր
 Իրար թիկնած ժայռեր,
 Տարից դար ու դարեր
 Ամուր կառչած ծառեր
 Զրեր՝ անդունդն ի վար,
 Խոր, սպահով քարայր,
 Առյուծներ մեզ փարված,
 Մեր տան շեմին փռված,
 Այստեղ, ուր սրբազան
 Օրրանն է քավության:

PATER ECSTATICUS

(Վեր ու վար նախընկով)

Հավերժ երանության,
Սիրո հուր սրբազան,
Սրտի կսկիժ անլուր,
Քերկրանք աստվածատուր ,
Նետե՛ր, վերքեր բացեք,
Տեգե՛ր, կուրծքս խոցեք,
Ո վ մկունդներ, ջարդեք,
Ո վ կայծակներ, շանթեք,
Որ հողեղենն հալչի,
Ապա վառ նաճանչի
Իմ աստղը մշտափայլ՝
Սիրո սերմը օրհնյալ

PATER PROFUNDUS

(Խոր ոլորտ)

Ոտքերիս տակ անդունդն ի վար
Ժայռն է կախվել, հենվել ժայռին,
Հազար ասու փրփրազալար
Նետվում են ցած թափով վայրի:
Անզուսպ մղումն է սեփակա՞ն

Մառին երկինքն ի վեր տանում ,,
Ամենազոր սերն ամեն բան
Արարում է ու պահպանում:

Երբ հորդ անձրևն է շափշափում,
Հեղեղելով անտառ ու վիհ,
Ջուրն է սիրով դաշտ շտապում,
Որ ծարավից հողը շայրվի:
Երբ կայծակն է փայլատակում
Եվ հարվածներ տեղում հզոր,
Օդն է մաքրում, որի խորքում
Գոլորշիներ կան թունավոր:

Քանքերներն են դրանք սիրո,
Որն արարում է հավիտյան:
Թող ինձ էլ տան կայծն այդ հրո,
Որ հոգիս պաղ ու անկենդան
Չտառապի,
Չխարխափի:
Օ՛, մեղմի՛ր իմ խոհերն, աստվա՛ծ,
Հուսավորի բ սիրտս տանջված:

PATER SERAPHICUS

(Միօրին ոլորտ)

Ի՞նչ ամպեր են լողում թեթև
Սոճիների վերևում:
Ոգիներն են ճերմակաթև,
Պարզ է արդեն երևում:

Ե Ր Ա Ն Ե Ն Ի Տ Ղ Ա Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Բ

Ո՛ւր եք սուրում, ուզե՞ր եք, հայր
Մենք բոլորս ենք բախտավոր.
Ոչ տառապել ենք վշտահար,
Ոչ գործել մեղք ահավոր:

PATER SERAPHICUS

Մնունդ եք դուք կեսգիշերի
Հոգով, մտքով անկատար,
Կորուստն եք ձեր ծնողների,
Երկնքի գանձն եք արդար
Եկեք, զգում եք, մանկիկներ,
Որ այստեղ կա սիրտ բարի:
Ո՛ւր եք սուրում. շեք տեսել դեռ
Փշոտ ճամփեքն աշխարհի:
Աչքերիս մեջ մտեք իսկույն
Եվ կտեսնեք նույն պահին
Այս աշխարհը հազարագույն,
Բավիղները երկրային:

(Իր մեջ է առնում նրանց)

Ահա ծառեր, ժայռեր, կաժան:
Ծրվեժն առանց երկյուղի
Վի՛հ է նետվում որոտածայն,
Կարճացնելով իր ուղին:

Ե Ր Ա Ն Ե Է Ի Տ Ղ Ա Ն Ե Ր

(Ներսից)

Շատ է ազդու տեսքն աշխարհի,
Բայց ի՛նչ խավար դարհուրանք .
Մեզ դո՛ւրս հանիր, ո՛վ մարդ բարի,
Այստեղից շուտ հեռանանք:

PATER SERAPHICUS

Հասեք ոլորտը բարձրագույն,
Քող ձեր ոգին միշտ աճի,
Մինչև դարձնի ձեզ իմաստուն
Ներկայությունն արարչի:
Մնունդն է դա ոգիների,
Որով եթերն է լեցուն—
Հավերժություն երանելի,
Անմահ սիրո հայտնություն:

Ե Ր Ա Ն Ե Է Ի Տ Ղ Ա Ն Ե Ր Ի Խ Ո Ւ Մ Ր

(Ամենաբարձր գագաթների շուրջը
հախրելով)

Չեղք ձեռքի տանք մենք
Ու շրջան կազմենք,
Քող երգը հն՝ի
Ի փառս արարչի:
Մեր հավատն ամբողջ
Խորհուրդն է տիրոջ
Մի օր կտեսնենք,
Ում պաշտել ենք մենք:

(ՍաՎառնում եմ բարձրագույն ոլորտում, աանելով
Ֆաուստի անմահ էությունը)

Չարից փրկեց իր մասն աղնիվ
Հոգիների, աշխարհն արդար.
«Ով ձգտում է գիշեր ու տիվ,
Տերը նրան միշտ է սատար»:
Երբ հոգին է լուսավորված
Նաև սիրով վսեմագույն,
Ողջունում է փրկված հոգուն
Ամբողջ կաճառն երանելյաց:

Կ Ր Տ Ս Ե Ր Հ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր

Այն վարդերը, որ շալ տվին
Հոգիները ապաշխարող,
Օգնեցին մեր հաղթանակին,
Չարը դարձրին հույժ անկարող,
Եվ փրկեցինք այս գանձը թանկ:
Փախան շարքերը նույն պահին,
Երբ զգացին սիրո տանջանք
Զորեղ, քան հուր դժոխային:
Մեր գրոհին շղիմացավ
Չարյաց վարպետն էլ բաղմամբորձ:
Ցնծանք, շէ՞ որ գյուտ է իրավ
Գլուխ եկավ նման մի գործ:

Ա Ռ Ա Վ Ե Լ Կ Ա Տ Ա Ր Ց Ա Է Զ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր

Մանր է նշխարն այս հողաբույր
Տանել գիրկը երկնի,
Պիտի մոխիր դառնա մի բուս
Թեկուզ ազրեստ լինի:
Երբ նյութի հետ ոգին գորեղ
Չուված է հիրավի,
Հրեշտակն ի՞նչ անի այստեղ,
Գաշինքը չի բեկվի:
Շատ մեծ է ուժն այդ միության,
Գովքի է արժանի,
Գրանց միայն հավերժական
Սերը կբաժանի:

Կ Ր Տ Ս Ե Ր Զ Ր Ե Շ Տ Ա Կ Ն Ե Ր

Մեզն է քող դառնում
Շուրջը լեռների,
Այդ ոգիների
Խումբն է սավառնում:
Մեղը փարատվեց,
Եվ երանելի
Այն մահուկների
Խումբը հայտնվեց:
Աշխարհի բարուն
Չարին անտեղյակ
Հրճվում են նրանք,
Վայելում գարուն:

Թող ընկերանա
Դրանց այս հոգին,
Մինչ ընտելանա
Երկնային կյանքին:

Ե Ր Ա Ն Ե Է Ի Տ Ղ Ա Ն Ե Ր

Թող գա, սրտադին
Կընդունենք հոգին.
Չէ՞ որ ապս գա
Հրեշտակ է նա:
Հանենք հարսնյակի
Պատյանն հողեղեն
Հասուն է արդեն
Սեմին սուրբ կյանքին:

DOCTOR MARIANUS

(Ամենաբարձր, ամենամաքուր իցում)

Ի նշ տեսարան ազաա,
Վեհանում է հոգին:
Կանայք ահա կրկին
Սափառնում են հանգարտ:
Զքնա՞ղն ահա գլխին
Սատղեր են հուրհուրում,
Շողում է թագուհին,
Ճաճանշափայլ սուրում:

(Զմայլանքով)

Ո՛վ տիրուհի տիեզերաց,
Քույլ տուր ծառադ տեսնի
Պայծառ խորհուրդը քո գաղտնյաց
Լուրթ վրանում երկնի:
Մի՛ նախատիր, երբ քեզ մի մարդ
Այսպես քնքշագորով
Չունում է սիրտն իր անաղարտ,
Լի սրբազան սիրով:

Ի՞նչ կհաղթի այն էակին,
Ով կամքիդ է անսում,
Խաղաղեցնում ես դու հոգին,
Սեղմում վիշտ ու ցասում:
Կո՛ւյս անարատ, սո՛ւրբ տիրամայր,
Գթա՛ ամենեցուն.
Գու թագուհի, ես մեզ համար
Նվ հավասար աստծուն:

Տիրամոր շուրջն են սփռվում
Ամպեր ճերմա՛կ, ճերմա՛կ
Մնկներին են մեղմիվ փարվում
Ապաշխարող կանայք:
Ըմրոշխնելով եթերն անհուն,
Հայցում են գութ ու թողութուն
Տիրամորից նրանք:

Ո՛վ անարատ, ո՛վ անբիծ կույս,
 Նրանց գու կփրկես,
 Խաբեության զոհերն անհույս
 Ապավինում են քեզ:
 Թուլությունն է գավել, խարել,
 Չկա ելք փրկության.
 Թույլն անկարող է թոթափել
 Գայթակղության շղթան:
 Թեք, լպրծուն ճամփին մեղաց
 Ոտքն է սահում արագ
 Ո՞ւմ խելքը շեն տանի հանկարծ
 Հայացք ու հառաչանք:

(Լուսանահանչ տիրամայրը սավառնելով մոտենում է):

Ա Պ Ա Շ Խ Ա Ր Ո Ղ Կ Ա Ն Ա Ն Ց Խ Ո Ւ Մ Ք

Սուրա բարձունքն ի վեր
 Հավերժ արքայության,
 Անսա աղերսը մեր,
 Ո վ գու անզուգական,
 Ո վ գթության օբբան:

MAGNA PECCATRIX
 (Դովտա, 7, 36)

Հանուն սիրո, որն արցունքով
 Ցողեց ոտքերն աստված-որդուդ,
 Թեև նայում էր հեզնանքով
 Փարիսեցին՝ մարդը անգութ.

Հանուն լեցուն այն սափորի,
Որից բույր էր կաթում առատ,
Այն վարսերի որ սրբեցին
Տիրոջ մարմինը անարատ

MULIER SAMARITANA

(Հովհան, Ս)

Հանուն ջրի որ կյանք ասիւց
Արրահամի հոտին իրավ,
Հանուն դուլլի, որին հպվեց
Մի օր Փրկչի շուրթը ծարավ
Հանուն առատ այն ազրուորի,
Որ ջրհորից սկիզբ առա՛ծ՝
Էր շիթերով պարզ ու բալի
Հագեցնում է սշխարհն արար

MAKIA AEGYPTIACA

(Acta Sarceterum)

Հ նուն այն սուրբ է կեղեցու,
Ուր մարմինն էր Տիրոջ անեղծ
Հանուն ձեռքի այն ահարկու
Որն ինձ սեմից հեռու վանեց
Հանուն զղջման որն ինձ պահեց
Անապատում շորս տաանամյակ
Հանուն վերջին խոսքիս անկեղծ,
Որ գրեցի ավազին տաք

Ե Ր Ե Ք Ի Մ Ի Ո Ս Ի Ն

Դու, որ ոչ մի մեղապարտից
Երբեք երես չես դարձրնում,
Զղջացողին մութ անդունդից
Հավերժի գիրկն ես բարձրացնում,
Քթա և այս հոգուն բարի
Նա մի անգամ է մեղանչել,
Անգիտությամբ է նահանջել,
Կանգնել սխալ ճանապարհի:

UNA POENITENTIUM

(Ուր մի ժամանակ կոչվել է Գրեթխեն Նրանց միտնալով)

Օ , նայի թ վար,
Ճաճանչալառ,
Լինման մայր,
Տե՛ս իմ բախտի առհավատչան.
Իմ սիրելին
Ինձ հե՛տ կրկին՝
Առանց վշտի ու դառնության ..

Ե Ր Ա Ն Ե Լ Ի Տ Գ Ա Ն Ե Ր

(Շուրան կազմած մոտենում են)

Մեզնից հասուն / նա,
Զորեղ հսկայորեն
Նա մեզ շի մոռանա.

Խնամել ենք իրենս:
Քոհուբոհից կենաց
Հեռացանք վաղ այնպես,
Սա ուսանեց, տոկաց,
Կուսուցանի և մեզ:

Ա Պ Ա Շ Ե Ա Ր Ո Ղ Մ Ի Կ Ի Ն

(Ուր մի ժամանակ կոչվել է Գրեթիսն):

Հողքից ազնիվ ոգիների
Իրեն կորցրեց, բայց շուտով նա
Կզգա նոր կյանքն երանելի,
Սուրբ կաճառին կմիանա:
Տես, թոթափեց կապանքը հին
Աշխարհային իր պատյանի,
Հանդերձանքով եթերային
Նորի ց դարձավ նա պատանի:
Քույլ տուր դառնամ իր ոահվիրան,
Վառ լույսից է կուրանում դեռ:

MATER GLORIOSA

Բարձր ոլորտ հանիր նրան,
Քո հետքերով թող ելնի վեր:

DOCTOR MARIANUS

(Բերանփսիվայր ընկած աղոթում է)


Բոլոր քնքուշ մեզավորներ,
Նայեք ձեզ փրկողին:
Ներում է նա մեղքերը ձեր

Ու վեհացնում հոգին :
Քո ծառաներն են հավիտյան ,
Գթա՛ նրանց , տուր հուշս ,
Եղիր պաշտպան , եղիր վահան ,
Քաղուհի , մա՛յր և կո՛ւյս :

CHORUS MYSTICUS

Պատրանք է ունայն
Կարճ կյանքը երկրի ,
Երկինքն է միայն
Օրրանն իղձերի :
Այստե՛ղ ենք հասնում
Մեր երազածին ,
Մեզ վեր է հանում
Հավերժ կանացին :

ԺԱՆՈՒԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



էջ 16 Բալորն են շփել՝ գիրելիքն թե գվելիք

Քաղաքական կոսակցություններ որոնք մեծ դեր են խաղացել Իտալիայի պատմութեան մեջ (XI—XV դարերում): Գիրելիքները կայսերական իշխանութեան կողմնակիցներ էին, իսկ գվելիքները շոտի պապի

էջ 22 Թմրախոտից են լոկ շաղակրատում

Արմատը եողից հանող շան մասին:

Ըստ միջնադարյան հալատալիքի թմրախոտի (մանդրագոր) արմատները ցույց են տալիս հողի տակ թաղված դանձերի տեղը: Թմրախոտի արմատը հողից կարող է հանել մյայն սե շունը, նթե դա փոխի անել մարդը կհորձանվի:

էջ 25 Փոքիւ, և հողից իսկույն դուրս կգա

Ոսկե հորթերի մի ամբողջ նախիր

Ակնարկվում է այն ոսկե հորթը, ու ին երկրպագել են խորայելցիները երբ Մովսեսը բարձրացել է Սինա լեւր Այստեղ դա հարստութեան խորհրդոսնիշ է:

ԸՆԴՈՐՁԱՆ ՍՐԱՀ

էջ 27 Սուրբ ներբանին շարքը հայեց կայսեր հլու,

Արժանացավ իրավունքին մեզ իշխելու:

Գերմանիայի թագավորների նախնական օծումը տեղի էր ունենում շոտի մում: Պապի ներբանը համբուրելու ծիսակատարութեամբ հաստատվում էր կաթոլիկ եկեղեցու իշխանութեան գերազանցութեանը:

էջ 30 Յերեբայի այս շնորհը...

Յերեբա—ըստ հոտմեական դիցաբանութեան երկրագործութեան աստվածուհի (Գեմետրա), նրա շնորհը ոսկեպույն հասկերն են:

Իմ անունը ձեզ շի հասել

Թեոֆրաստ շի էլ ասել:

Թեոֆրաստ—հույն փիլիսոփա: Համարվում է բուսաբանութեան հիմնադիր (3-րդ դար մ թ ա)

էջ 40 Պարկաներ—ըստ հունա հոտմեական դիցաբանութեան, ճակատագրի աստվածուհիներ:

12 43. Ծառիաներ — ըստ հունա հոսմեական դիցաբանության, լինծի ստավածուհիներ:

12 44 Ասմողէյին՝ հավատարիմ ոգուն...:

Հստ հրեական դիցաբանության, Ասմողեոսը (Ասմողի) ընտանեկան մ/ությունը քանդող դե է:

12 47 Զոխյու-Քերսիտես — երկու նախանձոտների համադրում Զոխի — հույն քերականագետ (Յ-րդ դար մ թ ա), որն ամբաստանել է Հոսիոսին: Քերսիտես — «Իլլիական» ի հերոս՝ վախկոտ և նախանձոտ:

12 50. Պատանի կտուպան — ըստ Գյոթեի բացատրության, դա ողբերգության Յ-րդ արարվածում հանդես եկող կինքեոսն է:

12 53. Պլուտոսն ինքն է բազմել գահին:

Պլուտոս — հարստության ստաված

Պլուտոն — Հաղես (հունա-հոսմեական դիցաբանութուն) — ստորերկրյա թագավորության տիրակալը:

12 66 Ծալներ — դաշտերի ու անտառների ստավածներ:

Սատիր — անտառի ոգի, Դիոնիսոսի շքախմբի մասնակից:

12 69 Բայց երբ հետո օդն է գոգում

Պանի ձայնից ամպրոպային

Ըստ հունական դիցաբանության, միջօրեին, երբ քուն է մտնում ստավ ստաված Պ. նը նրա հետ նիրհում է նաև ամբողջ բնությունը:

ԶՐՈՍԱՅԳԻ

12 75 Քեզ՝ նոր Պելեոսին թեախը մեծ

Կմեկնի իր ձեռնն ու շուրթերն անեղծ .

Թեախ — հավերժահարս, Աքիլլեսի մայրը: Պելեոս — նրա ամուսնը, Ալլիևսի հայրը:

ԽԱՎԱԼՐ ՊԱՏՇԳԱՄԲ

12 87 Անուններն իսկ ազգում են պատկառանք

Մայրե ր

Մայրերի առասպելը հիմնականում Գյոթեի հնարանքն է:

ԱՐԱՐԿԱԾ ԵՐԿՐՈՒ Ի

Գրլած է 1827—1830 թթ :

ԳՈԹԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԿԱՌԱՐ, ՆԵՂ ՍԵՆՅԱԿ

էջ 116 Զամուլուս (լատ) — պրոֆեսորի մաս կամ լաբորատորիայում
աշխատող ուսուցիչ սպասավոր :

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ԼԱՔՈՐՍՏՈՐԻԱ

էջ 130. Հումուկուլուս — բռնացի՝ «մարդուկ» : Մարդանման էակ ստեղծ
ված ալքիմիկոսի լաբորատորիայում : Այս կերպարն ստեղծելիս հեղինակը
ի կատի է ունեցել իդեալիստական փիլիսոփայության վերացականությունն
ու անկենսունակությունը :

ՎՍԼՊՈՒՐԳՅԱՆ ԿԼԱՍԻԿ ԳԻՇԵՐ

էջ 138. Էրիխը — թեստալացի կախարդուհի, որը կանխագուշակել է Պոս
պեոսի պարտությունը Կեսարի դեմ մղած պայքարում :

էջ 143. Գրիֆ — ֆանտաստիկ հրեշ՝ արծվի թևերով և առյուծի մարմնով :

էջ 144. Մրջյուններ — հույն պատմաբան և աշխարհագետ Հերոդոտի
առելով, մրջյունները ոսկու փոշի են հալվարում :

Արիմաափներ — սկյութական ցեղի պատկանող առաջնական միաշքանի
մողովուրդ, որը հափշտակել է գրիֆների պահպանած գանձերը (Հերոդոտի
վկայությամբ) :

էջ 145. Ինձ անվանել են «The old Iniquity» :

«Հին շարիք» (անգլ) : Անգլիական բողոքական դրականության մեջ այս
տերմինն օգտագործվել է դևերի մասին խոսելի :

էջ 147. Սիրենաներ — քաղցրաձայն կիսաթռչուն կիսականայք (եղիպ
տական դիցաբանություն) : Հիշատակվում են «Բլիական»-ում :

էջ 150. Քիռոն — իմաստուն կենտավրոս (կիսամարդ կիսաձի) :

էջ 152. Ալֆիդես — Հերակլես Ալքայոսի թոռը :

Ստիմֆալիդ — առասպելական թռչուն որն իր երկաթյա ինտուրներով
խոցում էր ինչպես նևս երոխ :

Լեռնայան օձ (կամ Լիդրա) — առասպելական ինը գլխանի հրեշ, որին
գանեւ է Հերակլեսը:

Լամիա — վամպիր-կին:

Միակ մեր սփռվանքն է իսկական —

Ցույց տալ ուղին լուսնի, արեգական:

Սֆինքսները Եդիպտոսում խորհրդանշում էին Վուլի, և օգոստոս ամիս-
111ր, երբ հեղեղվում էր Նեղոսը:

Էջ 157 Օ, խիզախին հանաչեցի՝

Նիլիբալի մեծն որդուն:

Նիլիբա — այն նիմֆը, որից ծնվել է Քիրոնը (ըստ Հեսիոդոսի):

Էջ 165 Սյառեղ Հունաստանն ու Հոմեր բախվեցին

Ավագներում կրած մեծ տերության համար

Հեղինակը նկատի ունի այն հազթանակը որ հռոմեացիները Պինդոսում
(168 թ. մ թ ա) տարան Մակեդոնիայի թագավոր Պերսեսոսի դեմ:

Էջ 169 Դա ծերունին է ալեխե

Ըստ դիցաբանության Չևսից հղյացած Լատոնան (Լետո) գիշերվա
Լազդեստ աստվածուհին, ոչ մի տեղ չի կարողանում ծննդաբերել, քանի որ
լանդոտ Հերան՝ Զևսի կինը, Պիթոն սձին հրամայում է հետապնդել նրան:
ուսահատված Լատոնան նետվում է կղզյան ծովը: Պոսեյդոնն օգնության
է հասնում ստեղծելով Գելոս կղզին Հալածված աստվածուհին ազատ լուս
1. ծնելով Ապոլլոնին և Արտեմիսին

Էջ 170 Գարձեւ էինք խազագնդակ

Պելիոսն ու Օսսան բարձրիկ.

Սեյամոսը պնդում է թե մասնակցել է Պելիոս և Օսսա լեռների ինչպես
նաև Պաոնասի ու նրա երկու գագաթների ստեղծմանը Սֆինքսները հերքում
են լեռների հրաբխային ծագումը պնդելով որ դրանք սուսօացել են աստի-
անաբար դարերի ընթացքում

Էջ 172 Պիզմեյներ — ըստ հունական դիցաբանության, պիզմեյների ցե-
լին են հպատակվում ստորերկրյա բոլոր ոգիներն ու մրջյունները: Սեյամոսի
լման ստորերկրյա ոգիները ևս խորհրդանշում են հրաբխային սկզբունքը:

Էջ 173. Գակախիլներ — «Մատնաշափիկներ» — հմուտ դարբիններ, որոնց
վերսուր լում են երկաթի հայտնագործությունն ու մշակման առաջին փորձը:

ԼՂ 175 Իրիկոսի կսունկներ — բանաստեղծ Իրիկոսի սպանութեան վկայները

ԼՂ 179. Էմպուզա — միտտանի լամիա (վամպիր կին), որն իր այլանդակ տեսքն իսկույն կարող է փոխել դառնալ դայթակղիշ կին, Ավանակի ոտքերան շնորհել է հունական դիցարանությունը, իսկ ավանակի ականջներ՝ Գյոթեի երևակայությունը:

ԼՂ 183 Օրեաղ — լեոնային հավերժա՛արս:

ԼՂ 185 Անախագորաս (500—428 թ մ թ ա) և Քալես (ծնվել է 640 թ մ թ ա.: Մահվան թվականն անհայտ է) — Հույն փիլիսոփաներու Անաքսագորասը պնդում էր, որ արևը հրավառ գանգված է, և որ երկրագեղից իրոև աշխարհի կենտրոնից անջատվել են նյութի վիթխարի բեկորներ, վերածվել մոլորակների: Սրանք ժամանակ առ ժամանակ ընկնում են երկրի վրա: «Վալպուրգյան կլասիկ գիշերում» Անաքսագորասը հանդես է գալիս որպես վուլկանիզմի նախահայր: Քալեսը, ընդհակառակը նեպտունիզմի նախահայրն է և ներկայացուցիչը: Ըստ նրա, ինչպես վկայում է Արիստոտելը, ջուրն է նախանյութը, բանի որ յուրաքանչյուր սելմ խոնավ է: Գյոթեն հակված էր նեպտունիզմի կողմը:

ԼՂ 188 Ո վ եռանուն, եռապատկեր շճնագ

Ռիա նա, Հեկատե կուսի՛ն...

Դիցարանական որոշ տարբերակներում Հեկատեն նույնացվում էր Լուսնի Արտեմիսի և Պրոզերպինա-Հեկատեի հետ: Նա երկնքում Լուսին էր՝ Դիանա երկրի լրա Արտեմիս ստորերկրյա թագավորութեան մեջ՝ Պրոզերպինա:

ԼՂ 191 Քույրեհն են Ծորկիաս

Ծովային աստվածներից մեկի՝ Ծորկիսի (Ներեոսի եղբոր) դուստրերը:

ԼՂ 197 Ներեիդներ և տրիտոններ. — Ներեիդներ — Պոսեյդոնի հպատակ ծովային աստվածներից մեկի՝ Ներեոսի դուստրերը (կիսամարդ կիսածուկ էակներ): Գրիտոններ — ծովային դևեր

ԼՂ 199 Ներեոս — Այս ծովային աստվածը, որը նաև հայտեի գուշակ էր, Պարիսին նախապես հայտնում է, թե Հեղինեի առևանգումն ինչ կործանարար հետևանք է ունենալու Տրոյայի համար:

ԼՂ 201 Գայու է աննման Գայաթեան

Շարուն կառ-խեցիով Վենետայի

Պալատքեա—Ներհոսի ամենաչքնաղ դուտորը Այստեղ նա փոխարինում է Այրողիտեին

էջ 203 Քելունայի զրահով

Տեղ հասցրինք ապանով.,

Քլունա—Հավերժահարս, որին Հերմեսը դարձնում է հսկայական կր/ա:

Մեր այս տունին հանդիսավոր

Կարիւններին բերինք այսօր

Կարի Ըեր—հողի երկրի ընդերքի և ծովադնացիների հովանավոր առ լուծներ:

էջ 206 Պրոքեոս—Օվկիանոսի և Քետիսի որովն իմաստոնն ծերոնի

լուծակ: Կարող էր ընդունել ցանկացած տեսքը

էջ 210. Տելփիններ—Հողոսի առասպելական բնակիչները որոնք սկիզբ

էին կրել մետաղագործությանը և կերտել Տելփինյան Հելիոսի վիթխարի արձանը: Վերջինիս կործանման մասին է պատմում Պոթեոսը:

էջ 213. Այրվիւր դու գայության տենչով վսեմ

Անցիր եկաւ ուղին արարումի.

Քալեսը Հոմունկուլոսին խորհուրդ է տալիս միանալ ջրային տարերքին աստանյութին, որից, այս փիլիսոփայի կարծիքով, սկիզբ է առնում կենդանութիւնը (Հոմունկուլոսը ձգտում էր մուտք գործել նյութեղին, իրական աշխարհը):

էջ 215 Փսիլներ և մարսեր—օձ հմայողներ Լիբիայի և Նելքին Իտա

լիայի ստասպելական բնակիչներ:

էջ 216. Չենք վախենում արծիվներից,

Կամ թևավոր առյուծներից

Խաչից լուսնից.

Ու ծիվը Հոմի կայսրության զինանշանն էր, թևավոր առյուծը՝ Վենետիկի, խաչը՝ խաչակիր ասպետների լուսինը (կիսալուսին)՝ Օսմանյան կայսրության

էջ 217 Դարիղներ — ներհիդներ: Դորիդան Օվկիանոսի և Տետիայի

լուստրն է Նելեոսի կինը (դուտորերն այս դեպքում կոչվում են իրենց մոր սեռանով):

ԼՂ 222. Փառէ հողմերի մեղմ հովերին,
 Փառէ դամբարան-անձազներին,
 Զորս տարեբին մեծ ու արդար
 Փա՛ռն ու օրհնա նմ դարե ի դար

Այս տողերում փառաբանվում են Գալաթեայի ոտքերի տակ Լրոսի (սիրոս սոս) զորութեամբ ներդաշնակորեն միաձուլված շորս տարերքը: Ուրեմն՝ կատարյալ ներդաշնակության թագավորության ուղին գտնված է: Ամեն ինչ նախապատրաստված է Հեղինեի հայտնության համար

ԱՐԱՐՎԱՄ ԵՐՐՈՐԳ

Առաջին անգամ տպագրվել է 1827 թ Գյոթիլ երկրի ժողովածուի 4-րդ հատորում («Հեղինե» կլասիկա-ոմանտիկական ֆանտաստագորիա): Միջնադարյալ «Ճառաստ»-ի վերնագրով Սկսված է 1800 թ, սակայն շարունակվել է 25 տարի հետո և ախարավել 1827 թ:

ՍՊԱՐՏԱ ՄԵՆԵԼԱՈՍԻ ՊԱԼԱՏԻ ԱՌԱՋ

ԼՂ 223 Զարբած եմ դեռ ցնցումներից ալիմների,
 Ու ծառս եղած հսկայական լեռների պես՝
 Միապազաղ հարթավայրից փոշուզիական
 Պոսեյդոնի կամֆով, ուժով էվրոս հողմի
 Մեզ հասցրին ծովախորշերն այս նարագառ

Փոշուզիա — փոքրասիական երկիր որի մայրաքաղաքը Տրոյան էր (Իլիոն): Էվրոս — արևելյան քամի: Հեղինեն, մոռացության տալով հանդերձյալ աշխարհը, կարծում է թե հենց նոր է վերադալ ձել Սպարտա իր ամուսին Մենելաոսի հետ:

ԼՂ 225 Երբ մենք նասանք գետաբերանն էվրոտասի.

էվրոտաս — Լակեդեմոնիայի՝ սպարտացիների երկրի խոշորագույն գետը:

ԼՂ 235 Վայրաբարո մենազների նման հարբած...

Մենազ — բարոսուհի, Գիոնիսիոսին ուղեկցող կին:

Էջ 237 Պատմիւ ին հայր էրբրութից, մայր Կիշերից..

Իրերոսը և Գիշերը Քառսի՝ ստորերկրյա ուժերի, ծնունդն և՛

Դու էլ պատմիւ ին հարազատ բույր Սցիլլայից

Կիրկեն (Ցիրցեյր)—էա կղզու կախալղուհին Սցիլլայի ն դարձնում է
| | ցլլիսանի և տասներկուտաանի հրեշ:

Օրնուսի մուս հետքը փնտրիւ ազգուսակիդ

Օրնուս—ըստ հոմերական դիցարանության մահվան աստված Դարձել
| | ստորերկրյա աշխարհի սիմվոլ:

Էջ 238. Գնա ծերուկ Թիրեսիոսին սեր խոստացիր

Թիրեսիոս—թերեացի կույր քուրմ Իր կամքն իմաստնորեն սեկնարա-
| | լելու համար Զևսը նրան շնորհում է հինգ սերնդի կյանքին հավասար եր-
կարակեցություն, ինչպես նաև մարգարեական ծիրք, որից նա շի գրկվում
| | նաև ստորերկրյա աշխարհում Հին աշխարհում «Թիրեսիոս» անունը եղել
| | է առաջակական ծերության սիմվոլ

Քո ծոռան ծոռն է սոճտուն Օրիոնի

Օրիոն—վայրի հսկա՝ հոսերոսյան ստորերկրյա աշխարհում:

Հարայիաները բեզ կեղտի մեջ են մեծացրել...

և պիա—փոթորկի աստվածուհի (կիսակին կիսաթռչուն)

ՍՄՐՈՑՈՒՄ

Էջ 259. Ես այս. Լեռն այդ կիծեի, սակայն ավազ

Երե գծեմ սոսկայի է նույնիսկ ասել

Իմ բերանը լցվելու է շիրմի փոշով:

Տրոյուհիները կասկածում են որ այդ պատանիներին Հսղեսի աշխարհ
| | րեքել է պառավ Ֆորկիասը:

Էջ 262 Լինեհոս—Գյոթեն Ֆաուստի աշտարակապահ գինվորին ի ս

| | արդոնավտների նավավարի, անվանում է Լինեհոս: Սա եղել է արտա-
| | սուր սրատես: Լինեհոսին կախարդում է Հեղինեի գեղեցկությունը:

Էջ 275. Քոնն է գերման, Մոցը կորնքոսյան,

Շրջափակիւ պարխապներով նոր

Իսկ բեզ էլ գոթ հանձնում էմ Ախայան

Զարանովիտներով հաղարավար
 Թող ֆրանկ զորքերը շատ էլիս նասենն,
 Սախերը տիրանան Մեսսիեային,
 Նարմանները բող Ագուլիսն առնեն
 Եվ պաշտպանեն սահմանը ծովային

Ճառատը հերթով դիմում է գերմանացիներին, ֆրանսիացիներին, սաքս-
 սերին (անգլիացիներին) և նորմաններին: Խաչակիր ասպետները Հունաս-
 տանում հիմնում են ֆեոդալական իշխանություններ և ասպետական կալված-
 ները բաժանում հիշյալ ժողովուրդների ներկայացուցիչների միջև:

էջ 286. էվֆորիոն—Ճառաստի և Հեդինեի որդին (Աքիլլեսի և Հեդինեի
 որդու անունով)

էջ 302. Իսկ ի նշ Կ լինելու վինակը մեր
 Ասֆոդելոսի մուր մարգագետնում

Ըստ հունական ավանդության, ասֆոդելոսն այն միակ ծաղիկն է (շու-
 շանագորի) որ աճում է Հադեսի աշխարհում: Հարավային Սվրոպայում լայ-
 նորեն տարածված ասֆոդելոսներով հին հույները զարդարում էին դագաղ-
 ները շիրիմներն ու աճյունասափորները:

ՍՐԱՐՎԱԾ ՉՈՐՐՈՐԴ

Գրված է 1830—1831 թթ.: Այս արարվածը և հինգերորդ արարվածի
 առաջին պատկերը («Հարթավայր») «Ճառաստ» ի վերջին տեսարաններն են,
 որոնց վրա աշխատել է Գյոթեն

ԻՍՐԱԻ ԼԵՌՆԱՇՂԹԱ

էջ 309 Հիշում եմ, երբ անդունդն էր սրոռում,
 Բոցեր արձակելով բարձրանում վեր,
 Երբ Մուլսն էր կռում ապառաժներ,
 Հսկա բեկորները շոքս կողմ նետում:

Մուլս—բանաստեղծ Քլոփշթոքի «Մեսսիազա» ից՝ ռազմաշունչ ոգի, որը

ս սյոներ է կերտում: Հին փյունիկեցիների արևի կրակի և պասերազմի աստ-
լածը որին մարդկային զոհեր էին մատուցում:

էջ 313. Վատ է, մագնոն: Սարղանապա՛լ...

Սարղանապալ—Ասորեստանի թագավոր պերճանքի ու լայնլքի երկըր-
ւյազու

էջ 314 Նայում էի վերից Հուգսխոուլ

Սովը ծառս էր լինում աշտաբակված

Հինգերորդ արարվածի կենտրոնական թեմ սն դառնում է այն որ մարդը
րանական աշխատանքով հաղթանակ է տանում բնության ուժերի դեմ:
Յառուստի ուշադրությունը Մեֆիստոֆելն ամեն կերպ աշխատում է շեղել մեծ
նպատակից, արգասավոր կյանքից, ներգրավել պետական երկպառակություն-
ների մեջ, այնպես ինչպես ողբերգության առաջին մասում Յառուստին ստի-
յում է մոռանալ Գրեթխենի հանդեպ ունեցած պարտքը բարձրանալ Բրոքենի/
լ զս թը (առաջին «Վալպուրգյան գիշեր»):

էջ 321 Ոչ, բայց Պետեր Սֆվենցի նման

Սերուցն էմ ես բերել միայն:

Պետեր Սֆվենց (Քվենց) — սեծիսյոր ուն աթենացի թատերասեր արհես-
տավորների ուժերով Թեսեսոսի պալատում բեմադրել է «Պրիամոս և Տիսթա»
դրերգությունը: Ինչպես հայտնի է Շեքսպիրն այս ուրախ ֆարսով է ավար-
տ 1 իր «Ամառային գիշերվա երազ» կատակերգությունը

Երեմ նզորներ—Գյոթեն սա վերցրել է աստվածաշնչից («Գիրք թագա-
լորաց» 2 23, 8—12) ոչ տեղ թվարկվում են Դալիթ թագավորի փառա-
պանծ ուղմիկները

էջ 328. Նուրսիայի կախարդ սարինացին

Նուրսիա (Նուրշիա) — կախարդական լեռ Իտալիայում: Սաբինացի—
լիայում բնակվող հին ցեղերից մեկի ներկայացուցիչ:

էջ 337 Գիսկուրներ զուլբ բարի՛

Վերջին հույսը նավավարի

Խոսքը Գիսկուրների համաստեղության մասին է, որը, ըստ հին հույ-
լի հավատալիքի, հովանավորում էր ծովագնացներին:

էջ 341 Ազոսովներս են անա զայիս..

Գերմանական ժողովրդական հեքիաթներում սատանան երկու իմաստուն ազգավ ունի ինչպես հին գերմանացիների Վոթան աստվածը:

ՀԱԿԱՌԱԿՈՐԳ ԿԱՅՍԵՐ ՎՐԱՆԸ

Ըջ 356 Բայց, տէր, գյուտ կլինի քո դավաթը այնտեղ
Վեճեաթկյան բյուրեղ...

Ըստ միջնադարյան հավատալիքի, վեճեոիկյան բյուրեղապակին զերծ է պահում հարբելուց և ունի թույնն ի հայտ հանելու հատկութուն:

ՍՐԱՐՎԱԾ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Ավարտված է 1830 թ սակա ն, ինչպես հեղինակն է պնդում մի շարք սեսսրաններ գրվել են 1798—1800 թթ: Այս հարցը պարզաբանված չէ:

ՀԱՐԹԱՎԱՅՐ

Ըջ 365—366. Ֆիլեմոն և Բաուկիս—առասպելական գառամյալ ծերունիներ նահապետական զույգ: Ապրել և աշխատել են համերաշխ, անդավաճան սիրով: Իբրև նանապարհորդներ յրանց այցելում են ծպտյալ Զևսն ու Հերմեսը: Հույն ծերունիները հյուրերին ընդունում են սրտաբաց ինչի համար արժանանում են աստվածների շնորհին՝ երկար ապրելու և միաժամանակ մեռնելու բախտին: Աղքատիկ խրճիթը վեր է ածվում տաճարի, իսկ Ֆիլեմոնն ու Բաուկիսը դառնում են այդ տաճարի քուրմն ու քրմուհին: Զևսը չրհեղեղով պատժում է Փոյուզիայի մեղսաշատ բնակիչներին, խնայում Իրայն այս երկուսին: Մահից հետո Ֆիլեմոնը դառնում է կաղնի իսկ Բաուկիսը՝ լորի:

Այս առասպելի հուզաթաթավ վերապատմությունը կա Օվիդիոսի «Մետամորֆոզներ»-ում, Ի հիշատակ այս փառապանծ զույգի, Գյոթեն նրանց անուններով է ներկայացնում «Յաուստ»-ի եզրափակիչ գործողության լիրիկական նախերգանքի հերոսներին: (1831 թ հունիսի 6-ին, Էքերմանի հետունեցած իր զրույթի ժամանակ բնաստեղծն ասել է ըմ Ֆիլեմոնն ու

Իստույնը ոչ մի ընդհանուր բան չունեն հին աշխարհի նշանավոր զույգի և նրանց շուրջը հյուսված ավանդության հետ: Իմ զույգին ես այդ անունները տվել եմ միայն նրա համար որ ավելի ցայտուն ձևով ընդգծվեն բնավորությունները Սրանք նման անձինք և նման հարաբերություններ են, ուստի տեղին է նաև անունների նմանությունը»): Ուրեմն, Գյոթենն այստեղ վարվել է այնպես, ինչպես Լյնքևուսին ներկայացնելիս (երկրորդ մասի երրորդ արարվածում):

Էջ 365. Օտարական որի մենախոսությամբ սկսվում է արարվածը ո՛չ Ձեռն է, ո՛չ էլ Հերմեսը, այլ «սովորական մահկանացու» որին մի ժամանակ վիկել է Ֆիլեմոնը:

ՊԱԼԼՏ

Էջ 370. Խոր ծեռության հասած Ֆաուստը մտախոհ շրջում է

Լիբոհիշյալ զրույցի ժամանակ Գյոթենն ասել է «Իմ համոզմամբ հինգրորդ արարվածում Ֆաուստը պետք է լինի ուղիղ հարյուր տարեկան եվ երեցիտեմ, թե հարի շկա՞ այդ բանը մի տեղ ավելի ճշգրիտ ասելու»:

Էջ 377. Նման է սա հին առակին

Նաբոբն այդպես զիջեց այգին

Ըստ աստվածաշնչի («Գիրք թագավորաց», 1, 21), Սամարիայի թագավոր Ահաբն ուզում է տիրանալ Նաբոթի պապենական այգուն, որը պալատի տարին է: Սա չի համաձայնում թագավորի առաջադրած պայմաններին ոչ միայն վերցնում, ոչ էլ ուրիշ այգի: Ահաբի կինը Իզեբել թաղուհին, կեղծ մեղադրանքով սպանել է տալիս Նաբոթին և այգին դառնում է թագավորի մեծականությունը: Ահաբը (Ֆաուստի նման) իրողությունն իմանում է այն ժամանակ երբ ալգեն կատարված է լինում անարդարությունը

ԿԵՍԳԻ ՇԵՐ

Էջ 389. Երե մարդիկ ամբողջ կյանքում են կույր,

Ի՞նչ կուրացի, Ֆաուստ, վերջում կյանքիդ:

(Փշում է աչքերին):

Էջ 390. Իիջնադարյան հավատալիքի, մարդիկ կուրանում են վհուկների, կ'իտարդների հավերժահարսերի շնչից:

ՎՅՈՒՄԻ ԸՆԻԱՐՁԱԿ ԲԱԿ

էջ 390 Լեմուրներ—վայրագ և անհանգիստ ուրվականներ (հոռմեական հավատալիք)։

ԹԱՂՈՒՄ

էջ 395 Ո՞վ է շինել տունն այստեղ վատ
Քլունգով ու բահով

Հիշեցնում է Շեքսպիրի «Համլետ» ողբերգության գերեզմանափորների խոսակցությունը։

էջ 397. Շտապ եկե՛ք և շարված կողմ կողմի՛
Էայն բաց առե՛ք երախը դժոխքի։

Դժոխքի երախը լայնորեն ցուցադրվում էր Նիդերլանդական տիկնիկա ին բոլոր թատրոններում։ Դժոխքի հետագա նկարագրության մեջ Գյոթենն օգտը վում է տրագիցիոն պատկերներից։

էջ 404 Պիղծ ոգիներ ե՛ք դուք մեզ նամարում
Յայց մեր կախարդանի՛ն է ձե՛ր առաջ խամբում
Գայրակողում ե՛ք միշտ և այ՛ր, և կի՛ն։

Մեֆիստոֆելը հրեշտակների «անմարմնականությունը» ցինիկա բար մեկնաբանում է իբրև հերմաֆրոդիտիզմ (որձեղություն)։

էջ 406 Երկինք ե՛ն բարձրանում, առնելով Ֆաուստի անմահ էությունը
«Անմահ էություն» արտահայտությունը փոխ է առնլած միջնադարյան «ստվածաբանական լեզվից»։

ԼԵՌՆԱՅԻՆ ԿԻՐՃԵՐ

էջ 408 Pater ecstaticus—«Հայր զմայլված»։

Pater profundus—«Հայր խորոց»։

էջ 409 Pater seraphicus—«Հայր հրեշտակատիպ»։

էջ 410 Երանելի տղաներ — Հատ Սվեդենբորգի միստիկական ուսմունքի դրանք այն մանուկներն են, որ ծնվել են կեսգիշերին՝ «ոգիների ժամին»։

Հայր հրեշտակատիպն «իր մեջ է ընդունում նրանց» (տղաներին) — միստիկական զործողություն, երբ ավագ ոգիները, Սվեդենբորգի վկայու

թյամբ «իրենց մեջ են քնդունում» կրտսերներին, որ պեսզի սրանք աշխարհին նայեն իմաստնացած աչքերով:

Էջ 412 Չարից փրկեց իր մասն ազնիվ
Հոգիների աշխարհն արգար.
«Ով ձգտում է գիշեր ու տիվ
Տերը նրան միշտ է սաւար»

1831թ. հունիսի 6-ին Գյոթենն Լքերմանին ասել է «Այս տողերի մեջ է Ծտուտի փրկության բանալին:

Էջ 414 Doctor Marianus—«Գոկոոր Մարիանուս» (այսինքն՝ կույս Մարիամի աղոթային հայեցման մեջ խոյատուղված)—բազմ թվով միատիկ յերի պատվավոր տիազոսը:

Էջ 416 Magna Peccatrix—Մեծ մեղապարտուհի—Մարիամ Մագթաղի յցին:

Էջ 417 Mulier Samaritana—Սամարիացի կին.— Քրիստոսը Հակոբի ջրհորի մոտ նրա հետ զրուցելիս ստում է «Քեզ այնպիսի ջուր կտամ, որ հավիտյան չես ծարավի»: Այստեղ խոսքը լերաբերում է «հավատո ջրին»:

Maria Aegyptiaca—Մարիամ եգիպտացի:—«Վարք սրբոց»-ում ասված է որ նա երկար տարիներ անառակությամբ զբաղվելուց հետո, վճռում է ապաշխարել և գնում է եկեղեցի: Անտեսանելի մի ուժ մեղապարտուհուն իր է վանում սակայն աստվածամայրը հրաշքով ներս է տանում: Այնուհետև Մարիամը քաշվում է անապատ, այնտեղ մնում քառասունութ տարի և Կահից առաջ ավազի վրա գրում իր կտակը, խնդրելով, որ իրեն թաղեն քրիստոնեական ձեռով:

Էջ 418 Una poenitentium—«Ապաշխարող մի կին»

Mater gloriosa—«Մայր փառապակ»

Էջ 420 Մեզ վեր է հանում
Հավերժ կանացին:

Այստեղ «հավերժ կանացին» Մարիամ աստվածամոր կերպարն է որն ընկալվում է իրրև ծննդյան և մահվան խորհրդանիշ:

(Նիկ Վիլմոնտի ծանոթագրություններից):

ՀԱՌՆԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍԻ ՇՈՒՐՑՐ

«Ֆաուստի» առաջին մասը՝ «Փոքր աշխարհը» ավարտվում է Մարգարիտայի ողբերգական կործանումով:

Դեկտոր Ֆաուստի դեգերումներում ընթերցողը տեսնում է ֆեոդալական հասարակարգում ապրող աշխատավոր ժողովրդի կյանքն ու կենցաղը, հաղորդակից լինում անհատի հոգեկան խոր ապրումներին:

Ֆաուստին տանջում է Մարգարիտայի դեմ գործած հանցանքի պատճառը (դա ֆեոդալիզմի դարավոր հանցանքն է): Նրան համակել է «համաշխարհային թախիծը»: Նա անպոր է փրկելու մի անսեղ Էսկի և անիծում է իր ծնունդը. «Օ՛ չգայի աշխարհ երբեք...»:

Ճիշտ նույն իմաստն ունի վերևից լավող ձայնը, որը Մեֆիստոֆելի «Նա կործանվեց» բացականչությանը հակադրում է «Մ՛՛՛՛, նա փրկվեց» բացականչությունը: Սա բարու և չարի հավերժական հակադրությունն է բարու հստիքանակը

Սակայն ընթերցողն սպասում է Ֆաուստը խոստացել է ներթափանցել մարդկային կյանքի երկրային ու երկնային իմաստության խորքը բացահայտել այն և ցույց տալ ապաստության ու առաքինության ուղին: Նա միայն այդ դեպքում պիտի բացականչի. «Չքնա՛ղ ես դու, կա՛նգ առ, վայրկյա՛ն»:

Ուրեմն՝ Գյոթեն իր ստեղծագործությունը դեռ չի ավարտել: Ավելին, նոր է սկսել

Տեսնենք թե ինչ է բովանդակում երկրորդ մասը

Ողբերգության երկրորդ մասը շատ խիտ բնակեցված խայտաբղետ պատկերներով հարուստ ստեղծագործություն է. Հիմնական գործողությունն ուղեկցվում է միջանցիկ բազմաստեղծ էպիպոյններով, բոլորն էլ պատճառաբանված, տեղայնագված:

Երկրորդ մասը բաղկացած է հինգ արարվածից: Բոլոր տեսարանները (բացի հինգերորդ արարվածից) ուղեկցվում են կծու սարկազմով: Առաջին մասում ծաղրելու և քննադատելու պարտականությունը դրված էր հիմնականում Մեֆիստոֆելի վրա: Իսկ այստեղ Գյոթեն այդ նպատակին ծառայեց նաև է հունական դիցաբանությունից վերցրած կանապան այլաբանական կերպարներ:

Առաջին արարվածն սկսվում է բնության հոգեպնայն անկյունը պատկերող մի տեսարանով: Ֆաուստը պտտված է լեռնահովտում: Մարգարիտայի տղերգական ճակատագիրը խորապես ցնցել է խռովել նրա հոգին Բանտլին շղթաների սիսաֆոր աղմուկի փոխարեն տավիղների անուշ ձայն, ցավազին ճիչերի ու անեծքների փոխարեն գեղեցիկ բնապատկերն է ջրում Ֆաուստի հայացքն ու հոգին նա ապագքինված է սլաոբուստ նոր սրխ բույսերի

Էյանքի հզոր պարկերակն է բաբախում տաք
Ու ողջունում գործվանքով այգը բացվող:
Այս գիշեր էլ հառուստ էիր ուրբերիս տակ,
Հիմա էլ ես նոր թարմությանը շնչում դու, հող
Կյանքի ես դու կոչում հույսեր ու երազներ,
Մղում ես ինձ դեպի վճիռ մի աներեր.
Գիշեր ու վոր ձգուել վսեմ մի գոյության

Ֆաուստը լցված է նոր ուժով ու եռանդով նա պատրաստ է արդեն Լուսին գործելու մակրոկոսմոս՝ մեծ աշխարհի

Ֆաուստն արքայական պարաոում է: Մեր առջև բացվում է միջնադարյան պետական կյանքը իր բոլոր մանրամասներով: Երիտասարդ արքան հակված է միայն զվարճանքների:

Բաղաբացիական կոփվները կանգվածային խռովությունները խարխիլելու պետականության հիմքը: Արքան խորհուրդ է հրավիրել: Կանցլերը բնութագրում է տիրող իրադրությունը

Բայց վա յ մարդկային բարեգութ սրտին,
 Ոգուն ու մաքին, ձեռքերին զորեղ,
 Երբ թուխս է նստում չարիքն ամեն ուեղ
 Տեսողով բռնված մոլեգնում չորս դին՝
 Այս բարձր զահից ով էլ նայի ցած,
 Մղձափանջ ափաթի տեսնի ծանրացած,
 Այլանդակություն այլանդակությանց
 Ապօրինությունն օրենք է դարձել-
 Մոլորությունն է ծաղկում անարգել:

Այնուհետև զորավարն իր բողոքն է հայտնում զորքի անհուսալի դրու-
 թյան մասին, գանձապետը հայտնում է որ գանձարանը դատարկ է: Այստեղ
 Գլոթեն Մեֆիստոֆելի շուրթերով սպանիչ ծաղրի է ննթարկում «օրինական»
 իրավակարգը և ամենայն լրջությամբ հուշում, որ ամեն հարստության ին-
 քերի հիմքը գյուղացու աշխատանքն է միայն, և առհասարակ աշխատան-
 քը, որ հողի մեջ է թաքնված ամեն մի հարստություն

Չորս կողմ թաղված են գանձեր անհատնում
 Արտը վարելիս հանկարծ ինչ-որ անդ
 Փեղջուկն էլ ոսկու կճուճ է գտնում
 Կարծում է թե դա բոքակ է բյուրեղ,
 Աչնինչ ոսկի է մեղով, հրձվագին
 Ազքատը հոպից էանում է ոսկի:

Մեֆիստոֆելը խորհուրդ է տալիս արքային

Բահ, քյունգ վերցրու հողն ինքդ փորիք
 Քեզ կվեհացնի գործն այդ գեղջկական,
 Փորիք, և հողից խելույն զուրս կգա
 Ոսկե հորթերի մի ամբողջ նախիր:

Այստեղ տրդեն հեղինակը մոտենում է այն գաղափարին, որ մարդկու-
 թյան ընդհանուր բարիքի ստեղծմանը մասնակից պետք է լինի յուրաքան
 չյուր անհատ իր անձնական աշխատանքով

Կործանվող կայսրության փրկության միակ միջոցը Մեֆիստոֆելը

գանում է թղթադրամի տարածման մեջ Այդ առումով հրավիրում է մեծ ուրբեղ պարահանդես-դիմակահանդես.

Հանդիսավոր պայմաններում կայսրը ստորագրելու է թղթադրամի բաց լողնման հրամանը

Այս տեսարանում Գյոթեի սատիրան հասնում է իր կիզակետին հանդիս էն գալիս այլաբանական բազմաթիվ գործող անձեր, որոնք հաստատում են հասարակարգի կործանումը և ծաղրում փիլիսոփայական, քաղաքական ու սոցիալական այն տեսաբաններին որոնք հավերժություն են խոստանում միջնադարին

Պատկերավոր է հումունկուրայան Էպիկողը որտեղ Գյոթեն ծաղրում է Ֆիկտեի սուբյեկտիվ կյանքից կտրված «մաքուր ոգու» փիլիսոփայությունը Վագները լաբորատոր պայմաններում ստեղծել է Հումունկուրսին՝ արևի տակն մարդուն: Մա ասում է իր ստեղծողին Վագներին

Եկ, ջերմորեն կրծքիդ սեղմիր որդուց,
Բայց ոչ այնպես, որ ապակին ճաքի
Դու միշտ նիշիր օրենքը մեր կյանքի
Բնականի համար փեկերքն էլ է նեկ,
Արհեստական բունիե պետք է փակ տեղ

Եստուտը խոր հիանալիությունն է ապրում ֆեոդալական հասարակարգի կիզները սասանված են: Մարդկությունն այնտեղ դոկտորի երապած գուգան չէր կարող գտնել:

Ֆուտուտի միտքը բռնում է դեպի հին աշխարհը այդ առասպելական կենտոյալի աշխարհը Նա փորձում է վերականգնել հին աշխարհը և այն սխալաբանել միջնադարի հետ: Թերևս այնտեղ մարդն իրեն զգա աղատ ու անտարբի և Ֆուտուտն ապրի իր երապած գերագույն պահը

Ահա և հին աշխարհն իր բոլոր մանրամասներով վերակենդանանում է մեր առջև: Հայտնվում ենք Սպարտայում, Մենեդոսի պալատի առջև Հոմերոսյան սյուքը ջոյում է մեր դեմքը:

Միանգամից այլ տաղաչափություն, այլ բառապաշար, այլ արտահայտչամիջոցներ:

Ֆուտուտը մուտք է գործում հունական աշխարհը և ափսոսում Հեղինկան՝ տնտիկ աշխարհի անդուգական դեղեցկուհուն

Այս սեւարանի մասին աներիկյան իդեալիստ փիլիսոփա հրապարակախոս, բանաստեղծ Ռայք Էմերսոնը գրել է. «Այստեղ ամենաապշեցուցիչը հար բանականությունն է: Այդ մարդու (Գյոթեի, — Գ. 4.) խելքն այնպիսի հար լուծիչ է, որ բոլոր անցյալ դարաշրջանները և արդիականությունը, նրանց կրոնը, բաղաբանությունը և աշխարհայացքը վերածվում են նախափայերի ու գաղափարների»:

Գյոթեի ռեալիզմը պզու է և այստեղ ամեն երգ իր եղանակով է երգվում

Հին աշխարհը դուր չի գալիս միջև լարցուն: Սա առաջարկում է փոփոխություն մտցնել այդ աշխարհի կարգ ու կանոնի վարք ու բարքի մեջ: Հիշենք Մեֆիստոֆելի ստածը

Ինչքան կսեպնեմ ասես խարույկի մոտ
Մեկնույն է, ես ինձ օտար կզգամ.
Բոլորն այստեղ շրջում են մերկանդամ,
Անբասկառ է սֆինքսը, գրիֆն՝ անամոռ
Այնքան ապատ ու բաց է երևում
Ինչ կա թե առջևում, թե՛ ետևում
Մենք էլ ամոթ չունենք, անկեղծ աամ,
Բայց կին աշխարհն անպուսպ է չափազանց
Մինչդեռ եթե սրանք խելք խելքի տան,
Կարողարթեն և չի աուճի մոլորան

Սա, իհարկե, հնդինակի կանխամտածված գաղափարն է
Ֆաուստն ու Հեդինեն ամուսնանում են, որդի ունենում. Գյոթեն սրան
կոչում է առասպելական Աքիլեսի ու Հեդինեի որդու անունով՝ Էվֆորիոն
որը սակայն, շուտով կործանվում է:

Վաղաուրգյան կրասիկ գիշերվա տեսարանները Գյոթեն գրել է ի հիշատակ Բայրոնի: Էվֆորիոնը խորհրդանշում է Բայրոնին:

Բուրժուական գրականագետները գտնում էին, որ Գյոթեն Բայրոն Էվֆորիոնով ցանկացել է հաշտեցնել կրասիցիլվալ ռոմանտիկի հետ: Սա ոչ միայն սխալ այլև խիստ մակերեսային դատողություն է: Էվֆորիոնը Գյոթեի մոտ հանդես է գալիս որպես ասն նոր ժամանակաշրջանի ներկայացուցիչ:

մէր, որը, շրջանցելով անտիկ աշխարհի վերակերտման գոթեական փորձը լուստուջ էր գնում մի նոր ապագայի, որը լեցուն էր լինելու նոր ու իսկական ողբերգություններով: Դա կապիտալիզմի ժամանակաշրջանն է.

Մեկ հայտնի է Գյոթեի կրույցը էքերմանի հետ. «... Բայրոնը անտիկ չէ, սոմանտիկ էլ չէ. Նա հենց ներկս օրն է. Ալդպիսին էլ անհրաժեշտ է ինձ»:

Էյոթեն արդեն տեսնում էր կապիտալիզմի հաղթարշավը, պզում էր, որ սրբի սիւսափոր է սակայն պզում էր նույնպէս, որ դա բնապատմական օրջնկ ու իմ օրինաչափություն է և հետևարար առաջադէմ.

Ուրեմն՝ Էվֆորիոնը մարմնավորում է նորագույն ժամանակաշրջանի սիւստուն պատկեր-գաղափարը: Չնայած Գյոթեն իր հերոսին ողբերգական սրբատության է մատնում, բայց այստեղ իմաստություն կա թաքնված. անհոյր, որ ստեղծել է այդ արարածին, կարող է կրկին ու կրկին վերածնել նույն հերոսներ. Իրա համար երգչախումբը Էվֆորիոնի վահը ողբում է դայեա

Ո՞վ կհաղթի. մեզ չի ասի
Ճակատագիրը անգամ.
Անպատասխան դեռ կապտակի
Փողովուրդը արնաքամ՝
Սակայն երգենք, երգենք նորից
Ինչո՞ւ կանգնենք վշտահակ.
Նոր երգեր են հառնում հողից
Ինչպէս դարեր շարունակ

Ճառասող Էվֆորիոնի համապզեսող իր հետ տանում է Գերմանիա. Ս շատ հետաքրքիր հարց է և կարոտ մեկնաբանման ինչպէս այն վաստոր, թե Ճառասուն ինչու գնաց հին Հունաստան և ոչ թե Հեղինէին բերեց միջնադարյան Գերմանիա. Սակայն այդ հարցերը հերկաւ շարադրանքի շրջանակներից դուրս են:

Ճառասուն ու Մեֆիստոֆելը վերադարձել են անտիկ աշխարհից. Դոկ պր թիվնել է գեղատեսիլ լեռնալանջին և չի կարողանում ապատագրվել Ելիմի հետ անցկացրած պահերի խոր տպավորությունից. Նա գալիս է ու համոզման որ առաջին սերն ու գեղեցկությունը կլանքում անջնջելի

հետք հն թողում. Նրան թվում է թե հորիզոնում սուկերի հետ հեռանում են Հեղինեն ու Գրեթյաները: Նա խոստովանում է, որ Գրեթյաները

Ահա երկիրք է համբառնում ցուքով անեղծ,

Տանում իր հեռ ողջ վեհությունն իմ էության:

Մեֆիստոֆելը կարծես տխուր է նա չի հասնոյ իր նպատակին որովհետև Ֆաուստը Հեղինենին տիրանայիս էլ չբացականչեց «Չքնա՞ղ ես դու, կա՞նգ առ, վայրկյա՛ն»: Այժմ անհրաժեշտ է փնտրել հրապուրման նոր ուղիներ նոր օբյեկտ

Մեֆիստոֆելը Ֆաուստին առաջարկում է ապրել տիրողի ու հարստության վայելքով: Սակայն Ֆաուստին հողագունդը ձգում է միայն այն պատճառով, որ մարդուն մեծ գործերի հնարավորություն է տալիս: Ֆաուստին փառքը բոլորովին չի հետաքրքրում. «Գործն ամեն ինչ, փառքն է ոչինչ»:

Ֆաուստն իր գործունեության համար ապաքեպ գտել է: Դա մի հրակայական հողատարածություն է, որ ենթարկված է ծովի խոլական տարերքին և պիտանի չէ օգտագործման Ֆաուստը որոշում է սանձել բնության տարերային ուժերը և ծովի տիրապետությունից ապաստված տարածությունը վերածել բարիքի անսպառ շտեմարանի:

Հող ձեռք բերելու համար ինչպես բոլոր դարաշրջաններում անհրաժեշտ է պայքարել

Կայսրը վտանգի մեջ է Թղթադրավի բողարկումը պետք է երաշխավորվեր ստորերկրյա երևակայական գանձապահուստներով: Սակայն պարզվում է որ դա պատրանք է Երկիրը քայքայվել է, պետությունը սնանկացել: Ապստամբներն ինքնակոչ կայսեր գլխավորությամբ պատերազմի են դուրս ելել օրինական կայսեր դեմ

Այստեղ արդեն Մեֆիստոֆելը գործի է անցնում իր սատանայական ողջ էությանը: Ապահովում է Ֆաուստի առաջատար դերը մղվող պատերազմում և ինքն էլ է գործի անցնում

Կայսրը շահում է պատերազմը: Ֆաուստն ստանում է իր ցանկացած հողամասը: Այժմ նա անցնում է իրոք հանրօգուտ գործունեության: Ընթերցողն արդեն հասել է հինգերորդ, վերջին արարվածին, ինչպես Մարիետա Շահինյանն է գրում, որի համար էլ Գյոթեն գրել է ամբողջ ողբերգությունը:

Յիվստեի ու Շեյինգի աշակերտները կարդալով Ֆաուստ ֆրագմենտը, ունեւ են. «Այս ողբերգութեան մեջ եթե այն երբևէ ավարտված հրապարակ չու, սրտացոլված կլինի ամբողջ համաշխարհային պատմութեան ոգին, այն կհատկապէս մարդկային կյանքի պատկերը՝ անցյալը ներկան ու ապագան մատն: Ֆաուստի կերպարում իդեալականացված է մարդկութունը՝ Նա մարդկութեան ներկայացուցիչն է»

Այս մտքերի հետ ընթերցողը համաձայն է որովհետև նա դրանում էս մտածում է ողբերգութունն ընթերցելիս: Միայն ապագայի նկատմամբ այդ ստեղ չէր կարելի: Ուրեմն եինգերորդ արարվածը պետք է տա այդ պատասխանը

Ֆաուստը մեծ հարստութեան տեր է դարձել բազմաթիւ նավերով ասի ու այլ է անում: Նրա իշխանութունը ելորանում է օրրատօրե: Մի խոսքով նա աշխարհի առաջին կապիտալիստն է: Կապիտալի նախնական կուտակ ման պրոցեսը և ընդհանրապէս նրա էութունն արարվածի առաջին տեսարաններում պատկերված է շատ վառ գույներով թույլը կու է գնում ուժե պին ուժեղը չի բախարարվում ձեռք բերածով

Արաս ծովում ազատ ոգի
Չի կաշկանդում և ոչ որի
Խոհեմութեան ձեռքը բնավ.
Հասիր, որսա թե ձուկ, թե՛ նավ
Հենց տեր դառնաս երեք նավի
Կգա չորրորդն էլ հիրավի,
Հինգերորդն էլ կտիրես դու
Իրավունքը ուժն է մարդու.
Կհարցնեն «ի՞նչ», ոչ թե «ինչպե՞ս»
Այ ճանապարհ չգիտեմ ես
Ռապ, կողոպտա ե առևտուր
Նույն բանը չե՞ն սրտատխան տուր

Հակապակաս տարածութուններ է ձեռք բերել Ֆաուստը սակայն դրժ րեան է որ երկու նահապետական դատամիտները մի թիղ հողով ու սոլ րատիկ խրճիթով իրեն խանգարուս են Նա որոշում է քանդել խրճիթը

Այն խանգարում է իրականացնել վիթխարի պլանը որ նախագծել ու ան հապաղ իրագործել է ուզում Ֆառուսը Նա շտապում է. Գլխում ծագած միտքը պայծառացրել է հոգին սակայն ա.բտաբուստ մնայլ է անհանգիստ, արդյոք կհասցնի՞ իրագործել իր մտահղացումը: Իսկ ո՞րն է այդ պլանը: Զորացնել հսկայածավալ ճահճուտը, պատնեշել ծովափը հողը ապահովելու համար մեծ ջրանցքների բացել. այնպես, որ ամեն մարդ լծված լինի ազատ աշխատանքի ազատ հողի վրա

Հարյուրամյա Ֆառուսի դռանն են մտանում Պակասությունը, Պարտքը, Հոգսը և Կարիքը: Նրանցից երեքը վախենում են Ֆառուսից այսինքն՝ հաղատությունից:

Տասները հարուստ է այստեղ գործ ունենք

Բայց Հոգսը կմանի անցքից էլ քանալու

Միտքը հասկանալի է. Եթե մարդկությունն ապահովված լինի ազատ աշխատանքով և ապրուստով, ապա Պակասությունը սովեր կբառնա, Պարտքը՝ ոչնչություն, Կարիքից երես կթեքի «երես առած» մարդը: Սակայն այս անգամ էլ Հոգսը մտում է մարդու անդավաճան ուղեկիցը, որքան կյանքը առաջագիմի, այնքան նոյ պահանջներ կառաջադրի մարդուն և դա հենց հոգս է նրա համար

Հոգսը մատում է ներս, կուրացնում ծերունի Ֆառուսին ողը և կուրացած վիճակում ասում է իր վերջին խոսքը: Դա մի հոյակապ մենախոսություն է հազեցված անկրկնելի արվեստով, գաղափարի վիթխարիությանը խիպախությանը ու հատակությանը: Բանաստեղծական քսանվեց տողից բաղկացած այդ մենախոսությունն այնքան միտք է սարունակում իր մեջ որ մի ավերոջական ու ծավալուն աշխատության նյութ կնատակարարի

Ֆառուսը մարդկության համար հանրագուտ աշխատանքի ու կյանքի սեւ-սիմոնիստական պլանը սկսում է որպես կապիտալիստ: Ընթերցողին թվում է, թե նա դառնալու է ի վերջո մի բարի կապիտալիստ որի իշխանության ներքո դրախտային վազելքով ապրելու է մարդկային ցեղը: Սակայն Գլոթեն սկզբից նեթ այդ միտքը չի արտահայտում:

Այնամոտ-եվրոպական գրականագետները համախորհելով արվեստս գեր

մանական գրականագետ Ֆրիդենթալի «Գյոթեն և նրա էպոխան» գրքի շուրջը պնդում են հետևյալը

Եթե Գյոթեն կապիտալիստական հասարակարգից առաջ էր անցնլ ապա թող պատկերեր իր երապած հասարակարգը առանց կապիտալիստականի վրա ժամանակ ծախսելու

Նախ չպետք է մոռանալ, որ Գյոթեն մեծ ռեալիստ էր, իրերն ու երեվայթները նշմարում էր մինչև «մաշկի ծակտոփները», նա չէր կարող շրջանցել բնական, պատմատիպիապայական օբյեկտիվ օրինաչափությունը: Գյոթեն երապած հասարակարգը ինչ-որ չափով որպես հենակ պետք է ունենար կապիտալիստական հասարակարգի թեկուզ փյտակները:

Գյոթեն ապագայի մասին պատկերացում տվել է ոչ միայն Ֆաուստի վերջին մենախոսությունում այլև մի պրուցի ժամանակ. «Մարդկությունը խոկական մարդկություն է միայն իր ամբողջության մեջ, և անհատն ուրախ ու երջանիկ կլինի սուկ այն դեպքում, երբ նա արիություն կունենա միտաբու բոլորին»: Այս նույն գաղափարն ընկած է մենախոսության հիմքում:

Դեկտոր Ֆաուստի մուսիղացումն աշխատանքից հասնում է մինչև մարդը «ետը» վերաճում է «մենքի»: Հենց այստեղ էլ անհրաժեշտ է փնտրել մեծ հումանիստի հանճարեղ կանխատեսումը: Ապագան մարդուն խոստանում է բարձր պարգացման հասած հասարակական ու ժողովրդատնտեսական իրավիճակ: Մարդիկ կունենան վրածեղակերպի միասնություն, համատեղ աշխատանք, գոյության իրավունքը կլուծեն միասին, անենօրյա աշխատանքով:

Շատ բնական ու պատճառաբանված է Ֆաուստի կուրացումը: Հակառակ դեպքում նա պոկված կլիներ իրեն ստեղծած հասարակարգի հողից: Երապած ու պայծառ մտքով, այստեղ էլ դարձյալ չկորցնելով իր գաղափարական հավասարակշռությունը նա մենախոսությունը հյուսում է ոչ թե ներկա, այլ ապառնի ժամանակով և ավարտում է այսպես

Այնժամ կասեմ ակնթարթին

«Չբնա՞ղ ես դու, կա՛նգ սու, վայրկյա՛ն»:

Երջանիկ ապագայի ուղին, ըստ Գյոթենի, շատ փշուտ է, վտանգավոր գոնությունների հետ կապված: Ֆաուստի վերջին մենախոսության մեջ այդ մասի շատ հատուկ է արտահայտված

Նա իրավունք ունի կյանքի, ազատության,
Ով ամեն օր դրանք կռվո՞վ կնվաճի:

Ողբերգությունն ավարտվում է հեռակալ տողերով

Պատրանք է ունայն
Կարճ կանքը երկրի,
Երկինքն է միայն
Օրրանն իգձերի.
Այտե՛ղ ենք հասնում
Մեր կրագածին,
Մեզ վեր է հանում
Հավերժ կանազին

Այտեղ պարզապես Գյոթեն շեջտում է կյանքի վերագոյացման անընդհատ պրոցեսի մատերիալիստական ըմբռնման մոմենտը. Մարիամ աստվածամոր կերպարն այտեղ դիտվում է իբրև հավերժական մայրության խորհրդանիշ:

Մեռավ Ֆաուստը, կծկվեն կոր ֆաուստներ՝ ջարուհակելու կրա գործը:

Գ ԿՈՒՐՂԻՆՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐՎԱԾ ԱՌԱՋԻՆ

| | |
|-------------------------|----|
| Գեղատեղիի հարթավայր | 5 |
| Կայսերական պալատ | 10 |
| Ընդարձակ սրահ | 27 |
| Ջրոսայգի | 73 |
| Խափար պատշգամբ | 85 |
| Վառ լուսավորված սրահներ | 94 |
| Առպետական սրահ | 98 |

ԱՐԱՐՎԱԾ ԵՐԿՐՈՐԳ

| | |
|-------------------------------|-----|
| Եթական բարձրակամար նեղ սենյակ | 113 |
| Սիչնադարյան լաբորատորիա | 126 |
| Կայսերության կլասիկ գիշեր | 138 |
| Պենեոսի վերին հոսանքի մաս | 142 |
| Պենեոսի ներքին հոսանքի մաս | 153 |
| Պենեոսի լեյին հոսանքի մաս | 167 |
| Էփեյան ծովի ժայռոտ խորշեր | 196 |

Ս Ի Ս Ի Վ Ա Մ Ե Ր Բ Ս Ի Ի

| | | | | | | |
|-------------------------------|---|---|---|---|---|-----|
| Սպարտա: Մենեչաոսի պալատի առաջ | • | • | • | • | • | 223 |
| Ամբոցում | • | • | • | • | • | 258 |

Ա Ր Ա Ր Վ Ա Մ Չ Ո Ր Ր Ո Ր Գ

| | | | | | | |
|-------------------------|---|---|---|---|---|-----|
| Բարձր լեռնաղջիթա | • | • | • | • | • | 308 |
| Լեռան ստորոտում | • | • | • | • | • | 323 |
| Հահառակորդ կայսեր վրանը | • | • | • | • | • | 347 |

Ա Ր Ա Ր Վ Ա Մ Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Գ

| | | | | | | |
|---------------------------------------|---|---|---|---|---|-----|
| Հարթավայր | • | • | • | • | • | 364 |
| Պալատ | • | • | • | • | • | 370 |
| Խոր գիշեր | • | • | • | • | • | 378 |
| Դղյակի ընդարձակ բակում | • | • | • | • | • | 390 |
| Թաղում | • | • | • | • | • | 395 |
| Լեռնային կիրճեր, անտառ ժայռեր, անապատ | • | • | • | • | • | 407 |
| Սանրագրություններ | • | • | • | • | • | 421 |
| «Ճառուտի» երկրորդ մասի շուրջը | • | • | • | • | • | 438 |

Գ Լ Թ Ե

ՖԱՌԻՍ

Հ Ր Դ մաս

Խմբագիր՝ Վ Ս Հովակիմյան
Նկարիչ և գեղ խմբագիր՝ Ա. և Վ Գապայան
Նեխ խմբագիր Օն Ս Փանիկյան
Վերստուգող սրբագրիչ Ա. Հ Մանլեյան

Թանձամբ է սրատպրություն 12/VII 1967 թ Ստորագրված է
պատրուկյան 22/XI 1967 թ. և թուղթ տպագրական Ն 1
1081/32, տպագր. 14 12 մամ = 19,77 պայմ. մամ. Հրատ
111 1 մամ., պատմիք 1162, տիրաժ 20000: Գինը՝ 1 ռ 56 կ.
«...տատան» հրատարակչություն Երևան 9 Տեղյան 91
ՍՍՀՄ Ռինխատրների ովեսին առնթեք մամուլի կոնխտեի
գուխգրաֆ արդյունաբերության պլխավոր վարչության Հակոր
Ս և յապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ Երևան Տերյաս 91

